

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1896

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1896 № 12

Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

	<i>հրես</i>	
1 ԱԴԵԼԵԱՆՅ, Ա. . . . .	1445	Տգիտութեան զոհեր (չարունակ.):
2 ԼՈՂԳՅԵԼԼՕՒԻՅ – ԾԱՏՈՒՐԵԱՆ.	1506	Նետ և երգ (բանաստեղծ.):
3       »       »       »       » . . . . .	1507	Ուրականներ (բանաստեղծութ.):
4 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. . . . .	1509	Կիչերային ժամերգութիւն (պատմ.):
5 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ. . . . .	1520	Նրան (բանաստեղծութիւն):
6 ԲԱԲԿԵՆՅ, Գ. . . . .	1521	Նորիկ (վէպ, շարունակ.):
7 ԱԹԱՅԵԱՆՅ, ԱՐՇԱԿ. . . . .	1551	Հովի սէրը (բանաստ.):
8 ԲԵՆՕՐՆՍՈՆ, Բ. . . . .	1552	Հայր (պատմածք):
9 ՅԱԿՈՒԵԱՆ, ՅԱԿՈՒ . . . . .	1556	Ապահովագրութեան գործը (վերջ):
10 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, ՅՈՎՀ. . . . .	1563	Ժողովրդի ընթերցանութիւնը (լերջ):
11 ԳՐԸՆԻԷԻՅ—Յ. ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ	1571	Գաղանի ձալն (բանաստ.):
12 ԶԱՔԱՐԵԱՆՅ, ԹԱԴԷՈՍ, ԲԺՇ.	1572	Ամուսնական առողջապահութիւն:
13 Ա., Ա. . . . .	1587	«Գեղարքունի» Մեսր. արքեպ. Սմբատեանի:
14 ԱՂԲԱԼԵԱՆՅ, Ն. . . . .	1597	Հուլիանի «Մուսուլման աշխարհ»
15       »       »       »       » . . . . .	1600	Յ. Մալխատ. «Պատանկ. չուշեր»:
16 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յ. . . . .	1602	Օրժէչկօի՝ «Գիւղակ. փաստաբան»:
17       »       »       »       » . . . . .	1603	Լաբուլէի՝ «Փաշան հովիւ»:
18 ԱՂԲԱԼԵԱՆՅ, Ն. . . . .	1605	Շանթի՝ «Երազ օրեր»:
19 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԱԻ. . . . .	1619	Շիրանդաղէի՝ «Կրակ» ի մասին:
20 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա. . . . .	1622	Ժամանակակից տեսութիւն:
21 ՍԵԻԱՆ, Հ. . . . .	1632	Թատրոնի շուրջը, X.
22 ԽՄԲ. . . . .	1637	Զանազան լուրեր:
23 ԽՄԲ. . . . .	1653	«Մուրճ»-ի ութամսայ՝ բովանդակ.

Տեղեկատու և Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинианна, Гол. пр., д. № 41.

1896

Handwritten text in the left margin, likely bleed-through from the reverse side of the page. The text is faint and difficult to decipher but appears to be organized in a list or table format.

Main body of handwritten text on the page, consisting of several paragraphs of cursive script. The text is very faint and largely illegible due to fading and bleed-through. It appears to be a detailed account or report.

# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1896

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1896 № 12

ՈՐԹՆԻՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ր Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Խ. Դ. ՌՕՏԻՆԱՆՅԻ

Типографія М. Д. Ротшианца, Гол. пр. д. № 41.

1 8 9 6

К 1 4 0 3

СЕРВИС, ЛУЧШИЙ ВАМ

СЕРВИС, ЛУЧШИЙ ВАМ

Лозволено цензурою. Тифлисъ, 9 го Декабря 1896 г.

IX SURT "ՄՈՒՐՃ" SURT IX

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ:

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1897 թվականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն պիւբլիկ, որպէս և նախկին ութ տարիներում: «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդաւաններ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմաճշման ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պոէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Պատմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդաւաններ:
- VII. Յօդաւաններ անասական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին:
- X. Ժամանակակից Տեսութիւն: Յօդաւաններ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քրոնիկ:

XIII. Արտասահմանեան քրոնիկ:

XIV. Քաղաքական տեսութիւն:

XV. Կարևորագոյն լուրեր ամնւայ կղերութիւններից:

XVI. Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1897 թւա-  
կանին առանձին ուշադրութեան առնել:

ՄՈՒՐՃ-Ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ  
ապահովւած է յատուկ աշխատակիցներով:

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդի-  
մական-քննարատական:

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցներ ի մի սուար խումբ, որը  
կազմւած է ամառը ռութնամեայ կեանքով և որով ապա-  
հովում են ամառը կարևորագոյն բաժինները: Աշխա-  
տակիցների կազմը լրացում է նորերով, որոնց նպաստ-  
ները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին: (Տես լուրերի բա-  
ժինը):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժա-  
նորդագինն է 10 ռուբլի: Կարելի է գրել նաև զործակալ-  
աշխատակիցներ մօտ, ստանալով նոցանից անզորագիր: (Տես  
Մուրճի ծածքի ետևը):

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռուբլի սկզբում,  
մնացածը մինչև յունիսի վերջը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ.,  
կէս տարով՝ տողը 75 կոպէկ:

Դիմել Խմբագրատուն—Тифлисъ, въ редакцію „МУРՇ“

Արտասահմանից—Tiflis. Réd. ction „MOURTCH“:

## ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԳԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն) <sup>1)</sup>

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Է. Գլուխ

Հարսնացուի ընտրութիւնից անմիջապէս յետոյ Համբարձումը կարևոր համարեց Նոյզառի խնամակալին և մօրը առանձին-առանձին տեսնել: Դրա համար նա պատուիրեց, որ Վառվառը գնաց Սիմիի մօտ, յայտնէ նրան իրանց ցանկութիւնը և իմանայ հարսնացուի մօր կամքը: Գործին գիւրութիւն տալու համար վճռուած էր Սիմիին տալ մի շալ կապացու, բայց որովհետև գործի յաջող կամ անյաջող ելքը կախուած էր Գրիգորից, ուստի նրա հետ Համբարձումը անձամբ պիտի խօսէր:

Վառվառը չենթարկեց ամենևնու կարգադրութեանը, ասելով.

— Ես մի աղջկաց համար, որին մեր տղան չի ուզում տանել, հարսնախօսութեան չեմ գնալ. ես չեմ ուզում մեղքի տակ ընկնել:

— Տղան առաջ չէր ուզում, բայց հիմա ուզում է. պատասխանեց Համբարձումը գրգռուած.

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11.

—Ուզում է, որովհետև նրան զօռ ես անումս:

—Այ, քո խնչ գործն է ակր:

—Քեզ համար, ի հարկէ, ոչինչ էրպէս բաները: Քոնը ապրանքն է... Ձեմ գնալու. իզուր մի կրկնիլ մէկ: Ես ինքս էն աղջրկան տանելուն դէմ եմ: Ձեմ կարող:

Համբարձումը բարկացաւ. բարկութիւնը կատաղութեան հասաւ և նա այլ ևս չկարողանալով համբերել, նւազած, բայց զի ձայնով գոչեց.

—Այ ջհաննամը գնաս, թէ չես ուզում. հարկաւոր չի: Այ տղայ, ասաց նա իւր մեծ որդուն, գնա հօրաբրոջդ ասա դայ էստեղ, շուտ:

Եւ երեսը շրջելով Վառվառից՝ լռեց: Ներքին յուզմունքից դրդւած, Վառվառը դուրս եկաւ սենեակից: Այնքան ատելի էր նրա համար այդ գործը: Այդ րոպէին որքան ստորացել էր Համբարձումը նրա աչքում. մարդը հիւանդ, իւր կեանքի վերջին օրերում, բայց դու տես թէ ծայրացեղ ազահութիւնը ինչպէս ստիպում էր նրան ամուսնական խնդիրը չարչիական հաշիւների հետ կապել:

Քառորդ ժամից յետոյ եկաւ Համբարձումի քոյրը և, եղբօր պատէրը ընդունելով, գնաց Սիմիի մօտ: Վառվառի աչքին այդ կինն էլ ատելի դարձաւ—ինչպէս հեշտութեամբ մի այդպիսի պատասխանատու գործի համար պատգամաւորի դեր ընդունեց:

Երեկոյեան դէմ Համբարձումի քոյրը վերադարձաւ և յայտնեց եղբօրը, թէ Սիմին մեծաւ ուրախութեամբ ընդունում է նրա առաջարկութիւնը: Չնայած, որ Սիմին իւր համաձայնութիւնը տալու համար ոչ մի վարձատրութիւն չէր պահանջել, մի բան, որ Համբարձումը չէր ենթադրում, բայց նրա քոյրը այդ հարցի առիթով ասաց հետեւեալը.

—Առաջ, Համբարձում ապեր, տեսայ որ Սիմին չեմ-չեմ է անում. բայց հէնց որ շալ կապացուի անունը տւի, իսկոյն կակղեց, խօսքը փոխեց. ասաց շատ ուրախ եմ, որ եղբայրդ ուզում է աղջկանս տանել. դրանից էլ, ասում է, լաւ տուն ճրտեղից գտնեմ: Բայց, ասում է, ինձ շալ կապացու հարկաւոր չի. ո՞վ է հագնողը. ինձ, ասում է, դրա տեղ հինգ մանէթ փող տւէք: Ես էլ խոս-

տացայ, որ քիչ յետոյ հինգ մանէթը տանեմ իրան տամ: Հիմա Սիմին սպասում կը լինի:

—Շատ լաւ: Իէ ի՞նչ արած, մեզ համար մէկ է, էդ փողի դուրս գալը՝ դուրս է գալու, կապացու եղաւ, թէ փող: Առ էս օ մանէթը և շուտով Սիմին հասցրու: Կ'ուշացնենք, կնիկ է, կը նեղանայ, միտքը շուռ կը տայ: Շուտ հասցրու:

—Շատ լաւ, ասաց քոյրը:

Խաբեց եղբօրը, առաւ հինգ սուբլին, գրպանը դրաւ և դուրս եկաւ սենեակից:

Ո՛ւմ ազջիկն էր. ո՛ւմ քոյրն էր:

Հետեւեալ առաւօտեան Համբարձումը մի քանի մարդ ուղարկեց Գրիգորի յետեւից, որ սա վերջապէս եկաւ: Ամենքն էլ թէյի նստեցին: Համբարձումը կամաց-կամաց խօսք բացարաւ:

—Գրիգոր, ախր քեզ էն բանի համար եմ կանչել, սկսեց նա. պա ի՞նչ ես ասում, ուզում ես մեզ հետ խնամութիւն անել, թէ ոչ:

—Ի՞նչու ոչ, Համբարձում ապեր. քեզանից, Վառվառ բաջուց լաւ խնամացու և Գալուստից էլ լաւ փեսացու խօսմ չեմ գտնելու. բայց դէ ազջիկը փոքր է, հալա ուզում եմ մեծանայ:

—Է՛հ բանը կտրւած, ինչն է փոքր. եօթը թամամել մտել է ութը. լաւ ժամանակն է էլի: Կը գայ մեր տուն շուտ կը մեծանայ:

—Շատ շնորհակալ եմ, Համբարձում ապեր. գիտեմ որ լաւ կը պահէք, միենոյնն է, թէ ձեր որդին, բայց դէ քեռին էլ գրել էր, թէ Նոյզառին հալա մարդու չտաք. թողնէք մեծանայ, ես ինքս եմ նրա համար փեսացու գտնելու:

—Է՛հ, Գրիգոր, դրանք դատարկ բաներ են. իրաւունքը քո ձեռքին է: Շատ էլ քեռին գրել է. ո՛ւմ պիտի տայ. էլի մեր գիւղացուն չի տալու:

—Զգիտեմ, բայց դէ նրա խօսքն էլ չի կարելի վեր գցել, բարեկամ է, կը նեղանայ. և իմ մտքինս էլ էն է, որ հալա պահեմ:

—Քեռու գրածը ես բանի տեղ չեմ դնում. երեխայի ապեկունը դու ես, ամեն ինչ քո և Սիմի ձեռքին է: Սիմի մտքումը կայ, որ էս բանը գլուխ գայ. հիմա դու ի՞նչ ես ասում:

—Զեմ իմանում, Համբարձում ապեր, ի՞նչ ասեմ. խաթրիցդ դուրս գամ, կը նեղանաս. մնացել եմ կանգնած:

—Արի, Գրիգոր, մի լաւութիւն է, արա մեզ:

—Մի քիչ դժւար բան է, սլաւասխանեց Գրիգորը փոքր ինչ մաածելուց յետոյ, ազջկանը խղճում եմ՝ փոքր է, քեւու խօսքիցն էլ դուրս գամ՝ լաւ չի:

—Նոյզաւին, ինչպէս երախացի, մեր երեխաներից էլ լաւ կը պահենք. իր մօրիցը մենք տասնապատիկ լաւ կը պահենք:

—էդ ես գիտեմ:

—Պա էլ ի՞նչ կաց:

Գրիգորը չէր խօսում: Արմունկները ծնկներին յենած և ձեռքերը ծոցին դրած, նա գլուխը խոնարհել էր գետին և մտածում էր: Նա իւր դէմքին մի այնպիսի արտայայտութիւն էր տւել, որ կարծես թէ Համբարձումի խնդրին նա դժւարանում էր զիջել. նա արժէք օրօրւում, տատանւում էր անվճռականութեան առաջ: Բայց դա միայն զիմակն էր, որի տակ ծածկւած զլսում անդադար գալիս ու գնում էին հետևեալ հարցերը.

—Պա ի՞նչ ես տալիս... Տեսնես ի՞նչ է տալու: Չմտեմ, թէ էսքան փող տուր:

Մինչ նա օրօրւում էր այդ մտքերով, Համբարձումը բարձի տակից հանեց մի հատ քսանհինգանոց և դնելով Գրիգորի առաջ, ասաց.

—Գրիգոր, առ էս ու մեզ մի լաւութիւն արա, խնդրում եմ:

—Պա դա ի՞նչ բան է, Համբարձում ապեր, ամօթ չի:

—Ի՞նչ ամօթ... Վերցուր, վերցուր էս բանը:

Գրիգորը ամաչում էր վերցնելու փողը, բայց մտքումը ինքն իրեն ասում էր, «պա դործը 25<sup>օ</sup>-ով վերջացնեմ. դա քիչ է»:

—Գրիգոր, ինձ թաղես, թէ չվերցնես, կրկնեց Համբարձումը:

Գրիգորը բարձրացրեց իւր դլուխը, նայեց Համբարձումի երեսին, ժպտաց և մուշտարուն շահող վաճառականի նման ասաց.

—Համբարձում ապեր, էդ խօսքը որ ասացիր, գործը տարար էլ մէջքս կտարւեց:

—Այ մարդ, պա խեղճ չես, որ մէջքդ կտորւի, ասաց Համբարձումը ուրախութիւնից խնդալով:

—Աչքիս վրան, շարունակեց Գրիգորը, երբ որ ուզէք, նոյ-

զառը ձերն է. բայց զէ հիմա որ բանը եկել է հասել փողին, 25 մանէթը քիչ է:

— Քիչ չէ, Գրիգոր, հերիք է:

— Համբարձում ապեր, քիչ է, Ասուած վկայ, քիչ է. այ մարդ, հալա մին միտք արա, թէ ինչ աղջիկ եմ տալիս քեզ... Քսանեհինգ մանէթ հէնց Նոյզաուի մի արտի բերած տարեկան բամբակի զինն է: Ձէ, մի բան էլ աւելացրու:

— Լաւ, առ էս հինգ մանէթն էլ, դառնայ երեսուն, ասաց Համբարձումը խեղճ-խեղճ. և մի քանի վայրկեան ուղիղ Գրիգորի երեսին նայելուց յետոյ, հիմա հերիք է:

— Մէկ հինգանոց էլ տուր, Համբարձում ապեր, դառնայ երեսունուհինգ:

— Ձէ, Գրիգոր, էլ հերիք է, չունեմ, Ասուած վկայ, չունեմ:

Գրիգորը լուռ էր: Մի քանի վայրկեան անցած նա բարեհաձեց կատարեալ մեծահոգեթեամբ պատասխանել.

— Լաւ, հինգ մանէթը, Համբարձում ապեր, քեզ բաշխեցի. և փողերը զրպանը պնելով, շարունակեց. Ասուած եկամուտներդ անպակաս անի, շնորհակալ եմ:

Գրանից յետոյ Համբարձումը իր ձեռքը կրկին բարձի տակը տարաւ, հանեց այնտեղից մի ոսկի մատանի և տաւ Գրիգորին:

— Առ, Գրիգոր, առ այժմ էս է մեր նշանը, իսկ շաբաթ երեկոյեան իսկական նշանը կը բերենք:

— Շատ լաւ: Շաբաթ իրիկունն էք ուզում նշան բերել. որ էդպէս է, ես էլ պատրաստութիւններ տեսնեմ:

— Հա, ժամանակն է, պատրաստիր: Մէկ էլ, Գրիգոր, էս պիտի իմանաս, որ աղջկանը նշանելուն պէս պսակելու եմ բերեմ տունս: Ասում եմ, որ յետոյ էլ զալմաղալ չլինի դրա համար:

— Լաւ կը լինէր, որ Նոյզաուր մի տարի էլ մեզ մօտ մնար, մի քիչ մեծանար: Սխր շան աղջիկը, իսկ է, ոտը դրել է ութումը, բայց որ տեսնես, կ'ատես հինգ-վեց տարեկան երեխայ լինի:

— Վնաս չունի, մեր տանը շուտ կը մեծանայ: Պսակելու եմ բերեմ տուն. ես սովորութիւն չունիմ, որ աղջիկը նշանեմ ու պահեմ. ձեզ համար էլ լաւ չի. փեսայ պահելը դժւար է. բաւականին ծախք է նստում. ամեն որ գնալ, գալ, ուտել, խմել: Ի՞նչ

չու աւելորդ ծախսերի տակ ընկնել: Հարսը կը բերենք մեր տուն, իսկ մենք իր կարգով խնամութիւն կ'անենք: Լմե չեմ ասում, հը՞, աւելացրեց Համբարձումը ուրախագին:

—Քո ասածը թող լինի, խնամի Համբարձում, — տես, խնամի եմ ասում հնն, ծիծաղելով ասաց Գրիգորը, էլ մտքովդ չանցկացնես, թէ քեզ տւած խօսքս մէկ էլ կարող եմ փոխել. ինչ որ ասացի՝ ասացի. միամիտ կաց:

—Շատ շնորհակալ եմ. հէնց լաւ մարդն էլ աշխարհքումս էդ է: Գրիգորը վերկացաւ տեղից և բոլորի ձեռքը սեղմելով, կրկին անգամ շնորհաւորեց նոր հաստատուած խնամութիւնը: Երբ նա մօտեցաւ Քալուստին, ծիծաղելով ասաց.

—Մեր տղայ, ես քես աղջիկ չեմ տալու տանես, հնն, զոչալ ես՝ գողացիր, կամ զոռ արած տար:

Քալուստը ոչինչ չպատասխանեց և միայն ժպտաց: Վառվառը այդ խօսքերից զզւելով, դուրս եկաւ սենեակից, իբր թէ գործով:

—Վառվառ խնամիս էլ տխուր է, հէնց է քէ՛՛քը տեղումը չի, ասաց Գրիգորը:

Մի քիչ հիւանդ է, խաբեց Համբարձումը:

Գրիգորը դուրս եկաւ սենեակից: Փողոցով անցնելիս նա շարունակ մտածում էր, թէ Նոյզառի կայքերից մօտաւորապէս ինչ կարելի է սեպհականացնել:

Քալուստը այժմ թղթէ լապտերի նման նստել էր. նա այլ ևս ոչինչ չէր խօսում. յուզմունքից, բարկութիւնից, յուսահատութիւնից և խղճահարութիւնից չետոյ, կարծես նա արդէն պատրաստ էր մօտալուտ նոր դրութիւնը կատարեալ անտարբերութեամբ ընդունելու: Իրա հետ միասին Սաթենիկի հետ ունեցած անցեալի պատմութեան յիշատակները կամաց-կամաց ցրում, չքանում էին նրա մտքից: Նա վճռել էր այլ ևս ոտք չգնել Մկրտչի տունը. այստեհետեւ ապարդիւն էր այդ ամենը, մանաւանդ որ կարող էր աւելի ծանր հետեանքներ առաջ բերել: Երեք շաբաթից աւելի էր, որ մօտ չէր գնացել Սաթենիկին: Այդ աղջկանը կամ նրա ծնողներին հանդիպելուց, Քալուստը խոյս էր տալիս, հեռանում էր: Մկրտչի կինը Քալուստի այցելութիւնների յանկարծակի ընդհատումը սկզբում բացատրում էր նրանով, որ իբր Քալուստը Համբարձումի

ներկայութեան պատճառով ամաչում է իրանց մօտ դալ: Բայց երբ փեսացուի չերևալը երկարեց և զիւղում Պատիի աղջկան նշանելու մասին լուրեր սկսեցին պտուել, այն ժամանակ Մկրտչի ամբողջ ընտանիքը մտատանջութեան ենթարկեց: Մայրը երբեմն ծածուկ տեղ մանելով, ձեռքերը զլսին էր խփում և յուսահատական եղանակով մրմնջում:

—Անց ինձ, էս ինչ արեցի ես... Որ էս ամենը ուղիղ լինի, իմ ճարը ինչ է լինելու: Խեղճ իմ աղջիկ...

Սաթենիկը շարունակ անհանդիստ էր: Նա մոլորած էր և իրան կորցրած: Նրա աչքի առաջ միշտ Գալուստն էր կանգնած. տխրադէմ ու տրտում: Ի՞նչու. ինքն էլ չգիտէր:

—Այսօր էլ չեկաւ, մտածում էր Սաթենիկը, սա ինչ է նշանակում: Նոյզաւին ուզում են նշանեն Գալուստի համար. ինձ կը թողնի, նրան կը տանի: Որ եղբայրը չհամաձայնի, բանս դժար է լինելու: Օ՛հ, ինչ վատ մարդ է եղել էդ Համբարձումը, ներհակ, չար: Զի էլ մեռնում, որ միամուսնիք ու տաններս հանգիստ նրստներ: Էս ամենը նրա բաներն են: Որ Գալուստին զոռի և Նոյզաւին փաթաթէ նրա վզովը, որ Գալուստը չկարողանայ հակառակել... Հիմա էլ բան չի մնում, խօսում են իմ մասին. պա էն ժամանակ ինչ տեսակ-տեսակ բաներ բաց կը թողնեն: Նրանից յետոյ ես էլ չեմ կարող ապրել. ես կը մեռնեմ. կը գնամ կընկնեմ գետը. քարափից վայր կը դցեմ ինձ, կամ թէ թոկ կը կապեմ վզիցս ու կը խեղդեմ... Կն շան մարդը, Համբարձումը, ինչու ինձ չի ուզում ախր. ինձանում ինչ վատութիւն է տեսել: Նոյզաւոր, երեսնաների մէկը, նրա բօջը, շնորհքը, զեղեցկութիւնը սրն է: Զէ, Գալուստը ինձ չի թողնիլ, խօսքից յետ չի կենալ. պա ես խեղճ չեմ: Ի՞նչու ախր չի երևում. այսօր էլ չեկաւ...

Եւ խեղճ աղջիկը մտատանջ հոգով դէս-դէն էր ընկնում: Դէս դէն էր ընկնում ինչպէս մի աղաւնեակ, որ իւր վարուժանին չար թակարդի մէջ տեսնելով, շարւած ու սրտայոյզ քայլերով դէսդէն է վազում՝ սիրած էակին մահից ազատելու կամ ինքն էլ նրա զիրկը—թակարդը նետելու:

Սաթենիկի հայրը թէն նոյնպէս մի քանի բաներ էր լսել Գալուստի նշանադրութեան մասին, բայց այդ առիթով նա ոչինչ

չէր խօսում իւր աղջկայ ներկայութեամբ: Նա նկատում էր Սաթե-  
նիկի շարունակ տխրութիւնը, հասկանում էր նրա սրտի ցաւը,  
բայց բերանից ոչ մի խօսք չէր ուզում հանել, աղջկայ սիրտը շմոր-  
մոքելու համար: Մկրտիչը շարանում էր մտքումը իւր և գլխաւո-  
րապէս կնոջ արած անզգոյշ քայլի համար և կատարւած սխալի  
ու զղջման ծանրութեան տակ ճնշւում էր նա: Ամեն ինչ իւր ներ-  
սը գցած, Մկրտիչը ուտում էր իւր միսը:

Մի անգամ փողոցում նա դէմ առ դէմ պատահեց Քալուստին:  
Կանգ առաւ իսկոյն և դառնալով նրան, մեծախորհուրդ եղանակով  
հարցրեց:

— Մեր աղայ, էլ չես երևում. ինչու չես մէկ մէկ մեզ մօտ  
գալիս, ոտդ մեր տնից բոլորովին կտրել է:

Քալուստը կարմրեց: Նրա լեզուն կապեց. ուզեց մի բան  
ասել, բայց չկարողացաւ: Կմկմաց և քիչ չետոյ միայն կարողացաւ  
մի քանի բառ արասանել:

— Ժամանակ չկայ, եղբայրս հիւանդ է, գլուխս խառն...

— Գլուխդ խառն է. բայց որ ուզես, մէկ-մէկ ժամանակ կը  
դռնես մեզ մօտ գալու, էնպէս չի:

Քալուստը դարձեալ ոչինչ չպատասխանեց և աչքերը գետին  
դրեց:

— Դէ էս իրիկուն մեզ մօտ արի զրոյց անենք: Անպատճառ  
եկ, որովհետեւ մի քանի բաների մասին քեզ հետ պիտի խօսամ,  
չառ հարկաւոր գործ է:

Կարծես դաշոյնով խոցեցին Քալուստի կողքը: Նրա սիրտը  
տրոփեց, ոտն ու ձեռքը դող ընկան և մի բողբոջաձայն թուլացան:  
Նա զգաց, թէ ինչ էր Մկրտի մոքիչը:

— Հը, կը գաս, հարցրեց Մկրտիչը:

— Ձեմ իմանում, կմկմաց Քալուստը:

— Թէ ժամանակ ունես, հէնց հիմա գնանք:

— Ձէ, հիմա ժամանակ չունեմ:

— Դէ լաւ, որ էդպէս է, կամ հացին, կամ հացից յետոյ եկ.  
սպասելու եմ, անպատճառ դաս:

— Լաւ:

Նրանք բաժանւեցին:

—Մի գալ տեսնեմ սա ի՞նչ բան է ախր, մտածում էր Մկրտիչը տուն գնալիս. քիչ է մնում, որ հոգիս դուրս գայ. սիրտս հնչ է անում ճաքի. խալիսի առաջ խօսմ չեմ խայտառակելու:

Մկրտչի հետ ունեցած խօսակցութիւնը Գալուստի համար մի հարւած էր, որ նորոգեց խեղճի դեռ նոր առողջացող վէրքը: Գալուստի մաքերը շփոթւած էին. մի բան միայն շարունակ և պարզ պատուում էր նրա գլխում. գննւ Մկրտչի տունը, թէ՛ չէ:

Գալուստը դրա համար խորհուրդ հարցրեց Վառվառից և նա վճռականապէս պատասխանեց.

—Աս. կ'անես, որ գնաս Նրանք էլ խեղճ են ախր. սպասում են, երկմիտ են և մի հաստատ բան չգիտեն: Գնա՛, ասա իմ աչքն էլ մի՛նչիւ հիմա Սաթենիկի վրան է, բայց դէ, ասան, եղբայրս չի ընդունում, որ ձեր աչջկանը տանեմ: Ասան ես էլ, Վառվառն էլ ինչ անում ենք, եղբայրս չի համոզուում: Ասան եթէ Մկրտիչ ապերը կարող է մի բան անել իմ և Սաթենիկի բախտաւորութեան համար, թող անի:

—Ախր ես սրանից յետոյ էլ ի՞նչ երեսով գնամ էնտեղ, հարս. եղբայրս կաշառք է տւել, մատանի է տւել, գործը վերջացրել. հիմա ես գնամ ի՞նչ ասեմ:

—Գնան, մնաս չունի, սիրտ առ, գնան: Լաւն էլ էդ է, համքեղ համար թեթեւութիւն կը լինի, համ նրանց համար:

Գալուստը քիչ էլ մտածեց և վճռականապէս ասաց.

—Կը գնամ, ինչ կը լինի, թող լինի:

—Ի՞նչ է լինելու:

—Սաթենիկին եմ խղճում:

Այդ խօսքի վրայ երկուսն էլ կանգ առան: Նրանք մի քանի վայրկեան միմեանց երեսի էին նայում և կարծես ուզում էին ասել. պա չկարողանանք մի ելք գտնել:

## Ը. ԳԼ.

Գալուստը կամացուկ բաց արաւ Մկրտչի բակի դուռը և ներս մտաւ: Այգտեղ մութն էր: Միայն սենեակի քառանկիւնաձև պատահանից դուրս թափանցող լոյսն էր, որ իբրև մի փայլուն շերտ, անցնում էր այդ խաւարի միջով: Գալուստը ոտներին ծայրե-

րով և զգուշութեամբ մօտեցաւ սենեակի դռանը: Մի րոպէ կանգնեց դրան առաջ. ամաչում էր ներս մտնելու: Ընկճւած լինելով եղբօր ոչժի առաջ՝ Սաթենիկի հետ կապելը նա այլ ևս մի անիրագործելի բան էր համարում: Շնորհիւ իւր մտաւոր և բարոյական թուլութեան, նա հեշտութեամբ հաշտել էր այդ հանգամանքի հետ, և սիրած աղջկայ ուրեակները այլ ևս դադար էր առել շրջելու նրա երեւակայութեան մէջ: Իւր բոլոր անուրջներն ու ցնորքները նա ծալել, մի կողմ էր դրել և այժմ Սաթենիկին այցելելը նա համարում էր մի աննպատակ և անպարզիւն գործ: Գալուստը զգում էր, որ այդպիսի վարմունքը ամարդութիւն է, որ դա տգամարդութիւն չէ և մի մեծ յանցանք է: Նա զգում էր այդ ամենը և խղճի յանդիմանութեան ներքոյ կարմրում ամօթից: Իսկ Մկրտիչն իւր ամբողջ ընտանիքով այն ոչժն էր, որ նրա մէջ առաջացնում էր խղճի խայթոց և ամօթի զգացմունք:

Աւրիմն էլ թնչպէս նա ներս մտնէր:

Գալուստը իւր քունքը թեքեց դռանը և սկսեց սկանջ դնել: Աննեակում լուռութիւն էր տիրում: Բայց ահա յանկարծ ընդհատեց այդ խորհրդաւոր լուռութիւնը և ներսից լսեց Մարգարտի ձայնը որ ասաց.

— Գալուստը չեկաւ:

— Կը դայ, պատասխանեց Մկրտիչը, խօսք է տւել, չի կարող չգալ:

Կրկին տիրեց խորհրդաւոր լուռութիւն: Մի ակնթարթում բակի մէջ սփռւած լոյսը մարեց և կրկին վառեց: Դա Սաթենիկի վայելչակազմ հասակն էր, որ անցնելով պատուհանի առջևից, մոլորակի նման պատեց ճրագի լոյսը: Գալուստի սիրտը արօփեց: Եթէ յանկարծ Սաթենիկը բաց անէր դուռը և իրան տեսնէր այդտեղ: Գուցէ նա այդ րոպէին հէնց պատրաստուում է գուրս դալու: Արքան կը ծիծաղէր Սաթենիկը, երեսայական այդ վարմունքը տեսնելով: Եւ որքան ինքը կ'ամաչէր, կը կարմրէր ամօթից: Ինչպէս պիտի դուրս գար Սաթենիկի և նրա մօր երեսը:

Այդ մտածմունքներից սարսափելով՝ Գալուստը մէկ կամեցաւ յետ դառնալ տուն, բայց այդտեղ նրա սկանջին հասաւ Մկրտիչի ձայնը, որ ասաց.

— Սաթենիկ, որդի, գնա քիչ ջուր բեր խմեմ:

Բոպէն անսպասելի էր և դրութիւնը անեղանելի: Սաթենիկը պիտի բախում շարւած կժերից ջուր տանէր: Գալուստն ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս բաղխեց դուռը: Նոյն վայրկեանին դուռը բացեց. շէմքի վրայ Գալուստին գէմ առ գէմ կանգնած էր Սաթենիկը: Մի թեթև ժպիտ ազօտ լոյսի պէս փայլեց աղջկայ երեսին և իսկոյն էլ մարեց: Ուրախութեան հետ միաժամանակ և տխրութիւն արտաշայտող ժպիտ էր այդ:

Գալուստը մտաւ սենեակ, իսկ Սաթենիկն աճցաւ:

— Բարի իրիկուն, ասաց երրտաւարդը յուզւած ձայնով և ամօթխածութեամբ:

— Աստծոյ բարին, ասացին Մկրտիչն ու իւր կինը, համեցիր, Գալուստ, համեցիր նստիր:

Գալուստը նոր էր նստել, որ ներս եկաւ Սաթենիկը ջրով լիքը փարչը ձեռքին ու մօտեցաւ հօրը: Հայրը ախորժակով խմեց պաղ աղբիւրի ջրից, ուխայ բացականչեց և բերկրանքով ասաց.

— Ապրես, Սաթենիկ, ծաղկեն թաթիկներդ:

— Գու չես ուզում, դարձաւ Սաթենիկը Գալուստին, շուտանցուկ ժպիտը երեսին:

— Ձէ, շնորհակալ եմ, պատասխանեց նա կարմրելով:

Սաթենիկը նստեց մօր կողքին և սկսեց ուշադրութեամբ դիտել Գալուստի այրւող դէմքը:

— Էդպէս էլի, Գալուստ, սկսեց Մարգարիտը, ոտդ մեր տանից բոլորովին կտրել ես. մեզ մոռացել ես և էլ չես դալիս:

— Ի՞նչպէս դամ, արդարանալու մտքով, բայց իւր շանցանքը զգացողի եղանակով պատասխանեց Գալուստը, չեմ կարողանում, զլուխս խառն է:

— Շարաթը մի՛ անգամ եկ, տասն օրը մի անգամ եկ: Ձե՛ս կարող ժամանակ գտնել:

— Ի՞նչու չեմ կարող, ասաց Գալուստը՝ գլուխը գետին խոնարհելով, բայց դէ չի լինում. եղբայրս հիւանդ, ես մենակ:

Մարդ ու կին լսեցին: Աւելորդ էր այլ ևս զոյնանման հարցեր սուսջարկելը. նրանք նախօրօք ամեն բան գիտէին. Գալուստից ուրիշ բացատրութիւն չէր կարելի սպասել:

Սկսեցին Համբարձումի հիւանդութեան մասին խօսել և վերջը կանգ առան Գալուստի նշանադրութեան վրա:

—Լսել եմ եղբայրդ քեզ էլ նշանում է, Գալուստ, ուղիղ է, հարցրեց Մարգարիտը հետաքրքրութեամբ և արհամարական ժպիտը երեսին:

—Ո՞վ ասեց, էդպէս բան չկայ, —ինքն էլ չիմանալով ինչու, խարեց Գալուստը:

—Եդպէս բան կայ, ես էլ եմ լսել, մէջ մտաւ Մկրտիչը, ծիծաղելով, էլ ի՞նչու ես թագցնում: Ասում են նշանածդ էլ մի թաւազ բոցով աղջիկ է:

Ամենքը ծիծաղեցին: Գալուստի երեսը կրակի նման այրուում էր: Գեորգիքը չէր պատուում, որ նա մտնէր մէջը:

—Լաւ, ուղիղ է, որ Մատիի աղջկանն է ուզում եղբայրդ, լրջութեամբ հարցրեց Մկրտիչը:

—Այո, պատասխանեց Գալուստը, դուխը գետնից փոքր ինչ բարձրացնելով: Նա մէկ Մկրտչի երեսին նայեց և յետոյ ամօթից զուխը կրկին կախեց:

—Պա դու ինչ ես ասում, դու էլ տանում ես, մտքումդ կ'անց:

—Շատ էլ մտքումն չկայ, ի՞նչ պիտի անեմ:

—Եղբորդ ասա, թէ ես չեմ ուզում Նոյզառին տանել, ասաց Մարգարիտը բարկացած և այնպէս, որ կարծես Համբարձումի հետ երես առ երես կուռում լինէր. ասա ես ուրիշ աղջկայ եմ սիրել, նրան է սիրտս կպել, նրան եմ հաւանել, նրան էլ պիտի տանեմ:

Սաթենիկը որ նստել էր մօր կողքին և գուլպա էր դործում, հանդարտիկ բարձրացրեց կամարածե ունքերի տակից իւր խոշոր և սևորակ աչքերը, խելացի հայեացքով մի վայրկենաչափ Գալուստի շառագունած դէմքին նայեց ու կրկին կենորոնացաւ գուլպայի դործին:

—Պա եղբորս չեմ ասել, պատասխանեց Գալուստը. ես էլ եմ ասել, Վառվառը խօսմ կռիւ է արել դրա համար և ապօրս հետ վայ էն, որ խօսում է, բայց որ չի լինում, ի՞նչ անեմ:

—Ուրեմն դու, մեր աղջկանը թողած, Մատիի աղջկանն ես տանելու, հարցրեց Մկրտիչը:

—Պա ուրիշ ինչ պիտի անեմ, Մկրտիչ ապեր, մինակ իմ կամքիցն է կախած, որ իմ ուզածը անեմ:

—Ամենքը գիտեն, որ եղբայրդ ապրանքի համար է Մատիի աղջկան նշանել, խօսեց Մարգարիտը. այ հնդս էն ապրանքի գլխին, որ կնկաց վրա պիտի լինի: Տան վրա զնացած մարդը չի վայելել: Քանիսն ենք տեսել: Տեսնում ես, որ եղբայրդ զօր է անում քեզ, ջոկեր, պսակեր քո սիրած աղջկաց վրա և քեզ համար ապրիր: Էն ի՞նչ աղջիկ է, որ դու տանում ես. մի ութ տարեկան երեխաց, հալա տեսնողը կասի վեց տարեկան է: Սիր ի՞նչու ես խեղճ մտում:

—Մարգարիտ բա՛ջի, պա ես կանոն եմ ջոկել, չեմ իմանում, որ եղբայրս ինձ հողի հետ հաւասար կ'անի և ամեն ինչ կը դնի իր տակին: Ե՛ր բանը հէնց պարզ կերպով ինձ ասաց էլի. ասում է, պա դու ի՞նչ պիտի աշխատես էս տան համար, մինչև հիմա ոչինչ չես արել:

—Ձի յաջողուել՝ չես արել. ինչ կայ որ...

—Ձէ, ջոկելը դժւար է, խօսաց Միրտիչը, լաւ բան չի. համ էլ Համբարձումը սրան շատ կը զրկի, է՛ր ես լաւ գիտեմ. բայց պիտի աշխատել մի կերպ համոզցնել:

—Ձէ, ջոկել չեմ կարող. եղբայրս հիւանդ, ես նրան ինչպէս թողնեմ ու ջոկեմ. դժւար է: Համոզիլն էլ՝ համոզում ենք, բայց չի լինում և ես մնում եմ սուս ու խղճացած: Մեր բարեկամներին էլ մէկը չկայ, որ ի՛մ կողմը պահի: Մնացել եմ երկու կրակի մէջ:

—Լաւ, իսկ է, որ նշանել պրծել էք:

—Այո, եղբայրս բերաւ երեսուն մանէթ փող տաւ Գրիգորին, որ նա մեր մատանին ընդունեց:

—Նշանն էլ էք տանելու, ե՛րբ էք տանելու:

—Էս առաջիկայ շաբաթ օրը նշան ենք տանելու, իսկ կիրակի երեկոյեան պսակելու ենք:

—Տէր Աստուած, բացականչեցին ամուսինները վիրաւորւած ինքնասիրութիւնից զրդւած: Թախիժը պատեց նրանց զէմքը և նրանք իրանց աչքերը դետին յաւած մնացին լուռ ու շւարած:

Լուռ էր և Սաթենիկը: Կրակի նման նրա զէմքն էլ էր այրուում: Հեացող մարդու սրտի նման արագ, ուժգին էր բարբառում նրա քնքոյշ սիրտը: Նրա ամբողջ ներքին աշխարհը ծովի նման ալեկոծուում էր այդ բուրբն ու լիքը սափորի բերանից թափւող

Ջրի պէս լիկուճ էր: Սաթենիկը անհամբեր ու սրտատրոփ լսում էր տեղի ունեցող խօսակցութիւնը և զողում էր:

Գալուստի վերջին խօսքերից յետոյ, նա իւր աչքերը կրկին սիրած երիտասարդի երեսին դցեց, շրթուէքները զողացին և արտասաքի հեղեղը հոսաց նրա աչքերից: Մահացու էր այդ հարւածը: Նա խփոջն վեր կացաւ տեղից, ամաշելով նստածներին ներկայութեամբ լաց լինելու՝ մտաւ իւր նւիրական սենեակը, որտեղ Գալուստի հետ մի ամիս քսիցիլ բույէներ էին վայելել, և շարունակեց այնտեղ ազատ ու միացնակ լաց լինել իւր սև օրի վրայ:

Մայրը զնաց աղջկայ յետևից: Տեսարանը սրտաշարժ էր, նրստած տղամարդիկ կախել էին իրանց գլուխները և աչքները յատակին չառած, արձանացել էին:

—Վայ ինձ համար, հեծկլտում էր չաճախ Սաթենիկը, սրտի խորքերից բղտող լացի հետ միասին:

—Աղջի, հերիք է, անջի, հերիք է, ասում էր մայրը անընդհատ, աղջի աչքերդ քուսացան: Ախր ինչու ևս լաց լինում. բանը հալա բոլորովին չի վերջացել. դուցէ քեզ են տանելու, ինչու ես լաց լինում: Հրէն հօրդ ուղարկելու եմ Համբարձում ապօր մօտ, որ էդ բանի մասին խօսայ...

Իաց ումն էիր ասում. ապարդիւն էր այդ ամենը: Սարսուռ ազդող լացը, միախառնւած կսկիծ առաջացնող «վայ ինձ համար» խօսքերի հետ, չէր դադարում:

Մայրը ջուր բերաւ, աւաւ աղջկանը, որ խմի: Աղջիկը դժուարութեամբ ընդունեց ցուրտ ջուրը և լացը փոքր առ փոքր սկսեց մեղմանալ: Սաթենիկը —այնուհետև ծալքի վրայ ընկնելով, սկսեց հեկեկալ:

Մայրը թողեց նրան և տխուր ու յուսահատ դէմքով մտաւ տղամարդկանց մօտ:

—Սրի դու մէկ Համբարձումի մօտ զնաց, ասաց Մարգարիտը ամուսնուն, ասա մի հսպէս բան կայ ակիր. տղան եկել գնացել է մեր տուն, մեր աղջկանը անուն է: արև, սուղ գիւղը էդ գիտէ, խօսք է աւել. խնդրիր, որ հնակառակի, էդ լաւութիւնը մեզ անի: Պա էս աղջիկը ինձ չի, պա իր եղբայրը ինձ չի:

—Սի էլի, Մկրտիչ ապեր, կատարեալ անմեղութեամբ և ան-

տարբերութեամբ ձայնակցեց Գալուստը, եկ, դու էլ ասա, խնդրիր. վերջապէս ինչ որ խելքդ կտրու՞մ է, արա, գուցէ եղբայրս քեզ լսի:

— Ե՞րբ գամ:

— Էգուց առաւօտեան, որքան շուտ, էնքան լաւ: Քանի որ նշան չենք տարել, եկ:

— Շատ լաւ, էգուց ես կը գամ. տեսնեմ էդ թարսի տղայ թարսը ինչու է ախր էղպխի անիրաւութիւն անում և մարդու տուն սուգ-շիւան գցում: Ախր մեզանից նա ի՞նչ վատութիւն է տեսել:

— Ի՞նչ վատութիւն պիտի տեսած լինի, Մկրտիչ ապեր, չէ, Նոյզաւի վրան ապրանք կայ. դրա համար էն աղջկանը պինդ է բռնել:

Մկրտիչը ոչինչ չգտաւ դրան ասելու և մնաց լուռ:

— Էգուց գնա՛, այ մարդ, գնա տես ի՞նչ է ասում. աղջկանս խօժ չեն սպանելու, մեզ սաղ զիւղում խօժ չեն խայտառակելու. մինչև երբ մենք լսալսի բերանի ծամոնը լինենք. դրանից յետոյ մենք էլ ինչպէս մարդու մէջ դուրս գանք:

Մկրտիչը մտածմունքի մէջ ընկաւ, իսկ Գալուստը պատրաստու՞մ էր գնալու:

— Մկրտիչ ապեր, ասաց նա, ինչ որ խելքդ կտրու՞մ է, արա մեզ համար: Դէ ի՞մ սրտինը ձեզ արդէն յայտնի է: Դուք էլ իմանում էք, որ ինձ զօրելու են, ես էլ էն աղջկանը տանելու եմ, ձերը թողնեմ: Ի՞նչ պէ, ի հարկէ նրանով ես չեմ վայելուելու: Ի՞նչ արած, ճար չկայ. կարո՞ղ եմ եղբօրս հակառակել, երբ որ ամեն ինչի իրաւունքը նրա ձեռքին է: Ասում է տար, պիտի տանեմ էլի:

Գալուստը բարի դիշեր ասաց և դուրս եկաւ սենեակից: Սաթնիկը, որ դեռ հեկեկանքից նոր ազատուած, մօտեցել էր սենեակի դռանը և արտասախառն աչքերով ականջ էր դնում խօսակցութեանը, լսեց Գալուստի վերջին խօսքերն ու ցնցեց: Վերին աստիճանի մի անասորժ զգացմունք պատեց նրան և զայրոյթի, զըղւանքի ու արհամարանքի կաթիլներ սրսկեց նրա հոգու մէջ:

Սաթնիկը չեռ-չեռ գնաց, շրջեց երեսը, սրբեց աչքերը նստեց տան անկիւնում դրւած արկղի վրա, ձեռքերը ծոցն առաւ ու սկսեց մտածել:

Մի բողոքում նրա երեսակացու թեան առաջ պատկերացաւ այն բախտաւոր և երջանիկ ապրտան, որ Քալուստի հետ անցկացրած բողոքներին երազում էր նա: Յիշեց Քալուստի այցելութիւնները, այդ երջանիկ ժամերը, նրա զեղեցիկ խոստումները և իւր ծնողաց ուրախութիւնը: Յիշեց այն, որ իւր ընկերուհիներէից ոմանք նախանձում էին նրա բախտի վրա, իսկ ոմանք ուրախ էին, որ Սաթենիկի համար դուռ է բացուել: Բախտաւոր էին համարում նրան շատերը և Սաթենիկը դո՛հ էր իր վիճակից: Ուշքն ու միտքը Քալուստն էր, որի համար նա յաճախ անքուն զիշերներ էր անցկացնում: Բայց այդ մարդը ինչպէս յանկարծ իջաւ, նսեմացաւ նրա առաջ: Դէպի Քալուստը տաճած սիրոյ մէջ արդէն տեղ էր գտել ատելութեան ու արհամարանքի սերմը: Խոցուած, վիրաւորուած ինքնասիրութիւնը տանջում էր Սաթենիկին և մղմեղի նման ուտում էր նրա մարմինը:

—Ուրեմն նա ինձ իսկապէս չի սիրում, խօսում էին Սաթենիկի յուզուած միտքն ու զգացմունքը. եթէ սիրում լինէր, էնքան սառնութեամբ չէր ասիլ թէ ճեղքայքս որ ասում է Նոյզառին տար, պիտի տանեմ: Ինքը շատ հէջւան լինելով, չի խօսացել, թոյլ է թողել, եղբայրն էլ խօսք է, ասել Գրիգորից ու մատանի տել: Պատրաստում են նշան տանել... Ելի լուռ է Քալուստը և ասում է. «Ի՞նչ արած, պիտի տանեմ»: Ուրեմն նրա համար կամ ես կամ Նոյզառը: Ի՞նչ տղամարդ է նա, որ սիրած աղջկան պահած, գնում է մի երեսացի տանում. ի՞նչ տղայ է նա, որ իմ սիրոյ խաթրու չի կուում հարազատ եղբօր հետ և իր ուզածը անում: Եղբայրը հիւանդ մարդ, ի՞նչ կարող է անել: Այո, նա տղամարդ չի, նրա գլխին փափախ չկայ: Թուրքերը իրանց սիրած աղջկան կամ գողանում են կամ նրա համար մեռնում են և կամ նրան սպանում: Ես չեմ ուզում, որ Քալուստը դրանցից մէկը անի. նա կամ ոչ թույլ էս բանը գլուխ բերի, կամ եթէ չի յաջողում, ջուրի կղբօրիցը, մենք ամուսնանանք և երջանիկ ապրենք: Ասա Նոյզառին չեմ տանելու. դրա համար քեզ խօս՛ չին սպանելու: Հալա կելի, հօրիցս է օգնութիւն խնդրում: Ամօթ, ամօթ նրա համար: Էն մարդիկն էլ, որ նրան խնդրից հանում են, իրանց կեանքում, այ՛ Աստուած, ամեն բանի կարօտ մնան և տանջւեն...

Սաթենիկը վեր կացաւ տեղից և ցանկանում էր մօր մօտ դնալ, որ ներս եկաւ Մարգարիտը: Տեսնելով, որ աղջիկը արդէն համարուել է, նա պատմեց, որ վաղը Մկրտիչը դնալու է Համբարձումի մօտ խնդրելու և իր աղջկան Քալուստին տալու համար:

Սաթենիկը ընդհատեց մօր պատմութիւնը, ասելով.

—Մայրիկ, Քալուստը իմ աչքին հիմա վատ տղայ է երևում:

—Ի՞նչու, աղջիկս:

—Կարծես յոյսս կամաց-կամաց նրանից կտրոււմ է. նա տղամարդ չի, նրա զլխին փափախ չկայ:

—Ի՞նչ անի խեղճ տղան, մեծ եղբօր հետ դժար է բան բռնելը:

—Ձէ, էնպէս որ նա էր խօսում, սիրտս շատ կտրուեց և վըլխիս, ասես, սառը ջուր ածեցին:

—Համբերիր, աղջիկս, էդպէս շուտ մի յուսահատիր. Ասուած ողորմած է. նա չի թողնիլ, որ մենք սուտ բամբասանքների տակ ընկնենք:

—Ախ, մայրիկ, Քալուստը պիտի էնպէս չխօսար. եթէ ես էդ իմանայի, դուրս չէի գալ նրա երեսը: Ախր նա էդպէս բան չպիտի անի: Ախ, ես խաբւել եմ:

—Լաւ, լաւ, աղջիկս, հանդարտուիր, համբերիր, տեսնենք վաղը հայրդ ինչ լուր կը բերի: Շատ մի մտածիր դրա մասին. դուցէ հէնց բարին էն է, որ Քալուստը քեզ չի տանում: Գարդ մի արա. քեզ վրայ կուր անողներ շատ կը լինեն: Վեր կաց, շորերը զցիր քնենք:

Մօր մխիթարիչ խօսքերը հովացրին աղջկայ խոցած սիրտը: Սաթենիկը մի տեսակ թեթևութիւն ու հանգստութիւն զգաց, ինչպէս մի նաւակ փոթորիկից յետոյ: Նա սկսեց աւելի սառնութեամբ վերաբերւել դէպի իւր ներկայ վիճակը և յուսալ մի բախտաւոր ապագայի:

Աջնուամենայնիւ մօր և աղջկայ քունը երկար ժամանակ չէր տանում, թարմ հարւածի մրմնջոցներից դեռ կատարելագէս չէր ազատւել նոցա հոգին:

Քալուստը տուն վերադառնալուց նոյն հարցովն էր զբաղւած: Անկարող լինելով դիմագրել իւր հակառակորդներին, նա ենթարկ-

ւել էր նոցա ազդեցութեանը և դարձել նոցա զերին: Կրա հետ միասին, կամքով ու խելքով թոյլ արարածներին չատուկ սովորութեամբ, նա սկսել էր իրան արդարացնել և ամեն բանի մէջ մեղադրել միայն իր համախոհներին:

— Ես ինչ մեղաւոր եմ, մասձուժ էր նա, որ ձեռքովս ոչինչ չի գալիս. ինչ պիտի անեմ: մի ողջկաց համար խոմ չեմ գնալու եղբօրս հետ կռիւ սարքեմ, տանա ու ազգականներին մէջ երկպառակութիւն գցեմ: Աղջիկ է էլի, ես չեմ տանիլ, մի ուրիշը կը տանի: Խոմ նշան չկի տարել: Ես միայն գնում էի և զալիս. չի կարող պատահել: Կրանում ես իսկի մեղաւոր չէի. մեծ մասամբ իրանք էին կանչում, որ ինձ տաքացնեն աղջկաց վրայ: Ուրեմն իրանք էլ մեղաւոր են: Եղբօրս բնաւորութիւնը չէին իմանում: Մեծ բան է, որ միանգամ Սաթենիկին ասել եմ—որ դաս ինձ, քեզ կը տանեմ: Եստ լաւ. բայց ծնողների հետ խոմ ոչինչ չեմ խօսացել դրա մասին. պա էլ ինչ հարաց հրոց են բարձրացրել: Ասկնք իսկի մի խելք էլ չի իսկապէս Նոյգատի ասլրանքը. ձեռքից բաց թողնելը: Ձէ, պիտի անպատճառ մի բան էլ ես էս տան համար աշխատեմ, որ սեւերես չմնամ եղբօրս ու նրա որդոց առաջ, թէ չէ վերջումը խօսք կը դաց երեսիս: Բացի այդ, պատահեց ջոկեցի՛ կնկանս բաժինը հէնց ինձ հերիք է: Ձէ, ես հիմա եմ հալա խելքի զալիս, որ եղբօրս հակառակելը իզուր է եղել:

Հեռուեալ օրը առաւօտեան Մկրտիչը գնաց Համբարձումի մօտ և նրան խնդրեց, որ իր ցաւին մի դարման անէ: Յոջանեց, թէ գործը այնպիսի կերպարանք է ստացել, որ Համբարձումը էդ լաւութիւնը իրան պիտի անի: Վերջը Մկրտիչը խոստացաւ մի արտ դնել աղջկաց վրայ իբրև օժիտ, բայց Համբարձումի սիրտը լեռ քար էր կտրել. նա չյարգեց աղջկատիրոջ խնդիրը: Եւ ինչու չարգէր. Համբարձումը այնքան անխելք չէր, որ Մատիի թողած տունը, տնամէջը և կարգին կալածները փոխէր մի արտի հետ: Բացի այդ, նա մինչև անգամ աւելորդ էր համարում մտածել այնպիսի հարցերի վրայ, ինչպէս օրինակ, թէ Կալուստը խօսք է տուել, մեր աղջկանն է անուն արել, սիրում է, սաղ զիւզը զիտէ, ակտր մեզ խօս տնաւիում է. ք:

Մկրտիչը տուն վերադարձաւ ակտուր ու տրտում: Իւր վերջին

յոցան էլ խորտակած տեսնելով, Մարգարիտը լաց եղաւ: Մկրտիչը փոխանակ կնոջը մխիթարելու, աւելի բարկացաւ նրա վրայ. նախատեսց, որ նա այնքան անզգոյշ էր վարւել, շուտ էր հաւատացել և, առանց երկար մտածելու, տղային թողել էր իր տունը: Այդ խօսակցութիւնը վիճաբանութեան անցաւ և յետոյ կուի. մարդու կնիկ միմեանց վրայ մեղադրանքներ բարդելով, վերջը խռովեցին իրարից: Սաթենիկը մէջ մտաւ և խնդրեց, որ հայրն ու մայրը իզուր տեղից սիրաները չնեղացնեն ու հաշտեն:

— Ես աւելի ուրախ եմ, ասաց Սաթենիկը, որ էսպէս եղաւ. էն տղան ինձ չէր սիրում. էն տղան իմ աչքին հիմա փալասի է նման: Ես նրան տղամարդ չեմ ասիլ. նրա գլխին փափախ չի զըրլած, էգպիսի մարդու համար կամ ես կամ մի տաւարածի աղջիկ. մէկ է: Եթէ նա ինձ սիրում լինէր, կուի կ'անէր, հայոցանք կը լսէր, թուրք, մուր կ'ընդունէր, բայց ինձ կը տանէր. էն ժամանակ նա էլ չէր ասիլ, թէ ռդէ ես էն աղջկան տանելը տանելու եմ, որովհետեւ եղբորս չեմ կարող հակառակել: Ես շատ ուրախ եմ, որ էգպէս մարդու ճանկից ազատուել եմ: Թէ դուք դարդ էք անում նրա համար, որ գիւղացիք մեզ բամբասելու են: Թող բամբասեն, ինչ ուզում են, թող ասեն. նրանց փեշակը չի: Եթէ մենք լաւ մարդիկ ենք, նրանց բամբասանքովը չենք վատանալու:

Մարդ ու կին ոչինչ չսպասախանեցին: Երեսները միմեանցից մի կողմ դարձրած՝ նրանք դեռ տանջւում էին նոր հարւածի սպառնալու ջգաւերի ոտի: Յոյսերի խորտակումն ու կրած սպառնութիւնը մի քանի ժամանակ նրանց կ'ստիպէր տանը մնալ և փողոց դուրս գալուց գլուխները քարշ պահել:

Իսկ այգպիսի դէպքերի կարօտ և մտաւոր սնունդի համար դրա նման նիւթեր որոնող հասարակութիւնը կը խօսար ու կը խօսար...

Թ. Գլ.

Գալուստի նշանադրութեան լուրը արդէն տարածւած էր ամբողջ գիւղում: Զրատեղում ու եկեղեցու բակում կանանց խօսակցութեան առարկան նոյզառն էր և Գալուստը: Համբարձումի և Սիմիի խնամութեան մասին առաջին բերանից դուրս եկած լուրը հարիւրաւոր բերաններ անցնելով բոլորովին աղաւաղւել էր. իւ-

բաքանչիւր լսող իրանից էլ մի բան աւելացնելով այդ լուրի վրայ շանձնում էր միւսին: Եւ այդ սովորական պատմութիւնը բերանէ բերան անցնելով աճում, բարդւում էր: Ասում էին, թէ իբր Համբարձումը Սիմիին և Գրիգորին կաշառք է տւել. առաջինին 50 մանէթ, իսկ երկրորդին 25 մանէթ: Գալուստը չի կամեցել Նոյզառին տանել, այդ պատճառով երկու եղբայրն էլ կոււել են. Համբարձումը վեր է կացել, որ եղբորը խփի, չեն թողել: Յետոյ Գալուստը ասել է, որ էգպէս է՝ ես ջոկւում եմ: Համբարձումն էլ ասել է. շատ լաւ, ջոկւիր, մի բան էլ չես ստանալ, ուր գնում ես, գնա: Գալուստը զրա վրա լաց է եղել և եղբոր առաջ ասել է. «Այ Ասուած, էս դարդ ու բալան չի էլ մեռնում պրծնենք, որ երեսներս սարգւի, ունքներս բարձրանայ»: Խօսքը Համբարձումի գլխին է եղել: Վառվառն էլ է կոււել մարդու հետ. մարդը նրան անէծք է տւել, Վառվառն էլ խռովել տանից դուրս է եկել: Ասել է. Համբարձում, քանի որ դու կենդանի ես, էս տունը ես չեմ մտնիր: Շատ են խնդրել Վառվառին, որ վերջը եկել է: Իսկ Մկրտիչն ու Մարգարիտը ինչ են արել. տեսնելով, որ իրանց աղջկանը չեն տանում, մարդ ու կնիկ գնացել են Համբարձումի վրայ կոււ: Ինչ խայտառակչութիւն. Մարգարիտը անէծք է թափում Համբարձումի տան վրայ, Մկրտիչը Գալուստին խփում է: Համբարձումը ասում է. դուրս կորէք իմ տանիցը. էդ բանի համար Մկրտիչն ու Համբարձումն իրար էլ բան չի մնում ասում են: Գալուստը իսկի խօսք չի եղել տւած նրանց աղջկանը տանելու. Մարգարիտն է էգպէս բաներ սարքել, որ աղջկանը մի կերպ Գալուստի վզին կապի:

Ահա այսպիսի և ուրիշ այլանդակ բաներ էին յօրինել կանայք հերոսներիս մասին:

Իսկ տղամարդիկ ասում էին.

— Այ ծիծաղ է, ծիծաղ. ութ տարեկան աղջկան տալիս են երեսունին մօտ տղամարդու:

— Ծիծաղելի է լինելու դրանց պսակը. տեսէք թէ ինչքան մարդ է թափւելու եկեղեցին:

— Ծիծաղելի է, թէ ինչ է, բայց Գալուստը շատ զուաղ շարժւեց: Ի՞նչ վնաս, որ աղջիկը փոքրիկ է. աղջիկ խիզան է. մի երկու տարի անցկենալ, մէկ էլ տեսնես մեծ կնիկ է դաւել:

— Ի հարկէ, շատ խելք և զոչաղութիւն է արել Քալուստը. մի լաւ համիրացի հող կայ աղջկայ վրայ: Բայց դէ դա խկապէս Համբարձումի զոչաղութիւնն է. եթէ բանը միայն Քալուստին մնար, ոչինչ գլուխ չէր բերիլ:

— Տեսնում էք էդ շան տղայ Համբարձումը հիւանդ տեղովը էլի ինչեր է անում:

— Ինչ որ է, լաւ են շարժել, շուտ անեն աղջկան պսակն տաննն, թէ չէ կարող է ձեռքներից յանկարծ դուրս գալ:

Այս էր ընդհանուրի կարծիքը 30 տարեկան աղամարդու և ութ տարեկան աղջկայ նշանադրութեան ու պսակի մասին:

Երկու մարդ կար միայն գիւղում, որոնց այդ լուրը ցաւ և յուզմունք էր պատճառել: Գոցանից մէկը Քալուստի ընկեր Պետրոսն էր՝ մի ընդունակ: Խելացի և արգարամիտ երիտասարդ, որը բարի ծնողների զաւակ էր: Ենչորհիւ քաղաքի ազդեցութեան և ինքնակրթութեան աշխատանքի, Պետրոսը շատ բարձր էր կանգնած իւր համադիւզացիներից թէ բարոյապէս և թէ մտաւորապէս: Գիւղացոց ցաւերի մասին հոգացողներից մէկն էլ նա էր: Գիւղական հասարակական գործերին կանոնաւոր ընթացք տեսող նա էր. որ մարդկանց մէջ էր մանում՝ խօսում, բացատրում էր, վիճում, կըլուում էր, վերջապէս համոզում էր և հասարակական շահերին ուղղաւած գործը առաջ տանում: Պետրոսն էր, որ թոյլ ու խելճ մարդկանց պաշտպան հանդիւանալով՝ ուժեղ, հարստահարիչ, խաբէրաց, կաշտակեր և ընդհանրապէս կեղտոտ մարդկանց գծուծ գործերին հետամուտ էր լինում, երևան էր հանում այդ ամենը և հրապարակապէս խայտառակում նրանց:

Պետրոսին համակրողների թիւը թէև շատ ծանր էր աճում, բայց և այնպէս զիւղական-հասարակական գործերում նա ազդեցիկ դեր էր խաղում:

Նրա հետ Քալուստը չունէր այլ ևս այն ընկերական սերտ յարբերութիւնը, ինչ որ պատանեկան հասակում. բայց և այնպէս նա երբեմն կը գար Պետրոսի մօտ, նրանից զանազան խորհուրդներ հարցնելու:

Միւս ցաւողը, որ զիւղի ամենաընդունաւած, ամենակարևոր և մի ամբողջ մահալում ժողովրդականացած անձն էր, դա Մովսէս

Մեսրոբեանն էր: Լինելով ի բնէ բաւականին ընդունակ մարդ թէ զիտելում և թէ իւրացնելում և միևնոյն ժամանակ հարուստ լինելով հասարակական ինստիտուտներով, Մովսէսը իւր հայրենի և շրջակայ զիւղերի համար գարձել էր մի ամենաօգտակար և պաշտելի անձ: Մովսէսը ուսուցիչ էր թէ զիւղացիների և թէ նրանց զաւակների համար. Մովսէսը բժշկութեան, փաստաբանութեան և ընդհանրապէս դատարանական գործերին տեղեակ մարդ էր: Նրա կեանքը պատկերացնում էր մի անընդհատ գործունէութիւն, որ ուղղաձ էր զիւղացիների օգտին ու ցաւերին. զիւղի ուսումնարանը իւր գոյութեամբ զլիաւորապէս նրան էր պարտական: Երախաներին ծաղիկ պատուաստողը և զիւղում բժշկական անհրաժեշտ օդնութիւններ հասցնողը նա էր: Խնդիրներ, անցագրերի վիպականներ գրելը և պոստային կոչնագրերի վաւերացնելը նրա գործն էր: Մովսէսն էր, որ դատաստանական գործերի համար անհրաժեշտ խորհուրդներ էր տալիս զիւղացիներին: Նա էր, որ չաճախ այգի-պիսի գործեր ինքը կը վերցնէր և օտով գաւառական քաղաքը գնալով, կը պաշտպանէր գործը հաշտարար դատաւորի մօտ: Սեպհական ընտանիքը մոռացած, նա հոգում էր ուրիշների համար:

Այդ բոլոր օգնութիւնները Մովսէսը սկզբներում համարեա թէ ձրի էր կատարում, բայց յետոյ, երբ նրա մոռացութեան յանձնուած ընտանիքը նիւթականապէս սկսեց քայքայել, այն ժամանակ Մովսէսը ստիպւած եղաւ իւր աշխատանքի համար վարձ խնդրել:

Գիւղացիք վարձատրում էին նրան և ապերախտի ու ձրիակերի նման բամբասում, թէ իբր Մովսէսը կաշառք է ուտում: Այնուամենայնիւ ամենի-դուռը բաց էր Մովսէսի առաջ. ամեն տեղ կը մտնէր նա, ամենի գրութիւնից նա տեղեկութիւն կը հարցնէր և ամենքն էլ իրանց ցաւերը բաց կ'անէին նրա առաջ: Մովսէսը կը սփոփէր, կը մխիթարէր այգիպիսի հիւանդներին և կարևոր խորհուրդներ կը տար նրանց:

Մովսէսը ամենի համար մի մտերիմ ու անկեղծ բարեկամ էր, որ պատրաստ էր կարևոր բոլորին իւր օգնութիւնը հասցնել: Ամենի համար նա մի խորհրդատու հայր էր, որի գոյութիւնը պահանջ էր բոլորի համար:

Մովսէսը իւր այգի բոլոր արժանաւորութիւններով հանդերձ

բաւականին սրախօս էր, զւարճախօս և վերին աստիճանի ընդունակ զանազան մարդկանց գործերն ու խօսածները պատմելով: Քիւղացիների կեանքից նրա պատմածները վերին աստիճանի ծիծաղաշարժ էին և բարոյական կողմեր էին պարունակում հրենց մէջ:

Այդ պատմութիւնները լսողի առաջ զլիաւորապէս ներկայանում էին զիւղացոց զանազան թերութիւնները:

Գոցանու մն էր կայանում այն մեծ գաղանիքը, որ կառավարչական պաշտօնեաներից սկսած մինչև լեռներում ապրող կոշտ ու կոպիտ հովիւները ճանաչում էին Մովսէսին: Մանաւանդ հովիւները, որոնք նրան հանդիպելուց ակնածութեամբ մօտենում էին նրան, անվախ չհարցնում և կամ չայտնում էին իրանց մի որ և է ցաւը:

Պետրոսն ու Մովսէսը, որոնց պատկերները միայն ընդհանուր գծերով նկարագրեցի, հազազիւտ ծաղիկներ են զիւղերում և գաւառներում: Դոքա ի բնէ օժտւած լինելով ընդունակութիւններով, պատահական, բաց նպատակաւոր պայմանների շնորհիւ, ոտք են դնում ուղիղ ճանապարհի վրայ: Այնուհետև ինքնակրթութեան միջոցով նրանք կարողանում են բարոյական և մտաւոր զարգացում ձեռք բերել և հասարակական շահերի համար ջերմ պաշտպաններ հանդիսանալ:

Աւելորդ համարելով նկարագրել Պետրոսի և Մովսէսի դէմքերի գծագրութիւնները, ես միայն կ'ասեմ, որ առաջինի երեսուն տարին նոր էր լրացել, իսկ միւսը արդէն մօտեցել էր քառասունին:

Այս բոլորից յետոյ հասկանալի է, թէ ինչու Պետրոսն ու Մովսէսը յուզեցին Քալուստի նշանելու առիթով: Այդ օրը Մովսէսը շուտով Պետրոսի մօտ գնաց, չայտնեց նրան իւր լսածը և ասաց.

— Պետրոս, դու Քալուստին քեզ մօտ կանչիր, հասկացրու նրան ամեն բան և ասա, որ թողնէ այն աղջկանը: Եթէ այդ անկարելի է, գոնէ թող պսակը մինչև աղջկաց հասունանալը յետաձգէ: Իսկ ես կը գնամ մեր քահանաների մօտ և կը պատւիրեմ, որ պսակ չանեն:

— Ես էլ մտածել էի դրա մասին Քալուստի հետ խօսալ, ասաց Պետրոսը. բաց դու աշխատիր, որ քահանան պսակը չկատարէ. դու գիտես, որ մեր շատ գործերում խոչնդոտ են հանդիսանում այդ սևազլուկները:

— Միամիտ կաց. տէր-Սահակն ու տէր-Գրիգորը չեն համար-

ձակելի այդ քայլն անելու, երբ ես նրանց սաստեմ: Նրանք մինչև անգամ կը վախենան աստիկ: Գլխաւոր գործը Գալուստին խելքի և կամքի բերելն է: Քեզանից յետոյ ես եւս նրա հետ կը խօսամ:

—Իմ կարծիքով, ընդհակառակը, քահանաներին զգուշացնելը և նրանց կողմից միամտելն է. մենք Գալուստին անկարող կը լինենք համոզել. բայց այդ դէպքում եթէ քահանաները չկատարեն նրա կամքը, մենք դարձեալ գործը տարած կը լինենք:

—Այո, այդպիսով մեր նպատակին հասնելը երաշխաւորուած կը լինի: Ինչևիցէ, երկուքս էլ գործի կենանք:

Այնուհետ նրանք փոքր ինչ խօսացին այդ ցաւալի դէպքի առիթով, ցոյց տւին, որ այդպիսի և դոցա նման ֆլաստար երեւոյթներ շատ կան զիւղական կեանքում և սկսեցին զանգատել ու ափսոսալ, որ անձնէր գործիչները շատ սրակասութիւն կայ զիւղերում:

Նրանք միասին դուրս եկան տնից և փողոցում բաժանեցին:

Պետրոսը գնաց զիւղի հրապարակը և բախտի բերմամբ պատահեց այնտեղ Գալուստին: Մօտ կանչեց նրան ու ասաց.

— Գնանք դէպի մեր այգին, Գալուստ, մի քանի խօսք ունիմ քեզ ասելու:

Գալուստը առանց մի հարցմունքի հետեց նրան:

— Լսել եմ, Գալուստ, սկսեց Պետրոսը լուրջ եղանակով, երբ նրանք փոքր ինչ հեռացել էին զիւղի հրապարակից, որ մի երկու օրից յետոյ քեզ նշանելու և պսակելու են Մատիի աղջկայ վրայ: Ես այդ լուրին հաւատում եմ և ամուսնանալի շնորհաւորելու փոխարէն նախազգուշացնում եմ, որ այդ բանը չանես: Դու, փառք Աստծոյ, ոչ շատ ջահել ես, որ երկար շնորհանք և ոչ շատ ծեր, որ չկարողանաս մտածել. խելքը գլխիդ տղամարդ ես. մի՞թէ չես հասկանում, որ այդ քայլը քո կողմից կը լինի մի մեծ չիմարութիւն: Ի՞նչն է ստիպում քեզ ութ տարեկան աղջկան տանելու. արդեօք սէրը. բայց ծիծաղելի է այդպիսի մի հարց տալը, որովհետեւ ութ տարեկան աղջկան չի կարելի ամուսնական սիրով սիրել: Ի՞նչ մի արժանաւոր կամ գնահատելի կողմեր ունի քո հարսնացուն. բայց այդ ևս ծիծաղելի է հարցնել, որովհետեւ ութ տարեկան Նոյզառի մասին այդպիսի հարցեր առաջարկելը տարօրինակ

բաներ են: Ես քեզ խնդրում եմ, որ քո մտադրութիւնը բողբոջին մի կողմ թողնես, քանի որ մարդու ասող խելքն այդ է պահանջում: Ուզում ես ամուսնանալ, հն շատ հասած աղջկերք լաւ տնից, իրանք էլ գեղեցիկ: Խնչ ես ասում:

Գալուստի գէմքը շառագունեց: Նա սկզբում մնաց շարուած, բայց յետոյ սիրտ աւաւ ու պատասխանեց.

—Ես ինչ անեմ, Պետրոս, եղբայրս պահանջում է, ես էլ պիտի տանեմ:

—Բան ասացիր, ընդհատեց նրա խօսքը Պետրոսը, զայրացած. «եղբայրս ասում է». գուցէ եղբայրդ ասի—զնն ընկեր ծովը, դու էլ պիտի չիմարես ու գնաս Քեզ հիմիկանից Պատիի աղջկայ վրա պսակելը մի այցպիսի բան է պառնում նրա կողմից: Եղբայրս, եղբայրս... Խօմ ամեն բանի մէջ եղբորը շպիտի լսել. խօմ նրան հլու հպատակ չպիտի լինել: Մեծ ցմու գառու, որ քեզանից տարիքով մեծ է: Բայց ասր դու էլ ունիս խելք, դատողութիւն, պա այդ որ օրուայ համար ես պահում, մեռնելուց յետոյ ես գործածելու: Եթէ քո խելքով այն աղջկան տանելը աւելորդ է և մինչև անգամ բարոյական ջանցանք, մի տանիր, կուիր եղբորդ հետ, հակառակէր և մի տանիր: Խնչ որ եղբորդ հասկացողութեամբ օգտակար է քեզ համար, կեանքի մէջ կարող է ամենասարսափելի թոյնը լինել: Խելքդ գլուխդ հաւաքիր և հեռու կաց այդ գործից:

—Պետրոս, չի լինում, խօսաց Գալուստը փոքր մտածմունքից յետոյ. իսկապէս ես առաջ ուզում էի Սաթենիկին տանել, իմ հաւանած աղջիկն էն էր, բայց դէ չեղաւ. եղբայրս ինձ հետ չհամաձայնեց, ինձ վրայ նեղացաւ ու նախատինք տուաւ: Մեր ազգականներն էլ նրա հետ միասին միենոյն բանն են պահանջում: Խնչ կօրէ, ինչ սրտնեղութիւն... Բայց վերջը եղբայրս կանչեց Գրիգորին ու մատանի տաւ: Հիմա էլ պատրաստութիւններ են տեսնում. էս կիրակի ինձ պիտի պսակեն: Տեսնում եմ, որ էլ իզուր է հակառակելը. մէկ էլ որ բանը կգպէս է եղել, էն աղջկանը տանելու եմ: Խնչ լինելու է, թող լինի, բայց ես նրան տանելու եմ: Մի քանի հաշիւներ էլ կան, որոնց մասին մարդ ասր պիտի մտածի:

—Հասկանում եմ քեզ, ասաց Պետրոսը թեթեւ և արհամարական ժպիտը երեսին, խօսքը ասրանքի մասին է. բայց իմացիր, որ

այդ հարցից աւելի կարևոր և լուրջ հարցեր ունի ամուսնական ինչդիրը: Ես մի կողմ եմ գնում այն ամենը, թէ ընդհանրապէս ինչպիսի զոյգերի մէջ պէտք է ամուսնութիւնը կայանայ, այսինքն թէ ամեն մի մարդ իր համար կին ընտրելու ժամանակ ինչպիսի հաշիւներ պիտի աչքի առաջ ունենայ: Այդ ամենը թողնում եմ և քեզ մի հասարակ, մի հասկանալի հարց եմ տալիս. եթէ տարեկան երախայի մասին ինչ կարող ենք ասել. համարեա թէ ոչինչ, որովհետև նա դեռ շատ պիտի փոխուի: Երեւակայիք Գալուստ, որ դու այդ աղջկանը, Նոյզան է, ինչ է, տանում ես և նա վերջի վերջոյ դառնում է քեզ համար մի ամենաանպիտան, ամենազրկւելի կին թէ իւր ընդունակութիւններով և թէ բնաւորութեամբ: Ի՞նչ ես կարծում, քո ամբողջ կեանքը այն ժամանակ թունաւորւած կը լինի, թէ ոչ:

— Թունաւորւած կը լինի:

— Մի ուրախ օր կ'սկսենաս:

— Ոչ. խեղճ չի մարդ էգլիսին հանդիպի:

— Շատ լաւ. էն ապրանքը, որի վրայ դուն աչք ունես, ինչ ես կարծում, քեզ համար զահրումար կը լինի, թէ ոչ:

— Իհարկէ, զահրումար կը դառնայ ինձ համար:

— Պրծան գնաց. փառք Աստուծոյ, որ հասկանում ես, զիտես, որ մարդիկ ամուսնանում են իրանց կեանքը աւելի երջանիկ դարձնելու նպատակով. եթէ քո ութ տարեկան հարմացուդ, վաղը միւս օրն էլ կ'ինդ, քեզ համար դառնայ ոչ թէ երջանկութեան, այլ շարունակ դառնութիւնների և գժբախտութիւնների աղբիւր, այն ժամանակ մեղաւորը ով կը լինի:

— Պատճառ դարձողը:

— Գուր ես, որովհետև նա քո կ'ինն է և մարդիկ քեզ են ճանաչելու:

— Գուցէ Նոյզանը լուր կ'ին եղաւ:

— Գուցէ չեղաւ, սով դիտէ:

Երկեւն էլ լսեցին: Պետրոսը իւր սուր աչքերը մի քանի վայրկեան Գալուստի աչքերին զցած, հարցական արտայայտութեամբ նայում էր: Ի՞նչ չետոյ նա ընդհատեց լուրթիւնը և շարունակեց.

— Կրա համար եմ ասում թող այդ քայլդ. դա չիմարութիւն

է. դու դրանով կարող ես քեզ անդունդ նետել. հանաք մասխարա չէ կնիկ տանելը, օրինակներ փառք Աստծոյ, շատ են եղել:

—Պետրոս, էլ վերջացել է:

—Ձի վերջացել. ոչ օրինաւոր նշան էք տարել և ոչ պսակ-ւել ես:

—Դժւար է:

—Դժւար չէ. ամեն ինչ կախւած է քեզանից: Ասենք դժւար էլ է, բայց այդ չի նշանակում թէ դժւարութիւնների առաջ պիտի չոքել. դժւարութիւնների առաջ չպիտի վաչր ընկնել, այլ նրանց դէմ պիտի կռւել, չաղթութիւն տանելու նպատակով: Ամեն մի դժւար բանի առաջ որ կանգնենք ու վիզներս ծռենք, այդ ուր կերթայ. այն ժամանակ աշխարհս կը քանդուի:

—Ձէ, Պետրոս, ես, իհարկէ շատ շնորհակալ եմ, որ էդ խորհուրդներս ինձ տալիս ես, բայց դէ ես էլ չեմ կարող էն աղջկանը թողնել, եղբօրս հակառակել չեմ կարող. պիտի տանեմ:

Պետրոսը մնաց լուռ: Նա տխրեց և շատ ցաւեց, որ չկարողացաւ այդ մարդուն համոզել ու բերել ճշմարիտ ճանապարհի վրայ կանգնեցնել: Նա բարկանում էր Քալուստի վրայ և միևնոյն ժամանակ խղճում: Լուռ էր նա: Մտախոհ դէմքը դէպ այգիների կանաչազարդ տարածութիւնը ուղղած, նա շարունակում էր իւր քաջաւածքը:

—Լաւ, Քալուստ, ասաց Պետրոսը քիչ յետոյ. որ այդպէս է, միայն նշանիր աղջկանը, իսկ պսակը յետաձգիր մի քանի տարով, որպէս զի տեսնենք աղջիկը մի բանի նման է դառնում, թէ չէ:

—Ե՛ր էլ չեմ կարող, Պետրոս ջան. ուղում եմ ամեն ինչ եղբօրս կամքովը լինի:

Ելի լուեց Պետրոսը և քիչ յետոյ մի թեթեւ հառաչանք արձակելով՝ ասաց.

— Ել սրանից յետոյ դո՛ւ դիտես, Քալուստ, ես իմ ասելիքը վերջացրի: Վճիռը քեզանից է կախւած: Ելի մտածիր, էլի չափիր և յետոյ կարիր:

Սյուպէս խօսելով նրանք անցան այգիների ճանապարհներով բաւականին տարածութիւն և կրկին վերադարձան հրապարակ:

Նոյն երեկոցեան Մովսէսը զիւզի քահանաներին՝ գործակալ տէր

Սահակին և տէր Գրիգորին իւր մօտ կանչեց, պատուիրեց, որ Փալուստի պսակը չկատարեն և սպառնաց, թէ հակառակ դէպքում գրա մասին հոգևոր կառավարութեանը խնդիր կը գրէ:

— Իսկ որ կանչեն նշանը օրհնելու, հարցրեց գործակալը, էլի չգնանք:

— Այո, նշանն օրհնելու էլ մի գնաք. ես դա մոռացայ ձեզ ասելու: Այն տէր-տէր, ասիւր ինչու գնաս օրհնելու, ամուսնութիւնն էլ խօսմ օջինբազութիւնն չի. դա էլ խօսմ երախտայի խաչ չի: Զէ որ դու անտեղ աղջկանը հարցնելու ես, թէ աղջիկ, սիրում ես էս աղային, քո կամքովն ես գնում նրան». ութ տարեկան երախտն կը հասկանաց այդ հարցը: Քացի այդ, զուցէ մի քանի տարուց յետոյ աղջիկը ասելու է. «ես էդ տղին չեմ սիրում, նրան չեմ գնում, այլ ուզում եմ գնալ այս ինչ տղային», ինչ կանէք այն ժամանակ: Պա այն ժամանակ ձեզ չե՞ն հայհոյիլ. չե՞ն ասիլ, թէ սրանց նշանը օրհնող, սրանց պսակող քահանան էսպէս լինի, էսպէս լինի:

— Դէ մեզ գալիս են ասում պսակէք, մենք էլ պսակում ենք. խօսաց տէր-Գրիգորը:

— Նրանք շատ յիմար բաներ կ'ասեն, բայց դուք չպիտի անէք խօսմ. ընդհակառակը դուք ժողովրդի հոգևոր հայրն էք. նրա յիմարութիւնը իրան պիտի հասկացնէք և նրան ճշմարիտ ճանապարհը ցոյց տաք: Զէք լսել Մինասի աղջկայ դէպքը. տասը տարեկանում աղջիկ են նշանել. տղան նշանածին թողել, գնացել է օտարութիւն: Ութ տարուց յետոյ վերադարձել է աղջկանը սասնելու, բայց աղջիկը նրա երեսին էլ չի ուզում նայել, այլ սիրում է մի ուրիշ տղայի, որ նոյնպէս օտարութիւնից է վերադարձել: Աղջիկը այս տղի մօտ մարդ է ուղարկում, իր սէրը չաջանում նրան և խնդրում, որ նա իրան կին առնի: Բարեկամների մէջ ինչ կռիւ, ինչ խաչտառակչութիւն, ինչեր ասես չի ծագում դորանից... Վերջը երբ ծնողները սկսում են աղջկանը զօւել, որ նա գնաց իւր ութ տարուայ նշանածին, աղջիկը գնում է և իրան դցում գետը: Ախր պա այսքան օրինակներից դուք իսկի չէք խրատուել, որ հիմա ասում էք. «գալիս են խնդրում, մենք էլ պըսակում ենք»:

—Այ Մովսէս, խօսաց տէր Գրիգորը հանաքի ձևով, որ մի խորամանկ մարդ էր, այն տղայ, թող նշանն էլ կատարենք, պատկն էլ ինչ կայ որ. գիտեմ դրա համար շատ փող են տալու մեզ: Մենք եթէ չանենք, գնալու են ուրիշին բերեն և անել տան. էն ժամանակ փողը ձեռքներիցս դուրս կը գայ և մենք կը մնանք ախ ու վախ անելիս:

—Ուրիշը կը պատկի, ուրիշին կը պատժեն:

Քահանաները մնացին լուռ: Մանր էր նրանց համար այդ գեր պատասխանը հրաժարելը, բայց և այնպէս Մովսէսի ոյժի առաջ նրանք ընկճուած էին: Գործակալը խօսուացաւ չկատարել Գալուստի նշանօրհնէքն ու պատկը:

Այնուհետև Մովսէսը նրանց մի-մի բիւմկա օղի խմացրեց և ճանապարհեց իւր տանից:

—Ինչ արած. պիտի լսենք էլի, ասում էին միմեանց քահանաները, փողոցով անցնելիս, եթէ պատկենք, սվ գիտէ Մովսէսը մեր զլուխը ինչ օջին բերի. մեզ ուղարկել կը տայ մինչև Սևան: Բայց նշանը, ոչինչ. էդ կարող ենք օրհնել. վախ չկայ:

Քահանաների հետ տեսնելուց և նրանց կողմից միամտելուց յետոյ, Մովսէսը Գալուստի հետ ևս տեսնեց, բայց ապարդիւն. Գալուստը նրան կրկնում էր շարունակ նոյնը, ինչ որ Պետրոսին էր ասել: Մովսէսի ոչ մի խրատը չկարողացաւ նրա մէջ կամքի ոյժի գէթ մի նշոյլ առաջացնել:

—Այ տղայ, աւելացրեց Մովսէսը, մինչև անգամ ջահելները քեզ մասխարա են անում, որ դու Մատիի ազջկանը տանում ես. ասը Մատին ինչ մարդ էր...

—Թող մասխարա անեն, պատասխանեց Գալուստը, բայց ես էն ազջկան տանելու եմ, չի կարելի, տանելու եմ:

Տղէտ ու կարճամիտ երիտասարդի համար ցաւող—հոգացող մարդը վերադարձաւ նրա մօտից բոլորովին ախուր և յուսահատ դուրժեան մէջ:

Ժ. Գլ.

Շաբաթ երկիոյեան Գալուստի նշանօրհնէքն էր: Սինոդ Առկասի տան սրահում շարուած քոշերի, կոշիկների բազմութիւնը և սենեա-

կից լաւոյ աղմկալի և ուրախաձայն խօսակցութիւնը նշան էր, որ այդ երեկոցեան Համբարձումի տանը մի արաստովոր դէպք կայ:

Այն սենեակը, ուր զեռ պառկած էր օր օրի վրայ հալոողմաշող Համբարձումը, այս անգամ ևս սովորականից աւելի լուսաւոր էր, մաքուր և զարդարւած: Պատերի տակերով փուլած դռշակների վրա շարւած էին հիւրերը և զբաղւած էին զրոյցով: Սենեակի մէջ տեղը, յատակի աղատ տարածութեան վրայ խաղում էին մի քանի մանուկներ և երեխաներ, որոնք հազած ունէին իրանց նոր զգեստները: Նրանք յաճախ նստում, վեր էին կենում, վազվազում էին դէս ու դէն և սենեակում տիրող աղմուկը աւելի աստկացնում: Երախայոց աղմուկն ու շարութիւնը երբեմն միայն ընդհատւում էր, այն էլ հիւրերից՝ որ և է մէկի նախատինքի շնորհիւ, որը հաչոյանքը բերնին սաստում էր նրանց հանդիստ մնալ:

Սենեակի ձախտոին պատի երկայնութեամբ փուլած էր Համբարձումի անբաժան անկողինը, որը զեռ պահում էր իւր ծոցում ամսից աւելի հիւանդին: Նրա ծոց, անտարբեր և մեղամաղձոտ հայեացքը երբեմն այս այն կողմն էր դառնում ու կրկին կենտրոնանում վերմակի շուրջը: Համբարձումը արդէն հասել էր իւր փափազին, դու խ բերելով մի արդիւնաւէտ գործ և այժմ կատարեալ սառնութեամբ ու մեծահոգութեամբ էր նայում այդ երեկոցի վրայ: Նրա հիւանդոտ, մուսշ և հպարտ դէմքի արտայայտութիւնը կարծես ասում լինէր, «զլխաւորը գործի գլուխ բերելն էր, սրանք երկրորդական և աւելորդ, իզուր ծախքի տակ զցող բաներ են»:

Գալուստը իր նոր հագուստը հագած՝ երբեմն յայտնւում էր այդտեղ և էլի շտապ քայլերով աներևութանում: Մի քանի կանանց հետ միասին, նա կառավարում էր հիւրերին: Գալուստը սրտով ուրախ էր, հոգով յուզւած և դէմքով լուրջ: Նշանաւոր էր նրա համար այդ օրը. ամեն անգամ, երբ նրա միտքը կանգ էր առնում այդ խորհրդաւոր երեկոցի վրա, Գալուստի սիրտը սկսում էր արագ բաբախել, նրա երևակայութեան մեջ նկարում էին պէս-պէս պատկերներ, մէկը միւսից զեղեցիկ, մէկը միւսից հրապուրիչ: Եւ նա անհանդիստ հոգով սպասում էր այդ արարողութեան վերջանալուն:

Միայն Վատվառն էր ախուր: Տխուր էր, որովհետև ուրախութեան այդ ժամին երկարատև հիւանդութեան ձանկերում տանջ-

ուում էր նրա ամուսինը, արագ քաշլերով դէպ մահւան գուռը վազող ամուսինը: Վառվառ յիշեց իւր կեանքի նւիրական երեկոն. քանի, քանի տարիներ էին անցել այն օրւանից... «Ի՛նչ կը լինէր, որ ես մարդու չգնայիս, մտածում էր նա երբեմն և մի խոր հառաչանք արձակում:

Ամենից ուրախ միայն հրաւիրւած կանայքն էին, որոնք մի առանձին սենեակում նստած՝ տակն ու վրայ էին անում բամբասանքի համար պաշարով առատ իրանց ամբարները:

Կանանց սենեակի երկու պատուհանում կանգնած էին երկու հեշտաեռ, որոնց ծածկոցների շրթունքների սակից փշշալով գուրս էր ցայտում եռացող ջրի գոլորշին: Երկու լայն մատուցարան իրենց բաժակներով դրած էր շատակի վրայ՝ սամաւարի առաջ: Դրա մօտ կանգնած էին երկու մատաղահաս աղջիկներ և հրամանի էին սպասում, որ նստեն ու թէյ պատրաստեն:

— Վառվառ բաջի, պա չայը չամօնք, հարցրին նրանք:

— Գալուստին ասացէք, որ Սամսոն ապօրից հարցնի, տեսնէ՞ ժամանակն է:

Գալուստը կանանց մօտից մտաւ տղամարդկանց սենեակը և ընկնելով Սամսոնի ականջին, ասաց.

— Սամսոն ապեր, չայը բերենք:

— Ղոնաղները բոլորն էլ եկել Թն:

— Համարեա թէ. մնում են տէրտէրները, Մովսէսը և Պետրոսը:

— Թող դրանք էլ գան, չետոյ չայը կը բերէք:

— Սխր էդպէս ուշանում է. խնամոնց տանից մարդ էր եկել ինչպէս, որ սրբան կարող ենք շուտ դնանք, որ ուշանանք՝ մարդկանց պատրաստութիւնը կարող է փչանալ:

— Լաւ, պա տէրտէրները մինչև հիմա ինչու չեն եկել. ասել էք:

— Ինչպէս չէ. եզնա Սուաքելն էր գնացել ասել:

— Դէ որ չեն եկել մինչև հիմա, մէկ էլ մարդ ուղարկեցէք յետևներից: Մովսէսն ու Պետրոսը որ գան լմա, իսկ եթէ չեկան, փնաս չունի:

— Դրանց յետևիցն էլ մարդ կուղարկեմ:

— Ուղարկիր, ինչպէս ուզում ես:

Գալուստը գուրս եկաւ սենեակից, իւր փեսային նորից ուղար-

կեց տէրտէրների մօտ, իսկ մի աղջկաց էլ՝ Մովսէսի ու Պետրոսի յետևից:

Առաքելը նախ գնաց տէր-Պրիգորի մօտ:

—Տէրտէր, պա ի՞նչու չէք գալիս, ասաց նա, ակսր հիւրերը ձեզ են սպասում:

—Առաքել, գնմ, թէ չգամ, հարցրեց տէր-Պրիգորը ժպտալով և փոքր ինչ մտածելով:

—Էդ ի՞նչ խօսք է, տէրտէր. առաւօտեան ասացիր, լաւ, կը գամ, հիմա միտքդ ուզում ես փոխել:

—Ուղիղ է, Առաքել, ասացի կը գամ, բայց հիմա տեսնում եմ, որ դժւար է. ութ տարեկան աղջկան նշանելը դժւար գործ է և վտանգաւոր. հոգևոր կտոաւարութիւնը մեզ կարող է պատիժ տալ. իրաւունք չունինք:

—Ե՛հ, տէրտէր, տունդ շէն կենաց, դարտակ բաներ են դրանք, առաջին անգամը չեն էդպիսի նշաններ անում. էլ չենք տեսել կամ լսել: Վեր կաց գնանք:

—Առաջներումը հնքան վախ չկար, ինչքան հիմա:

—Այ, վեր կաց գնանք է:

Տէրտէրը ոչինչ չէր պատասխանում և լուռ հայեացքով Առաքելին էր նայում:

—Վեր կաց գնանք:

—Առաքել, դժւար է:

—Դժւար չէ:

—Լաւ, Առաքել, որ էդպէս է, առաջ գնա իմացիր և տես թէ տէր-Սահակը գնալիս է. եթէ նա գաց, ես էլ կը գամ:

—Շատ բարի, բայց դէ նա խօսք է տուել, կը գաց էլի:

—Հարցնելը հարկաւոր է, առաջ նրա մօտ գնացիր, լաւ կը լինէր. ակսր նա գործակալ է:

—Որ էդպէս է, տէրտէր, վերկաց միասին գնանք տէր Սահակի մօտ:

—Ես ի՞նչու դամ:

—Գնանք էլի. եթէ նա էլ գալու չլինի, երկուսով կը համոզենք:

Տէր-Պրիգորը վեր կացաւ տեղից, հագաւ նոր փարաջան և Առաքելի հետ միասին գնաց տէր-Սահակի մօտ:

Տէր Սահակը քայլում էր իւր սենեակում և կարծես մի մարդու էր սպասում, որ ներս մտան Առաքելն ու տէր-Գրիգորը:

—Օրհնեա տէր, տէրտէր, ասաց Առաքելը, դու էստեղ ի՞նչ ես անում: ես մտքումս ասում էի. հիմա տէր-Սահակը զնացած կը լինի նշանդրէք: Ախր զոնաղները սպասում են. պա ի՞նչի մինչև հիմա չես գնացել:

—Ո՛ւր գնանք, հեր օրհնած, էնպէս դործ է, որ գնանք...

—Ի՞նչ կայ որ...

—Ութ տարեկան աղջկան նշանելը դժւար բան է:

—Էէ, դուք էլ թարսելու ժամանակ էք գտնլ. ձեր ձեռքին չի. երկու տէրտէր էք. խօսք-խօսքի տէք, արեցէք:

—Իսկ է, Առաքել, մեր ձեռքին է, բայց որ մեր իշխանութիւնը էդ բանը իմանայ և մեզ դատի կանչի, տեսեմ դու զանու ես մեզ օգնես:

—Այ, էդպէս բաներ մի խօսար է. չլւած բաներ եմ լսում: Մարդիկը սպասում են ամօթ է, գնանք:

Երեքն էլ լուռ էին և միմեանց երեսի էին նայում:

—Տէր-Գրիգոր, դու առաջ ընկիր, տէր-Սահակն էլ կը գայ, ասաց Առաքելը:

—Ի՞նչու. որովհետև դործակալը տէր-Սահակն է, մինչև նա առաջ չընկնի, ես չեմ գնալ:

Էլի լուռ կացան և ժպիտը երեսներին միմեանց էին նայում:

—Մ՛ գնանք է, ասաց Առաքելը, մեզ խայտառակ մի անէք.— յետոյ նեղացած եղանակով,—էդպէս է էլի, հենց որ դործը մեզ հասաւ, ամեն ինչ դժւարացաւ: Ի՞նչու էք էդպէս անում, ախր մենք էլ մարդ ենք. գնանք:

Առաքելը բռնեց տէր-Սահակի թևից և սկսեց քաշել:

—Առաքել, ասաց տէր-Սահակը, որ էդպէս է, լսիր թէ ինչ եմ ասում, դու էլ գիտես, որ ձեր էդ նշանդրէքը դժւար գլուխ գալու բան է. ութ տարեկան աղջկան ոչ կը նշանեն և ոչ կը պսակեն...

—Պա մենք ուզում ենք էգուց էլ պսակել տանք, ընդհատեց Առաքելը բացականչելով:

—Հման, լաւ, բայց աւում եմ, որ շատ վստանգաւոր բան է. մեր փիլիոնը դրա համար, որ իմանան, կարող են վեր առնել:

—Այ հերիք է, հնպէս խամ-խամ բաներ ես ասում որ...

—Կարգս վկայ, սուտ չեմ ասում... հն, դէ որ մի հրպիտի գործ է, էն ժամանակ մի բան մեզ պիտի հասնի ախր, որ մենք էլ էդ դժարութիւնը կարողանանք տանել:

—Դէ դու խոմ ձրի չէք նշանը օրհնելու, պա ձեզ փող չեն տալու:

—Տալը տալու են, բայց թէ որքան են տալու, էտ յայտնի չէ:

—Եդ ինձ էլ չի յայտնի, տէրտէր, պատասխանեց Առաքելը փոքր ինչ կարմրելով և վիրաւորական եղանակով:

—Բայց որ յայտնի լինէր, շատ լաւ կը լինէր. տարածացնու-  
թիւն, կռիւ չէր ընկնիլ. սուս ու փուս ամեն բան կը վերջացնենք:

—Մտքինդ սրբան է, տէրտէր:

—Տասը մանէթ կը տաք երկուսիս, նշանը կօրհնենք, պսակի համար էլ հզուց առանձին կը խօսանք:

—Եդքանը շատ չի:

—Ձէ, էսքանը ոչ շատ է և ոչ քիչ:

—Որ հրպէս է, ես գնամ Համբարձումից կամ Սամսոնից էդ բանի մասին հարցնեմ:

—Գնա և մեզ շատ շուտ տեղեկութիւն բեր, որովհետեւ ես էս գիշեր ուզում եմ գնալ դէպի գիւղերը:

—Գնա տէրտէր, գնա, լաւ պանրի և իւղի ժամանակն է, բայց դէ մեր նշանը պիտի օրհնես, չետոչ գնաս:

Տէր-Սահակը, որ գործակալ էր, Տ. վիճակի վանքի համար գիւղերից իւրաքանչիւր տարի պանիր և իւղ էր ժողովում: Այդ գործից նա բաւականին օգուտ էր ստանում. նա իր թեմի գիւղացիներին ստիպում կամ ամաչացնում էր, որ իւր բաժին իւղն ու պանիրն էլ տան, իսկ երբեմն ժողոված թացանը <sup>1)</sup>, իւր ցանկացած գնով գնելով, միայն փողն էր ուղարկում վանքը: Այդպիսով նա միաժամանակ հարստահարում էր և վանքը և գիւղացիներին: Ձնալած, որ տէր-Սահակը այդ ժողովարարութիւնը վաղուց էր վերջացրել, բայց և այնպէս նա Առաքելի մօտ խաբեց, որպէս զի դրանով իւր նպատակին հասնելուն նպաստէ, տղատիրոջ նեղ դրութեան մէջ դնելով:

1) Կաթնեղէնը:

—Կօրհնենք, միայն զու լուր բեր մեզ, թէ որքան կը տան:

Առաքելը զուրս եկաւ տէրտէրների մօտից բաւականին վրդով-  
լած և զայրացած:

—Ձեր հերն անիծած, հաչոյում էր նա իւր մտքում, կարգ-  
ներից գլխներից խոռով կենաց, անիծւածներ, եթէ օրհնել չի կարելի,  
մի անգամից ասացէք չի կարելի և մի օրհնէք, պա տասանոցն էլ  
ի՞նչ բան է. տասանոցը որ լինի, էն ժամանակ կը լինի, հմա... Էս  
ասղ ժողովրդից ծծում են, ծծում, էլի չեն կշտանում էզ անիծ-  
ւածները:

Առաքելը տուն հասաւ և յայտնեց Սամսոնին տէրտէրի պայ-  
մանն ու ցանկութիւնը: Սամսոնը նոյնպէս վրդովեց ու ասաց.

—Էդ անկուշտները, ագահները, հերիք չէ 10 մանէթ ուզում  
են, հալա պսակի փողի մասին էլ առանձին են խօսալսու:

—Այո:

—Տասը մանէթով համ նշանն օրհնեն, համ էլ պսակը կատարեն:

—Իէ նա կսպէս էր ասում, պատասխանեց Առաքելը, էս գի-  
շեր էլ, ասում է. գնալու եմ զիւղերը, ինչ անելու էք, ասում է,  
շուտ արէք:

Սամսոնը մօտեցաւ Համբարձումին և յայտնեց նրան այդ: Համ-  
բարձումը համաձայնեց միայն ութ ուրբի տալու:

—Ես ասում եմ, Համբարձում, հիմա խօսենք և պսակի փողի  
հետ միասին մի բան տանք, գործը վերջացնենք:

—Ձէ, Սամսոն ապեր, ճի գիտէ նրանք պսակի համար ինչ ու-  
զեն. խօսակցութիւնը կերկարանաց, կուշանան, առանց էն էլ ուշա-  
ցել էք, խնամիներս կը նեղանան: Թող իրիկուէս նշանը օրհնեն,  
խիկ էզուց աւաւօտեան երկու քահանային էլ չաչի կը կանչենք  
և պսակադրամի մասին կը խօսանք: Իրանք էլ էզ չեն ուզում,  
Առաքել:

—Էդ են ասում:

—Իէ լաւ է, էլի. հետոյ 10 մանէթ վերցուր. Առաքել, որ  
տեսար շատ են երկարացնում, տասը մանէթը թակիր աչքները,  
վերցուր եկ:

—Աշխատիր ութով վերջացնել, աւելացրեց Սամսոնը, շուտ  
եկ, ամօթ է, խնամիները սպասում են:

Առաքելը առաւ փողը և շտապով դուրս գնաց:

— Հը՛, ի՛նչ եղաւ, փողը բերիր, հարցրեց տէր-Սահակը, երբ Առաքելը ներս մտաւ:

— Բերել եմ, բայց քիչ եմ բերել. ութ մանէթ են տւել:

— Դէ ութ է, ութ է, հենց տասր բերէիր էլի, ասաց տէր-Գրիգորը:

— Ութը հերիք է:

— Հերիք չէ, Առաքել, պատասխանեց տէր-Սահակը, ես լաւ եմ ասել. 10 մանէթը ոչ շատ է և ոչ քիչ: Տնաշէն, հենց երկու մանէթի էք դէմ ընկել. երկու մանէթը ի՛նչ է, որ: Ուզում էք հենց ձրի օրհնեմ:

— Ժլատութիւն անելու ժամանակ չի, ասաց տէր-Գրիգորը, մի աղջիկ էք նշանում, որ վրան, ով գիտէ, հազարից աւելի կարողութիւն լինի. հիմա երկու մանէթը խնայում էք:

Բարկացաւ Առաքելը և զայրագին ձայնով դռնեց.

— Ձեմ կարողանում հայհոյել, քահանայ էք, կարգներիցդ ամաչում եմ: Ինչու էդքան ագահ էք. ինչ զօրութիւն կայ էդ 10 մանէթի մէջ. եթէ չի կարելի մեր նշանը օրհնել, որովհետեւ աղջիկը ասում էք, փոքր է և ձեզ դրա համար կը պատժեն, ուրեմն 10 մանէթին են նայելո՞ւ...

— Իհարկէ, պատասխանեց տէր-Սահակը, երբ մեր բանը բուրդ եղաւ, էն ժամանակն էլ մեր ջերիցն է փող դուրս գալու: Պա էտ ձիինչ: Մէկ էլ քեզ եմ հարցնում, Առաքել, պա ասուած կընդունի, որ սովորական նշանդրեքին էլ վերցնեմ մէկ մանէթ, վեց ասլասի, էս նշանդրեքին էլ:

— Այ առէք է, առէք, ասաց Առաքելը կոշտ ու զայրագին, տասը մանէթը տէր-Սահակին դէմ անելով, վերցրէք և շուտ արէք գնանք: Էլ մի երկարացնէք, ուշացանք. խնամիներս սպասում են, ամօթ չի:

Տէր-Գրիգորը այդ բոպէին մի հնգանոց հանելով տէր-Սահակին փուս և տասանոցը ինքը վերցրեց: Նրանք փողը խկոյն կիսեցին, որովհետեւ միմիանց չէին հաւատում: Դա հետևանք էր այն հանգումանքի, որ այդ քահանաները միմիանցից շատ էին գողանում:

—Շնորհակալ ենք, ասացին այդ բոլորից յետոյ նրանք. դէ, զնանք, ուշացանք:

—Հրէս, աէր-աէրները եկան ասաց Սամսոնը, բոլորի հետոքի ելնելով. չաչը բերէք, էլ հարկաւոր չի սպասել, Մովսէսն ու Պետրոսն էլ չեկան:

Քահանաների նստելուց յետոյ միայն հիւրերը կրկին նստեցին իրանց տեղերում: Աղմկալի խօսակցութիւնը աէրտէրների շնորհիւ փոքր առ փոքր մեղմացաւ: Գալուստն ու Առաքելը թէչ ու շաքար բերեցին և բաժանեցին հիւրերին:

—Առաքել, կանչեց Սամսոնը. կանանց ասա, որ իրանք էլ չայ խմեն, վերջացնեն և շուտ անեն խոնչան պատրաստեն:

Պատուէրը տեղ հասաւ և Համբարձումի աղգական կանանցից մի քանիսը Վառվառի հետ միասին խոնչայի պատրաստութեան կացան:

Թէչից յետոյ Համբարձումի քոչը, բոլոր հիւր կանանց հետ, եկաւ ողամարդկանց սենեակը: Նա իւր ձեռքերում բռնած էր խոնչան, որ ուղղակի տարաւ ու դրեց քահանաների առջև:

Խոնչան մի մեծ մատուցարան էր, որի մէջ չամիչ, քիշմիշ և այլ չոր մրգեղէններ էր ածած: Գիզած մրգեղէնի վրա մատուցարանի մէջ տեղում դրած էր մի մեծ նուռ, որի ծաղկային բաժակում սնկած էր մի հաստ մոմ. այդ նուռն շուրջը մատուցարանի իւրաքանչիւր անկիւնում դրած էր մի-մի նուռ որոնց բաժակներում նոյնպէս մոմեր էին տնկած: Անկիւնների նուները իրանց մէջ գտնուող տարածութեամբ կազմում էին մի քառանկիւնի, որի կենդրոնում կանգնած էր մեծ նուռը: Կենդրոնական նուռն կողքին գտնուում էր բոժոժի սերմի մի արկղիկ, որի վրա կանգնած էր մի մեծ ու կարմիր խնձոր: Խնձորի մէջ անկանոն կերպով խրւած էին արասիներ, որոնք այդ զնդին ատամնաւոր անւի տեսք էին տալիս: Նուների արանքներում ցրւած էր կանֆէտ և այլ քաղցրաւենիքներ: Մատուցարանի մի ծայրում թղթի մէջ մի ինչ որ բան էր փաթտած, իսկ նրա հանդէպ, հակառակ ծայրում, նոյնպէս թղթի մէջ ծալւած էր մի մետաքսէ թաշկինակ, որի ծայրերը փնջերի հետ միասին երևում էին:

Դա էր խոնչան և միւլնոյն ժամանակ նշանը, որ տղատէրը աղջկատիրոջ տուն պիտի տանէր և այնտեղ օրհնել պիտի տար: Ամբողջ խոնչան հարսնացուի համար են պատրաստուած: Հարսնացուն իրան պատկանող բոլոր ընծաները վերցնում է, իսկ միւրքն ու քաղցրաւենիքները բաժանում հիւր կանանց և երախաներին:

Ամենքը լուռ և ուշադրութեամբ նշանին նայեցին: Յետոյ տէր-Սահակը բարձրացրեց իւր ձայնը և ասաց.

—Ո՞վ է խոնչայի տէրը, թող յօտ գայ:

Այն ժամանակ Վառվառի խնդրանօք առաջ անցաւ Համբարձումի քոյրը՝ Անուշիան, որը ներկայ գտնուող հիւրերի հետ խօսալու իրաւունք ունէր, մօտեցաւ խոնչային և չօքեց նրա առաջ: Վերցնելով թղթի մեծ փաթեթը նա բաց արաւ այդ և ասաց.

—Սա հարսնացուի սապոկներն են իրանց չուլիկներով. էս էլ— նա բաց արաւ թղթի միւս փաթեթը— էս էլ արբեշումի աղլուխն է:

Բոլորին ցոյց տալուց յետոյ՝ Անուշիան իրերը խնամքով կրկին փաթաթեց ու իրանց տեղը դրեց: Այնուհետեւ նա իւր ձեռքը զգուշութեամբ մեկնեց սերմի արկղիկին. նախ վերցրեց ապասխներով ծածկած խնձորը, ցոյց տուեց բոլորին և յայտնեց այն անձանց անունները, որոնք մի-մի ապասի նւիրել էին հարսնացուին: Նւիրողները միայն կանայք էին: Այնուհետեւ Անուշիան բաց արաւ սերմի արկղիկը, նրա միջից հանեց արծաթէ ապարանջան, մի ոսկէ մատանի և երկու հաս անգլիական ոսկի հին դրամներ:

—Էս ոսկին ու ապարանջանը, ասաց Անուշիան. տղատէրն է տանում, իսկ էս ոսկին էլ Սամսոն ապերն է տուել:

Այդ իրերն էլ խնամքով մատուցարանի մէջ տեղաւորելով, Անուշիան վեր կացաւ տեղից:

—Ասուած շնորհաւոր անի, դօչեցին ամենքը. բարեկամաց աչքը լոյս լինի, բախտաւոր լինեն մեր թագաւորն ու թագուհին, երջանիկ ապրեն և մի բարձի ծերանան:

—Ամէն, ամէն, լուսեց ամեն կողմից:

Տիրեց լուրթիւն: Մի քանի վայրկեան անցած՝ խոնչային մօտեցաւ Գալուստի քաւորը և սերմի արկղիկի մէջ դրեց մի լուբլ արծաթադրամ:

—Շէն կենաց քաւորը, կանչեց Անուշիան, որ դեռ կանգնած էր խոնչաչի կողքին. տւեց մի բիւլիւր մանէթ:

—Շէն կենաց, շէն կենաց, կրկնեցին ամենքը:

Քաւորը հեռացաւ և այս անգամ մօտ եկաւ սանամէրը: Նա հարսնացուի համար խոնչաչու՛մ դրեց մի զոյգ Նուխայ քօշեր:

—Շէն կենաց սանամէրը, կանչեց Անուշիան. տւեց մի ջուխտ Նուխայ քօշեր:

—Շէն կենաց, շէն կենաց:

—Աղջի, Անուշիա, էդ խնձորը վերցուր բեր էստեղ, լուեցին մի քանի տղամարդիանց ձայներ:

Անուշիան վերցրեց մատուցարանի խնձորը և մօտ տարաւ պահանջողներին: Գալուստի մի քանի ազգականներն ու ընկերները նոյնպէս աբասիներ խրեցին խնձորի մէջ:

—Պա փեսան օր է, ասաց տէր-Գրիգորը:

—Էստեղ է, լուեց սենեակի հեռու անկիւնից, որտեղ խմբուել էին մի քանի երիտասարդներ:

Մի քանի րոպէ լուսթեան մէջ անցաւ և յանկարծ խմբուած տղայոց միջից դուրս եկաւ մեր զարդարուած փեսան: Ամօթխածութիւնը նրան թոյլ չէր տալիս ոչ ոքի երեսին նայել: Խեցզետնի նման կարմրել էր Գալուստը՝ նա մօտեցաւ քահանաներին և կանգնեց նրանց առաջ:

—Եղբօրդ մնաս բարև ասա, զնանք. ժամանակն է, թելադրեց տէր-Սահակը:

Գալուստը մօտեցաւ Համբարձումին, սեղմեց նրա ոսկրացած ձեռքը և համբուրեց նրա հետ:

—Ապրես, եղբայրս, ասաց հիւանդը. զնան, բարի ճանապարհ քեզ, Աստուած բարի վայելում տայ քեզ:

Եւ արտասուեց:

Դրանից յետոյ ամենքն էլ՝ թէ կին, թէ տղամարդ և թէ երեխայ՝ փեսային հետներն առնելով՝ ճանապարհ ընկան դէպի աղջրկատուն: Փեսայի կողքին կանգնած էր քաւորը, որ իւր կոնատակին բռնած ունէր խոնչան: Քաւորը պիտի տանէր խոնչան: Տանը մնաց միայն Վառվառը՝ ամուսնուն խնամելու համար:

Քիչ անցած՝ փողոցում լաւում էր հարսանեաց երգերի ձայ-

ներ: Այդ Քալուստի մականներն էին, որ փեսային տաղերով և ուսաներով էին ուղեկցում զէպի աղջկատուն:

ԺԱ. ԳԼ.

Աղջկատէրը և իւր հիւրերը երկար ժամանակ սպասում էին խնամիներին: Հիւրերից ոմանք այդքան սպասելուց և տաղովալի զրութիւնից յոգնած՝ մեկնել էին զողակների վրայ: Ոմանք էլ մէջքները պատին տւած՝ մեկնել էին իրանց սոսները: Մի քանիսը քաղցր քնի մէջ էին արդէն. երբեմնակի տիրող լուսթիւնը ամեն անգամ ընդհատում էր քնածների խռմփոցներով ու փստոցներով:

—Պա խնամիները ինչ եղան խնայ, չե՞ն գալիս. հարցնում էին յաճախ հիւրերը բարկացած ու՞ անհամբեր ձայնով:

—Խնամիները գալիս են, աւետեց վերջապէս կանանցից մեկը: Քնածներին արթնացրին և բոլոր հիւրերը կարգով նստեցին իրանց համար նշանակւած տեղերում: Գրիգորը, Սիմին, մի քանի կանայք և աղջիկներ դուրս եկան բակը, խնամիներին զիմաւորելու:

Նոյզառը մականների երգերի ձայները լսելով՝ իւր հասակակից աղջիկների և տղաների հետ վազել էր փողոց՝ եկողներին նայելու: Հարսնացուն ուրախ էր. կանգնած տեղը նա յաճախ թռչկոտում, ծափ էր տալիս և բերկրալի ժպիտը երեսին շուտ-շուտ ընկերուհիներին էր նայում ու ասում.

—Երանի ինձ, հման. ինձ համար լաւ-լաւ ընծաներ և քաղցր բաներ են բերելու:

Եւ ուրախութիւնից նա շարունակում էր թռչկոտել ու ծափահարել:

Երբ եկողները արդէն մօտեցել էին Մատիի բակի դռանը, Սիմին դարձաւ իւր մօտ կանգնած Հերիքնաղին, որ մի չափահաս աղջիկ էր և ասաց.

—Հերիքնաղ, նոյզառին վերցուր տար փոքրիկ սենեակը. չթողնես դուրս գայ. ամօթ է, խնամիները գալիս են:

Հերիքնաղը խկոյն զէս ու զէն ընկաւ, բայց հարսնացունին չգտաւ:

—Սիմի բաջի, ասաց նա, նոյզառը չի երևում. բոլոր երկտաներն էլ չկան:

—Աղջի, ախր քիչ առաջ էստեղ խաղում էին:

—Զկան:

—Քո տեղը դատարկ մնաց, այ իմ Նոյզառ աղջիկ, գոչեց Սիմին սարսափահար. աղջի, Հերիքնազ, քեզ մատաղ, վազիր փողոցը մի տես թէ էնտեղ են. հաւատա զնացել են խնամիներին հանդիպելու: Վազիր, ծամերիցը քարշ տալով բեր գցիր սենեակը:

Հերիքնազը վազեց դէպի փողոց: Սցւտեղ, եկող խնամիներից մի քանի քայլ առաջ, պատի տակով շարած էին Նոյզառն ու իւր ընկերուհիները և անհամբերութեամբ սպասում էին խնամիների մօտ գալուն: Նրանց ու շաղրութիւնը ամբողջ սպէս գրաւել էր եկողների ձեռքերում՝ բռնած վառուղ մոմերի բազմութիւնը, որ գիւղի խաւար փողոցի համար մի առանձին շքեղութիւն էր կազմում:

Յափշտակած այդ լուսաւորութեամբ, Նոյզառը բաց սկանչեց.

—Վի՛ի, մոմերին նայեցէք էէ, վի՛ի...

Եւ առաջ վազեց... Մօտեցաւ մահարներից առաջին հանդիպողին ու ասաց.

—Ա՛՛, մի մոմ էլ տուր ինձ:

Տղատան հիւրը մնաց շարած, տեսնելով հարսնացուին այդտեղ. հարսնացուին փողոցում, բորիկ ու գլխաբաց...

—Աղջի, դու էստեղ ի՛նչ բան ունիս, գոչեց երիտասարդը շարումից սթափւած. կորիր տուն:

Նոյզառը ախանջ շարաւ նրան, այլ նրա մօտից անցաւ երկրորդի, երրորդի մօտ, շարունակելով մոմ խնդրել:

Բայց այդտեղ հասաւ նրան Հերիքնազը, ջանկարծակի բռնեց նրա կանից այնպէս, որ աղջիկը վախից ցնցւեցաւ, և քաշեց դէպի տուն:

—Մեռնես դու, ասում էր Հերիքնազը անընդհատ. էստեղ դու ի՛նչ բան ունիս. մեզ խաչտառակելու ես Տուն հասնենք, տես մայրդ քեզ ի՛նչ է անելու. կաշիդ մաշկելու է, կաշիդ:

Աղջիկը, որ ընդիմանում էր Հերիքնազի քարշ տալուն, սկսեց բարձր ձայնով լաց լինել ու գոռալ.

—Շան քաժ, չեմ գալիս, հը՛ր, չեմ գալիս... վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, հւհւհւհւ...

—Աղջի, ձայնդ կորիր, կորիր ձայնդ. հերիք է, որքան մեզ

խայտառակեցիր... Տես, վիզդ կը կտրեմ էս սհաթին. զնանք... տես, քեզ կը գցեմ էս գոմը և փակը կը դնեմ. սատանաները քեզ կը վերցնեն կը փախցնեն...

Բայց հարսնացուն ականջ չէր դնում Հերիքնազի սպառնալիքներին. նա անընդհատ գոռում էր և անասելի հայհոյանքներ թափում բերանից: Ումնից էր սովորել ութ տարեկան աղջիկը այդ հայհոյանքները...

Հերիքնազը այլ ևս չկարողացաւ համբերել աղջկայ գոռոցին ու ընդիմանալուն. նա արագութեամբ իւր գիրկն առաւ Նոյզաւին և վազեց դէպի տուն: Հարսնացուն շարունակում էր գոռալ ու հայհոյել: Նա իւր ոտները թափահարում էր և ճիգ էր անում ազատելու իւր բռնակալի ճանկերից, բայց Հերիքնազի ուժեղ կռները ամուր էին պատում նրան:

Աղջիկը շնաստպառ տուն հասաւ և վայր դրեց իւր բեռը Սիմի առաջ: Մայրը մի քանի անգամ բռունցքի հարւածներ տւեց աղջկայ մէջքին, ուսերին և մազերիցը քաշելով, տարաւ սենեակ:

— Էստեղից զուրս չես գալ, հասկացար, ասաց մայրը. կաշիդ կը մաշկեմ, լիրբ անամօթ. կը սպանեմ քեզ, որ դուրս դաս:

Նոյզաւը գոռում և գոռում էր:

Հերիքնազը եկաւ նրա մօտ և սկսեց հանդարտացնել հարսնացուին: Այդ նրան յաջողւեց այն ժամանակ միայն, երբ Նոյզաւին մի քանի քաղցրաւենիքներ տալուց չետոյ, վախեցրեց, թէ նա եթէ շարունակէ լաց լինել, խնամիների բերած ընծաներից ոչինչ չի ստանալ, այլ բոլորը նրա ընկերուհիներին կը բաժանեն:

Նոյզաւը թողեց իւր հեկեկանքը և խնդրեց, որ Հերիքնազը բաց թողնէ իրեն սենեակից:

— Մի գնալ, հարկաւոր չի:

— Անն, ընկերներս կարին խաղում են իսկ ես մնամ Էստեղ:

— Վնաս չունի. նրանք թող էստեղ խաղան. նրանց ինչ. նրանք ոչ խնամի ունեն և ոչ ընծաներ են ստանալու. իսկ դու էստեղ մնալ, որ արբեշումի աղլուխ, սասուկ, փող ու կանխէաներ ստանաս... հն, մի ոսկի մատանի էլ են տալու: Եթէ դու էլ գնաս կտուրը և միւս երեսանների նման խնամիների առաջ խաղաս, էն

ժամանակ քեզ ոչինչ չեն տալ և կասեն. էս ինչ վատ աղջիկ է: Անխելք չես, որ գնաս:

Նոյզառը, որ ապուշ կտրած լսում էր Հերիքնազի խօսքերը, յանկարծ ժպտաց ու թռչկոտելով բացականչեց.

—Ձեմ գնում, չեմ գնում, երանի ինձ, հման, Հերիքնազ բաջի:

—Պա ինչ, որ ասում եմ:

—Դէ հիմա գնա աբրեշումի աղլուխը բեր էլի:

—Հիմա չի կարելի, տէրտէրն է տալու քեզ:

—Վճւշ, տէրտէրից կը վախենամ, չեմ գնալ նրա մօտ:

—Ձեա վախենալ. ես էլ եմ քեզ մօտ լինելու, մայրիկն էլ. դէ հիմա դու էստեղ կաց, ես գնամ տեսնեմ զոնաղները ի՞նչ եղան:

Հերիքնազը բացաւ դուռը, նոյզառի ընկերուհիներին ևս ներս թողեց, որ հարսնացուի հետ խաղան և չդուռը կողպելով, գնաց կանանց սենեակը:

—Ինձ համար սապօկներ, աբրեշումի աղլուխ, ոսկի մատանի, կանֆետ են բերելու եէ, ասաց Նոյզառը իւր ընկերուհիներին ուրախ-ուրախ, հը՛ր, դուք չունէք, իսկ ես ունեմ...

—Ո՞վ է բերելու, հարցրին աղջիկները հետաքրքրութեամբ և նախանձով:

—Մեր քեռիի ընկերը, Գալուստ ապերը. ախր նա մեզ բարեկամ է, կանֆետ է բերելու:

—Մեզ էլ ես կանֆետ տալու, հման, Նոյզառ. ասացին ընկերուհիները շողջորթութեամբ. ախր դու լաւ աղջիկ ես, դու զոչաղ ես, հման...

—Կը տամ:

—Ինձ ամենից շատ կը տաս, հման, Նոյզառ. ասաց Սառան, փարելով նրա վզովը, ախր ես ու դու ընկեր ենք:

—Քեզ շատ եմ տալու:

—Գալուստ ապերը լաւ է, հման, ասացին երեխաները միաբերան:

—Պա լաւ չի, որ ինձ համար լաւ-լաւ բաներ է բերելու, ասաց Նոյզառը զարմանքով:

—Հը՛, սլա ինչու են եկել ձեր տուն, Նոյզառ. հարցրեց Սոնան, որ աղջիկներից ամենամեծն էր:

—Ախր մեզ բարեկամ են, զոնաղ ենք արել, եկել են:

—Պօ հօ... ծաղրեց նրան Սոնան:

—Լաւ, պա ինչու են եկել, հարցրեց Նոյզաւը բարկացկոտ հետաքրքրութեամբ:

Սոնան ոչինչ չկարողացաւ պատասխանել, թէև մի ինչ որ մութ բան զգում էր նրա երեսաչական հոգին:

Ամենքը լռեցին: Նոյզաւը երջանիկ էր: Երեսաները նախանձով նրան էին նայում և մնում լուռ: Քիչ անցած նրանք կրկին խաղով անցան:

Խնամիներին ներս հրաւիրեցին և նրանք մէկ-մէկ մտան սենեակ: Տղամարդիկ ու կանայք առանձին սենեակներում նստեցին: Տէր-Սահակն ու տէր-Փրիզորը կանխօրէն բռնել էին իրանց տեղերը սեղանի ձախտին: Խնամիները աղջկատիրոջ խնդրանօք, բռնել էին պատուաւոր տեղերը: Փեսան ու քաւորը միասին կանդնած էին յտկապէս իրանց համար պատրաստած տեղում: Երբ այլ ևս բաց կաց մարդ չկար հիւրերից, սեղանը փակեցին և շուտով սկսեց կերուխումը: Փեսայի համար առանձին կերակուր էին պատրաստել. մի մատուցարանի մէջ նրա համար բերին ձաձեղ, մեղր, կարմիր ձու, գաթաց, իւղ և զանազան քաղցրաւենիքներ:

Երբ աղջկատէրը հրաման տւեց փեսային նստելու, այն ժամանակ Քաւորն ու իւր քաւորը նոյնպէս նստեցին: Քէֆը սկսեց:

Խնձոյքը քանի գնում, գինու աղղեցութեան սակ կենդանութիւն էր ստանում: Վայելում էին սովորական կենացներ՝ փեսայի ու հարսնացուի, երկու կողմի խնամիների, դրանց բարեկամների և օտարականների կենացները: Այնուհետև գալիս էին ընդհանուր բնաւորութիւն կրող կենացները. հայ ազգի, կաթողիկոսի, թագաւորի և հայոց ու ռուսաց մեծամեծների կենացները: Իւրաքանչիւր կենացի վրայ երգ էին երգում: Երգերը գլխաւորապէս պարսկերէն էին և մէկ-մէկ հայերէն: Թամազայի հրամանով մակարներից ոմանք պարում էին երբեմն:

Այնուհետև էլի կենացներ, էլի երգեր, պար, զրոյց, վիճաբանութիւն և աղմուկ...

—Լուութիւն, լուում է երբեմն թամազայի ձայնը, որ աշխատում է կարգ պահպանել:

— Գինին փոխել տուր, պարոն թամազա, գոչում են ամենքը. գինին...

— Գինին փոխեցէք, Գրիգոր. ասում է թամազան. թէ լաւ գինի ունիս, բեր, սա ինչ է. քացախ ես մեզ խմացնում...

Գրիգորը, որ կանգնած սպասաւորում էր հիւրերին, ժպտալով պատասխանեց.

— Ուրիշ գինի չունեմ. ինչ որ կայ, դա է, քէֆներդ է խմեցէք, քէֆներդ է մի խմէք:

— Գինի բեր, գինի, թէ չէ մենք էստեղից յետ կը դառնանք, էն ժամանակ դու գիտես ու փեսադ...

— Հա, հա, հա, քրքջային ամեն կողմից:

— Գինին փոխեցէք...

— Գինին էդ է, ուրիշը չունիմ, կրկնեց Գրիգորը կտրական ձայնով:

— Այ հանդիսականներ, ասաց թամազան. եթէ որ գինին չփոխեն, էստեղ մնալու կամ քէֆ անելու էք:

— Չէ, չէ, չէ, գոչեցին մականները:

— Էդ ինչ ես ասում, պարոն թամազա, խօսեց Գրիգորը. ումն ես վախացնում: Պա ես խնամի կը թողնեմ, որ էստեղից հեռանայ. էն էլ ինչի, լաւ գինու համար: Տղերք, դարձաւ նա գինի մատակարարողներին, որոնք մի-մի կուլա գինի և սղոձէ պնակի մէջ մի քանի բաժակներ բռնած անցնում էին սփռոցների միջով ու գինի բաժանում. կարմիր գինին բերէք:

Յետոյ դառնալով հանդիսականներին, շարունակեց.

— Մի էնպէս գինի տամ ձեզ, որ առաջին բաժակից յետոյ էլ չկարողանաք տեղներիցդ շարժուել...

— Դու բեր, վնաս չունի, թող էստեղ մնանք, ասաց թամազան. ուրիշի տանը չենք խօս. մինչև առաւօտ քէֆ պիտի անենք:

— Ի հարկէ, գոչեցին մականները, որոնք ուշադրութեամբ յետևում էին այդ խօսակցութեանը. խնամի Գրիգոր, տանդ էլ բան չենք թողնելու, քանդելու ենք...

— Քէֆը ձերն է, պատասխանեց Գրիգորը ծիծաղելով. ինչ ուզում էք արէք. ո՞վ է ձեր կոները բռնելու:

Վերջապէս կարմիր գինին սեղան եկաւ: Ամենից առաջ թամազան փորձեց նոր գինին:

— Էս է հնա, բացականչեց նա մի առանձին բաւականութեամբ և խմելուց յետոյ շրթունքները չպայացնելով. հրաշալի գինի է, շատ շնորհակալ եմք, խնամի Գրիգոր: Դէ տղերք, բաժակները լցրէք: Եւ խնձոյքը նոյն ձևով շարունակում էր ընթանալ:

Ազմկալի էր և կանանց սեղանը, բայց այնտեղ թամազա չկար: Գրա հետ միասին չկար ոչ երգ և ոչ պար: Խօսում ծիծաղում էին: Խօսակցութիւնը բամբասանք էր:

Կէս գիշերին մօտ էր: Երկարատեւ ուրախութիւնը արդէն շատերին ձանձրացրել էր: Ամենքը սպասում էին, որ թամազան մերջ տայ սեղանին: Բայց թամազան լուռ էր: Նրա լուութիւնը նոյն ցանկութիւն էր արտայայտում, բայց նա սպասում էր, որ իւր կենացն էլ վայելին: Ահա վերջապէս հանդիսականներից մէկը սիրտ առաւ և խմեց թամազայի կենացը: Կարծես ամենքն էլ մի տեսակ ծանր ու ճնշող դրութիւնից ազատեցին: Ամեն ոք իրան թեթեւ և ազատ զգաց: Հանդիսականները շնորհակալութեամբ վայելեցին թամազայի կենացը, որ շնորհքով կառավարեց սեղանը: Կառավարիչները շուտով ժողովեցին սփռոցները, որից յետոյ ոտներ մեկնելու համար ազատ տարածութիւն բացեց:

— Նշանը բերէք, լսեց տէր-Սահակի ձայնը. ժամանակն է, բաւականին գիշեր է անցկացել:

Պատուէրը բերանէ բերան անցնելով, կանանց ականջին հասաւ: Մի քանի բոպէից յետոյ նրանք ևս եկան տղամարդկանց սենեակը: Անուշիան առաջ անցաւ և ձեռքերին բռնած խոնչան զրեց տէրտէրների առաջ: Քահանաները ոտքի կանգնեցին, նրանց հետ միասին և բոլոր հանդիսականները:

— Փեսային ու հարսնայունին էստեղ բերէք, ասաց տէր-Սահակը:

— Գալուստ, ասացին այստեղից այնտեղից. զնա տէրտէրի առաջ կանգնիր:

Գալուստը հանդարտիկ մօտեցաւ քահանաներին և երկու քաջ հեռաւորութեան վրայ կանգնեց նրանց առաջ: Սպասում էին հարսնացուին, որ նշանի օրհնութիւնը սկսեն: Հարսնացուն զեւ չէր չաչտնուում:

—Պա ինչ եղաւ աղջիկը, գոչեց տէր-Գրիգորը, համբերութիւնը հատած. ինչու էք ուշացնում:

—Կը գայ տէրտէր, պատասխանեց Գրիգորը, էս սհաթին կը գայ, մի քիչ էլ համբերեցէք:

Այն ինչ այդ րուպէին Նոյզաուը զարդարւած ու պատրաստ, յամառում էր տղամարդկանց սենեակը մտնել և, որ գլխաւորն է, քահանաների առաջ կանգնել: Մայրը մի քանի անգամ քաշեց նրա մազերից և աղջիկը սկսեց լաց լինել: Յօրը բարկացնելու համար նա հանեց իւր գուլպաները և ստաց.

—Որ հրպէս է, ես էլ բոբիկ կը գնամ էնտեղ:

Յիմին սաստեց նրան որ յիմարութիւն չանի, նորից գուլբաները հագցնել տւաւ և մեծ դժւարութեամբ՝ աղաչանքով, պաղատանքով ու գրաւիչ խոստումներով Նոյզաուին տարաւ տղամարդկանց սենեակը:

Գռնով մտնելուն պէս, Նոյզաուը մնաց ապշած. ինչ շատ մարդ կար այդտեղ. ամենքն էլ կանգնած ու պատերի տակ շարւած...

Մի րուպէ նա մնաց դռան շէմքի մօտ կանգնած. և ապուշ ու վախկոտ հայեացքով սկսեց բոլորին դիտել: Հանդիսականների երևաներով անցաւ մի թեթեւ ժպիտ, երբ տեսան ութամեայ հարսնացուին:

—Յոլորովին ծաղր բան է, փսփսացին ոմանք:

—Առաջ արի, Նոյզաու, ստաց տէր-Սահակը. եկ նշանածիդ կողքին կանգնիր:

Աղջիկը ապուշի նման ժպտաց: Նրա համար այդ խօսքերը այնքան էին հասկանալի, որքան և այդ երեկոյեան խնձօջքի նպատակը:

Մայրը առաջ հրեց աղջկան և սա մի քանի քայլ անելուց յետոյ, կրկին կանգնեց ու սկսեց տատանել:

Նա ցուցամատը բերանը տարաւ և նայելով շուրջը սկսեց շրթունքների հետ խաղալ:

—Աղջի, էլ ռւր ես կանգնել ախր, ստաց տէր-Սահակը համբերութիւնը հատած. արի՛ էստեղ կանգնիր էլի: Եւ շտապ քայլերով առաջ գարով, բռնեց աղջկայ թևից, քաշեց, տարաւ աղայի նախ աջ, յետոյ ձախ կողքին կանգնեցրեց, իսկ ինքը յետ յետ գնալով կրկին կանգնեց իւր տեղը:

Տէրտէրի վարմունքը և մանկահասակ հարսնացուի ներկայութիւնը երեսնամեայ երիտասարդի կողքին նորից քրքիջ առաջացրեց հանդիսականների մէջ, իսկ տէր-Սահակը սկսեց իր օրհնութիւնը:

Վախեցաւ Նոյզառը և նապաստակի պէս կուչ եկաւ իր տեղում: Նրա ամբողջ մարմնով մի սարսուռ անցաւ: Յետ նայեց ու տեսաւ, որ մայրն ու Հերիքնազը իր մօտ են կանգնած: Փոքր ինչ սրտապնդեց հարսնացուն, բայց իսկոյն էլի մի զող ընկաւ նրա մարմինը: Նրա շուրջը կատարւող այդ տարօրինակ գործողութիւնը, որ մութն էր, ինչպէս կէս գիշերային խաւարը և աճուելի, որպէս քարափի ծայրից բացւող անյատակ անդունդը, սարսափեցրեց Նոյզառին: Նա զգաց իր տարօրինակ դրութիւնը. զգաց, որ իր տեղը չէ. չիշեց հարեան սենեակում գտնուող ընկերուհիներին և յանկարծ իւր ձեռքը ազատելով Գալուստից, վազեց զէպի դուրս:

Մայրը բռնեց նրան և խրախուսեց. նա մատնացոյց արաւ մատուցարում՝ դտնուող փայլուն զարդերի և քաղցրեղէնների վրայ, ասաց, որ այդ ամենը Նոյզառին են տալու և այդպէս նրան զրաւելով, կրկին բերաւ ու կանգնեցրեց փեսայի կողքին: Քահանան նորից բռնեց նրա ձեռքը, տւաւ Գալուստին ու ասաց.

— Գալուստ, պինդ բռնիր, որ չփախչի:

Ամենքը խնդացին: Նոյզառն էլ ծիծաղեց և այս անգամ հաշուեց իւր դրութեան հետ:

Որոշ աղօթքներ կարդալուց յետոյ տէր-Սահակը դարձաւ տղային ու հարցրեց.

— Իու էս աղջկանը քո յօժար կամքովն ես տանում:

— Այո, պատասխանեց Գալուստը, այլայլած և թուքը կուլ տալով:

— Իսկ դու, Նոյզառ, քո յօժար կամքովն ես գնում էս տղին:

Նոյզառը ոչինչ չհասկացաւ այդ հարցից և ապուշի նման իւր շուրջը նայելով, սկսեց ծիծաղել: Քահանան կրկնեց իւր հարցը քարկացած ձայնով, բայց աղջիկը այս անգամ ևս անպատասխան թողեց քահանայի հարցը, չիմանալով ինչ պատասխանել:

—Ասա այն, իմ յօժար կամքովն եմ զնում, թելադրեց մայրը լսելի ձայնով:

—Ասա, ասա այն, կրկնեցին հանդիսականներից ոմանք:

—Ձե՛մ ասում, պատասխանեց Նոյզառը, պատրաստելով խուժել կամ լաց լինել:

—Աղջի, ասա այն, պահանջեց նորից մայրը:

—Վի՛ի, չե՛մ ասում, հը՛ր...

Եւ Նոյզառը ուղեց աղատել իւր ձեռքը Քալուստից: Նա սկսեց արտասուել:

—Լաւ, լաւ, հարկաւոր չի, դարձաւ տէր-Սահակը Նոյզառին. հանդարտւիր, թող լացը, թէ չէ քեզ էս բոսիկին կը տանն՛մ սաղսաղ կը թաղե՛մ, մեռելների կողքին կը դնե՛մ ու ինքս կը գամ. սուս: Նոյզառը սարսափից կպաւ Քալուստին և խնդրեց մօրը, որ սա իրան մօտիկ կանգնէ:

—Էնպէս էլ, Նոյզառ, որ այո չասես, մի մեռելի ասելու եմ, որ էս գիշեր գայ մանի ձեր տուն ու քեղ վերցնի տանի: Գէ ասա այն, որ մեռելին չուղարկեմ:

—Այո, կրկնեց Նոյզառը մեքենայաբար և վախուժիւնից աչքերը տէրտէրի աչքերին գցած:

Երեք անգամ հարց ու պատասխանից յետոյ, տէր-Սահակը վերջրեց մատանին ու ապարանջանը, տւաւ Քալուստին և ասաց, որ նա ինքը մատանին դնէ իւր նշանածի մատումը, իսկ ապարանջանը հագցնէ նրա բազկին:

Փեսան այդ ևս կատարեց: Քահանաները վերջացրին օրհնութիւնը: Տէր-Սահակը փակեց մաշտոցը և կրծքին դնելով, ասաց.

—Դէ, Ասուած սիրողը գայ աւետարանը համբուրէ և փող գցի:

Այդ խօսքի վրայ Սամսոնն ու Առաքելը իրար ասացին.

--Տեսնում ես էս ազահներին. տասը մանէթ փող են առել մեզանից, հալա էստեղ էլ են փող ուզում. էդպէս անկուշտ քահանաներ կը լինե՛ն:

—Դէ շուտ արէք, զուեց տէր-Գրիգորը. թնչու էք մեզ սպասել տալիս, զիտե՛մ մօտներդ փող կայ, դէ եկէք էլի:

Ամենքն էլ տատանւում էին փող գցել: Վերջապէս մաշտոցին

մօտ զնացին ու համբուրեցին Գրիգորը, Սիմին, դրանց մի քանի ազգական կանայք ու տղամարդիկ և ապա քաւորը:

Նոյզառը այդ միջոցին դառնալով իւր մօրը, լացի ձայնով առաց.

— Ան, մայրիկ, մի փող տուր ինձ, ես էլ աւետարանը պաշեմ:

— Առ, պաշիր:

Մայրը նրան մի աբասի տւեց:

Փեսային էլ համբուրելու եց տէր-Սահակը և այնուհետև միայն մաշտոցը ծալեց դրեց կոնատակին: Մօտ երկու մանէթ էլ այդտեղ ստանալով, քահանաները վերցրին իրանց շուրջառները, և տանտիրոջ առանց շնորհակալութիւն յայտնելու, ուրախ սրտով հեռացան աղջկատնից:

Այնուհետև Սիմիի տանը մնացին միայն նրա ամենամօտ ազգականներն ու բարեկամները, որոնք սկսեցին շարունակել քէֆը:

Չուռնաչի Մարկոսի տղան թառ էր ածում և մնացած հիւրերը պարում, երգում ու հանաքներ էին անում: Վերջը պիտի պարէին փեսան ու հարսնացուն, որ հանդէսը վերջանար: Հարսնացուն այս անգամ ևս համառեց և չպարեց Գալուստի հետ: Գրա պատճառով զոքանչը սորիւլած եղաւ իւր աղջկայ տեղ ինքը պարել փեսայի հետ:

Այդ բոլորից յետոյ հիւրերը ցլր ու ցան եղան:

Կէս գիշերից անց էր, որ ամենքը հեռացան: Աղջկատանը մնաց միայն Գալուստը: Նշանւելու առաջին գիշերւանից սկսած, փեսան երբեմն պիտի աներոջ տանը մնար, իւր նշանածի ծոցում պառկելու նպատակով: Գալուստը մնաց ոչ թէ ութ տարեկան աղջկայ հետ միասին ննջելու, այլ լոկ ձևի համար:

Սիմին երեք անկողին պատրաստեց փեսայի, աղջկայ և իր համար:

— Գալուստ, առաց նա. քեզ մատաղ, աղջիկս փոքր է, մենակ չեմ կարող բաց թողնել՝ կը վախենայ. ես էլ աղջկանս կողքովը պիտի պառկեմ:

— Պատկիր էլի, մայրիկ, աւելի լաւ. գիշերը Նոյզառին կը պահպանես, որ չմրսի:

Փեսայ ու զոքանչ ծիծաղեցին: Ծիծաղելի էր և այն, որ երե-

սունին մօտիկ Գալուստը մայրիկ էր ասում համարեա. իրան հասակակից կնոջ:

Պատրաստեցին անկողին մտնելու. Նոյզառը պառկեց մէջտեղ, նրա մի կողքին Գալուստը, իսկ միւսին՝ մայրը:

—Մայրիկ, Գալուստ ապերը ինձ է կաշոււմ. ես չեմ ուզում, նա գէշ է, երեսը մազմզոտ է:

—Հա, հա, հա, քրքջաց Գալուստը:

—Աղջի, ամօթ է, էդպէս բան չեն խօսի, նկատեց մայրը:

—Ես քո ծոցը կը մտնեմ, մայրիկ:

—Աղջի, պա նշանածիդ ծոցը թողնում ես, իմ ծոցը մտնում ես լինէի քեզ տեղ... Լաւ, մօտիկ:

Աղջիկը ոչինչ չպատասխանեց մօր հանելուկներին և աւելի ամուր սեղմեց նրա կրծքին:

Լուռթիւն տիրեց: Շուտով մարեց ճրագը: Ազմկալի հանդիսից յոգնած և շատ խաբուրդ գինովացած զոքանչն ու փեսան թէև նոյնպէս անկողին էին մտել, բայց քունները չէր տանում: Սիւմին մի տեսակ տենդային անհանգստութեան մէջ էր գտնոււմ և սենեակում տիրող մթութեան մէջ համբուրելու շրթունքներ էր որոնում...

Կարճ ժամանակից յետոյ, երբ Նոյզառի քունը տարաւ, մայրը զգուշութեամբ նրան վերցրեց և դրեց իւր անկողնում. իսկ ինքը կամացուկ, օձի նման սողալով, մտաւ փեսայի վերմակի տակ ու գժւածի պէս նետեց նրա զիրկը...

### ԺԲ. ԳԼ.

—Օրհնեա տէր, բարի լոյս, տէրտէր, ասաց հեռուեալ առաւօտեան Մովսէսը, մտնելով տէր-Սահակի մօտ: Հայեացքը գետին ուղղած և ձեռքերը միմեանց շփելով, Մովսէսը մի քանի անգամ դէս ու դէն անցաւ, յետոյ կանգնեց, աչքերը ուղղակի տէր-Սահակի աչքերին զցեց և լի արհամարհանքով ասաց.

—Նշանը ծրհնել ես, տէրտէր:

—Ի՞նչ նշան, ումն է:

—Ի՛նչ նշան... Դա ի՛նչ աւելորդ հարց է, շատ լաւ գիտես, թէ ում մասին է խօսքս. ասա, ծրհնել ես, թէ չէ:

Լուրջ էր խօսում Մովսէսը: Նրա խոժոռած դէմքից այդ բու-  
պէին առատ ատելութիւն և արհամարանք էր թափուում: Յանցա-  
ւորին իւր առաջ տեսնելով, նա յուզւած, բորբոքւած էր: Առաջմ  
նա համբերում էր իւր սրտի մաղձը թափելու և դեռ պատասխանի  
էր սպասում:

Տէր-Սահակը հասկացաւ նրան և վախեցաւ: Իւր կատարած  
յանցանքի պատասխանատուութիւնից խոյս տալու համար, նա հար-  
ցին հանաքի ձև տւեց և—

—Հա, հա, հա, ծիծաղեց նա. գնացինք օրհնեցինք էլի, ինչ  
կայ որ... Եկել էին գլուխներս տանում. եկէք հա եկէք...

—Օրհնեցինք էլի... Շատ հեշտ ես արտասանում այդ խօս-  
քերը, տէրտէր, ասաց Մովսէսը՝ զրոխը շարժելով և շարունակ  
տէրտէրի երեսին նայելով. հը՛մ, շարունակեց նա. միթէ ես սխալ  
էի կարծում, թէ մեր հասարակական կեանքի խոչնդոտներից մէկն  
էլ ամեն տեղ դուք՝ այդ փսրաջաւորներն էք. միթէ սուտ են  
ասում, որ դուք ոսով-գլխով մի ապօրինութիւն էք. ստանձնում  
էք քահանայութեան պաշտօն, զազափարի մի նշոյլ անգամ չու-  
նենալով քահանայի կոչման մասին և ձեռք բերելով յայտնի ար-  
տոնութիւններ՝ դառնում էք մեզ համար մի մեծ շարիք: Մուխ  
էք ստանում և փոխանակ նրան դէպի բարին առաջնորդելու, ինք-  
ներդ նրան մղում էք դէպի անդունդ. բռնի պատկներ էք կա տա-  
րում, ութ տարեկան աղջկան նշանում և պատկում էք երեսուն  
տարեկան տղամարդու վրայ. զաղտնի կերպով բոլորովին չհաս պսակ-  
ներ էք անում, բայց զրա հետ միասին դուք չհասութեան ամենա-  
աննշան պատճառների համար ջամառում էք պսակելու երկու սի-  
րահարներին, որոնց առաջ երկու ճանապարհ կայ միայն. կամ ամուս-  
նական անթառամ պսակ և կամ մահ: Եւ այդ ամենը դուք անում էք  
միայն մի նպատակով. ձեռք ընկած որսերից բուբլիներ կորզելու  
համար: Շահամոլութիւնը ձեզ հրէշներ է դարձրել. զուրկ լինե-  
լով մի որ և է դրական արժանաւորութիւնից, դուք յանուն շա-  
համոլութեան գործում էք ամեն տեսակ սրբապղծութիւններ, որ  
դէմ է թէ ձեր կոչմանը և թէ ընդհանրապէս մարդուն. դուք  
ժողովրդի մէջն էք մանում, սրա նրա դէմ հողային գանազան  
վէճեր էք բարձրացնում, ձեր անձնական շահերի համար հասարա-

կութեան մէջ խռովութիւններ ու թայֆայութիւններ էք առաջացնում և այդպէս ձեր գոյութեամբ միայն վնաս բերում մեզ: Քանիցս անգամ զանգասներ եմ լսել, որ ձեր հատարած արարողութիւններ՝ վարձը զիւղացու վրայ ապառիկ թողնելով, սկսել էք այնուհետև նրան նեղել, հարստահարել և վաշխառուի նման մէկի տեղ տասը առնել: Քանի-քանի անգամ ինձ զանգատել են, որ դուք յաճախ ձեր վարձը ապառիկ չէք թողնում զիւղացու վրայ և խեղճի բողաղին չոքելով՝ եսասառլի նման գոչում էք. «տուր էս բոպէին, տուր»: Դու, տէր-Սահակ, որ ուսման պատասից մի քիչ կորել ես, զիւղացու համար դարձել ես աւելի անտանելի, քան բոլորովին ազէտ տէր-Պրիդորը...

—Այ աղայ, էդ ինչեր ես խօսում, ընդհատեց տէր-Սահակը. ինչու ես իզուր տեղից էդքան տաքացել:

--Սպասիր, խօսքս մի կորիր, ես պիտի ասեմ, որ փոքր ինչ հանգստանամ. կրկնում եմ, դու, տէր-Սահակ, որ ուսումից քչից շատից տեղեկութիւն ունիս, աւելի վնասակար ես դարձել մեր գիւղի հասարակութեան համար. առաջինը՝ դու շատ ուստու ես զանազան ինտրիդներ լարելում և այդ բոլորի մէջ քո ձեռքը թագցնելում, երկրորդ՝ որ քեզանից փոքր ի շատէ քաշում են, դու զիւղացոց այդ շարգանքը ի չարն ես դործ դնում. վայ է այնպէս է պատահել, որ մէկը ձեզանից մի ինչ որ բանի համար կախում ունի. էլ Աստուած հետու տանի. դուք այդ խեղճին խանի նման ուղղակի թամբում ու նստում էք և վաշխառուի նման շարունակ ծծում...:

—Մովսէս, ասա եկել եմ կռիւ անելու էլի, նկատեց տէրտէրը բարկացած. ինչ ես ուզում ինձանից. ամօթ չէ քեզ համար. եկել ես իմ տունը... Իսկի ասածներիդ վրայ մի մտածում ես... Ի՞նչ ես ուզում ինձանից...

Տէր Սահակը մի կողմ շրջեց իւր երեսը, մօտեցաւ պատուհանին և սկսեց նայել դէպի դուրս: Նա սաստիկ չուզած էր Մովսէսի վիրաւորանքներից. լինէր մի ուրիշը, նա չէր համբերել՝ կը խփէր նրան ու դուրս կանէր իւր անից, բայց այդ մարդուց նա քաշում էր. կար մի ներքին ոյժ, որը տէրտէրին միշտ ճնշած էր պահում ժողովրդի բարեկամի առաջ. դա վերջինիս բարոյական

բարձրութիւնն էր և այն վախը, որ ազդում էր նրան Մովսէսի նշանաւոր և ազդեցիկ դիրքը:

—Իզուր էք նեղանում, տէրտէր, շարունակեց Մովսէսը. ես ասում եմ այն, ինչ որ իմ խիղճն ու խելքն են թելադրում: Ես ասում եմ. եթէ դուք անընդունակ էք քահանայութեան իսկական կոչմանը արժանապէս ծառայելու, այն ժամանակ զոնէ բարիխղճութեամբ կատարեցէք ձեր պաշտօնի արտաքին մասը և ժողովրդի վզին: Ծանրութիւն մի լինէք: Ես ձեզ երկուսիդ էլ հասկանալի կերպով բացատրեցի այն, թէ որքան ապօրինի ու անբարոյական գործ է ութ տարեկան աղջկան նշանելը, ցոյց տւի, թէ ինչ ցաւալի և մինչև անգամ կորստաբեր հետևանքներ կարող է ունենալ այդ գործը և խնդրեցի երկուսիդ էլ, որ այդ քայլը չա՛նէք—չօրհնէք նշանը: Քայց հիմա ասա, տէրտէր, ի՞նչու էք օրհնել, հը՞, ի՞նչու:

—Այ դէ օրհնել ենք, օրհնել ենք, ասաց տէր-Սահակը վիրաւորաժ եղանակով. մեծ բան է ասես... Յաւ է շինել իր համար և եկել էստեղ կոխ անում. մի շան տղի համար բորբոքւել է...

—Զբորբոքւիմ, ի՞նչ անեմ, երբ դուք, տէրտէր, խաբելն էլ զիտէք. չէ որ դուք երկուսդ էլ ինձ ազնիւ խօսք տւէք չօրհնելու այն տղայի նշանը. ի՞նչու ապա հակառակն էք գործել. նշանակում է ազնուութիւնը ձեզ համար մի հնացած խաղալիք է, որ հանգիստ հոգով կարող էք շարտել մի որևէ անկիւն կամ ցեխի մէջ:

—Լաւ, ես ինչպէս չգնացի նշանը օրհնելու, երբ տղատէրը երեք չորս անգամ մարդ ուղարկեց յետևիցս:

—Այդ ի՞նչու դու կարող ես չորս անգամ մարդ բերել տալ յետևիցդ, բայց չես կարող չգնալ օրհնելու: Եթէ համոզւած ես, տէրտէր, որ բարոյական պարտքդ էր Համբարձումի հրաւերն անգամ չչարգել, այն ժամանակ դու իսկի նրա տունը չպիտի զնայիր, ուր մնաց, որ նրա եղբոր նշանը օրհնէիր:

—Եթէ, Մովսէս, վատ բան է, ի՞նչու են գալիս ինձ կանչում: Վատ է՝ իրանց համար է: Ինձ կանչում են, ես քահանայ եմ, պիտի զնամ. երբ որ ամենքը զնում են, ես էլ պիտի զնամ:

—Սխալ ես, տէրտէր. ամենքը զնում են, ասելով. շատ հարկաւոր է, թէ ինչպիսի նշանդրեք է կամ թէ ի՞նչ է լինելու. մերն

այն է գնանք, ուտենք, խմենք, քէֆ անենք: Եթէ նրանք իրանց աչքի առաջ մի վատ գործ էլ տեսնում են, լռում են և իրանք իրանց ասում: Էշտ հարկաւոր է. հալա գնալու եմ դրա մասին էլ մտածեմ: Իրանք գիտեն իրանց գլուխը: Բայց դու քահանայ ես, ժողովրդի հոգևոր հայրն ես, դու ուրիշների նման անտարբեր չպիտի լինես ղէպի ժողովրդի ցաւերն ու վնասակար գործերը: Դու չպիտի ասես, թէ Էշտ հարկաւորս է. ինչ ուզում են անեն, թէ կուզ ոչխարի նման գնան ծովը թափւին ու խեղդւին: Եթէ դու էլ այդպէս մտածես, էլ քո ժողովրդից ինչով բարձր կը լինես. ոչ մի բանով: Բայց դու քո հօտի ցաւերն ու զայիք՝ վնասները քո սրտին մօտիկ պիտի դարձնես և աշխատես դրանց առաջն առնել: Դա մեր բոլորի պարտքն է, իսկ գիւղական ժողովրդի մէջ զլսաւորապէս քոնը: Եթէ դու Հասկանալով սխալ գործէիր՝ այդ դեռ ներէլի է, բայց ես ակար ձեզ ամեն ինչ քացատրել եմ Քալուստի ամուսնութեան առիթով:

Տէր-Սահակը որ երեսը պատուհանից դարձրած, կրկին Մովսէսին էր նայում, հարցը կտուրը ձգելու նպատակով ասաց.

— Ասա, Մովսէս, դու և Պետրոսը նրա համար չէիք եկել նշանդրեք, որ ձեր ասածը առաջ տանէք էլի:

Եւ նա ժպտաց:

— Այո, որ մեր ասածին ու համոզմունքին հաւատարիմ մնանք և այն տղային, որ իր օգուտը չի ուզում հասկանալ, դրանով պատժենք:

— Շատ նեղացան, Մովսէս, որ չեկաք, ասաց տէր-Սահակը լրջութեամբ: Համբարձումի խնամին լաւ պատրաստութիւն էր տեսել, էլ բողբաջ, էլ դոլմա, էլ փլաւ, էլ խորոված... Լաւ զինի ունէր...

— Տէրտէր, ես քեզ ասում եմ. ժողովրդին պիտի մղէք ղէպի բարին, իւր դու ինձ կերակուրների անուսներ ես չիշում... Սուտ չէ, այո, որ դուք ձեր ստամոքսի համար անգամ շատ բաների ղէմ մեղանչում էք: Ձեզ հետ այսուհետև աւելի խիստ պիտի լինել. դուք ինձ մի ստորագրութիւն պիտի տաք այն մասին, որ մի ապօրինի նշան էք օրհնել:

— Ինչի՞ր է պէտք:

— Ինձ պէտք է այդ:

— Այ, Մովսէս, չենք տալ, ծիծաղելով ասաց տէր Սահակը. ինձ չես կարող խարել. ուզում ես մեղ թալակի մէջ գցել: Գուցէ տէր-Գրիգորը տայ, ինքը գիտէ. բայց ես չեմ տալ:

— Ասենք իսկի հարկաւոր էլ չէ. առանց դրան էլ ես իմ գործը կարող եմ կատարել: Հիմա դու աջն ասա, տէրտէր, Քալուստի պսակը խօմ չէք կատարելու:

— Հէր օրհնւած, բան չունես, չենք անիլ. պսակելը դժւար է և որովհետեւ քեզանից, իսկն ասած, վախենում եմ, չենք անիլ:

— Թող այդպէս լինի, աւելի լաւ. բայց եթէ այս անգամ էլ, տէրտէր, դժբեցիր խոսողմդ, իմացիր, որ իմ խնդիրը ուղղակի կաթողիկոսին է գնալու: Ազնիւ խօսք եմ ասում:

Եւ վերցնելով զխարկը, դուրս գնաց: Մովսիսի հեռանալուց փոքր ինչ յետոյ, տէր-Սահակի մօտ եկաւ Համբարձումի բարեկամ Սամսոնը, յայտնեց, որ այդ երեկոյ Քալուստին պիտի պսակեն և խնդրեց, որ տէրտէրը կանխօրէն վերջացնի պսակի դրամական հաշիւը:

— Պսակի հրաման է, պսակի վարձ է, ասաց Սամսոնը. ճրքան փող է բռնում, ասա, վերջացնենք, որ իրիկունը մենք էլ միամիտ լինենք, դու էլ:

— Սամսոն, էդ պսակի համար ես ոչ հրաման կարող եմ տալ և ոչ ինքս կարող եմ պսակել. անկարելի է, որովհետեւ աղջիկը անչափահաս է. իմ պատիւը, իմ անունը ես մի քանի մանէթի համար փորձանքի մէջ չեմ գցիլ:

— Ի՞նչու ես մի քանի մանէթ ասում. ինչքան հարկաւորն է առ, միայն պսակը կատարիր:

— Այ, Սամսոն, չեմ կարող. նշանն էլ ձեր խաթրի օրհնեցի: Վտանգաւոր է. դու խօմ գիտես, թէ Մովսէսը ի՞նչ պտուղ է...

— Գիտեմ, գիտեմ, անցած օրին էլ ինձ էր պատահել. կպել է ինձ ու ասում, թէ դուք ինչո՞ւ էն ութ տարեկան երեխային, ասում է, նշանել էք. նշանել էք, ասում է, հերիք չէ, ուզում էք, ասում է, պսակել էլ: Ես էլ ասեմ, այ մարդ, ինձ ի՞նչու ես մեղադրում. աղի եղբայրը ինչ որ ուզում է, մենք էլ էն ենք անում. մեզ ի՞նչ. իրանք գիտեն. չեմ գնալու նրանց մէջ խոս-

վութիւն գցեմ: Մեր պարտքն է, որ էսպէս ժամանակ նրանց ձեռք հասցնենք: Տէրտէր, յանկարծ իւր պատմութիւնը ընդհատելով, ասաց Սամսոնը. արի 25 մանէթ ստացիր ու պսակիր: Համբարձումն էլ խեղճ է, հիւանդ մարդ է:

—Պա ես խեղճ չեմ, ասաց տէրտէրը, խորասու գւելով մտածմունքի մէջ. յետոյ աչքը մի կէտի վրա յառելով, ձեռք փոշ է 25 մանէթը, ասաց ինքն իրան. թէ կը պսակեմ... Ի՞նչ կը լինի, որ պսակեմ. ասենք էս տեսակը ձեռքովս չի անցել, բայց ուրիշ սրա նման պսակներ խօմ արել եմ. դրա համար խօմ փիլոնս չեն վերցրել»:

Եւ քիչ էր մնացել, որ տէր-Սահակը 25 մանէթի համար համաձայնի ապօրինի պսակը կատարել, որ յանկարծ չիշեց Մովսիսին, սրա մեղադրական ձառն ու նրան տւած իւր խոստումը:

—Որտեղից է աշխարհ ընկել էդ անիծւած Մովսէսը, մտածում էր տէր-Սահակը. որ շատ անգամ մեզ արգելք է դառնում: Կը գրի, էս անգամ անպատճառ կը գրի և ինձ գործի մէջ կը գցի: Նրա գրչի ոյժը ում չէ յայտնի... Ձէ, ինձանից հեռացնեմ էս բանը:

—Հը՛, ի՞նչ ես ասում, տէրտէր, ընդհատեց նրա լուութիւնը Սամսոնը:

—Սպասիր մի փոքր էլ մտածեմ:

Եւ 25 բուբլով չափշտակւած, տէր-Սահակը մտածում էր: Յանկարծ նրա գլխում մի այսպիսի միտք յղացաւ. «փողը ես կը ստանամ, յետոյ տէր-Գրիգորին կը կանչեմ ու կ'ասեմ, որ պսակը ինքը անի: Եթէ հրաման ուզեց, կ'ասեմ էգուց եկ տար. նրա համար միւսնոյնն է. երբ գործակալը ասում է պսակիր, պիտի պսակի: Իսկ ես յետոյ նրան հրաման չեմ տալ և եթէ վտանգ պատահեց, նա ինքը գործի մէջ կ'ընկնի. կ'ասեմ ծածուկ է պսակել»:

—Սամսոն, խօսեց վերջապէս տէր-Սահակը բազմախորհուրդ լուութիւնից յետոյ. գնա տէր-Գրիգորի մօտ և ասա, որ նա ձեռք պսակն անի. իմ կողմից էլ չայտնիր, որ արգելք չկայ. ես հրամանը վաղը կը գրեմ և իրան կը տամ: Փողերը, Սամսոն, ինձ կը տաք, իսկ Կու հիմա շուտով գնա տէր-Գրիգորի մօտ և իմացիր, թէ ինչ է ասում:

Սամսոնը շտապով դուրս գնաց:

— Լաւ եմ մտածել, եթէ միայն յաջողուի, ասաց տէր-Սահակը լսելի ձայնով և ձեռքերը միմեանց շփելով:

Կարճ միջոցից յետոյ եկաւ Սամսոնը և յայտնեց, որ տէր-Քրիզորն էլ չի ուզում պսակը կատարել:

— Տէրտէր, շարունակեց Սամսոնը. ասում է «մինչև գործակը հրաման չտաց, չեմ պսակել. ես, ասում է, էնքան էլ չիմար չեմ, որ ինքս իմ ձեռքով թալակ ընկնեմ: Չեմ իմանում, թէ ձեզ, այ քահանաներ, ինչ է պատահել: Քսան հինգ բուբլին ախր ո՞ր քահանան բաց կը թողնի...»

— Ձի ուզում, հմն, Սամսոն, լաւ... Կուզի... պա ինչու չի ուզում... չէ, դժւար է, էլ չեղաւ. կարելի էր, բաց... չէ, դժւար է. ես էլ չեմ կարող...

— Ձե՞ս ուզում պսակել էլի, տէրտէր:

— Ձեմ կարող, չեմ կարող, գնացէք ինչ ուզում էք, արեք:

— Տէրտէր, յետոյ կը փոշմանես հմն, ասաց Սամսոնը խորհրդաւոր ձայնով և դուրս եկաւ տէր-Սահակի մօտից:

Երբ Սամսոնը հեռացաւ, տէրտէրն սկսեց ինքն իւր վրայ բարկանալ, որ ձեռքից բաց թողեց մի այգուխի չաղ պատառ: Չարացաւ, շատ շարացաւ. տէրտէրը իւր վրայ և սկսեց արագ քալելով դէս ու դէն գնալ: Ինքնատելութեան զգացմունքը ամբողջովին պատեց նրան: Ծրբեմն նա իւր աջ ձեռքը զլխի մազերին էր գցում և ջաճախ մօրուքը սեղմում ձախ ափի մէջ: «Սա ինչ չիմարութիւն էր, որ ես արեցի, մտածում էր տէր-Սահակը. ափսոս: Յանկարծ նրա երեակայութեան առաջ պսակերացաւ Մովսէսը. «նզովից ծնունդ», բացականչեց տէրտէրը: Ի՞նչ անէր. այլ ևս ուշ էր:

Համբարձումի բարեկամները, տեղական քահանաների բացասական պատասխանները ստանալուց յետոյ, իրանց մէջ վճռեցին, որ Առաքելը գնաց հարևան գիւղերից մէկի քահանային բերէ և Գալուստին գաղտնի կերպով պսակել տան: Բաց այդ խորհուրդից թիչ յետոյ լուր հասաւ գիւղը, որ Ո վիճակի յաջորդը գտնուում է մօտիկ Քաւարաբերդ գիւղում: Այդ լուրը աննշուն պէս, Համբարձումի բարեկամները փոխեցին իրանց նախկին ծրագրերը և յարմար գտան Առաքելին ուղղակի յաջորդի մօտ ուղարկել:

Առաքելը մի հատ տասանոց վերցնելով իւր հեռ, ճանապարհ

ընկաւ դէպ Խաւարաբերդ: Տասը մանէթը, Սամսոնի խորհուրդով, նա պիտի աջահամբոյժ տար, իսկ պսակադրամը կը վճարէին հայր սուրբի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ:

Նոյն օրը, բայց աւելի ուշ, Մովսէսն ևս մի մարդ ուզարկեց յաջորդի մօտ: Գնացողը Պետրոսն էր, որ իր հետ տանում էր մի թուղթ: Այդ թղթի մէջ Մովսէսի սուր զրիչը մի առ մի երևան էր հանել սիրահարւածների (?) ամբողջ պատմութիւնը և մատնացոյց էր արել ամուսնական այն խարխուլ հիմքը, որի վրայ ցանկանում էին կառուցանել Գալուստի ու Նոյզառի ամուսնական կեանքը: Մովսէսը զրա հետ միասին բացատրել էր և այն, թէ որպիսի վնասակար և ապօրինի գործ է այդ և թէ ինչպէս այդ ամենը դէպ անդունդ կարող է տանել երիտասարդ զոյգին... «Այդպիսի ամուսնութիւնների ակնյայտնի հետեւանքը, եղբաւորակել էր Մովսէսը իւր զրութիւնը, միշտ միևնոյնն է լինում. կամ աններդաշնակ և դժոխային մթնոլորտով համակւած ընտանեկան կեանք, և կամ զոհեր... Յետագայ զրութեան մէջ աւելացրել էր, թէ ինչպէս տեղական քահանաները իրանք ապօրինի գործի առաջնորդողներ էին հանդիսացել, տասը բուբու համար օրհնելով ութ տարեկան աղջկայ նշանը: Այդ բոլորից յետոյ Մովսէսը խնդրում էր յաջորդին, որ նա միջամտէ այդ գործին, աշխատէ յետաձգել Գալուստի պսակը գէթ մի քանի տարով և սանձահարէ իւր վիճակում գտնուող տէր-Սահակին ու տէր-Գրիգորին:

Մովսէսի նամակը անպատասխան մնաց, թէև յաջորդը նրան լաւ էր ճանաչում: Իսկ Առաքելը ուրախ սրտով տուն վերադարձաւ և յայտնեց յաջորդի համաձայնութիւնը:

Երեկոյեան մութն ընկած էր արդէն, որ հայր սուրբը եկաւ և տէրտէրների ներկայութեամբ կատարեց Գալուստի պսակը: Նա քսանուհինգ ուսուցիչ պսակադրամ ստացաւ, որից հինգ ուսուցիչ աթոռահարկ վերցրեց, մի մի ուսուցիչ քահանաներին տաւ, իսկ մնացածը զրեց իւր զրպանը:

Տէր-Սահակն ու տէր-Գրիգորը շատ ավստացին, որ չաղ պատառ իրանց չմտաբութեան պատճառով ձեռքից զուրս եկաւ: Թէև նրանք յաճախ ախ ու վախ էին անում, բայց էլ ուշ էր. բանը

բանից անցել էր: Այդ դէպքը երկար ժամանակ դուրս չէր գալիս տէր-Սահակի գլխից:

Գալուստի պսակի հետեւեալ օրը Մովսէսը յաջորդին այցելութեան գնաց և ի միջի այլոց բացատրութիւն պահանջեց նրա արածի մասին:

— Հայր սուրբ, ասաց Մովսէսը. ես բոլորովին ապշել եմ, որ դուք ինքներդ, թող ներևի ինձ ասել, վատ օրինակ եղաք մեր քահանաներին: Դուք իբրև մեծ պաշտօնեաց, պիտի խրատէիք նրանց, որ երբէք չջանդգնեն ապօրինի պսակներ անել և բացատրէիք այն, թէ ինչպէս նախօրօք պիտի առնել ամուսնական այդպիսի խեղկատակութիւնների առաջը: Իմացէք, որ մեր քահանաները պատրաստ էին մեծաւ ուրախութեամբ պսակը կատարել, բայց իմ խնդիրքն ու խորհուրդները յետ կանգնեցրին նրանց այդ դործից: Դուք եկաք, քանդեցիք իմ արածը և ձեր այդ օրինակով խրախուսեցիք մեր քահանաներին շարունակել կատարելու այն, ինչ որ ապօրինի է, ինչ որ անբարոյական է և լոկ չարիքների աղբիւր: Իմ կարծիքով դա ձեր կողմից մի աններելի չանցանք է:

— Ե՛, որդեակ, իզուր են այդ խօսքերը, պատասխանեց հայր սուրբը կատարեալ սառնութեամբ ու մեծամտութեամբ. ինչ մեղք, ինչ անբարոյականութիւն. պսակը, որ մի սուրբ խորհուրդ է, ամուսիններին սուրբ հոգով կը ներշնչէ և երի տասարդ զոյգերը իրանց ամբողջ կեանքում միայն երջանկութեան պտուղներ կը վայելեն: Ի՞նչ կայ որ, տղան տանում է, աղջիկն էլ գնում է:

Այս պատասխանեց հայր սուրբը և վերկացաւ տէր-Սահակի մօտ գնալու: Գործակալը այդ օրը ճաշի էր հրաւիրել յաջորդին:

Մովսէսն էլ ոչինչ չպատասխանեց. նա ևս վերկացաւ տեղից և առանց մի խօսք ասելու, լցւած ատելութեան ու զգանքի զգացմունքներով, հայր սուրբից առաջ դուրս եկաւ փողոց: Նա տուն գնաց, նստեց սեղանի առաջ, համառօտ, բայց խիստ լեզուով գրեց այդ եղելութիւնը և ուղարկեց Թիֆլիս, լրագրում տպելու:

Մոյզաբին բռնի կերպով տարան փեսայի տուն: Խեղճ աղ-

Չիկը ոչ մի անգամ զեռ ոտք չէր դրել այդտեղ. բացի այդ, նա ոչ մի ցանկութիւն չունէր ոչ մօրից հեռանալու, ոչ հայրենական տունը թողնելու և ոչ օտարի տունը գնալու: Նա լաց էր լինում և յամառում էր իւր քայլերը դէպի փեսայի տունն ուղղել: Միայն մօր նախատինքն ու սպառնալիքները, ծեծը և, որ զլսաւորն է, սուտ խոստումը, թէ իբր ինքն էլ միշտ Գալուստենց տանն է մնալու, համոզեցին հարսնացուին հետևելու փեսային:

Վերջ Բ. մասի:

## ՆԵՏ ԵՒ ԵՐԳ <sup>1)</sup>

ՀՈՆԳՐԵՆԴՈՒՅԳ՝—ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԵՒ

Ես աղեղից նետ ձրգեցի,  
Բայց չիմացայ, ո՞ւր թըռաւ.  
Աչքով իզուր հետեցի,  
Նետըս շողաց ու կորաւ...

Երգըս տըւի ազատ քամուն,  
Քամին նորան հետն առաւ.  
Երգիս ձայնը մարեց հեռուն,  
Բայց չիմացայ, ո՞ւր կորաւ...

Անցան տարիք... Նետըս գտաց  
Մարդագետնի եղևնում.  
Գտայ նոյնպէս կորած երգըս  
Իմ մտերմի ջերմ սրբոտում...

3 սեպտեմբերի 1896 թ. Գուրգուֆ (Խրիմում)•

<sup>1)</sup> Այս նոյն ոտանաւորը տպւած է Մուրճ 1889, № 4, թարգմանութեամբ պ. Վստն Մանուէլեանի:

## ՈՒՐԻԱԿԱՆՆԵՐ

ՀՈՆԳՐՖԵԼԼՕ-ից՝—ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Այն լուռ ժամին, երբ օրն անցած՝  
Վրայ է հասնում մութ գիշեր,  
Եւ զարթեցնում սրտումս նիրհած  
Շատ զգացմունք, շատ մտքեր.

Երբ խաւարում ճրագն է շողում—  
Բիւր մտքերիս այդ վրկան,  
Պատի վերայ սուերը դողում,  
Այս գառնում ուրւական,—

Այդ լուռ ժամին հանդարտ, ջուշիկ  
Ներս են մտնում իմ սենեակ  
Սրտիս սիրած, անզին ոգիք,  
Հանգիստ զըտած հողի տակ...

Ահա այն քաջ, մատաղ ոգին,  
Որ տենչալով կեանքի մարտ,  
Ընկաւ ուրախ ժրպիտ դէմքին,  
Ընկաւ անվախ ու հրպարտ:

Ահա և հեզ, սուրբ էակներ—  
Աղը երկրի և կեանքի,

Որ մինչև վերջ տարան համբեր  
Ծանրը խաչը տանջանքի:

Ահա նորա—և այն սիրուն,  
Քնքոյչ սրտեր, որ այնպէս  
Սիրում էին կեանքիս գարուն,  
Եւ ինձ ժպտում ծաղկանց պէս:

Լուս, համրաքայլ ներս են գալիս  
Նորա միմեանց յետևից.  
Եւ ամենքն էլ նստում կողքիս  
Ու ձեռք պարզում դէպի ինձ:

Ահա և նա—մօտըս նստում,  
Ինձ նայում է դալկադէմ.  
Խոր հայեացքում սէր եմ կարգում,  
Զոյգ աշերում—վառ եղեմ:

Եւ աղօթք է սրբամրմունջ  
Լսում սիրտըս նոր-նորից.  
Լսում օրհնանք և մեղմ արտունջ  
Նորա քնքոյչ շուրթերից...

Կեանքի դրժւար խաչի տակը  
Վիշտ, սե' օրեր տեսնելիս,  
Նոցա քննողը ճիշատակը  
Նոր աշխոյժ է ինձ տալիս...

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

(ՅԻՉՈՂՈՒԹԻՆՆԵՐ)

### Վ. ՓԱՓԱՉԵԱՆԻ

—Տըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ...

Ջարթնում եմ: Ձիւնի սպիտակութիւնն ու աղօթարանի լոյսը լուսընկալի պէս մի հում լոյսով ողողել են սենեակս: Մտ եմ գնում լուսամուտին և փողոց նայում: Ասողերից շատերը դեռ պսպղում են երկնակամարի վրայ. խոր լուսութիւն է տիրում. ձիւնի սպիտակութիւնը լուսաւորել է Վան քաղաքի Խաչ-փողանի այդ մեծ ծառուղին. ծառերը ծանրաբեռնաժ ձիւնով՝ իրենց ծիւղերը խոնարհել են դէպի գետին և փողոցի ձախ կողմի կաճանով քայլող միակ անձը այդ միջոցին՝ Յայնկոյսներ եկեղեցւոյ ժամկոչ Սախակն է: Քայլելով սերտ ձիւնի վրայ, թեկից քաշ արած տանձենու տախտակին ուժգին հարւածներ է հասցնում նա փայտեայ մուրճով, յետոյ զլուխը ցցում ու զիլ ձայնով երգում.

—Ո՛վ բարեպաշտ ժողովուրդ, ժամ հրամմեցէք...

Ու... տըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ...

Որքան քաղցր ձայն ունի անպիտանը և որքան ոգևորութեամբ է երգում: Երբ վերջացնում է, կանգ է առնում իւրաքանչիւր դռան առաջ, բարձրացնում նրա կռանը և երեք ուժգին հարւածներով բաղխում:

Այդ նոյն պահուն լսում եմ հեռաւոր թաղերից խուլ, այլ և այլ շեշտերով հրաւերներ, կոչնակի ձայներ և դռների բաղխում:

—Տըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ...

Հագնւում եմ. նայելով որ ցուրտ է, իջնում եմ փողոց և

առւի վրայ կռացած՝ սկսում եմ լւացել: Ամացի, մշուշային լոյսով փողոցի մէջ մէկ-մէկ երևում են մարդիկ, ճանչում են դռներ, նրանցից դուրս գալիս մանուկներ, որոնք խշրտացնում են ձիւնը, քայլում ձիւնից սրթսրթացող ծառերի տակից և իջնում դէպի ձորակի եկեղեցին: Փամկոչը վերջացնում է և կամ յոգնել է դռներ ծեծելուց և իր ծանր կօշիկները քարշ սալով՝ անցնում է մեր դռան առջևից:

—Բարի լոյս, Սահակ ախպէր, ձայնում եմ նրան՝ կկղած առւակի եզրին:

—Աստու թարին... արդէն զարթնել էք:

—Կոչնակիդ ձայնը թողնում է քնել, ժպտում եմ ես. բայց ես շատ եմ սիրում դրա ձայնը. այնպէս քնողցր է գալիս քնոյ մէջ:

—Աղէն զարթնել է, հարցնում է նա՝ կամենալով անցնել Յետոյ, առանց պատասխանի սպասելու՝ վերսկսում է.

—Պ՛վ բարեպաշտ ժողովւորդ...

Որքան գեղգեղ գիտէ՝ հնչեցնում է:

—Ձայնդ խոզոտել է հն...

—Ի հարկէ կը խոզոտելի, ցուրտը շէս զգում:

—Մտիր մէկ տաքացիր, թոնիրը վառւած է կարծեմ:

Եւ ժամկոչը, ցրտից զլւած ձայնը իր վերին աստիճանին հասցնելուց յետոյ, կանգ է առնում:

—Աղէն զարթնել է, աւելացնում եմ ես—վերից լսում էի թէ ինչպէս նարեկ էր քաղում:

—Աստուած օրհնի ազին, շատ ջերմեանդ է. սաղ նարեկը անգիր գիտի:

Ու մտնում է ինձ հետ: Մի քանի դուռ էր մնացել քիչ դէպի վեր ծուռող փողոցի վրայ. շատ էլ կարևորներիցը չէր:

Տանտունի դռան առաջ ոտները թափ է տալիս և հետևում ինձ: Թոնիրը ներսում վառուում էր և մի մեծ բոց գալարում դէպի երթիկը: Կողքին, մի դէռչակի վրայ նստել, բարձին թիկն է տւել իմ հիւրընկալ Մկրտիչ աղան, ու մեծահնչիւն ձայնով սուրճ է խմում կում՝ առ կում: Ամեն կումից յետոյ, երկար մրջափողով պապիրոսը բերնին է դնում, մեծ քանակութեամբ ծուխ ներս քաշում, գլուխը բարձրացնում, վիզը երկարցնում և քթածակերից

ու բերնից դուրս է վիժում ճխաչին մի ամպ: Ծանր, պաշտօնական և խիստ մտախոհ կերպարանք ունի Մկրտիչ աղան. խորշմուտ ճակատ, արևակէզ ոսկուռուտ աչտեր և փաթոթաւոր մեծ Փէս, երկար Ֆարաջա ու ծալապատիկ նստած դիրք: Նրանից քիչ հեռու մի աղջիկ աւլում է յասակի կարպետն ու աշխատում, որչափ կարելի է, քիչ ձայն հանել: Տանտիկինը հեռու անկիւնում, մի քանի մանրմունք մանուկների է հազցնում. մանուկներ, որոնք տկլոր նստած կամ կանգնած, կիսամթան միջին շողացնում են աչքերը: Սենեակի մի կողմից լոյս է տալիս ձէթի կանթեղը, որ դրւած կայ պատին խփած փոքրիկ պատւանդանի վրայ—բարձրում: Եթէ թոնիրի բոցը չլինի, այդ լոյսը միայն մի փոքրիկ շրջան հաղիւ կարող էր լուսաւորել: Սենեակը մեծ է և բարձր: Վերից մի երթիկ միայն կայ, այն էլ ծածկւած գմբէթաձև վանդակով և ապակու փոխարէն՝ պատած իւղոտ թղթերով. բազի վրայ նաչող պատը շատ բարձրից ունի երկու ծակ—երկու միջնադարեան, իւղոտ թղթով պատած լուսամուտներ: Եւ դրանք են տանտուների լոյս տւողները: Դրա համար էլ հեռաւոր անկիւնները մնացել են կատարեալ խաւարի մէջ: Ինչեր ասես որ այդ անկիւններում դարււած չլինեն. կործած կաթսաներ, բարձր դիզած անկողիններ, յետոյ կարասներ, կուժեր...

Թոնիրի շուրջն է միայն, որ քիչ կանոնաւոր է: Բարձր սաքիյ՝ կարպետներով պատած, մի քանի ներքնակ, մի քանի բարձ և մի աթոռակ, որի վրայ են դրել աղաչի Փինջանի ափսէն և պապիրոսի մոխրամանը: Խարոցիկ լոյսը կիսովին լուսաւորում է այդ բոլորը, սուր լոյսի և սուր սոււերի կոնտրաստներ զծում աղաչի դէմքի վրայ, կրակը Ֆշֆշում է, լւում է աւելի չոր-րիթմային հարւածները, աղաչի սուրճ խմելու երկար շառաչիւնը...

Դրսում կատարեալ լուռութիւն է, երբեմն միայն մի աքաղաղ կանչում է հաւաքունի խորքից, նրան հեռւից արձագանք է տալիս մի ուրիշը ժանգոտ ձայնով, ապա հեռաւոր ալլընգոցներ և այդ քոլորից յետոյ, ներսից, մթան մէջ սոււերի պէս երևցող տանտիկնոջ՝ փոս հազը...

Սախակը դուան կողքին է թողնում կոշնակը, կօշիկները հանում և ինձ հետ թոնիրին մօտենում:

—Բարի լոյս, Մկրտիչ աղա:

—Այ Աստուծու բարին... այդ հիվ է հետինդ:

—Ժամկոչն է:

—Հն... դէ լաւ. այս կողմ հրամմէ՛, որդիս, եկո կողքին նստէ: Դու էլ, Սախակ, եկո քիչ մը տաքցիր, մրսած կ'ըլնես: Ցուրտ է, հն:

—Հն, հրամանք ես, լաւ ցուրտ է: Արարք զնացող Սիկայեցիք մէկ-մէկ հոխա սառցի քուլաներ ունէին իրենց բեխ ու մօրուսի վրայ:

—Իաշտում ի հարկէ աւելի ցուրտ կը լինի, ասում եմ ես:

Աւելածութիւնը դադարում է, սիլուէաների պէս կիսամթան մէջ շարժում են մանուկները:

—Սանաւանդ Սիկայի կողմը, դիտել է տալիս ժամկոչը, յետոյ ձեռքերը պարզում կրակին և—ձօ՛՛ք, ի՛նչ լաւ կրակ է...

—Կնիկ, դառնում է աղան տանտիկնոջ—Ժամկոչ ախ ցօր մէկ օդի. թող ներսի կրակն էլ վառւի:

Ծիծաղում ենք: Տանտիկին—Խաթունը մօտ է գնում պատի միջի պատուհանին, հանում օդու շիշը, մի փոքրիկ պնակով էլ չամիչ, լցնում է բաժակը օդիով և պարզում ժամկոչին: Սա առնում է, բարեմաղթում, խմում, չամիչից երկու հատ վերցնում, սըրբում է բեխերն ու ասում:

—Ուխայ... Ասուած շէն պահի, լաւ տաքացայ:

—Մէկ էլ տուր, կնիկ, հրամայում է աղան:

Ժամկոչը այդ երկրորդը առանց բարեմաղթելու կոնծում է, թեովը սրբում բերանն ու որպէս թէ սկզբում մի բան էր ասել և կիսատ թողել՝ շարունակում է.

—Հն, էն էի ասում... էս տնաւեր Սիկայեցիք... Այնքան տեղից, էս ցուրտ-ղիամաթին, ծանր-ծանր, իրենց էշերի քայլքով քաղաք են գալիս թէ ի՛նչ—մէկ իշու բեռ փթիւր <sup>1)</sup> կամ երկու ջլալ պտտուր <sup>2)</sup> պիտի ծախեն... տնաւերներ, 5—6 զուրուշի համար այդքան տանջւել կը լինի: Հալա մէկ երկու ժամ էլ այս ցըրտին, ոտները վեր-վեր անելով, Արարուց հրապարակի վրայ պիտի սպասեն, մինչև որ ժամերներն ելնեն և պտտուրն առնեն...

<sup>1)</sup> Կովի աղպ, որից աղիւսածն շինում են վառելու համար:

<sup>2)</sup> Ոչխարի աղպ, որ վառում են չորացնելուց յետոյ:

—Թէ որ ծախելի էն էլ, մէջ եմ մտնում ես—չես տեսել որ շատերը չեն կարողանում ծախել հրապարակի վրայ և էշն առաջ արած, մինչև երեկոյ փողոցներն են չափում և գոռում...

—Խն, խն քե մեռնեմ... շան կեանք է. սաղ օր ու զիշեր տանջեն, ցուրտ ուտեն, հիւանդանան. մի երկու զուրուշ վաստկեն, էն էլ տանեն կամ պարտատիրոջ տան, կամ նիւթիւս առնողի բողաղը լցնեն:

—Թէ որ մենակ նիւթիւսը լինի... ասում է աղան մաւջլ դէմքով—ապա ուրիշ հարկերը, ապա կաշաքներ...

Բոլորս լուռ էինք: Կրակը ճարձաթում է, բոցը իջնում և արիւնագոյն լոյսի մի շրջանով ներկում մեր դէմքերն ու թոնիրի եզերքները:

—Ձայն հառաչանաց, հեծութեան սրտի... քեզ վերնըծայեմ... ստեղծողը ամենի... —լսում է այդ լուռութեան միջից աղայի մեղամաղձոտ, սրտի խորքերից դուրս եկող վշտալից խուլ ձայնը: Յետոյ, երբ մի բոպէ ամենքս լուռ մնացած՝ ա՛յնպիսի՜ կրակն ենք դիտում, նա դառնում է ժամկոչին և հարցնում.

—Պատարադին ո՞վ է այսօր, Սախակ:

—Տէր-Նդիշէն:

—Անբիծք էլ ունիք:

—Հրամանք ես, երկու հատ:

Նորից լուռութիւն. կաջձեր են դուրս սլանում թոնրի խորքից, միմեանց ետեից պնդում կարծես և սենեակի վերին մութ տարածութեան մէջ ճաթոտում—անհետանում: Աղջիկը դեռ աւելում է, բայց շատ հեռու. հազիւ երբեմն լսում է աւելի ձայնը:

—Տէր-Յովսէփին կասես, խօսում է աղան—որ ժամից յետոյ գալ մեզ մօտ ճաշի, թող ամբիծքը ուրիշների թողնի:

—Հաղըր որ էսօր ամբիծքն ուտի և էգուց էլ ձեր ճաշը... ասում է ժամկոչը—ինչու իզուր կորցնի ամբիծքները:

Բոլորս ժպտում ենք: Նա նկատում է այդ:

—Խնչը ապա... շարունակում է նա—դուք չէք իմանում թէ որքան ծանր է տէրտէրների համար՝ կորցնել մի ամբիծքն իսկ, թէկուզ թագաւորի ճաշին անգամ հրաւիրւած լինին: Կը տեսնէք մայ... երբ տէրտէրին ասեմ, նա էլ քիթ-մոռութը պիտի ծռի:

—Ձէ, ժամկնչ, պնդում է աղան—տէր-Յովսէփը կը դայ: Ի՞նչ կայ, իր բաժին ամբիժքը թող տուն ուղարկի: Ասա որ մի լաքեալագէտօք ենք եփել չորթանով:

—Քեալագէտօք...

Եւ ժամկոչի բերնի ջրերը ծորում են:

—Հ'ըմ... մեմոում է նա—ինչ լաւ բան որ լինի, իսկոյն տէրտէրին են կանչում... ժամկոչը չոռ ու ցաւ ուտի...

—Լնւ, լաւ, ժպտում է աղան—քո բաժինդ էլ կը տայ խաթունը:

—Ասուած շէն պահի... Գէհ, տաքացայ, դնամ. ժամ օրհնելու ժամանակ է. հիմա տէրտէրները եկած կը լինին. մանաւանդ ծուռ տէր-Ստեփանը, որ հոգիս մինչև այստեղս է հասցրել:

Կոկորդն է ցոյց տալիս և սկսում կոշիկները հազներ:

—Խն գէօ... շարունակում է նա—մինչև այստեղս է հասցրել: Ամէնից շուտ է գալիս, դուռը շրխոցով բաց անում, կոշիկները հանելով՝ թևի տակ դնում, գժի պէս վ'ըզզ... վազում դասը: Վայն եկել է ինձ, եթէ ժամ օրհնելու զանգը իսկոյն չլսփեցի:

—Ձէ որ նրան դադարեցրել են քահանայազործութիւնից:

—Ը'մ... ո՞վ կարող է նրա վրայ: Ամէն օր կուում է տէր-Յովսէփի, տէր-Յղիշէյի հետ... տէր-Վարդանի հետ խծ... Ասուած ազատի. շուն ու կատու են: Ժամի կէս տեղում մէկ էլ տեսար սա—նրան, նա—սրան. էլ բան չի մնալ որ չասեն: Է՛հ, է՛հ, ո՞րն ասեմ... դէհ, մնաք բարին, սաղ լինիք...

Եւ բաց է անում դուռը:

—Չմոռանաս Սախակ, կանչում է աղան:

—Ձեմ մոռանալ. մնաք բարին:

—Բարի եկար:

Ժամկոչը բաց արած դռնից երկնքին է նայում:

—Հօ, հօ, ասում է նա—լոյսը բոլորովին կը բացւի հիմա. տէր-Ստեփանը կրակ դրել—եկեղեցին վառում է ով գիտէ. թէ որ տէր-Վարդանն էլ եկել է, էլ Ասուած ազատի...

Եւ ծանր քայլերով հեռանում:

Գուրս եմ գնում ևս էլ: Փողոցում սկսում են երևալ դէպի եկեղեցին իջնող կանանց, տղամարդկանց և մանուկների խմբեր:

որոնք միմեանց ետեւից շարքով՝ անցնում են նեղ կածանով, կրծկւած ու քչփչալով: Մանուկներն իրարու ձիւն են նետում, սահում են, վազվզում, գոռգոռում... ու նրանց սուերները կարճ կերպով գծւում է զառիվայրի շողշողուն ձիւնի վրայ:

Եւ ժամկոչ Սախակի կոչնակի ձայնը իր վերջին տըլընգ--տըլընգն արձակելով՝ իջնում է դէպի Յայնկոյսների ձորակը, ուր և գնում են ձորագլխի վրայ միմեանց միացող ժամւորները:

Ձորի խորքից խուլ կերպով լսւում է այժմ եկեղեցու տանիքի վրայ դրւած երկրորդ մեծ կոչնակի ձայնը, որ իր կողմից արձագանք է սփռում ձորակի մէջ և դրդեցնում Զըմի-զըմի մաղարայի լեռը...

Այդ բոլորը չիշում եմ մի առ մի, ամենափոքր մանրամասնութեամբ:

Յիշում եմ ապա փոքրիկ կամօրջը, որ ձգւած է ձորակի գետի վրայ, յետոյ՝ եկեղեցու բարդիները, պուրակը, կից պարտէզները, Զըմի-զըմի մաղարայի ժայռոտ լեռը՝ ճիշտ շէնքի ետեւում ցցւած, եկեղեցու և դպրոցի պարսպապատ շէնքը, վերի առուն՝ իր ուռիների շարքերով...

Յիշում եմ եկեղեցու քարէ դռնից սրթսրթալով ներս մտնող ժամւորները, որոնք շրթունքները շարժելով աղօթք են մրմնջում և մոնելուց առաջ քարէ շրջանակը համբուրում. չիշում եմ դուան առջևի առւից լացւողներին, որոնք կարմիր թաշկինակներով երեսներն են սրբում, խաչակնքում, ապա ձեռքերի մէջ փչում...

Այդ բոլորը այնպիսի քաղցր չիշատակներ են ..

Ահա և եկեղեցին:

Մի մեծ շէնք է, ցած ու մութ: Լուսամուտները փոքր, ջահերը վառւած չեն, սեղանի վրայ և տեղ-տեղ՝ պատկերների առաջ վառւող բարակ մոմերի լոյսերը շատ նեղ շրջաններ են լուսաւորում: Դռնից նայողին ներկայանում է դէմ առ դէմ—հեռւում, մի մեծ բաց դռան ներսի կողմը, մատուռի լուսաւորած ոսկեղոծ սեղանը. կարծես chapelle ardente լինի՝ Նրա դրսի կող-

քերում երկու փոքրիկ սեղաններ, նայնպէս սակաւ լուսաւորած: Երկու մեծ սիւներ կազմում են դասը, որոնք և փայտեայ վանդակորմով զատւած են: Սիւների կողքին են կանգնել քահանաները: Կասերից սկսած դէպի ցած սարգում են երկու անոճ փայտեայ սիւներ և ժողովրդի կանգնելու տեղը—մինչև գուռը: Եէնքի շատակը քարեայ է, բայց ծածկւած ամեն տեսակ հին ու նոր կարպետներով և զորդերով: Պատերը զարդարւած են հնամաշ, սևացած, մոմի կաթւածքներով բծաւորւած, բոցերովը խանձւած, երբ մն շատ ազիզ, հագիւ ուրեմն շեղեցիկ՝ զանազան պատկերներով: Պարտերից յետոյ, դռան գլխին է գտնուում կանանց բաժինը, մի երկչարկ լայն լոճա, որ թառում է կուռում: Եւ որպէս զի ցածում աղօթող տղամարդիկ կանանց դէմքերը չտեսնեն, թառման ունի առջևից մանր ծակերով մի տախտակորմ: Քառամայի տակն է աղքատների կացարանը, երեսփոխի մոմի սեղանը և կոշիկներ հանելու տեղը...

Ներս եմ մտնում և այն ժամանակ ներս մտնում, երբ զասից լուռւմ է տէր-Վարդանի խեղտւած ձայնը:

—Օրհնեալ տէր մեր Յիսուս...

Բայց հագիւ թէ նա կմկմալով ուզում է շարունակել, որ եկեղեցու դռան մօտ մի խլրտում է առաջանում: Տէր-Ստեփանն է: Նեախ պէս ներս է ընկնում, կոշիկները թևի տակից գուռս թողնում դէպի դետին, սլանում է դէպի միւս դասը, առանց փիլոնի՝ խլում է տէր-Վարդանի բերանից աղօթքը և գոռում:

—Օրհնեալ տէր մեր...

Եւ ահա հանդիսատես եմ մի տեսարանի, որի չիշոգութիւնն իսկ ինձ ծիծաղեցնում է:

Տեսնում եմ կուզ տէր-Վարդանին, որ չանկարծակի եկած այդ ընդհատումից՝ քարանում է: Ստիպւած էր լուել, որովհետև ձայնը շատ ցածր է, արտասանութիւնը ծանր: Մերացել է տէր հայրը, խիտ ծերացել: Լուռւմ է և այլայլում: Տէր-Յովսէփ—աւագերէցից յետոյ, ժամ օրհնելու իրաւունքը իրենն էր. ոչինչ չէր կարող այնքան անպատուել նրան, որքան զիժ տէր-Ստեփանի այդպիսի վարմունքը:

Տէր-Ստեփանը զիժ է. մի խենթացած քահանայ, որի հետ

չգիտեն ինչպէս վարելը. որտեղ ուղարկում են—փաստում է: Մոլեզին սիրահար է ժամերգութեան. որ թողնես, ամբողջ առաւօտեան ժամերգութիւնը, քահանայի, գպիրների, փոխասացների բաժինները միմեանց ետեից կասի և դեռ էլի կուզենայ ասել: Ամբողջ օրը իր տան կտուրի վրայ ճեմում է և զիլ ձայնովն ու ստեղի շարականներով ողողում փողոցը:

Բայց ահա տեսնում եմ տէր-Վարդանին, որ ցցւում է, կարմըրում ու գոռում:

—Ագաբսը՛գ (անամօթ), չե՞ս ամառում... էլի...

—Եւ թող մեզ զպարտիս մեր... շարունակում է տէր-Ստեփանը արագութեամբ, զլուսը ցցած, յաղթական ժպտը դէմքին: Տեսնելով որ յաղթողն էր, ուրախութեամբ ձեռքերն է շփում, փլուրնը վրան առնում ու անընդհատ, երգելու պէս կարգում է աղօթքները:

—Մեռ... շարունակում է տէր-Վարդանը աւելի բորբոքած.

—...Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն... պոչում է տէր-Ստեփանը շեշտելով և թշառ ծերունուն դարձած:

Տէր-Վարդանը վերջնականապէս յոյսը կորած, դողում է բարկութիւնից. լսել է, բայց քթի տակից փնթփնթում է. և բաւական բարձր ձայնով փնթփնթում:

—Այսպէս դժերի մորուքը չեն ածիլում... հերկի՛, հերիք չեզմաւ արածի, քո ի՛նչ բանն է աղօթել, հաչան Մարկոս, ծուռ Փիլիպպոս...

—...Ձի քո է կարողութիւն եւ զօրութիւն... նստում է դէպինա տէր-Ստեփանը՝ զօրեղ ձայնով:

—Չոռ ու ցաւ...

—...Եւ փառք յաւիտեանս...

—Գեաթնն անցնես...

—...Ամէ՛ն:

Թառմում այդ միջոցին քչփչոցը սկսել է: Կանայք բաւական հաւաքել են. տղամարդիկ էլ հեղհեռէ հասնում են, կօշիկները թողնում դռան մօտ—ժամհարի կողքին, զլսարկները կամ հանում և կամ հենց Ֆէսով՝ ցրում են կիսախաւար եկեղեցու զանազան կողմերում:

Ահա և աւազերեցը. կարճահասակ, բարեմոյն դէմքով ծերունի, որ դռան շէմքի առաջ կանգ է առնում և դիտում է դասի մէջ կատարող տեսարանը: Ասպարէզի տէրը դեռ տէր-Ստեփանն է. անցել է այժմ մատուռի առաջ ու շարունակում է ջրէփի պէս բերնից դուրս տալ անհասկանալի արագութեամբ աղօթքներ, մոնոտոն, արագ ու զիլ արտասանութիւնով: Պարզել է վիզը և ամբողջ մարմնով տարուբերում է: Այ՛ մի տեղ չէ նայում, բացի օձոսքից. կատարեալ էքստազի մէջ է:

Այդ միջոցին վրայ է հասնում եկեղեցու շորորդ քահանան— տէր-Նդիշէն: Յաղթանդամ ու հսկայ երիտասարդը ցածում կանգ առնելով հասկանում է ամեն ինչ, յետոյ ձեռքի հաստ ցուպը ցած դնում մոմաւաճառի մօտ և մի քանի հսկաչական քայլերով կարում տարածութիւնը: Հասնում է ատեան, բռնում խենթի թևից և այնպէս ցնցում, որ թշուաւ հրգիչը զալարում է: Դառնում, տեսնում է իր անարկու թշնամուն, նրա դէմքը և բոլորովին լուում:

Այդ ժամանակ միայն ամեն ինչ կարգի է ընկնում: Տէր-Յովսէփը շարունակում է աղօթքը, վրայ հասնող տիրացուները, աշակերտներն և երգիչները շարականներ սկսում, իսկ տէր-Ստեփանի ձայնը այլ ևս չէ լսում:

Խեղճ տէր-Ստեփան:

Եւ ահա լոյսն այդ պահուն զբուսում բացւած, կիսովին դռնից ու բարձրադիր լուսամուտների ապակիներից ազօա կերպով ներս է թափանցում:

Եկեղեցին լցում է հեազհետէ: Հասնում են ծերեր, պատանիներ, մանուկներ: Ամէն կողմ երևում են ծնրադրողներ, կրծահարներ, պատկերապաշտներ ու մոմ վառող— խաչակնքողներ: Յաճախ լսում են խուլ մոմուոցներ: Ամանք մեղմ ձայնով երգում են տիրացուի հետ կամ անգիր կարգում քահանայի հետ: Նրբեմն, մի հեռաւոր անկիւնից տարածւում է յորանջելու ձգւած ձայն և երբեմն էլ ո և է բարեպաշտ, երկար առօթք փափաւալուց յետոյ, յանկարծ բերանը բաց է անում և յորանջելու միջից ձայնում:

—Տէր ողորմեա, տէր ողորմեա...

Դրսում, դռան առաջ երևում են կազմող և ապա քանդող խմբեր: Եկողներ են, որոնք պահ մի կանգ են առնում միմեանց

բարեւում, մի քանի խօսք փոխանակում, ապա դռան քարէ շրջանակը համբուրում և խոչակնքելով ներս գալիս: Վանդակորմից երևում են կանաչք էլ, որոնք ծալում են նախ սպիտակ սաւանները, թևի տակ դնում, ապա կարմիր երկար շապիկով կանգնած՝ սկսում են մի քչփշոց, որ ընդհատում է կրծահար պառաւների աղիողորմ աղօթքներով:

—Մեզնչ յամենայնի, Տէր:

—...Սրարիչ Ասուած, թող զմեզս իմ...

—Հայր երկնաւոր, մեղուցեալ եմ՝ առաջի քո...

Միշտ մեղաւոր են ճանաչում իրենց, համոզւած այդ բանում. ուրեմն և զարնելու, պատժելու, պատուհասի արժանի...

Այդպէս էին աղօթում կանաչք վերևում, այդպէս էլ տղամարդիկ՝ ներքևում...

Ի՛նչ են եղել արդեօք այժմ այդ բոլորը—եկեղեցին ու ձորը. արդեօք ո՞վ է կենդանի մնացել այդ ծանօթ, վշտերով լի, բայց ջերմեռանդ ծերունի դէմքերից, այդ կտրիճ երիտասարդներից, այդ առողջ, բարեպաշտութեամբ աղօթքի կանգնած կանանցից...

Սրդեօք յունիսեան այդ արիւնայեղ օրերից յետոյ, ձեզնից մէկն ու մէկը ազատեց ձեր բազմադարեան ջերմեռանդութեան, կրծահարութեան և մեղաւորութեան շորհիւ...

## Ն Ր Ա Ն

Դ Ե Ր Ե Ն Ի Կ Դ Ե Մ Ի Ր Ժ Ե Ա Ն Ի

Մանուկ, զգում եմ, որ այս վերջինն էր,  
Այս տանջող, անմիտ, երկնային սերը.  
Ձէ, հոգիս, անվերջ ինձ տանջանք միայն  
Միշտ չե՛ն սահմանել բախտի խաղերը:

Եւ չեմ կորչիլ ես,—այդ տանջանքները  
Բոլոր ուժերս շնն խլել ինձնից.  
Հողուս կրակը, անհուն յոյզերը  
Այլ կեանքի համար պատրաստ են վառելը:

Ինձ համար արդէն չուզում է հեռուն՝  
Ինչ որ փնտրում եմ—անհուն փոթորիկ.  
Եւ շատ կան ինձ պէս շատերից թագուն՝  
Անվերջ տառապող՝ ոչ շներ—մարդիկ...

Չհալու համար դեռ կայ ճանապարհ,  
Նա ինձ վաղուց էր իրա մօտ կանչում.  
Եւ ես ընտրեցի նրան ինձ համար  
Դէպի վտանգը իմ ընտրած կեանքում...

Արդէն վառում է խարոյկը սրտիս.  
Կամ նա կը ճաշթէ ամենի գլխին,  
Եւ կամ այրելով ուղեղս ու հոգիս՝  
Մոխիրների տակ կը թաղէ իմ զինն...

# Ն Ո Ր Ե Կ

Վ Է Պ

## Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Գ. ԲԱԲԿԵՆՅԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

Գլ. Ե.

Առաջտեան ժամի ութն էր, երբ Ալէքսանդրը պէտք է մնաս բարև անէր ծնողներին և ուղևորէր Քուրքանիս: Այսպիսի դէպքերում առհասարակ, երբ ձիերը դուրս էին քաշում, ամբողջ ընտանիքը դուրս էր թափուում և ցտեսութիւն ու բարի ճանապարհ էր անում. բայց այսօր կարծես մի ինչ որ ձայն սրտի խորքերից ասում էր նրան, թէ դնա հացատուն, որտեղ մայրդ է և Գուլէն, ու այնտեղ մնաս բարև արա: Նա մտաւ հացատուն, որտեղ բոլորն էլ աշխատում էին. համբուրեց մօր ձեռքը և իր ձեռքը պարզեց Գուլէին:

Գուլէն համեստօրէն, աչքերը վայր գցած, մօտեցաւ նրան և հազիւ մատերի ծայրով շոշափեց Ալէքսանդրի պարզած ձեռքը: Նա կարծես այսօր կորցրել էր իր արագ շարժւածքը և ինչ որ մտատանջութեան մէջ ընկել:

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11:

Երբ Ալէքսանդրը գիւղից դուրս եկաւ, իր մէջ մի մեծ փոփոխութիւն էր զգում: Առաջ այսպիսի ուղեորութիւնների ժամանակ նա միշտ կը մտածէր՝ ընկերական հարցերի մասին. բայց այսօր ինչ որ այդպիսի խնդիրներ էլ չէին գալիս նրա գլուխը, որի մէջ թաղաւորում էր միայն Գուլէն: Ուր աչք էր ածում, ինչ մտածում էր, նրա առաջ կանգնած էր այդ հրաշալի և զիւթիչ քրդուհին. նրա աչքերը, թևերը, քիթը, բերանը, շրթունքները, երկու հաստ ծամերը հասած մինչև ծնկածալերը: Յանկարծ նրա միտքն եկաւ, թէ ինչ կը լինէր, որ նա մի անգամ համբուրէր Գուլէին և իսկոյն վճռեց, որ եթէ նա մի անգամ գրկի նրան և համբուրէր նրա հետ, աշխարհիս ամենամեծ բախտաւորութեան մէջ կը լինի, այնպէս որ, նրանից յետոյ, կարող է հանգիստ սրտով մեռնել: Իսկ եթէ նրա աչքերը համբուրի, կարող է տեղն ու տեղը ցնորւել: Այս զառանցանքների ժամանակ նա զգում էր ինչ որ անհասկանալի ջերմ իր սրտի մէջ դէպի Գուլէն, որը նրա հառնար անասելի թանկագին էր դառել:

Վերջապէս նա սթափւեց այս զառանցանքից և զարմացաւ իր վրայ. միթէ նա սիրահարած էր Գուլէին: Ոչ, ոչ, հեռու, հեռու այսպիսի մտքեր, այդ անկարելի բան է և այդպիսի մտածողութիւնները անգործ ժամանակի և պարսպ ուղեղի հիւանդ արգասիք են: Ալէքսանդրը իրեն ստիպեց, որ մտածի այն հարցերի մասին, որոնք վաղուց նրան հետաքրքրում էին: Նա երևի ոչ միւս օրը նորից համոզւեց, որ քրդերը հայերից աւելի առողջ, ուժեղ և ընդունակ ժողովուրդ են, որ նրանց կեանքի պայմանները աւելի առողջացուցիչ են, քան թէ հայերինը, որ հայերը պէտք է աշխատեն խառնել քրդերի հետ, որոնցով թէ թւով կը բազմանան, թէ ազգակցական և ընդհանուր կենսական աւելի սերտ կապերով կը կապեն և թէ հայ ազգը ընդհանրապէս կը թարմանայ: Նա ստիպում էր իրեն մտածել տալ, որ միակ արգելքը սրա համար կրօնն էր, որը այս դէպքում, թէ հայերի և թէ միւսների յառաջդիմութեանը շատ վնասում էր, և որ լաւ կը լինէր նրան աւելի զարգացնել, որ ընդունելի լինի բոլորին, որ ձուլել կարողանայ մահմեդական և քրիստոնեաց տարրերը: Նա ստիպում էր իրեն քննադատել իր ծանօթներից մէկի կարծիքը.— թէ կրօնը չի կարող

զարգանալ, այլ պէտք է ընկնի և ազգերը կը միանան. կրօնները անկուճով, որ...

Երբ Ալէքսանդրը ուզում էր իրեն այս մտքերով զբաղեցնել և աշխատում էր մէկ-մէկ նրանց վերլուծել, յանկարծ նրա աչքը առաւ ձիու երասանեակին, որի սևութիւնն ու հաստութիւնը նրան յիշեցրին Գուլէի ծամը: Այստեղ նա մտաբերեց, թէ ինչպէս Գուլէի լաչակը ընկնում էր ուսերի վրայ, Գուլէի հասակի ձևը, որը կարծես լիովին ուղղահայեաց լինէր: Եւ յանկարծ Գուլէի ամբողջ իրանը պատկերացաւ նրա առաջ: Նա մտաբերեց Գուլէի շարժւածքը և ինքն իրեն վճռեց, որ բախդաւոր կը լինէր, եթէ Գուլէն միշտ մօտը լինէր, նրա մօտ մանգար և ինքը նրան հեռւից նայէր ու զմայլէր: Նա սկսեց իրեն ներկայացնել Գուլէի ոտները, նրա երևակայութեան մէջ շատ գեղեցիկ էին երևում. իսկ եթէ բաց լինէին, ինչքան սպիտակ ու կոկլիկ կը լինէին. նա կը համբուրէր այն գեղեցիկ ոտները: Այստեղ յանկարծ նա նկատեց, որ դարձեալ յիմար զառանցանքների մէջ է ընկել, բարկացած արտասանեց իր հասցէին ռանբարոյական խօսքը, և ձիու քայլը արագացրեց, որ գուցէ կարողանայ ազատել այսպիսի մտածմունքներից:

## Գլ. 2.

Դանիէլ բէկի ընտանիքը ամառներն առհասարակ Թուրքանիսումն էր մնում, որովհետև նա իր ծառայութեան պատճառով ստիպւած պէտք է քաղաքում ապրէր. թէպէտ պատահում էին տարիներ, երբ շողը զօրում էր և նա իր ընտանիքն ուղարկում էր մօտակաջ սարի գիւղերից մէկը: Այս տարի ամառը որովհետև սովորականից աւելի հով էր, Դանիէլ բէկի ընտանիքը ոչ մի տեղ չէր դնացել: Նա ինքը գործերի քլութեան պատճառով համարեա միշտ ազատ էր և լրագիրներ էր կարդում, կամ կնոջ հետ թուղթ խաղում. իսկ նրա դուստր Մարիամը ամբողջ օր ու գիշեր գիրքը ձեռքից վայր չէր դնում և պարապում էր ընթերցանութեամբ: Նա արդէն կարգացել էր բոլոր հայ հեղինակութիւնները, մինչև անգամ Պոլսի բարբառով գրւած և սկսել էր եւրոպական գրւածքների և խոփուն գրքերի ընթերցանութիւնը: Դանիէլ բէկի ընտանիքը միշտ հետա-

քրքիր էր Ալէքսանդրի վերաբերմամբ և զիւզից ամեն եկողի հարցնում էր նրա մասին: Նրանց զարմացնում էր և մասամբ էլ զւարճացնում Ալէքսանդրի բարութիւնը, որ յաճախ մինչև ծաղրականի էր հասնում:

—Այ զարմանալի մարդ, յաճախ բացականչում էր տիկին Մարգարիտը:

—Ե, ի՞նչ զարմանալու բան կայ, պատասխանում էր Դանիէլ բէկը. երիտասարդ մարդ է, նոր աւարտած, դեռ ուսանողական մտքերով, ի հարկ է բարի կ'լինի: Այ կնիկ, առհասարակ պէտք է իմանաս, որ ուսանողները քանի կեանքի հետ լաւ ծանօթ չեն՝ հրեշտակ են լինում, բայց երբ լաւ ծանօթացան, այն ժամանակ դառնում են մեզ նման մարդ:

—Հայրիկ, ես այդ բանում քեզ հետ համաձայն չեմ, որովհետև ներկայ ուսանողները համալսարանումն էլ առհասարակ եսական և անզարգացած մարդիկ են և նոցա մէջ լաւերը հազւագիւտ են:

—Ո՛չ, Մաշա ջան, դրանցից շատերին եմ ես փորձել:

—Բայց, հայրիկ, ես ձեզ մի բան էլ ասեմ. այն սխալ բան է, որ մեր հասարակութիւնը ուսանողի մէջ մի առանձին լաւ բան է ուզում տեսնել. իմ կարծիքով ընդհակառակը. ոչ ուսանողի տարի ները, ոչ գիտութեան պաշարը և ոչ էլ կեանքի փորձը չեն կարող թոյլ տալ, որ նա մի առանձին բան լինի, իսկ որ նոցա մէջ մինչև այժմ միայն լաւն են տեսել և նոցա երեսանների տեղ չեն դրել, որ պատճառը այն է, որ մեր հասարակութիւնը անզարգացած է եղել, իսկ դոքա եղել են աւելի կրթւած: Դրանց մասին են զիւզացիներն ասում, թէ Վլչխար չեղած տեղը, այժին չէլէբի խան կը կանչեն»:

—Բայց ի՞նչին վերագրել Մաշա ջան, որ մեր գիծ Ովանէսի տղան այդքան խելօք, բարի և հասարակութեան օգտաւէտ երիտասարդ է:

—Նրան, որ նա բնութիւնից լաւ յատկութիւններ է ստացել, զիւղական պարզ կրթութիւն ունի և հազւագիւտ մարդիկներից մէկն է:

—Пусть такъ во всякомъ случаѣ (Թող այդպէս լինի, յամենայն դէպս) ես նրան շատ հաւան եմ կացել: Ազգասէր տղայ է:

Նրան մենք արդէն սպասում ենք. նահանգապետը առանձին հրամանով պահանջել է:

Այս խօսքերը դեռ նոր էր արտասանել Դանիէլ բէկը, երբ ծառան ներս մտաւ և չայտնեց, որ պրիստաւ Ուլանէսովը կամենում է տուն գալ:

Դանիէլ բէկն իսկոյն վեր կացաւ, առաջ զնաց. տիկին Մարգարիտը աթոռի վրայ մի աջ ու ձախ նայեց և իրեն ուղղեց, իսկ օրիորդ Մարիամը վաղ տուեց միւս սենեակը, իր անկարգ մազերը ուղղելու:

— Պաժալուիտե, պաժալուիտե, (համեցէք, համեցէք), բացականչեց Դանիէլ բէկը: А! здравствуйте, какъ вы поживаете? (բարև, ինչպէս է ձեր կենցաղավարութիւնը):

— Շնորհակալ եմ, լաւ է, զիւղումն ապրում եմ, և ախտսում որ ինձ քաղաք էք կանչում:

— Օ, հալա այնքան ձեզ շարհարեն: Է՛, սրան ուստիկանական ծառայութիւն կ'ասեն, եղբայր:

— Ե, հալա, բարև ես եկել, զլուխը շարժելով, բարի ժպիտը երեսին, սկսեց տիկին Մարգարիտը. ինչպէս են ծնողներդ:

— Փառք Աստուծոյ, լաւ, առողջ, շնորհակալ եմ ձեր ուշադրութեան համար: Նոքա ձեզ բարևում էին:

— Բարև պ. Ալէքսանդր, ներս մտաւ օրիորդը:

— Բարև, օրիորդ, ինչպէս էք:

— Շնորհակալ եմ, շոգից տանջւում ենք. դուք էք, որ բախտաւոր կեանք էք վարում և հով զիւղում ապրում:

— Է՛, մեր զիւղը աւելի շոգ է. բայց ես մի բանով բախտաւոր եմ, որ ապրում եմ սիրած կեանքով և համարեա թէ միշտ զբաղւած եմ:

— Դա մի մեծ բախտաւորութիւն է, որից կանայք առհասարակ զրկւած են:

— Ну, что, дорогой, Александръ Ивановичъ, (է, ասէք, թանգազին Ալէքսանդր Յովհաննիսեան), ուսանողութիւնից չետոյ ինչպէս է կեանքը:

— Ոչինչ, ես կեանքի մէջ մեծ բաւականութիւն եմ գտնում. ես, ընդհակառակը, չեմ սիրում ուսանողական կեանքը: Ի՞նչ բան է

ուրիշի հաշուով ապրել և սարապել միայն սովորելով մինչև 25 տարին,  
այդպիսի կեանքը ամենաազնիւ եղիտասարդին եսական կ'անի:

—Ե, Թրբ ես եկել:

—Վէս ժամ ասաջ: Դանիէլ բէկ, այդ ինչու էք ինձ կանչել:

—Մենք չենք կանչել: Այդ նահանգապետի հրամանն է և վաղը,  
Վլադիմիր Վլադիմիրիչին տեսնելուց յետոյ, պէտք է գնաք Պերճաւան:

—Ես չգիտեմ ինչ կարող է ինձնից հարցնել նահանգապետը:  
Այս դէպքը ինձ համար հանելուկ է:

—Ես կարծեմ, սա Փիր-Մուրադ Սուլթանի արարքը պիտի լինի:

—Ինչպէս Ես նրա հետ շատ հաշտ եմ: Նա դէպի ինձ շատ  
յարգանքով է վերաբերուած:

—Հա, հա, հա, ծիծաղեց Դանիէլ բէկը. կեցցես ջահելու-  
թիւն: Մաշո, մի սառուցով զինի բեր, խմենք Ալէքսանդրի կե-  
նացը:—Տօ, եղբայր, ինչ ես մտածում, նա երկու ամիս է Պերճա-  
ւանումն է և քո ասկը ջուր է կապել: Ո՞րտեղ ես, որ այստեղ ես?

—Շատ կարելի է, դուք աւելի փորձեա՞ծ մարդ էք և աւելի  
ուղիղն էլ կարելի է զիտէք:

—Ոչ թէ կարելի է, իսկապէս այդպէս է: Դուք եթէ այժմ  
գնաք Պերճաւան, անփորձ մարդ էք, երկու օրում ձեզ կը կուսաց-  
նեն նահանգապետի և դատաւազի հետ և ձեզ արձակել կը ասն  
պաշտօնից:

—Միթէ:

—Այո, սիրելի բարեկամ:

—Բայց ինչ անենք:

—Տես, սիրելի Ալէքսանդր Իւանիչ, դուք իմ որդու տեղ էք  
ինձ համար. ես էլ հայ մարդ եմ և ոչ օտարազգի: Դուք լաւ և  
հասարակութեան պիտանի երիտաւարդ էք, ես ձեզ կը պաշտպա-  
նեմ: Վաղը պէտք է մենք ամենայն ջանք գործ դնենք, որ Վլա-  
դիմիր Վլադիմիրովիչը իր վրայ առնի պատասխանատուութիւնը և  
դուք չգնաք Պերճաւան, եթէ ոչ՝ այնտեղից դուք պաշտօնազուրկ  
կը դառնաք:

—Ինչպէս զիտէք, այնպէս էլ անենք:

## ԳԼ. Է.

Օրիորդ Մարիամը, որի խելացիութիւնն ու համեստութիւնը ամբողջ քաղաքում յայտնի էր, աւարտել էր հայոց երկդասեան ուսումնարանը, յետոյ շարունակել և աւարտել առասաց պրոգրէմնագիան: Գէտէր կարուձև, խոհանոցում օգնում էր մօրը, մինչև անգամ ծառային, շատանգամ լւանում էր ճերմակեղէնը, բայց երբ հիւրեր էին զալիս, նա մաքուր հազնում էր, ձաշի վրայ նստում և յաճախ էլ երգում մեր սովորական ազգային երգերից: Թէպէտ նա մի ասանձին դասական կրթութիւն չունէր, բայց շատ կարգում էր, շատ հարցերի մասին տեղեկութիւն ունէր և եղել էր երիտասարդական զանազան շրջաններում ու ժողովներում: Նա ծանօթութիւն էր վարում Թուրքանիսի հայ ուսուցիչների հետ, մի երկու անգամ էլ բեմ էր դուրս եկել, բայց աւելի շատ նրան յափշտակեցին մի քանի ժամանակ այն ժողովները, որոնց մի քանի օրիորդներ ծնողներինց ծածուկ կազմում էին մի երկու ուսանողի հետ, որոնք օրիորդներին բացատրում էին նոր զագափարներ, ցոյց էին տալիս կարգալու համար նոր զբքեր և այլն: Գանէլ բէկն ու Մարգարիտ խանումը չէին ձնշում օրիորդի ազատութիւնը և, որովհետև նրան սիրում էին իբրև իրենց աւագ որդուն, տան օգնականին և հաւատում էին նրա խելքին ու համեստութեանը,—նրա ոչ ընթերցանութեանը, ոչ էլ ծանօթութեանը արդելք չէին գնում: Օրիորդ Մարիամը դեռ իր երեխայ ժամանականից լսել էր, որ մէկը իրենց դիւղից դիմնագիծում սովորում է և շնորհալի պատանի է: Նրա հետաքրքրութիւնը աւելի շարժւեց, երբ Ռուսաստանից եկող երիտասարդները պատմեցին Ալէքսանդրի մասին, թէ նա ինչքան բարի, ազնիւ և աշխատասէր երիտասարդ է: Այս պատմութիւնները մի ինչ որ մաքուր և անկեղծ համակրանքի զղացմունք էին զցել օր. Մարիամի սրտի մէջը դէպի Ալէքսանդրը, այնպէս որ նա յաճախ պարզօրէն հարցնում էր Ալէքսանդրի ընկերներից, թէ նա ինչ հասակի, դէմքի, գուրեկանութեան մարդ է: Նա մինչև անգամ նրան երկու անգամ իր երազում տեսել էր:

Ալէքսանդրի Գանիէլ բէկին արած առաջին այցելութեան ժամանակ, նրա գալու լուրը օրիորդին առաջին մի քանի րոպէնե-

րում շշմացրեց. նա կարծես իրան մոռացաւ, կարծես իր նշանածին սպասում լինէր: Նա, մազերն օւ շորերը դեռ կարգի չբերած, վազեց հիւրանոց: Բայց հէնց որ ներս մտաւ դահլիճ, ուր նստած էր Ալէքսանդրը և տեսաւ իր վաղուց սպասած անծանօթին, նրա սիրտն սկսեց սաստիկ բարախել, շունչը սպտուեւել, քայլերը դանդաղեցին, նրան տիրեց մի անասելի ամօթխածութիւն: Առաջին րօպէում նա տեսաւ միայն Ալէքսանդրի աչքերը, որոնք կարծես նրան հարւածեցին և կաթւածահար արին. նա գլուխը կոր մօտեցաւ հիւրին և չիմացաւ թէ ինչ փնթփնթայ: Առաջին տեսութիւնից յետոյ օրիորդ Մարիամը էլի սաստիկ քաշուում էր Ալէքսանդրից և մի քանի տեսութիւնից յետոյ միայն կարողացաւ ազատուել նոր ծանօթի ճնշող ազդեցութիւնից և այսօր նրա հետ այնքան ընտանիացել էր, որ սկսել էր համարձակ դատել:

Այլ տեսակ էր վերաբերում դէպի օրիորդ Մարիամը Ալէքսանդրը: Նա մինչև Թուրքանիս գալը չգիտէր թէ Դանիէլ բէկը հասած դուտոր ունի: Թուրքանիս դալուց նա սաստիկ զբաղւած էր իր անելիքով հասարակական գործունէութեան տապարիզում: Նա վաղուց սպասում էր այն օրին, երբ ինքը ազատ մարդ կը դառնայ, կունենայ ապրուստ և գործնական կեանքում կը սկսի օգնել ժողովրդին. և այսօր նա հասել էր այդ դրութեան: Ինչ նրա գլուխը կը գար պսակելու հարցը, կամ սիրելու ցանկութիւնը. նա ապրում էր միայն իր երևակայական գործունէութեան մէջ: Այս պատճառով նա իր ծանօթութեան մէջ երկար ժամանակ կարծես օրիորդին իսկի չէր նկատում և մտաբերում նրա դէմքի գծադրութիւնը: Այսպիսի վերաբերմունքը հետեանք էր և օրիորդի արտաքինի: Քիչ նիհար և կարծէք վատառողջ, միջահասակ, շագանակագոյն ու խիտ մազերով, մեծաքիթ, քիչ անտաշ և իրենով մի առանձին բան չներկայացնող օրիորդ Մարիամը անկարող էր չափշտակել արդէն չափշտակութեան մէջ ընկղմւած երիտասարդին: Ալէքսանդրի վերաբերմունքը դէպի օրիորդը աւելի եղբայրական էր և ուրիշ ոչինչ:

Այսպիսի սառն վերաբերումը ի հարկէ չէր կարող չգրդուել օրիորդին: Նա վաղուց սովորած էր իր դիւթիչ խելքով ազդել

ամենքի վրայ, համոզել նրանց: Ալէքսանդրի ծանօթութեան մէջ էլ նա անզգաց կերպով սկսել էր դէպքեր փնտռել նրա հետ զրուցելու, որ երևան զան իր խելքն ու դուրեկանութիւնը: Վերջին տեսակցութեան ժամանակ այս դէպքը ինքն ըստ ինքեան առաջ եկաւ: Գանիէլ բէկը զնայ ծառայութիւն և խնդրեց Ալէքսանդրին, որ իրեն սպասի՝ մի տեղ ընթրեն: Տիկին Մարգարիտը զնայ խոհանոցը կառավարելու, իսկ Ալէքսանդրն ու Մարիամը մնացին առանձին:

—Պր. Ալէքսանդր, պառազամբի վրայ էլ շողէ, կ'ուզէք զնանք մեր բազը և այնտեղ ման եկէք:

—Մեծաւ ուրախութեամբ, եթէ կարելի է: Համեցէք, օրիորդ:

—Համեցէք: Գիտէք ես շատ սիրում եմ ամառուայ երեկոները. մարդ նայում է բազմաթիւ աստղերին, պարզ երկնքին, լուսնին, և այս բոլորը մարդու մէջ առաջ է բերում մտածողութիւն:

—Այն, օրիորդ, ես համաձայն եմ ձեզ հետ. մանաւանդ հայը շատ բան ունի մտածելու:

—Եւ ի՞նչ, նոր երիտասարդները շատ պարապում են հասարակական հարցերով:

—Շատ պարապում են, բայց ոչինչ չեն անում: Խօսքս հարկաւ Կովկասի հայերի մասին է:

—Միթէ... Խնդրեմ ասէք պ. Ալէքսանդր, ձեր կարծիքը հայ երիտասարդութեան մասին:

—Անկեղծօրէն ասած, շատ վատ է:

—Ի՞նչու:

—Ահա ինչու: Մեր երիտասարդութիւնը պէտք է բաժանել բարձրագոյն և միջակ կրթութիւն ստացածների: Վերջինների թւում պէտք է համարել և զանազան տեսակ արհեստաւորները, վաճառականները և գործակատարները, որոնք հետաքրքրում են և զբաղում ազգային կեանքով: Երկու տեսակի երիտասարդութեան գործունէութիւնն էլ մինչև այժմ անցել է ապարդիւն ազդի համար և մասամբ էլ ֆլաստակար է եղել: Այս երկուսն էլ ունեն և ընդհանուր պակասութիւններ. իրենց ընտանիքի և ազգի մէջ չեն սկսել հասարակական գործունէութիւն, նոցա գործունէութիւնը,

անցեալի ու փորձի պաշար չունի, հետեապէս խոհեմութիւն ու լանդառ չունի: Նոքա չգիտեն հայ հողը. հետեապէս չգիտեն և նրա վրայ անելիքները: Նոքա չունեն ազգային ասպարիզի վրայ մեծ գործողներ, հետեապէս, մի փոքր յաջողութիւնից յետոյ, ամբարտաւանում են ու անհաշիւ սխալներ գործում:

Կանիել բէկի բակի առաջ մի մեծ պարտէզ կար, անկած թթենի, բալի, խնձորի և այլ պտղատու ծառերով, որոնք իրենց խիտ տերեւերով ծածկել էին պարտիզի միջի երկու շարք ծառերի մէջ փակած ձեմելիքը:

Օրիորդ Մարիամն ու Ալէքսանդրը անցնում էին այս ձեմելիքով: Երեկոցեան զովը հանգստացնում էր նրանց շոքից թուլացած մարմինը. քամուց օրօրեղ ծառերի սոսափիւնը՝ նրանց ականջներին զիչուում էր իրրև մի երաժշտութիւն. փոքրիկ խաւարը անասող զիչերուայ ծածկում էր նրանց օտար աչքերից և նոքա մտացել էին բոլորովին ամբողջ աշխարհը, մտացել էին իրենց և յափշտակել էին ջերմ խօսակցութիւնով:

Ալէքսանդրը, կէս քայլ օրիորդից առաջ ընկած, ջերմ դատում էր զանազան հարցերի մասին, որոնք չգիտես որտեղից առաջ էին գալիս: Նա բացատրում էր թէ ինչքան վնասակար է այն կուսակցական ուղղութիւնը, որ մոցրել են մեր մէջ լրագիրներն ու հոգեօրակմնութիւնը. թէ այդ կուսակցութիւնները հեռեանք են մանր ու ցածր կրքերի և մի քանի մարդոյ հացի խնդրի, որովհետեւ հայերը ազատ կեանք ու զրահանութիւն չունեն: Նա պատմում էր, թէ հայերը գիտեն միայն ընտանեկան բարոյականութիւն, իսկ հասարակական և պետական բարոյականութեան մասին զեռ չեն երազում անգամ. նա մինչև անգամ զանում էր բազմաթիւ բապտիզմներ, որ հայերը մինչև այժմ էլ զեռ կազմում են կրօնական ազգութիւն և պետականութեան մէջ չեն կրթուել: Նա զանում էր, որ հայը չմտածելով, բնազգաբար, յաճախ ընդհանուրը զոհում է կրօնականի. որ բոլոր հայերը յառաջադիմականներ են, որովհետեւ պահպանելու ոչինչ չունեն և այլն և այլն:

Օրիորդ Մարիամը յափշտակած լսում էր. ժամանակ առ ժամանակ միայն հարց եր տալիս, և Ալէքսանդրի խօսելու ժամանակ աշխատում էր տեսնել նրա դէմքը. այդ ցանկութեան արդեւք էր

լինում գիշերային կէս խաւարը: Նա կեանքում ոչ մի ժամանակ, ոչ մի խօսակցութեան մէջ այնպիսի ինքնամոռացութեան չէր հասել, որպէս այսօր: Վեհջը, որովհետեւ ձեռնելիքը քիչ նեղ էր և նորա հաւասար քայլերով չէին կարողանում ընթանալ, օրիորդ Մարիամը, ինքնամոռացութեան մէջ, ձեռքը զցեց Ալէքսանդրի թևին, և նորա թեանցուկ անց ու դարձ էին անում ձեռնելիքով, մինչև որ տիկին Մարգարիտը կանչեց. Մաշա, արի հացը զցի, հօրդ գալու ժամանակն է: Կանիէլ բէկը ընթրիքի ժամանակ յայտնեց Ալէքսանդրին, որ Վլադիմիր Վլադիմիրովիչը համաձայնեց իր վրայ ընդունել Ալէքսանդրի Պերճաւան չգնալը: Ընթրիքից յետոյ բոլորը գնացին իրենց սենեակները և իսկոյն ընկան Մորփեսոսի դիրկը, միայն օրիորդ Մարիամն էր, որ քնել չէր կարողանում: Նա զարմացել էր իր ինքնամոռացութեան վրայ: Նա մտաբերեց, որ վճռել էր այսօր իր խելքով ու դատողութիւններով ազգել Ալէքսանդրի վրայ, բայց դուրս եկաւ հակառակը. ամբողջ երեկոյ խօսում, դատում էր միայն Ալէքսանդրը, իսկ ինքը, լոյ լսողութիւն դարած, ընկճւել ու կորել էր: Ի՞նչու նա չէր խօսում, ինչու նա մոռացել էր իր բոլոր գիտեցածներն ու մոտածածները, ինչու նրա ուղեղը կարծես դադարել էր աշխատել, ինչու նա առաջ չէր ընկնում և համարձակ խօսում, այլ կարծես վախում ու քաշում էր: Այս ինչ է, ինչ փոփոխութիւն էր պատահել նրա հետ, չլինի թէ նա սիրահարւած է, մի՞թէ այսպէս է լինում առաջին սէրը?!

Անկողնի մէջ նստած, երեսը ձեռքի վրայ հենած, օրիորդ Մարիամը, երկար այսպիսի մոտձողութիւններից յետոյ, յանկարծ շարժեց գլուխը և արտասանեց.

—Այո, ես սիրահարւած եմ. և արտասունքի սառը կայրակներ յորդառատ թափւեցին նրա օրիորդական թարմ կուրծքի վրայ և նրա սիրտը լցեց թախծալի բախտաւորութիւնով:

Գլ. Ը.

Փիր-Մուրադ Սուլթանը մեզ յայտնի գիշերը երկար ու բարակ մտածելուց յետոյ, Քալբալի խանի խորհրդով, վճռեց վերադառնալ գիւղ, գողութեան պէպքերը բազմացնելու և պատրաստե-

լու միրաւի ընտրութեան պայքարին, որը կարող էր վերջնականապէս որոշել, թէ ով պէտք է լինի յաղթողը Քշառոց զաւառակում՝ ինքը, թէ նորեկ պրիստաւը: Այսօր նա եկել էր Քուրքանիս և գնացել ներկայանալու զաւառապետին, որի մօտ նա պատահեց Ալէքսանդրին:

— Բարով, աղէս, բարով:

— Բարով, Սուլթան:

— Ինչպէս էք, երիտասարդ պարոնս: Հաւատացէք անկեղծութեանս, որ վաղուց ուզում էի ձեզ ներկայանալ, բայց ծերութիւնը իրենը պահանջեց, ստիպւած պէտք է մի քանի օրով փախչէի Պերձաւան:

— Ես զի զի շոքերում տանջեցի. այսօր էլ դործերս վերջացրած տուն եմ վերադառնում:

— Ես էլ մտադիր եմ այսօր տուն գնալ, կուզէք միասին գնանք:

— Աւելի լաւ: Տխուր չի լինի, գնանք միասեղ:

Երեկոյեան հովը դեռ նոր էր սկսել, երբ Ալէքսանդրը և ՓիրՄուրադ Սուլթանը կառքով ուղևորեցին զէպի Քշառոց:

— Աղէս, ինչու էիք եկել Քուրքանիս:

— Զգիտեմ ինչու նահանգապետը ինձ կանչել էր Պերձաւան, բայց Վլադիմիր Վլադիմիրովիչը չհամաձայնեց ինձ առաջժմ ուղարկել մինչև նահանգապետի վերադառնալը:

— Այդպիսի զէպերում դուք զիմեցէք Դանիէլ բէկին, նրա խորհրդով վարեցէք:

— Ես այդպէս էլ անում եմ: Ես առհասարակ շատ շնորհակալ եմ այդ պարոնից, նա ինձ հետ վարւում է, որպէս բարի դրացի և ինձ վերաբերեալ ամեն խնդիր իր սրտին մօտ է ընդունում:

Դա մեր բոլոր դրացիների պարտականութիւնն է: Ես էլ ամենայն տեղ ձեզ գովում եմ, երբ դուք մտածողութեանս կամ խօսակցութեանս առարկան էք լինում, այնքան ուրախանում եմ, որ կարծես երիտասարդ եմ դառնում:

— Իսկ դուք ինչու էք եկել զաւառապետի մօտ:

— Այնպէս, ներկայանալու և մէկ էլ հեռաքրքիր էի, թէ երբ կը լինի միրաւի ընտրութիւնը:

— Ես էլ այդ բանը հարցրի, բայց դեռ որը վճռւած չէ:

— Այո, ինձ էլ նոյն պատասխանը տւին:

— Բայց, Սուլթան, անկեղծ խօսենք. հաւատացէք, որ ես ձեր վատը չեմ ցանկանում, հաւատացէք, որ ես բոլորին միևնույն չափով և անկեղծ սիրում եմ, խնդրեմ դուք էլ շիտակ ինձ ասէք, ինչ էք մտածում եկող ընտրութիւններէ մասին:

— Ես շատ և շատ շնորհակալ եմ, աղա, որ դուք ինձ հետ այդպէս էք վարուում, խնդրեմ դուք էլ հաւատաք իմ անկեղծութեանը: Ձեր գլուխը վկայ, որ ձեր վարմունքը ինձ մխիթարում և բախտաւորեցնում է: Ես յաճախ մտածում եմ և Աստուծոց խընդրում, որ դուք մեր գաւառում գաւառապետ լինէք և արժանի էլ էք: Միրաւութիւնն էլ, ես արդէն ձեր եմ և անկարող եմ շարունակել, որչիս էլ անուս երիտասարդ է, նա էլ անկարող է անել. իսկ եթէ դրացիները և դուք իմ կարծիքը հարցնէք, կ'ասեմ՝ ընտրեցէք ում կամենաք, միայն թէ ընտրւածը ժողովուրդ կառավարէր: Ձեր և ժողովրդի ընտրածը իմ գլխիցն էլ առաւել է:

— Բայց, Սուլթան, ճշմարիտն ուսած, ես չեմ խառնելու ընտրութեան և թողնելու եմ ժողովրդի ազատ կամքին: Աւր ընտրեց ժողովրդի մեծամասնութիւնը, նա ինձ համար թանկագին է:

— Աֆերիմ, այ խելօք խօսք. կեցցէ ուսումը, որ ձեզ նման երիտասարդը այդքան լաւ բան ասաց: Այդ կարծիքին ես դեռ նոր եմ եկել և այդպէս էլ մտադիր եմ վարել. ուրեմն աւէք ձեր ձեռքը, կեցցէք, որդեակ:

Ալէքսանդրը և Փիր-Մուրադ Սուլթանը կառքի մէջ իրար ձեռք սղմեցին ու շարունակեցին ճանապարհը:

Երեկոյեան արեւի մայր մտնելու ժամանակն էր, բայց շոք էր և ճանապարհի փողին խեղդում էր մարդու կոկորդը: Այս պատճառով մեր ճանապարհորդների խօսակցութիւնը ընդհատուց և նորա ընկան մտածողութեան մէջ: Կեանքում ոչ մի անգամ Փիր-Մուրադ Սուլթանը այնպիսի զարկ չէր ստացել, որպիսին Քամօ բէկի մահն էր, որից չետոյ նա բաւականին չռետես էր դառել. աւելի քննողաբար էր նայում իր դրութեան և իր ընտանիքի ապագայից յուսը կտրում էր: Նա ընդունում էր Աէյադի ասած ճշմարտութիւնը, թէ տասը դէրուի մի կապերտի տակ կ'ընկնեն, բայց եր-

կու թագաւոր մի երկրում տեղաւորել չեն կարող: Մօտ երեք դար Ղափլան Սուլթանի տունը միակն էր եղել Քշառոց զաւառում: Այժմ երկրորդ անձի կամ ուժեղ տան առաջ գալը, նրա կարծիքով, հաւասար էր Ղափլան Սուլթանի տան անկման:

Ժողովուրդը որ կայ, մտածում էր նա, անհաւատարիմ մի բան է, որտեղ ոչոք եղաւ, այն կողմը կը թեքէի: Եւ այն մարդիկ առաջին աքացին կը տան Ծաթի խանի տան սիւներին, որոնք նրա հացով են մեծացել: Սրբէն կային թուրքերից մի քանի մարդիկ վաճառականութիւնով հարստացած, որոնք քանի անգամ փորձել էին խլել Ծաթի խանի որդիներից միրաւութիւնը. նրանց հետ միացել էին և Բաբի խան ուշադիներից մի քանիսը, բաց անյաջողութեան էին հանդիպել: Իսկ այժմ, եթէ նրանց հետ միանար և նորեկ պրիստաւը, որ պաշտօնով ուժեղ էր, ընդունակ բարութեամբ ու վարմունքով ժողովրդական դառնալու, իր կրթութեամբ ապագայում հասարակութիւնը աւելի լաւ հասկանալու ընդունակ, որոնց ինչ ասել կուզի, կ'օգնէր նաև Շէկ Մէլիքը՝ Ծաթի խան ուշադիների խեղտած պապենական թշնամին, այն ժամանակ ինչ կը լինի Փիր-Մուրադ Սուլթանի և նրա ցեղի գրութիւնը:

Ահա այս հարցերն էին, որ վերջին ժամանակը տանջում էին Ղափլան Սուլթանի շառաւիղին և արագ ծերացնում: Միւսնոյն ժամանակ Փիր-Մուրադ Սուլթանը նկատում էր, որ տարեցտարի Փալաքի անիւը Ղափլան Սուլթանի ընտանիքը վերի աստիճաններից ներքև էր իջեցնում: Ղափլան Սուլթանը սարսափ էր ձգել մինչև անգամ զրացի նահանգի վրայ. նրա յեանորդները ահաւոր էին միայն թուրքանիսի երկրում, Ծաթի խանը էլի մի բան էր թէ պարսիկ և թէ առսական վարչութեան առաջ: Իսկ ինքը, Փիր-Մուրադը, շնայելով իր բոլոր ճարպիկութեան, ոչինչ էր. նա իր դիրքը պահել էր միայն իր աղէկսութեան շնորհիւ: Այս աստիճանաւորի մօտ կեղծիք, միւսին կաշառիր, երրորդին հիւրասիրիք, չորրորդին դաւաճանիր, այս գիւղացուն վախեցուր, միւսին քալամասիր, երրորդին բարութիւն արա, չորրորդին խաբիր և այլն. այդ կերպով նա պահել էր իր դիրքը ամբողջ կեանքում. նա յաճախ մտաբերում էր դէպքեր իր երիտասարդութիւնից, մինչև ան-

գամ պատմում գրացիներին, որպէս օրինակելի դործեր և հպարտա-  
տանում իր արածներով:

Սօտ քառասուն տարի սքանից առաջ, երբ Փուրքանիսում  
դեռ թագաւորում էին պարսկական կարգերը իբրև լաւ և օրինա-  
կելի, երբ երկրում դեռ եւրոպականութեան հոտ չկար, ութ յաչտնի  
թուրք խան ու բէկ և երկու հայ ազնւական, բոլորն էլ պարսկա-  
կան շորեր հագած և երկար գտակներ դրած, մի մութրուք հեռ-  
ները, գնում էին նկարելու այն ժամանակ նոր եկած լուսանկարչի  
մօտ: Նրանց պատահում է Փիր-Մուրադ սուլթանը, իսկոյն մտա-  
ծում է օգտել հանգամանքից և նկարել նրանց հետ, որով կարող  
էր նախ նրանց հետ ընտանխանալ, երկրորդ՝ այդ նկարը ցոյց տալով  
ժողովրդին, հաւատացնել, որ ինքը դործ ունի այդ երեւելիներին  
հետ: Նա յաչտնում է խան ու բէկերին, որ թէպէտ ինքը նրանց  
հաւասար չէ, բայց դարձեալ յանդգնում է նկարել նրանց հետ,  
միայն նրանց ոտերի տակին պռակած և գլուխը մեծ խանի կոշիկ-  
ների վրայ դրած: Փիր-Մուրադ սուլթանի այս վարմունքը թէպէտ  
դուր չէր եկել ամենամեծ խանին, որն այս պատճառով դէմքը խո-  
ժուել էր և պատկերի վրայ էլ խոժուած դուրս եկել, բայց ինչ  
արած, քաղաքավարութիւնից ստիպւած, նրանք չեն կորողացել  
բաց ասել Փիր-Մուրադ Սուլթանին, որ և նկարել էր իր ցանկա-  
ցած զիրքով:

Հէնց այդպիսի միջոցներով էլ նա հարստացել էր:

Մի օր, երբ հողաչափը գանձարանի ներկայացուցչի հետ պէտք  
է գար Փիր-Մուրադի մի ինչ որ հողի և գանձարանական հողերի  
սահմանները որոշելու, Փիր-Մուրադը իր տունը հիւրեր էր կանչել  
քաղաքից և գլխաւորապէս մի պարոնի իր կնոջ հետ, որը սիրաչին  
յարաբերութեան մէջ էր գանձարանի ներկայացուցչի հետ: Սուլ-  
թանի սահմանները որոշելու նախընթաց օրը, նա համոզել էր բո-  
լորին, որ միւս օրը դործ չանեն՝ այլ մի լաւ կոնծեն: Աստիճա-  
նաւորները, որոնք ամիսներով դեգերում են դաշտերում, շատ ուրա-  
խանում են. մանաւանդ գանձարանի ներկայացուցիչը, որի սրտի  
աւարկան ներկայ էր և պէտք է շուտով գնար: Երեկոյցից սկսում  
են ուսել ամենաթանկագին կերակուրներ և խմել Վախեթի ամենա-  
լաւ զինի մինչև լուսաբացը, երբ հիւրերը պարկում են քնելու:

Բայց զանձարանի ներկայացուցիչը դեռ նոր է խոր սքուն մտած լինում, երբ Փիր-Մուրադը վեր է կացնում հողաչափին և պահանջում, որ իր պարտքը կատարի և զնայ հողերը չափի: Մինչև զանձարանի ներկայացուցչի զարթնելը վիճելի սահմանները արգէն չափում են և Փիր-Մուրադը առանց վէճի գրաւում է կառավարութեան հողերից մի մեծ կտոր, թէպէտ զանձարանի ներկայացուցիչը ընդմիշտ զրկւում է պաշտօնից և նրա երեխաները սոված են մնում: Մի անգամ, նոյնպէս մի սահմանական վէճի ժամանակ, Փիր-Մուրադը հրաւիրում է իր հակառակորդ զիւղացիներին հաշուելու, ասելով, որ առանց նրանց ներկայութեան հողաչափը իրաւունք չունի սահմանը որոշել և մինչ դեռ ինքը զիւղացիների հետ տաք վէճի է բռնւում, իր նախօրօք պատրաստած հաւատարմատարը ցոյց է տալիս սահմանները, որոնք յայտարարւում են անվիճելի, թէպէտ սրա հետևանքը լինում է այն՝ որ 30 տուն զիւղացիք իրենց բնակավայրը թողում, դաղթում են: Բայց սքա ինչ բաներ էին. Փիր-Մուրադին տանջում էր իր տան ապագան:

Նա մեծ հարստութիւն չունէր. նրա ընտանիքում մի կրթւած մարդ չկար, բայց Ռուսաց կառավարութիւնը ուսումն է ընդունում: Նրա որդիքը բոլորն էլ հասարակ մարդիկ են՝ անկարող մի կերպ առաջ գնալու: Նա մի քանի տարի առաջ փորձեց ընտանիքով Պարսկաստան տեղափոխուել, բայց տեսաւ, որ այնտեղ աւելի քիչ յոյս կարող է ունենալ ապագայի վրայ: Այսպէս նա շաճախ մտածում էր, որ իր մահից և միրաւութեան իր ձեռքից դուրս գալուց յետոյ, Ծաթիխանի ուշադիները կը դառնան սոված բէկեր:

Ալէքսանդրը ուրիշ մտքերի մէջ էր ընկել: Նա նկատում էր, որ պառաւող և կոճղացած ծառի մօտ բուսնում էր նորա աունկը իր կանաչ տերևներով և զեղեցիկ ծաղիկներով: Ալէքսանդրը մտածում էր Գուլէջի մասին: Նա դեռ Դանէլ բէկինց տանը գիշերն անհանգիստ անցկացրեց. նրա մտքինը Գուլէն էր:

Առաւօտը երբ նա աչքերը բացաւ, իսկոյն մտաբերեց Գուլէին, և յետոյ, թէ գաւառապետի մօտ՝ ատեանում, և թէ Դանէլ բէկի հետ խօսելիս, յանկարծ մտաբերում էր նրան:

Երբ նրան նահանգապետը չէր հրաւիրել և նրա զրութիւնը բաւական դժւար էր, պէտք է որ մոռանար այդ քրդուհուն. բայց

ոչ, ամեն մի վայրկեան նա իր բարձր ու վայելուչ հասակով, դէմքի վարդազոյն կաշիով կանգնում էր Ալէքսանդրի առաջ: Կառքումն էլ, երբ Փիր-Մուրադ Սուլթանը մտածում էր իր ցաւերի մասին, մեր հերոսը կամ Գուլէի աստղերի պէս փայլուն, ծովի յատակի պէս խոր աչերն էր մտաբերում, կամ կլորիկ շարխաքաշ ծնոտը, կամ սաղի վզի նման սպիտակ ու կլորիկ կոկորդը: Յանկարծ Գուլէն պատկերանում էր նրա առաջ իր բարձր ու թեք քոֆիով, այրական կանգունով, սիգաճեմ շարժւածքով. մի վայրկեան նա յանկարծ կարծեց, որ ինքը գնում է Գուլէի յետևից, ծածուկ բռնում նրա սաթի նման սև ու երկար հիւսը, համբուրում է ու երեսին քսում: Այստեղ կարծես մի ինչ որ դժուր թիւն մտաւ նրա ուղեղի մէջ. նա քիչ մնաց ցնորւի. ցնցւեց ամբողջ մարմնով, նկատեց որ ինքը կարծես տենդ ունի, ու զտակը գլխից վերցնելով, սկսեց ճակատն ու երեսը շփել: Նա դէմքը դէպի զով քամին դարձրեց և ուշքի եկաւ:

Գլ. Թ.

Խաւարը արդէն տիրել էր երկրին բաց մեր ճանապարհորդները զեռ բաւականին երկար տեղ ունէին զնալու: Երկար մտածելուց յետոյ, նոքա երկուան էլ կարիք զգացին հանգստացնելու իրենց ուղեղները:

Երբ երկու հակառակորդներ կեանքի մէջ իրար հանդիպում են, եթէ նրանք հասակն առած ու փորձւած մարդիկ են, առ հասարակ ներկայի յուզիչ դէպքերի մասին չեն խօսում. այլ սկսում են անմեղ զրուցներ անցեալի և կողմնակի հանգամանքների մասին: Բաց այլ է երիտասարդութիւնը. նա չի թոյլ տալիս անմեղ խօսակցութեամբ պարսպել, եռանդը միշտ յաղթում է լանգառին և զրոյցը լինում է ամենայուզիչ դէպքերի մասին: Առաջինը Ալէքսանդրն սկսեց խօսել.

—Սուլթան, միթէ կարելի է դրացիութեան մէջ թոյլ տալ այնպիսի վարմունք, որպիսին թոյլ են տալիս Կորաւանցիները: Գողութիւնը ի՞նչ բան է, որ դրա համար երկու արիւն թափեցին:

—Ես ի՞նչ անեմ, եղբայրս, մեր անիծւած թուրքերը ոչ կըրթիւն են ստանում, ոչ հողագործութիւն անում, միայն գողութիւնով են պարսպում:

—Բայց պէտք է դրանց կրթել:

—Ի՞նչպէս կարելի է կրթել. համեցէք հայերին կրթեցէք, որ նոքա քիչ զինի խմեն: Հայի բոլոր անբախտութիւնների պատճառը խմիչքն է:

—Բայց չէ՞ որ պէտք է վերջ տրւի այդ չարագործութիւններին. այլ կերպ մեր գաւառակը չի կարող ծաղկել, զարգանալ և յառաջադիմել: Պէտք է մի ճար անել. դուք մտածեցէք թուրքերին կրթելու մասին:

—Ի՞նչ ճար. Խամօ բէկին սպանեցին, այլ քեզ ճար. հաւատացէք, որ իմ ուրախութեանը վերջ չկար, երբ նրա մահուան լուրը ինձ հասաւ:

—Բայց, յարգելի Սուլթան, սրանք բացասական միջոցներ են, պէտք է դրական միջոցներ գործ դնել թուրքերի կրթութեան համար: Իմ կարծիքով ձեր շահերը պահանջում են, որ դուք նախ մի քիչ թողէք ձեր մոլեռանդութիւնը. ձեզ Պարսկաստանի հետ կապած չհաշէք. այլ վերջնականապէս վճռէք, որ դուք այս երկրի բնակիչ էք, ընդունելով, որ պարսիկները նորից այս երկիրը գրաւել անկարող են. շինէք ուսումնարաններ, որտեղ ձեր մայրենի լեզուի հետ աւանդուի և հայերէնն ու ուսերէնը: Մեր ու ձեր կրթած դասակարգը պէտք է ամենայն ջանք գործ դնի, որ թէ քրիստոնեաները և թէ մահմեդականները քիչ հետևեն հոգևորականութեան գաղափարներին, այլ մտենալով իրար, մտնեն ամուսնական յարաբերութիւնների մէջ:

—Շատ զեղեցիկ, որդիս, շատ զեղեցիկ, պատասխանեց Սուլթանը և սրտի այլայլումը խեղդեց նրա ձայնը: Նա սաստիկ չուզմունքից, չկարողանալով տանել իր դրացու ասածները, գլուխը թեքեց ներքև, դրեց ձեռի ափի վրայ և անբաղդ մարդի զիբք ընդունած, սկսեց ցոյց տալ, իբր թէ քնած է, որպէս զի Ալէքսանդրը այս անախորժ խօսակցութեան վերջ տայ: Մերձող, ուզի որ անբաղդ էր Փիր-Մուրադ Սուլթանը, որպէս մտածում էր ինքը՝ Ի՞նչ դրութեան մէջ է ընկել Ղափլա Սուլթանի շատաւիզը. մի հայ աղայ նրան խորհուրդ է տալիս ձեռք վերցնել իսլամական եռանդից: Պարսկաստանից և միանալ մուստառ ու անհաւատ հայերի հետ ու Փիր-Մուրադն էլ ստիպւած պէտք է սուս կենայ և զբաղի ասի:

Ո՛հ ժամանակ, ո՞վ Ֆարաք, ո՞վ անհաւատարիմ աշխարհ՝ Խոնչ անէր՝ Փիր-Մուրադ Սուլթանը, ի՛նչպէս պատասխանէր իր անամօթ զրացուն. թէ կը կանգնէր և առաջին պատահող թուրքին կը պատուիրէր սպանել սրան՝ չէր լինի. թէ կառքից իջեցնէր՝ անկարող էր. թէ ինքը իջնէր և նրա հետ ճանապարհ չզնար՝ չիմարութիւն կը լինէր. ի՛նչպէս վարւէր այսպիսի անսպեռի հետ Սուլթանի նման եփւած ու փորձուած պատուաւոր մուսուլմանը. լաւն այն է, սուս կենար և կեղծաւորէր, ցոյց տալով թէ համաձայն է նրա հետ Մինչև այդ խօսքերը լսելը նա Ալէքսանդրին երիտասարդ էր կարծում, բայց ոչ չիմար. իսկ այս խօսքերից յետոյ այնքան փոքրացաւ, չիմարացաւ նրա աչքում, որ մինչև անգամ Սուլթանի զայրոյթը եկաւ և սկսեց քննել Ալէքսանդրին:

—Ալէքսանդրը թեթև երիտասարդ է, մտածում էր նա. իր մտածածը ասող, խօսքը չկռող, վազող և անլանգառ: Եւ այլ կերպ էլ չէր կարող լինել: Բոլոր հայերն այդպէս են, որովհետև ի՛նչ են տեսել իրենց անցեալում: Նրանց հայրերը եղել են հասարակ մշակներ՝ սրանք նրանցից սովորել են աշխատասիրութիւն. եղել են խեղճ ու համեստ քրիստոնեաներ՝ սրանք էլ այդ բանում լաւ են. բայց նրանց հայրերը չեն տեսել իշխանութիւն, ուստի նրանք էլ կառավարել չգիտեն. նրանց հայրերը չեն մտածել ազդութեան և պետութեան մասին, սրանք էլ քաղաքական մտքեր ունենալ չեն կարող: Հողագործի որդին չի կարող կեղծաւորութիւն անել, որովհետև կեղծաւորութիւնը քաղաքավարութեան ամենաբարձր աստիճանն է և կարելի է սովորել միայն ազնւական ընտանիքում ու շրջանում և ոչ թէ գոեհիկ հայերի մէջ: Ժողովրդի հետ վարել կարողանալը, նրան իրեն ձեռքում գործիք շինելը, հակառակորդին լաւ ճանաչելը, տակը ջուր կապել և վայր ձգելը, ուր հարկաւոր է կռանալը, ուր հարկաւոր է գլուխ բարձրացնելը, որտեղ սպասելը և որտեղ գէպքը ձեռքից բաց չթողնելը, որտեղ երկար ժամանակ աչոյ՝ ասելը, որ մի օր մի լաւ տոյ՝ ասես, և վերջապէս երբ ի՛նչ ասելը—այս բոլորը սովորովի բաներ են և ուսանուում են ազնւական ընտանիքում: Առանց այս բաների կեանքում գործել անկարելի է: Ե՞րբ է ունեցել հայը ազնւական ընտանիք, որ այսպէս բաներ լսած, տեսած ու սովորած լինի: Աւ-

սու մնարանում լաւ կարգալով՝ աշխարհի բանը չես սովորի և հայր ինչքան էլ ուսում առնի, առաջ գնայ, դարձեալ նոյն անհեռասանս, թեթեւ, օտարի սարուկ հայն է:

Այս մտածմունքները մի կերպ ոգևորեցին, կեանք տւին Սուլթանին. նա գլուխը բարձրացրեց, մէջքը ուղղեց և այս ուայն կողմը երիտասարդական մի հպարտ նայածք ձգելով, սալավաթ քաշեց երեսն ու ջերմեռանդ և զգայուն ձայնով արտասանեց «Ալլահուլ-ուլլահ (Փառք քեզ Ասուած): Արդէն գիշեր էր և սառը լուսինը կամաց լողում էր երկնակամարի վրայ, ուր բազմաթիւ աստղեր՝ որը վառ, որը տժգոյն փայլում էին անհուն տարածութեան մէջ: Սուլթանը, մոռացած իր ճանապարհորդակցի գոյութիւնը, բարձրացրեց գլուխը և աչքերը երկնքին յառած, երկար նայում էր նրա խայտաբղէտ տեսքին:

Երկնակամարին անդորր նայելու ժամանակ յանկարծ Սուլթանի գլուխը մի հարց եկաւ. չէ՞ որ այս յիմար հայի տղան մի քանի տարւայ մէջ կարող է սովորել աշխարհի, հասարակութեան և մարդկանց կեանքը, վարժել գործունէութեան: Կրան հետեւեց մի ուրիշը. եթէ ինքը չսովորի, չէ՞ որ տղէն կը սովորի, թուր կը սովորի: Այս հարցերից յետոյ Սուլթանի երեւակայութեան մէջ ստեղծեց հեռու ապագայի մի պատկեր. նրան ներկայացաւ թշաւոց գաւառակը փոխած: Խնութ գիւղը դառել է մի փոքրիկ քաղաք. Խնութի հայերը ուժեղացել են և մինչև անդամ թուրքի զիւղերումն են բնակւում, առևտուր են անում. պրիստաւի թունները դառել են հողատէրեր, կառավարում են երկիրը և զզբաշ մարդիկներին վերին աստիճանի լանգառով: Իսկ Պաթի խան ուշադիները համարեա անյետացել են. նոցանից որը փոստերում ձիաւոր է, որը՝ հասարակ հողագործ, իսկ մի քանիսն էլ ծառաներ են: Այս տեսիլքը, որ անսպասելի կերպով նրա գլխի մէջ առաջ եկաւ, կարծես կայծակնահար արաւ ծերուկին: Միթէ կարող է այսպիսի բան պատահել, մի՞թէ կարող է բախտի անիւը այդքան ծուկի: Ինչո՞ւ չէ: Խաւարում է մի աստղ և մի ուրիշը նորից դուրս գալիս... Ո՛չ... Ո՛չ, կան և այնպիսի աստղեր, որոնք միշտ կան, եղել են և կը մնան և Փիր-Սուրադը քանի ողջ է, պէտք է աշխատի իր ընտանիքի հեռու ապագայի համար: Երբ երկու ըմբիշամարտ իրար

դիմաց են գալիս, անպատճառ պէտք է ըմբիշամարտեն, մէկը պէտք է միւսին վեր ձգի, ոտի տակ տայ. այլ կերպ անկարելի է. և անհրաժեշտ է, որ Փիր-Մուրադ Սուլթանը, հայի նոր ամող որդուն օրօրոցի մէջ խեղդի, եթէ ոչ, կորաւ Ղափլան Սուլթանի օջախը:

Այս մտածմունքների մէջ ինքնամոռացութեան հասած սուլթանը, սկսեց ընչացքները ոլորել, ամբողջ մարմնին ուղղահայաց դիրք տւեց ու գոռաց կառապանին բըշիր: Քիչ ժամանակից չետոյ կառապանը յայտնեց, թէ հասել են այն կէտը, ուր պէտք է Սուլթանը կառքից իջնէր և Ալէքսանդրը մենակ շարունակէր ճանապարհը:

Ալէքսանդրի հետ Փիր-Մուրադ սուլթանը երբէք այսքան երկար չէր եղել: Վերջին բողոքների նրա ջղաջին վարմունքն մինչև անգամ զարմացրեց Ալէքսանդրին: Խնչ մարդ է Փիր-Մուրադ սուլթանը, անհայն հին հարցը, որը նա իրեն նորից առաջարկեց:— Միթէ այս բոլորը կեղծաւորութիւններ են: Բայց մարդ այսքան երկար ժամանակ տակտը չկորցնել և կեղծաւորութիւն անել անկարող է. միթէ նա համաձայնու՞մ է, րայց նրա վարմունքի մէջ ոչ մի անկեղծութեան նշոյլ դէպի Ալէքսանդրը չկայ: Այ, մտքերի համաձայնութեան կը հետևէր—սիրոյ ջգացմունք և գործ:

Իսկ եթէ նա կեզմում է. ինքը՝ Ալէքսանդրը ինչ կորուստ է ունենում: Ոչինչ: Նա յայտնի գաղափարներ ունի և նրանց կը հետևի, Փիր-Մուրադն էլ կուզի՝ թող նրա հետ համաձայնելի, չի ուզի՝ ինչ արած: Իմ գաղափարները սուրբ են, մտածում էր նա. ոչ մի պետութեան, ազգի և մարդու փնտաբեր չեն, նոքա միայն մարդկային ազգի բարօրութեան համար են և ես պատրաստ եմ միայնակ նրանց համար աշխատել. եթէ ընկնեմ էլ՝ հող չէ:

—Ահա գալիս են միբաւի ընտրութիւնները, միթէ մի ազգ փնտա կ'ունենայ, որ ես ազատ պահեմ ժողովրդին կողմնակի ազդեցութիւններից. որ քարոզեմ, հասկացնեմ, թէ ինչու համար է նրան աւաճ ընտրողական իրաւունքը: Խնչ փնտա ազգերի իրար հետ ունեցած բարեկամութիւնից, խառնելուց. ինչու մարդկանց մէջ պատնէշներ լինեն. թող բոլոր մարդիկ իրար մօտենան, սիրեն իրար, մի ազգ կազմեն: Խնչ հնարովի կրօնական ու ազգային թըշնամութիւն: Խնչ անշահ մրցում: Այ, ոչ, չպէտք է վնասիլ:

չպէտք է վախենալ ոչ մի անյաջողութիւնից. չպէտք է ուշադրութիւն դարձնել արգելքների վերայ, այլ պէտք է գնալ առանջ և առանջ:

Գլ. Ժ.

Հայաստանի նւաճողները՝ Պարսիկները, Յոյները, Արաբացիք, Տաճիկները և Քաթարները հասկանում էին, որ Հայաստանն իրենց ձեռքում պահպանելու համար անհրաժեշտ է ոչնչացնել ազնւական տները, նւագեցնել ռամիկ դասակարգը և Հայ ազգի ներկայացուցիչ ընդունել միայն հոգևորականութիւնը: Այս պատճառով էլ դարուս սկզբում մենք այլևս ազնւական տներ Հայաստանում չենք տեսնում. ոմանք պատերազմներում կոտորել ոչնչացել էին, ոմանք խառնել նւաճող ազգութիւնների հետ, ոմանք տեղափոխւած էին Վրաստան, իսկ հայաստանում մնացել էին միայն գիւղական մէլիքները, որոնք աւելի ոչինչ էին, քան երկրի կառավարիչների ձեռքով կարգւած տանուտէրներ: Յաճախ այս տանուտէրութիւնը կապուած էր հարստութեան հետ, տեղում էր մի քանի սերունդ, այդպիսով սրբազոր-ձոււմ էր և մի հայ տուն այսինչ զաւառում ստանում էր մէլիք մականունը և դէպք եղած ժամանակ առաջ էր ընկնում, որպէս զաւառի բոլոր հայութեան ներկայացուցիչ: Այսպիսի տներից մէկիցն էլ ստացել էր իր ծագումը Խնութ գիւղի Մէլիք Շէգօն, Մէլիք-Դաւթի (Մէլիք Շէգօ նրա մականունն էր) պապի պապի հայր մեծ Մէլիք Շէգօն, կամ ինչպէս կարճառոտ ասում են, մեծ Մէլիքը, Մակւայ գգրար (գգիր) էր և յաճախ խանը նրան կանչում էր աշխատեցնելու:

Խանի հետ յաճախ պատահելով, գգրարը կարողացաւ նրան դուր գալ իր խելքով, շան չափ հաւատարմութեամբ ու քաջութիւնով և ստացաւ մէլիքութեան իրաւունք Մակւայ Գիւղար գիւղի վրայ:

Մեծ Մէլիքից յետոյ, նրա որդին ու թոռը նոյնպէս հաւատարմութեամբ ծառայեցին Մակւայ խանին: Բայց երբ ռուսը տիրապետեց մեր երկիրը, Մեծ Մէլիքի թոռան որդին՝ Մէլիք Մկրտիչը, մի օր լաց լինելով, ընկաւ խանի ոտները և իրաւունք խնդրեց գիւղով հանդերձ Խուսա-Հայաստան գաղթելու:

Զարմացած խանը, արտասուխառն աչքերով, դարձաւ դէպի իր խնամած հաւատարիմ հպատակը.

—Մէլիք Մկրտիչ, որդի, զիցուք թէ ուրիշներն ասում են, որ ես նրանց ձնշել եմ, զուլում եմ արել, այս պատճառով գաղթում են. դ՞ու ինչու ես ինձ թողնում... .

—Ներիր խան, դու շատ լաւութիւն ես արել ինձ և իմ ժողովրդին, բայց ինչ արած, Ասուած ինքն է մեզ զանազան հաւատների ստեղծել: Ես մեր օրէնքով պարտաւոր եմ, երբ իմ քրիստոնեայ ազգս կայ՝ նրան թողած ուրիշի չծառայել:

Այս պատասխանից յետոյ խանը երկար ժամանակ լուռ կանգնած էր. յետոյ նա արտասանելով այս խօսքերը Վինն, Մէլիք, բայց կը զղջաս, երեսը շուռ տւեց Մէլիքից և արտասուկը խեղդեց նրան: Մէլիքը իրեն զցեց սիրած խանի ոտները, տասնեակ անգամ համբուրեց, թրջեց իր արտասուքով, բայց դարձեալ միւս օրը գաղթեց: Ռոճաստանում Մէլիք Մկրտիչը ստացաւ տանուտէրութեան իրաւունք Խնութ գիւղի վրայ, հասարակութիւնից բաւականաչափ հող և մի տասն տարի ապրելուց յետոյ մեռաւ, կուսկելով, որ իր մարմինը տանն թաղեն Գիկքարում, մեծ Շէկ Մէլիքի ոտների տակ: Գաղթականութեան առաջին տարիներում, մովրովը Թշառոց գաւառակի իրաւունքը նահանգապետի հրամանով յանձնել էր Մէլիք Մկրտչին և վարչական հարցերում նրա հետ էր խորհրդակցում. թէպէտ շատ չաճախ էր պատահում, որ աւելի նշանակութիւն էր տալին իր մի յայտնի ակտոնապետի խօսքերին: Բայց այս գրութեան վերջ դրեց երկրորդ մովրովը, որ համաձայն նահանգապետի հրամանին, դարձեալ նշանակութիւն էր տալիս Մէլիք Մկրտչին, սակայն ոչ այնքան: Այդ ժամանակն էր, որ Ֆաթիխանը վերադարձաւ Պարսկաստանից մովրովի համար մեծ ընծաներով, որը և սկսեց նրան պաշտպանել:

Ֆաթի խանի գալու օրից Թշառոց գաւառում առաջ եկան երկու մրցող ընտանիք. Մէլիք-Շէղոյեց և Ղափլան Մուլթանեց:

Մէլիք Մկրտչին ու Ֆաթի խանին ամեն ճանաչող, իսկոյն կասէր, որ յաղթանակը կը տանի աւելի փորձուած, կեղծաւոր, քաղաքավարի, խորամիտ և լեզւանի Ֆաթի խանը, քան թէ կողմից, շուտ հաւատացող և յափշտակող Մէլիք-Մկրտիչը: Վերջապէս Մէ-

լիքը չկարողացաւ ընկերանալ մովրոզների հետ մի քանի այնպիսի հարցերում, որոնցով միշտ օգտուում էր ճարպիկ Փաթի խանը:

Մէլիք-Մկրտչից չետոյ նրա տան ներկայացուցիչն էր Մէլիք Յարութիւնը, որ երկար ժամանակ մրցում էր Փաթի խանի հետ. բայց վերջերում յաղթուեց, որովհետեւ, Փաթի խանի հետ համեմատած, նա աղքատ էր համարուում: Փաթի խանը վերջին տարիներն օգտւելով իր զիրքից հարստացել էր. մինչդեռ Մէլիք Յարութիւնը, որի եկամուտները միայն հողագործութիւնից էին և գուռը բաց էր, սկսել էր զգալի կերպով աղքատանալ: Մէլիքին վայր զցեց մանուաւանդ այն, որ նա ժողովրդի առաջն ընկած գանգատուեց մի մովրովի մասին: Այստեղ նա իր գրպանից մեծ փողեր ծախսեց, մինչև անգամ Տփլիս գնաց, բայց առանց հետեւանքի. որովհետեւ Փաթի խանը կարողացաւ զաւառի բոլոր թուրք ժողովրդին համոզել, որ նահանգապետին մովրովի մասին բաւականութեան թըղթեր ուղարկեն: Վերջնականապէս Մէլիք Յարութիւնը թալանեց, երբ այս գործից չետոյ Փաթի խանն ու մովրովը նրա վրայ գանգաւեցին, ասելով թէ նա խառնակիւ է և պէտք է աքսորել: Այս գանգատով Մէլիքին թէպէտ չաքսորեցին, բայց այդ բանից ազատւելուց չետոյ, նա միայն երկու գումէշ, երկու եզ ու չորս կով ունէր:

Նրա հողերը զիւղացիներն, ու իր ազգականներն էին ցանում, իսկ իր տիրապետածը մի քսան օրավար հազիւ լինէր:

Դիկքարայ Մէլիք-Շէգօյի ընտանիքը այս դուրսեան մէջ էր, երբ նրա գլուխն անցաւ ներկայ մէլիք Դաւիթը—մեզ ծանօթ փոքր Շէկ-Մէլիքը: Թէ ինչու էր նա ժողովրդի յարգանքն ու սէրը վայելում, յայտնի չէ, որովհետեւ նա ոչ մի գործ մինչև օրս իր 60-ի մօտ հասակում չէր արել. նա պսակւել էր Շիրակայ գաւառի մի յայտնի քահանայի դստեր հետ, որի հայրական տունը քառասուն քահանայ էր ունեցել:

Նա ունէր ութ աղայ, որոնք բոլորն էլ հողագործներ էին և ոչ միայն իրենց հողերն էին ցանում, այլ և ուրիշներինն. էին կիրարար մշակում:

Նրա տան մէջ առհասարակ բոլորն էլ աշխատում էին և հաշտ ու սիրով էին. նրա մեծ որդի Մէլիքսէթը մինչև անգամ իր պապենական զգրարութիւնն էլ էր անում. բայց դարձեալ նոքա

դժւարութեամբ էին կարողանում կերակրել իրենց բազմաթիւ ընտանիքը և անսպառ հիւրերին:

Քաւրիզից մինչև Տիխիս տարածւել էր Մէլիքի տան հիւրասիրութիւնը և ինքը Մէլիքն ու իր կին Քաղուհին վաղուց այս հիւրասիրութեան վրայ երկար ու բարակ խօսելուց և դատելուց յետոյ, հասել էին այն եզրակացութեան, որ նոքա պէտք է միշտ բաց դուռ ունենան ինչպէս իրենց հայրենական մէլիքութեան, տան արժանապատուութիւնը պաշտպանելու համար. հաւատարմով, որ Ասուած հիւրերի կերածն էլ կը հասցնի: Մէլիք Շէզօն ամբողջ գաւառում յայտնի էր որպէս մտածող, փորձած և հեռատես մարդ:

Արդարև, միայն հայրենական տան պատմութիւնը բաւական էր, որ նա կարողանար հասկանալ, թէ ինչ նշանակութիւն ունին հասարակական գործչի համար կառավարութեան և կառավարիչների ուղղութիւնը, ժամանակը իր երևոյթներով, ժողովուրդն իր սիրով կամ ատելութեամբ. ինչքան օգնում է գործչին նրա հարըստութիւնը, տակաւը, հաշուը, թշնամու ուժը չափելով գործելը և այլն և այլն:

Մէլիքն ինքը մի գրագարան էր Հայաստանի Արարատեան գաւառի մի ամբողջ դարու պատմութեան, իսկ նրա միտքը մի ժողովարան ամենայն տեսակ առաջների, որոնք որոշակի, կարճ խօսքերով, պարունակում էին իրենց մէջ կեանքի փիլիսոփայութիւնը, փորձը և հասարակական գործողի համար վարւելու կանոնները: Յաճախ նա իր պատմողին կամ երկար հարցնողին մի առածով միայն պատասխան կը տար:

Մէլիք Շէզօն շատ էր սիրում Ալէքսանդրին, համարեա իր որդու չափ, բայց որովհետև փորձը նրան այն տեղն էր հասցրել, թէ ծառայողից, ով էլ նա լինի, լաւ է հեռու և զգոյշ կենալ, ուստի նա քիչ էր հանդիպում Ալէքսանդրին: Բացի սրանից, նա անյարմար էր համարում, որ ինքը դիմի պրիստաւին և ինդրի, որ այս ինչ գործն այսպէս անի. այլ ընդհակառակը, նա կամենում էր որ դիմեն նրան և հարցնեն նրա կարծիքը: Չնայելով իր բոլոր սիրուն դէպի Ալէքսանդրը, Մէլիք Շէզօն մի օր, երբ տիրացու Վարդանի հետ երկար խօսեցին, նորեկի մասին յայտնեց, որ նա դեռ շատ ջահել է և

դեռ չունի ոչ հեռատեսութիւն, ոչ լանգար, ոչ էլ մարդ ճանաչելու փորձ:

Գլ. ԺԱ.

Ալէքսանդրը գիւղը վերադառնալուց և եթ յայտնեց հասարակութեան, թէ շուտով լինելու է միրաւի ընտրութիւնը: Նա բոլոր իր մօտ եկողներին առանց խտրութեան հայի, թուրքի, քրդի, հարստի ու աղքատի բացատրում էր ընտրողական իրաւունքը, նրա ձևերն ու օգտակետութիւնը, քարոզում էր, որ խղճով վերաբերւեն դէպի սպասած ընտրութիւնը, որ մի այնպիսի անձն ընտրելի, որը կարողանայ կատարել իր վրայ դրած մեծ պարտաւորութիւնը և ջրաբաժանութեան մէջ արդարութեամբ վարել:

Այս խօսակցութիւնների ժամանակ, ինքն ըստ ինքեան հարց էր բարձրանում թէ գաւառում ո՞վ կարող էր լինել ցանկալի միրաւ և յաճախ Ալէքսանդրը սրան նրան դիմում էր այս հարցով. նա միայն մի պատասխան էր ստանում, որ Ծաթի խան ուշադուց որն էլ ընտրելի, վատ կը լինի և ժողովրդին կը կեղեքի, իսկ մի մարդ, որի վրայ ժողովուրդը ցոյց տար թէ ահա մեր ցանկացած միրաւը—չկար:

Միրաւութեան հարցով շատ հետաքրքրում էր մանաւանդ տիրացու Վարդանը, և ամեն տեղ ասում էր. պէտք է աշխատել, որ այս անգամ միրաւը հաջից ընտրելի:

Մի օր, երբ նա իր այգում խնձոր էր ժողովում, յանկարծ միտքն ընկաւ, թէ ինչու միրաւ չեն ընտրում Մէլիք Շէգօյին և իսկոյն համոզմունք կազմեց, որ Մէլիքն է այն միակ անձը, որ կարող է ցանկալի միրաւ դառնալ: Այն օրից նա ամենայն տեղ սկսեց քարոզել, որ Խնութիք Մէլիք Շէգօյին միրաւ ընտրեն:

Մի քանի օրուայ մէջ Մէլիք Շէգօյի թեկնածութեան լուրը տարածւեց Խնութ և Թշառոց գաւառակում: Ամեն ոք, որը լսում էր նոր առաջարկութիւնը թուրք թէ հայ, ասում էր. Մէլիք Նէգօն ուղիղ որ արժանի է այդ պաշտօնին:

Ամենից շատ ուրախացել էին Փիր-Մուրադ Սուլթանի հակառակ կուսակցութեան թուրքերը, որոնք ոչ մի կերպ չէին կարողանում նրան յաղթել, բայց այս դէպքում կը յաղթէին, քանի որ

Նրանց հետ, իրենց հաշվելով, այժմ կը միանային Խնութի հայերը և նոր պրիստաւը: Նոցա կարծիքով բաւական էր, որ մի երեք անգամ միրաւը չընարւէր Յաթի խան ուշադիրներէց, նոքա կընկնէին և Քշառոց գաւառում առաջնակարգ դեր կը սկսէին կատարել իրենք, որովհետև բաւականին հարուստ էին:

Նրանք, դեռ ոչ մի անգամ Մէլիք Շէգօյի հետ չխօսած, նրա կարծիքը չլսած, արդէն սկսել էին աշխատել նրա օգտին: Վերջին ժամանակները Մէլիք Շէգօյնց հիւրերը աւելի բազմացել էին, մանաւանդ գաւառակի թուրքերից, որոնք թէ Մէլիքին, թէ նրա անդրանիկ որդի Մէլիքսէթին, բաց արձակ յայտնում էին, որ նոցա թեկնածուն լինելու է Մէլիքը: Թուրքերից շատերն էլ, Ալէքսանդրի հետ գործ ունենալիս, յաճախ նրան աղաչում էին, որ գաւառը ազատի Յաթի խան ուշադիրներէց, որոնք բոլորին կեղեքում են և խնդրում էին նրա օգնութիւնը Մէլիք Շէգօյի միրաւ ընտրելու գործում: Նոքա բոլորն էլ ասում էին, որ Մէլիքը օջաղ մարդ է, ոչ թէ միայն հայերի, այլ և թուրքերի համար, որ նա արժանաւոր բարեհոգի կառավարիչ է և գաւառակի լաւն ու վատն իմացող և հարկաւոր է, որ ջուրը, որ ժողովրդի հոգին է, նա բաժանի և ամեն մէկին իր կարեորութեան չափ և իրաւանց համեմատ մաս տայ:

Ալէքսանդրը ոչ մի ժամանակ առանձին ուշադրութիւն չէր դարձրել Խնութի նահապետի վրայ, բայց այժմ հանգամանքներն ստիպեցին, որ նա աւելի մօտ ծանօթանայ Շէկ-Մէլիքի տան ներկայ մեծի հետ:

Քանի նա կրկնապատկում էր իր ուշադրութիւնը դէպի Մէլիքը, քանի աւելի հետախոյզ էր լինում, այնքան աւելի Մէլիքը նրա աչքում բարձրանում էր. ու նրա համակրութիւնը գրաւում: Մի օր էլ, երբ նա վաղ էր վերկացել, տեսաւ որ մէլիքի ամենափոքր որդին՝ Սենեքերիմը, մի քաղալակ խաղող, խնձոր, տանձ ու նուռը բերեց նրան ընծայ:

Նա ուշադրութիւն դարձրեց երիտասարդի վրայ, որի վայելուչ կազմաւածքը, հասակը, դէմքի ուղիղ գծագրութիւնը, աչքերը, վարմունքը, քայլերը, վերջապէս ամեն մի շարժումը ցոյց էին տալիս, որ նա միւս շինականների ծագումից չէ: Այս երիտասարդը այնքան

դուր եկաւ Ալէքսանդրին, որ սա քիչ էր մնում համբուրի նրան, մի անկեղծ սիրոյ և յարգանքի զգացմունք մտաւ նրա սրտի մէջ զէպի ժողովրդի երկու դարու ներկայացուցիչների ընտանիքը:

—Սենեքերիմ ջան, հայրիկդ տանն է, հարցրեց նա:

—Այո՛, աղա, պատասխանեց համեստութեամբ երիտասարդը.  
մեծ Մէլիքը առաւօտները միշտ պարտիզում աշխատում է:

—Ուրեմն կը խնդրեմ քեզնից, մեծ մէլիքին ասես, որ ես նրան սպասում եմ, թող հիմա գայ ինձ մօտ թէյի:

—Շատ լա՛, աղա, պատասխանեց երիտասարդը և հեռացաւ:

Պէտք է ասել, որ Մէլիք Շէզօյենց տանը մեծ մէլիք կոչում էին միշտ տան մեծին, որը ժողովրդի մէջ էլ կրում էր մէլիք անունը, իս՛կ փոքր մէլիք նրա աւագ որդուն, որը նրա մահից յետոյ միայն պէտք է ժողովրդի մէջ մէլիք կոչէր:

Աշնան ամենալաւ ժամանակն էր: Գիւղացիները պարապած էին պտուղներ ժողովելով և տեղաւորեցնելով:

Այդ օրը կիւրակի էր և բոլորն էլ ազատ էին: Շատերը զիւղացիներից իրենց աչգու պտուղներից ընծայ էին բերում Ալէքսանդրին: Ամեն մինը մի քաղալակ հաղող, զեղձ, տանձ, փշառ և այլն վերցրած, ներկայացնում էին տիկին Մաղիկին ասելով. «հազար բարիս քեզ». զնում էին նրա մօտ և իրենք զնում զէպի Ալէքսանդրը, որ նստած էր բազի մէջ տեղում, թթենու տակ: Նրա հրաւերով եկել ու նրա մօտ նստել էր Մէլիք Շէզօն: Յետոյ եկան լուսկի Գէւօն, տիրացու Վարդանը, Խաչօն, Մէլօն, Գուրօն ու միւսները:

Հանդերի, պտուղների թանգ ու էժանութեան և այլ այսպիսի բաների մասին բաւականին երկար խօսելուց յետոյ, հարցը եկաւ միրաւի ընտրութեան:

—Ալէքսանդր աղա, սկսեց լուսկի Գէւօն. իմ կարծիքով պէտք է անպատճառ Մէլիքին միրաւ ընտրել, որ մեր հայ ազգի լաւ օջախը միշտ վառ մնայ:

—Մի՞թէ կարելի է, որ այսքան տարի միայն թուրքը միրաւութիւն անի. ինչու ո՛չ հայը, մանաւանդ, մենք քրիստոնեայ տէրութեան մէջ ենք ապրում, ասում էր տիրացու Վարդանը:

—Իրանք թուրքերը ուրախ կը լինեն, եթէ ազատին ՓիրՄուրադ Սուլթանից:

Ամբողջ խօսակցութեան ժամանակ ինքը Մէլիք-Նէգոն սուսու հանդարտ նստած, զլուխը կախ, ծխաքարչ էր ծխում և բալան-բալան ծուխը վերև բարձրացնում: Զրից անողները սպասում էին, որ նա էլ մի խօսք ասի, բայց նա կարծես մտատանջութեան մէջ էր ընկել և չգիտէր ինչ խօսի: Ալէքսանդրը, նրա բռնած դիրքը երկար դիտելուց յետոյ, հանեց նրան այդ դրութիւնից:

—Մէլիք, դուք ինքներդ գիտէք, թէ ես որքան անկեղծութեամբ սիրում եմ ձեր ընտանիքը. և ես հաւատացած եմ, որ միայն դուք էք մեր գաւառում, որ կարող էք միրաւութիւն անել և արժանաւորապէս վարել այդ պաշտօնը:

—Շատ լաւ էք ասում, Ալէքսանդր աղա. բայց էլ հեծնելը մի ամօթ, իջնելը՝ երկու. հարց է.—եթէ ես իմ արկղը ղնեմ, ինձ կ'ընտրեն արդեօք:

—Անպատճառ կ'ընտրեն, միջամտեց տիրացու Վարդանը. որովհետև բարին չարին չաղթող է:

—Կ'ընտրեն—չարունակեց Խաչոն. որովհետև բոլոր թուրքերն էլ անբաւական են Պաթի խան ուշաղներից և նրանց կաշառակերութիւններից:

—Ես խօսել եմ մօտ տասն յայտնի թուրքերի հետ, նոքա տոտոքի վրայ են կանգնած Փիր-Մուրադին սեւցնելու:

—Եղբայրներ, ետ այդպիսի բաներ շատ եմ տեսել. դոքա թուրքեր են. դրանց ես հաւատալ անկարող եմ: Դոքա կարող են հակառակ Պաթի խան ուշաղների մի այլ թուրքի ձայն տալ, բայց հայր՝ ո՛չ երբէք: Բացի սրանից փիր Մուրադը ուժեղ է քաղաքի թուրքերով, բայց մեր հայ մեծամեծները զիւղականների հետ կապ չունին և ինձ էլ չեն պաշտպանի, այնպէս որ, եթէ ես ընտրեմ ու հաստատուեմ, դարձեալ դժւար կարողանամ միրաւութիւնը մինչև վերջը տանել:

—Ես կարող եմ, Մէլիք, ձեզ հաւատացնել, որ մեր նահանգապետն էլ և գաւառապետն էլ շատ կարգին մարդիկ են և Փիր-Մուրադ Սուլթանը անկարող է նրանց վրայ ազդել:

Այս խօսքերը լսելուց յետոյ Մէլիքը, ընչացքները սղալեց, զլուխը բարձրացրեց, մի խոր հայեացք ձգեց դէպի հեռուն, նորից զլուխը ցած իջեցրեց և խոհեմ կերպով պատասխանեց.

—Ալէքսանդր աղա, որդի, ես միշտ սլատրաստ եմ ժողովրդին լաւութիւն անել, աղքատներին լաւ պահպանել, որպէս եղել են իմ պապերը, բայց ժամանակը փոխել է, հիմա այլ ևս դժւար է ժողովրդին ծառայել, և այս պատճառով, ես ձեզնից և իմ զբօսանքներից խնդրում եմ, ինձ մի երկու օր ժամանակ տաք, այս հարցի վրայ մտածեմ, յետոյ ձեզ պատասխանեմ:

—Լաւ, լաւ, լաւ, համաձայնեցին բոլորը և վերկացան ու գնացին իրանց տները:

Ոչ մի ժամանակ Ալէքսանդրի աչքում Մէլիքը այսպէս չէր երևացել:

Ուղիղ որ նա զեղեցիկ մարդ էր. բարձրահասակ ու լայնաթիկունք, շէկ ու կարմիր, արծւաչեայ և արծւաքիթ, խոհուն: Շէկ-Մէլիքը երբ խօսում էր, նրա առնական զէմքի վրայ նկարում էր վճռողականութիւն, թէպէտ ընդհանրապէս նրա մեղամաղձոտ զէմքը շատ բարի էր և արտայայտում էր մի առանձին յոռետեսութիւն:

Երբ նա վերկացաւ և ընկած ամբողջ հասարակութեան առաջ գնում էր, Ալէքսանդրը հիացած նայելով նրա կամաց ու սահուն քայլերի վրայ, իսկոյն մտաբերեց և հասկացաւ, թէ ինչու ժողովուրդը այդքան մականուններով զեղեցկացրել էր այս Մէլիքին, որը մինչև այսօր ժողովրդի մէջ մի առանձին եռանդ ցոյց չէր տւել զէպի հասարակական գործունէութիւնը:

(Շարունակելի)

## ՀՈՎԻՒ ՍԷՐԸ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆՆԻ

Սիրուն, աղջիկ, այդ հայեացքով  
Ինձ մի նայիր դու սրտադող...  
Ես երգում եմ սուրբ երկնքով,  
Իմ հովևական սրտով սիրող,  
Որ քեզ երբէք չեն սիրելու  
Իմ վառ սիրով պարզ, լեռնային,  
Երբէք հեշտանք չես գտնելու  
Մէկի հոգում նման իմին:

Ես լեռներում կը զարգարեմ  
Ճերմակ կուրծքդ, ծաղիկներով  
Եւ քեզ համար հով կը կանչեմ,  
Որ քո սիրտն էլ վառւի սիրով.  
Ես իմ երգում պարզ ու յստակ  
Քեզ կը ձօնեմ վառք, լեռնային,  
Եւ կը հիւսեմ սիրոյ պսակ  
Դնելու ճերմակ քո ճակատին:

1895 թ. Հոկտեմբերի 17.

Թիֆլիզ:

## Հ Ա Յ Ր

Բ. ԲԻՆՕՐՆՍՈՆԻ, Թարգմ. Օր. Հ. Նարաթեանի

Այն մարդը, որի վրայ մենք մտադիր ենք խօսել այստեղ, հռչակաւոր էր համարուում իր վարմունքով: Նրա անունն էր Տորդ Ոււերաս: Մի անգամ նա մտաւ քահանայի առանձնասենեակը, ուղղելով վսեմաբար, երեսի մեծաշուք արտաչափութեամբ:

— Ինձ որդի ծնաւ, ասաց նա. ցանկանում եմ մկրտել նրան:

— Ի՞նչ կը դնես նրա անունը:

— Յին. իմ հօր անունը:

— Ով պէտք է մկրտէ նրան:

Տորդը կնքահօր անունը տուաւ: Դա դիւղի ամենաչաչտնի, կարողութեան տէր, դիրքով մարդն էր, որ իր ազգականներին էր:

— Ել ասելու բան ունիս. հարցրեց քահանան, նայելով նրան: Գիւղացին լուռ կանգ առաւ մի քիչ:

— Ես ցանկանում էի որ այդ օրը մկրտուողը միայն նա լինէր. ասաց նա:

— Այսինքն ցանկանում ես մկրտել մի ազատ օր:

— Եկող շաբաթ կէսօրին, ժամը տասներկուսին:

— Ել ցանկութիւն ունիս, հարցրեց քահանան:

— Ոչինչ:

Գիւղացին վերցնում էր գլխարկը, կարծես պատրաստուում էր գնալու: Քահանան ոտքի ելաւ:

— Որպէս հրաժեշտ, քեզ մի խօսք կ'ասեմ. ասաց նա Տորդին, բռնեց ձեռքը և, նայելով ուղիղ նրա աչքերին, շարունակեց.

— Տայ Ասուած, որ որդիդ քեզ օրհնութիւն բերի:

Դրանից տանուվեց տարի յետոյ, Տորգն էլի կանգնած էր քահանայի փենեակում:

—Ձեռ փոխուել իսկի, Տորգ, ասաց քահանան, չգտնելով նրա մէջ ոչ մի փոփոխութիւն:

—Որովհետեւ ոչ մի վիշտ չունիմ, ասաց Տորգը:

Քահանան դրան ոչինչ չպատասխանեց, իսկ մի բոպէից յետոյ հարցրեց.

—Այս երեկոյ ինչ ասելիք ունիս:

—Այսօր եկել եմ որդուս առիթով, որ պէտք է առաջին անգամ հաղորդւի վաղը:

—Որդիդ շնորհալի աղայ է:

—Քահանայական վարձը տալուց առաջ, խօսեց Տորգը—ցանկալի կը լինէր իմանալ, թէ արդեօք սրտեղ պիտի կանգնի որդիս վաղը՝ եկեղեցում:

—Առաջինը կը լինի, ասաց քահանան:

—Լաւ, ահա տասը տալէր ձեզ, տէր հայր:

—Ել ասելիք ունիս, հարցրեց քահանան, նայելով Տորգին:

—Ոչինչ:

Եւ Տորգը դուրս գնաց:

Անցաւ էլի ութ տարի: Մի անգամ քահանայի առանձնասենեակի առաջ լսեց մի մեծ ազմուկ: Ներս մտան մի քանի մարդիկ, որոնց առաջից քայլում էր Տորգը:

Քահանան բարձրացրեց զլուսը և իսկոյն ճանաչեց նրան:

—Այս երեկոյ դալիս ես շատ բազմութիւնով, ասաց նա:

—Ես եկել եմ խնդրելու, որ յայտարարէք որդուս ամուսնութիւնը: Նա պատկուում է Ստորլիդենցի Կարենի հետ, որը Քուզմունդի աղջիկն է, իսկ հայրը ահա կանգնած է ձեր առաջ:

—Ամենհարուստ աղջիկն է դա ամբողջ շրջակայքում:

—Այդպէս են ասում, պատասխանեց զիւղացին, ձեռքը մագերին քսելով և ճակատից ետ մղելով: Քահանան մի քանի բոպէ նստեց՝ մտածմունքի մէջ ընկղմած և ոչինչ չասաց. միայն անուսնները զրեց զբքի մէջ և ներս մտածները ստորագրեցին: Տորգը զրեց սեղանի վրայ երեք տալեր:

—Ի՞մ վարձը մի տալեր է, նկատեց քահանան:

—Գիտեմ, բայց որովհետև միակ որդիս է, ինձ հաճելի է աւելի տալ:

Քահանան փողը վերցրեց:

—Ահա արդեն երրորդ անգամն է, որ որդուդ համար գալիս ես ինձ մօտ, Տորդ:

—Այնուամենայնիւ ես արդեն այս անգամ վերջացրի ամեն բան, պատասխանեց Տորդը, փակելով թղթապանակը. յետոյ հրաժեշտ տուաւ և հեռացաւ:

Միւսներն էլ հետեցին նրան:

Այդ դէպքից երկու շաբաթ անցած, երբ եղանակը հանգիստ էր, հայր և որդի գնում էին մակոյկով Ստորլիդեն, որ բանակցեն պատկառութեան մասին:

—Նստարանը կարծես շարժուում է, ասաց որդին և բարձրացաւ ուղղելու: Այդ րոպէին նրա ոտը սահեց՝ նա բարձրացաւ, պարզեց ձեռքը, որ կառչի մի բանից, գոռաց և ջուրն ընկաւ:

—Թիակից բռնիր, աղաղակեց հայրը, և պարզեց նրան թիակը: Որդին աշխատեց բռնել, բայց ձեռքերը ընդարմացել էին:

—Սպասիր մի քիչ, ասաց հայրը, լողալով դէպի նա:

Բայց որդին ընկաւ մէջքի վրայ, երկար նայեց հօրը և խորասուզեց:

Տորդը դեռ չէր հասկանում: Կանգնեցրեց մակոյկը և ուշադրութեամբ նայեց այն տեղին, որտեղում անյայտացաւ որդին, սպասելով որ նա նորից գուրս գայ: Բայց մակերևոյթի վրայ յայտնեցին մի քանի պղպջակներ, յետոյ մի մեծը, որը ոտոտանց այս ու այն կողմը և այնուհետև նրա աւաջ պարզած կար միայն հայելու նման հարթ ծովը:

Մարդիկ տեսնում էին թէ ինչպէս հայրը երեք օր և գիշեր անհանգիստ մակոյկով պտտում էր ծովի այն կէտի շուրջը, ուր անյայտացել էր որդին: Նա ոչ հաց էր ուտում և ոչ քնում, որ որպէս զի կարողանայ գտնել որդու դիակը:

Երրորդ օրուայ առաւօտեան վերջապէս դտաւ որդուն և ուսերի վրայ նստաւ տուն:

Այդ օրւանից անցաւ ամբողջ տարի: Աշնանային մի երկեղ  
քահանան լսեց, թէ ինչպէս մէկը շոշափում էր իր դուռը:

Նա բացեց դուռը. առանձնասենեակը մտաւ մի նիհար, կորա-  
քամակ, երկարահասակ և լսեղարդ մարդ: Քահանան երկար նայե-  
լուց չետոյ, հազիւ ճանաչեց, որ դա Տորզն էր:

—Ուշ ես եկել այսօր, մեղմ ձայնով ասաց քահանան և կանգ-  
նեց նրա առաջ:

—Այո այո, ուշ եմ եկել, պատասխանեց Տորզը և նստեց:  
Քահանան նոյնպէս նստեց, կարծես մի բանի սպասելով: Եր-  
կար ժամանակ տիրեց խորին լռութիւն:

Վերջապէս Տորզը ասաց:

—Ես ինձ հետ փող եմ բերել և ցանկանում եմ բաշխել աղ-  
քատներին: Ես կամենում եմ, որ նրանով հիմնի բարեգործական մի  
հիմնարկութիւն, որը կրէ իմ որդու անունը:

Կանգնեց, դրաւ փողը սեղանի վրայ և էլի նստեց:

Քահանան համբեց:

—Մեծ զուճար է այս, ասաց նա:

—Իմ տան արժողութեան կէսն է. տունս այսօր ծախեցի:  
Քահանան երկար, լուռ նստած էր, վերջապէս կամաց հար-  
ցրեց:

—Ինչի՞ ես մտադիր աչժմ ձեռնարկել, Տորզ:

—Մի որ և է աւելի լաւ բան:

Նրանք լուռ նստած էին մի առժամանակ: Տորզը հայեացքը  
ձգել էր դեռնին, իսկ քահանան նայում էր նրան:

Քահանան սկսեց խօսել, մեղմ և կամաց.

—Ես կարծում եմ, որ այնուամենայնիւ որդիդ քեզ օրհնու-  
թիւն բերեց:

—Այո, ես էլ այդպէս եմ կարծում, պատասխանեց Տորզը և  
բարձրացրեց աչքերը քահանայի վրայ:

Ու երկու կաթիլ արցունք ծանրութեամբ գլորեցին նրա  
երեսն ի վար:

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Մի ակնարկ ապահովագրութեան պատմութեան վրայ մինչև  
մեր օրերը

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ <sup>1</sup>)

Կեանքի և զոյքի ապահովագրութեան գաղափարը, ինչպէս և  
ամեն մի այլ ապահովագրութեան, օրինակ՝ ցանքերի, այգիների, տրան-  
սպորտների, դժբախտ դէպքերի—լաւ է, համակրելի է. բայց թէ որքան  
է ապահովագրական ընկերութիւնների գործունէութեան եղանակը  
համապատասխանում իրենց նպատակին, որքան բարեխղճութեամբ  
են կատարում նոքա իրենց դերը կոմբինացիաների ժամանակ, ահա  
հարց, որի պատասխանը շատ էլ մխիթարական չէ:

Արդեօք արտասահմանեան և Ռուսաստանի ապահովագրական  
ընկերութիւնները փոխադարձ շահաւէտութեան օկզբունքով են  
գործում, թէ միայն սպիկուլացիայի?

Վերջապէս արդարացնում են այդ ընկերութիւնները ապահո-  
վագրելի ցանկացող ժողովրդի յոյսերն ու սպասելիքները, թէ միայն  
իրենց պայմաններով խրոնեցնում են և վերջը կլիենտին ապահովա-  
գրելուց հրաժարել ստիպում:

Ահա հարցեր, որոնց տէտք է պատասխանել, բայց որոնց չեն  
պատասխանում, թէ և արդէն կայ, եթէ կարելի է այսպէս ասել,

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1896 թ. № 8.

ապահովագրական՝ գրականութիւն» և օրգաններ, ինչպէս օրինակ՝  
 „Страховое обозрѣніе“, „Страховыя вѣдомости“ և այլն»

Մենք մեր կողմից սակայն, պէտք է նկատենք, որ ապահովագրական գաղափարը, ինչպէս իւր ծնունդ աւած օրից մինչև դարուս վերջը մի քանի անգամ խեղաթիւրւեց և ի չարն զործարարեց զանազան սպեկուլեատոր ընկերութիւնների կողմից, զանազան պերիտոններում և զանազան վարիացիաներով, նոյնպէս և դարուս վերջերում զանազան ընկերութիւններ սկսեցին դաւաճանել իրենց ծրագրին և փոխադարձ շահաւէտութեան ակնկալութիւնը փոխանակեցին սպեկուլացիայի և հարստահարութեան: ասացոյց՝— այն բազմաթիւ թեր ու դէմ բացատրութիւնները, որ տալիս է մի մրցող ընկերութիւնը միւսի դէմ ապահովագրական մի քանի օրգաններում:

Նւ աչսպիսով ապահովագրած անհատների  $\frac{1}{100}$ -րդ մասը չի հասնում իր նպատակին, իսկ ի հասնում, որովհետև նախքան ապահովագրւելը խոստանում են նրան շատ բան, որոնցից մէկը տալիս են, միւսը՝ ոչ:

Երևակայեցէք ձեզ մի գործակալ (աղենտ) կամ վերատեսուչ (ինսպեկտոր), որ այս կամ այն ընկերութեան անունից մօտենում է ձեզ, ծանօթանում և առաջարկում է ապահովագրւել: Ոսկէ սարեր է խոստանում ձեզ. այս ինչ թւականին, այսքան տարիներ անցնելուց յետոյ, ձեզ խոստանում է անազին գումար, որ կարող են ստանալ ձեր մահից յետոյ ձեր ժառանգները կամ կենդանութեան ժամանակ դուք ինքներդ, եթէ ապրէք որոշ ժամանակամիջոց: Ձեր վճարած տուրքերը (սյրեմիան), հաւատացնում է նա, ստանալիք գումարի կէսին—երեք քառորդին հազիւ հաւասար կը լինի, ցոյց է տալիս տարիքներ... (ի հարկէ, ծածկելով երկրորդական ծախսերը): մի խօսքով համոզում է, որ նիւթական կողմից ապահովագրւել ցանկացող կլիննաին միշտ ձեռնտու է աւելի ապահովագրութեան, քան բանկերի միջոցով նիւթական կոմբինացիաների ձեռնարկելը: Այդ կողմից իրեն ապահով զղալով ճարպիկ և հստոր գործակալը կամ տեսուչը—սկսում է այժմ էլ բարոյականութեան փիլիսոփայ դառնալ. մղում, քամում է իւր լիզի, զեղեցիկ ոճերի, քաղցրօրոյութեան և հաճոյախօսութեան սաղանդի:

ամբողջ ծուծը, ասելով թէ դուք ձեր բարոյական-ընտանեկան պարտաւորութիւններից մէկն էլ պիտի համարէք ձեր կեանքի ապահովացնելը, որ ձեր ընտանիքը ձեր մահից յետոյ որոշ չափով նիւթականապէս ապահոված լինի. թէ՛ ընկերութիւնը, ուր գործակալ է ինքը, այնքան միլիոնների պահեստի գումար ունի, որ եթէ այնտեղ ապահովագրւածների 10-դ մասը նոյն իսկ մի օրում մեռնելու լինէր, ընկերութիւնը կը կարողանար բոլորին էլ բաւականութիւն տալ և այլն և այլն և այլն...

Այս և սորա պէս ոսկէ յոյսերով յափշտակուած է շուտ հարըստանալու տենչով բռնւած կլիենտը և անմիջապէս ամեն մի հազարական ուրբու ապահովագրական գումարի համար տասական ուրբի բէհ վճարում գործակալին և ստորագրում իր համար բազմաթիւ պարտաւորութիւնների ու հարցերի պատասխանող զեկուցումը, որը ճարպիկ գործակալը գրպանն է դնում և ներքին գոհունակութիւնից ձեռքերը շփելով դիմում է ուրիշին, մի երրորդին և այլն. ցոյց տալով Կիրակոսեանի կամ Փիլիպոսեանի վրայ, վերջիններիս ստորագրած զեկուցումը օրինակ բերելով, նրանց էլ համոզելու, թէ ապահովագրութիւնը շատ համակրելի (?) միտք է:

Անցնում է մի ամիս կամ քիչ: Եւ եթէ բժշկական հմուտ և մանրամասն քննութիւնը վկայում է, որ կոնտրագենտը ձեռնտու և նպաստաւոր ապահովագրեալ է, անմիջապէս գլխաւոր վարչութիւնից ուղարկում է վկայագիրը (պոլիսը) և յայտնում կլիենտին: Նոր է խեղճ կլիենտը (պոլիսի յետեւ մանր-մանր տառերով տպած բազմաթիւ յօդւածները կարդալուց յետոյ) հասկանում, թէ որքան ծանր պարտաւորութիւնների է ենթարկել ինքն իրեն, յանձն առնելով տուրքերը ժամանակին վճարել: Նոր է սթափուած հասկանալով, թէ քանի քանի տարի շարունակ նա պիտի ստիպւած լինի առանց ուշացնելու տուրքերը կանոնաւոր վճարել, որ վերջը, գուցէ իր մահից յետոյ միայն, իր տւած գումարը ստանան իր ժառանգները: Այդ դեռ կլիենտի համար պոլիսի դրական կողմն է, պայմանագրի ձեռնտու, շահաւէտ կողմը՝ հասցս նորաբացասական կողմը:

Եթէ, Ստուած չանէ, կլիենտը մի կամ մի քանի ամիսներ ուշացնի իր պարտաւորւած վճարները հատուցանել, նա զրկում է իւր բոլոր մտցրած տուրքերից, եթէ նոյն իսկ կլիենտը, մի քանի

տարիներ շարունակ, ընկերութեան կասացին հազարներ յինէր վճարած: Կայ մի պայման, որ կարող է թեթեւցնել նրա նեղն ընկած գրութիւնը. այդ այն է, որ կարելի է դրաւ դնել պոլիսը և յետ վերցնել վճարած տուրքերի կէսը միայն, այն էլ այն պայմանով, որ գրաւ դրած և նորա փոխարէն վերցրած գումարը (ССУДА) տուտով վճարի մի տարուց յետոյ: Բայց քանիսին է յաջողուած գրաւի տեղ առած փողը վերադարձնել. հարիւրից մէկին: Գրաւ վերցնելը կլիենտի համար համարեա նոյնն է, ինչ որ սեպհական տան գրաւ դնելը, որը շատ դէպքերու մնում է վաշխառու պարտատէրին: Եւ պէտք է նկատել, որ ընկերութիւնների հարստանալու գլխաւոր աղբիւրներից մէկն էլ պոլիսի գրաւ վերցնելն է: Պատահում է, որ մի քանի անգամ, կամ մի քանի տարի պարտաւորեալ վճարները հատուցանելուց յետոյ, կլիենտն այլ ևս անկարող է վճարելը շարունակել որ և է ընտանեկան կամ առևտրական ձախորդ պայմանի շնորհիւ և կամենում է յետ վերցնել իւր, իբր թէ իննայած, «վճարներու»: «Մինչև օրս իմ վճարներից ստացած տոկոսները թող մնայ ձեզ, տէք միայն գումարը», ասում է նա. բայց նորան ժպիտով ցոյց են տալիս պոլիսի յետևում մանր-մանր տաւերով տուած կլիենտի համար աննպաստ §§-ի շարքը. նա կարգաւորով սփրթնում է և զարմանք է յայտնում, որ իրեն ապահովագրող գործակալը, նախ քան զեկուցման (ОБЪЯВЛЕНІЯ) ստորագրել առաջարկելը, այդ և դորա նման պայմանների մասին ոչ մի խօսք, ոչ մի տկնարկութիւն չէր արել. . . . Նա նոր է հասկանում, ի հարկ է, թէ ինչ կը նշանակէր, ապահովագրուելուց առաջ, գործակալի տասնեակ ռուբլիներ ծախսելը, որ նա անում էր կեր ու խումի ժամանակ անփորձներին ծուղակի մէջ ձգելու համար: «Եւք գոնէ տւածիս կէսը, վերադարձրէք դոնէ վճարածներիս կէսի կէսը խնդրում է այլ ևս վճարելու անկարող կլիենտը. բայց նորան նոյն ժպիտով ցոյց են տալիս անողք §§-ը և դատարկ ձեռքով ճանապարհ դնում ասելով. «չէ որ եթէ այդ ժամանակամիջոցում մեռնէիք, ձեր ժառանգները պիտի ապահովագրուած գումարը պահանջէին» կամ արդարանում են ասելով. «ընկերութեան վարչութիւնը մեզաւոր է այդ դէպքում, քանի որ դուք, կոմբինացի ձեռնարկելով մի հիմնարկութեան հետ, մանրամասն տեղեկութիւններ չէք ժողո-



վիտյականի մէջ և ահա վէճի և սակարկութեան բանաւոր պատճառներ, պոլիսում նշանակած դումարը լիովին չվճարելու դիտաւորութեամբ: Սակարկութիւնները, վէճը, կասկածը և աննպաստ լիկւրդացիաները կլիենտի համար գլխաւորապէս երևան են գալիս կրակից ապահովագրելու դէպքում, մանաւանդ՝ եթէ վէճի բռնած կողմերը ցանկանում են դատի դիմել, այդ դատաստանական պրոցեսը շատ ընկերութիւնների պոլիսի օրէնքով պիտի կատարի անպատճառ ոչ այն քաղաքում, ուր կատարել է ապահովագրութեան ակտը, այլ այնտեղ, ուր այդ ընկերութիւնների վաչուութիւններն են գտնուում:

Այդ և այդպիսի անցարմար, անձեռնտու և անխորժ հետևանքներից ազատելու համար ինչ է մնում անել կլիենտին, եթէ ոչ դատարանի դիմել:

Բայց դատարանում դատը տանել շատ անզամ դուք անկարող էք... Ձեզ կը մեզագրեն, ձեր դատը կը կորչի, որովհետև դատարանում ևս ձեզ ցոյց կտան նոյն ՏՏ-ը, որ գրւած են պոլիսի յետևելի դուր կ'արպարանաք, թէ ապահովագրելիս ձեզ չեն նախազգուշացրել, կամ նոյն իսկ այդ պայմանները կարդալուց յետոյ էլ դուք չէիք կարող այդպիսի հասկացողութիւն կազմել, որովհետև նոքա պարզ չեն, երկդիմի են... կարելի է և այսպէս հասկանալ և այնպէս. բայց իզուր, ապահովագրական ընկերութեան ներկայացուցիչը վարժ է փաստաբանութեան և ծաղրելու մէջ, նա կ'ասի թէ այդպիսի հասարակ ՏՏ-ներ հասկանալու համար չպէտք է փիլիսոփայ լինել... և կը բերի դորա նման անհիմն պատճառաբանութիւններ:

Այժմ հարց է առաջանում. արժէ ապահովացնել կեանքը, երբ այսքան խոչընդոտների կամ, ոուսի ասած՝ կրիւշոկնների պիտի հանդիպի մարդ, (մանաւանդ՝ երբ նա անտեղակ, անգիտակ է այդ բանին). կամ հարկաւոր է երբեքիցէ ապահովագրական ընկերութիւնների հետ պայմանաւորել, քանի որ մարդ աւելորդ պատրաստի (մի կողմ դրած, ассигнованный) գումար չունի այդ բանի համար: Աւելի լաւ չէ արդեօք խնայել այդ փողերը բանկերում, քան թէ դորանով զանազան անբարեխիղճ և ճարպիկ ապահովագրա-

կան գործակալների գրպանները լցնել. թող այդ մասին մտածեն ապահովագրել ցանկացողները:

\*  
\* \*

Ինչպէս ընթերցողը տեսնում է, ապահովագրական համակրելի գաղափարը, իւր պատմութեան օրից սկսած մինչև մեր օրերը, մասնաւոր ընկերութիւնների և անհատների շնորհիւ միայն սպեկուլացիայի է ծառայել և ոչ իւր իսկական նպատակին. ինչպէս տեսնեք, այդ ընկերութիւնները ամեն մի պերիոդում զանազան եղանակաւ ի չարն են գործ դրել պետութիւններից իրենց շնորհած իրաւունքները, մինչև որ վերջապէս ինքը կառաւարութիւնը չէ միջամտել և ապահովագրութեան ղեկը իւր ձեռքը չէ առել և այդպիսով կանոնաւորել մասնաւորների շնորհիւ եղծած, խեղաթիւրած գործը:

Որքան ուրախալի է, որ շուտով, մեզ մօտ, Ռուսաստանում ևս գոյութիւն ունեցող բոլոր մասնաւոր ապահովագրական ընկերութիւնները կ'ընկնեն կառավարութեան ձեռքը և այն ժամանակ յօջս ունինք, որ ապահովագրական համակրելի գործը կը կանգնի իւր հաստատուն, կանոնաւոր և արդար հիմունքների վրայ և ոչ այն սպեկուլացիայի, որ աիրում է այժմ Ռուսաստանի մի քանի ապահովագրական ընկերութիւնների մէջ:

## Ժողովրդի ընթերցանութիւնը

ՅՈՎՀ. ՏԷՐ-ՍԻՐԱՔԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ <sup>1</sup>)

### Դ. Հայ ժողովրդի ընթերցանութեան գրքերը

Մեր ժողովրդի ընթերցանութեան խնդիրն, անշուշտ, աւելի վաղ զբաղեցրել է արևմտեան հայերին: Այդ ակնյայտնի կերպով երևում է նոյն իսկ Թիֆլիսի Անտրոնական գրավաճառանոցի հայերէն գրքերի ցուցակը թերթիս: Աերառնելով վերջին՝ 1895 թ. գրացուցակը, տեսնում ենք, որ արդէն 40-ական թւականներից սկսում են երևան գալ թարգմանած և ինքնուրոյն հեղինակած գրքեր Անտրոնիում, Պոլսում և Զմիւռնիայում: Բայց թէ այս և թէ հետեւեալ տասնամեակներում դեռ այնքան էլ որքան 60-ական, մանաւանդ 70-ական ու յաջորդ թւականներում: Որովհետև վերոյիշեալ գրացուցակի մէջ նշանակած են միայն նոյն գրավաճառանոցում գտնուածները, ուստի աւելորդ համարեցինք այստեղ տասնամեակների համեմատութիւններ դուրս բերելը: Միայն թէ, հետաքրքրական է, որ այժմ հրատարակում մտաւորապէս 408 <sup>2</sup>) գիրք կայ, որոնց մի մասը կարող է հետաքրքրել դեռահաս ընթերցողներին, միւսը՝

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1896 թ. № 9, 10—11.

<sup>2</sup>) Այս հաշւի մէջ չեն մտնում ազգային մասնագիտական պատմութեան, նրա աղբիւրներին և հետազոտութիւններին վերաբերեալները, տասնաւորների ժողովածուները, թատերգութիւնները, դասագրքերը

ժողովրդին, երբորդը՝ զարգացածներին: Կան, ի հարկէ, այնպիսի գրքեր էլ, որոնք երեք կարգերին էլ կարող են բաւականութիւն տալ, ինչպէս են. «Վիլհէլմ Քէլլ», «Երկունք» և այլն, վերջապէս «Լիր թագաւոր», «Մակրէթ», որոնք կարող էին ժողովրդին ու զարգացածին հասկանալի լինել: Որքան մենք ճանաչում ենք և կարողացանք տեղեկանալ մեր ձեռքն եղած միջոցներից՝ այդ 408 գրքից մօտաւորապէս 125 ը դեռահասների ընթերցանութեան նիւթ կարող է լինել: Սրանց վրայ պէտք է աւելացնել բնական գիտութիւններին և առողջաբանութեան վերաբերող 28 գրքերի մի մասը: 23 գիրք կարող են ինչպէս ժողովուրդի, նոյնպէս էլ դեռահասների ընթերցանութեան յատկացել: 146 գիրք աւելի ժողովրդական բնաւորութիւն են կրում, 72 գիրք՝ զարգացածներին վերաբերեալ: Իսկ 14 գիրք՝ մեզ համար, իբրև այդ գրքերի հետ անձանօթի, անորոշ մնաց:

Հաւեմատութիւնների համար աւելի հետաքրքրական նիւթ կարող է ներկայացնել Հայոց հրատարակչական ընկերութեան գործունէութիւնն սուսնձին առած: Յօդածի այս հատւածն սկսելիս, բարեբախտաբար մեզ հասաւ նոյն ընկերութեան 1895 թ. տեղեկագիրը, որ հրատարակած է վերջին օրերս: Այս համարատութիւնը կարող էր, ի հարկէ, աւելի մանրամասն լինել, բայց և այնպէս, նա հեռաքննին ընթերցողին շատ հետաքրքրական նիւթեր է տալիս: Մենք փորձեցինք մի քանի մեր ուշքը գրաւոր կէտեր աւելի վեր հանել: Այս նպատակով ընկերութեան մինչև այսօր հրատարակած 111 գրքերը վերածեցինք հետևեալ եօթը կարգերի՝ 1. Մանկական (իմն նաև դեռահասներինը), 2. Ժողովրդական, 3. Զարգացածների եւ ժողովրդական, 4. Զարգացածների, 5. Ժողովրդական եւ մանկական, 6. Մանկական-ժողովրդական, զարգացածների և 7. Դասագրքեր: Աղիւսակի սիւնակները նշանակած են իւրաքանչիւր բաժանմունքի սկզբնական առաւելութիւնը: Վերջին սիւնակը այնպիսի գրաւորների համար է, որոնց որ բաժանմունքին պատկանելը մեզ համար անորոշ է, մասամբ հեղինակների անունները չիշուած լինելու պատճառով:

	Տ.	Ժ.	Չ.	Չ.Ժ.	Տ.Չ.	Տ.Չ.Չ.	Գ.	?
1879	1	—	—	—	—	—	—	—
1880	3	—	—	2	—	—	—	—
1881	1	—	1	2	—	—	—	—
1882	2	—	3	—	—	—	—	—
1883	—	—	—	1	—	—	—	—
1885	—	—	4	—	—	—	—	—
1886	—	—	1	—	—	—	—	—
1887	—	—	1	—	—	—	—	—
1888	—	—	—	—	—	—	2	—
1889	1	—	—	—	—	—	—	—
1890	—	—	—	1	—	—	1	—
1891	7	1	5	1	1	—	—	1
1892	4	2	4	4	4	—	—	—
1893	1	2	—	4	2	2	—	1
1894	4	—	5	2	—	—	—	1
1895	4	—	5	2	—	—	1	1
1896	3	3	4	—	2	—	—	1
	31	8	33	19	9	2	4	5 111

Այստեղից երևում է, որ զարգացած և դեռահաս ընթերցողներին վերաբերեալ գրքերը գերակշռում են, իսկ ժողովրդականները նւազեն. այս պէտքին մասամբ կարող են բաւականացնել միւս սիւնակների գրքերը: Շատ հաւանական է, որ չորոշածների կէսն էլ մանկական լինի. զոնէ նշաններից այսպէս է երևում: Աերջին տարիներս մանկական գրքեր հետզհետէ աւելի ու աւելի հրատարակեցին ու տարածեցին, որովհետեւ հրատարակիչներն ու տարածողները աւելի մօտ էին այս կարգի ընթերցող հասարակութեանը: Իսկ ինչ վերաբերում է ներկայ տարին լոյս տեսածներին ու սպասելիներին, սրանցից, մանաւանդ վերջինները, քիչ բացառութեամբ ժողովրդական են լինելու: Այս ուղղութիւնը, կարծում ենք, աւելի է համապատասխանում ներկայ հանգամանքներին. մենք առանց այն էլ բազմաթիւ թերուս պատանիներ ունինք, որոնք մի երկու տարի չկարգալով բոլորովին տգէտ ու անգրագէտ են դ. ունում: Եւ այս խղճուկների թիւը 1000-ներով է շատանալու: Այսուհետեւ մեզանում ընթերցողներից ամենաընդարձակ շրջանն այսպիսիներից պիտի կազմէ, հետևաբար, կարծում ենք, որ հիմա աւելի այս

կարգի ընթերցողների բազմակողմանի պահանջներն անմիջապէս լրացնելու պէտք կայ <sup>1)</sup>: Ապա նաև առանձին ուշադրութեան արժանի է ժողովուրդի զանգաւածը (մասսան), որ մեծ մասով կամ, աւելի ճիշտ է ասել, աննշան բացառութեամբ անզրագէտ ու տղէտ է մնացել: Մինչև այսօր նա մի կերպ կառավարուում էր իւր բնական խելքով, նա զարգանում էր մտտենագրութիւնից անկախ, կեանքի փորձառական բովում: Թէև սերնդէ սերունդ աւանդաւած այս ըննաւոր զարգացումն այնքան էլ արհամարհելի կենսական գործոն (Ֆակտոր) չէ, որքան շատերը կարծում են, սակայն, այնուամենայնիւ, նա անբաւարար է ժամանակակից յարաձուն քաղաքակրթական հոսանքների հանդէպ: Կարծում ենք, որ անիրագործելի բան չպէտք է համարել անգրագէտներին գրել-կարդալ ինքնուրոյն կերպով ձեռք բերելու ճանապարհ ցոյց տալը: Այս կարծիքն արտայայտողս արդէն արել է մի փորձ և շուտով կը ներկայացնի գործածութեան համար:

Հիմա դառնալով վերոյիշեալ տեղեկագրի այլ մանրամասնութեանց՝ ուրախալի է որ Թիֆլ. Հ. Հր. ընկերութիւնը մասնաւոր ուշադրութիւն է դարձնելու կլասիքների թարգմանութեան վրայ: Շատերը թերևս մտածեն, որ ներկայ հանգամանքներում, երբ այնքան մեծ պահանջ կայ թեթև ժողովրդական դրբոյկների, շուտով թիւն է այդպիսի գրքեր հրատարակելը, քանի որ դրանք միայն զարգացածներին պիտի մատչելի լինին: Ո՛չ, կարծում ենք, որ մինչև անգամ Շէքսպիրի գրեւծքները, քիչ բացառութեամբ, ժողովուրդը կը հասկանայ, եթէ նրանք պարզ ու հայկական լեզուի ոգով թարգմանուած լինին: Այս համոզմունքն է, որ հիմա այլ տեղերում ժողովրդական ընթերցանութեան գործին մօտ մարդկանց և նրա կեանքը ճանաչողներին թելադրում է փոխանակ կցկուտուր, վախ փոխադրութիւնների, իսկական դասական երկերը տալ նրա ձեռքը: Միևնոյն համոզմունքն է, որ եւրոպական մեծ քաղաքներում լացն բաց է

<sup>1)</sup> Թիւրքմացութեան տեղիք չտալու համար, նկատենք, որ տողերիս գրողը հարեւնադիտութեան վերաբերեալ կարևոր երկասիրութեանց, եթէ նրանք այլ հնար չունեն լոյս տեսնելու, երկրորդական տեղ տալ չէր ցանկանալ:

անել տալիս ժողովուրդի առջև դրամատիքական թատրոնների դռները, այնտեղ յաճախելու ամեն դիւրութիւններ ներկայացնելով: Հասակաւոր ժողովուրդին, որ արդէն անցել է կեանքի փոթորիկներից և ամեն օր էլ ընկղմած է զգում իրան նրա այլ և այլ հոսանքների մէջ, աններելի սխալ է զեռահաս սերունդի տեղը դնել: Նա արդէն այնքան զգացել, տեսել, լսել է կեանքից, որ հարկաւոր է միայն նրա հետ պարզ խօսել, և նա կ'ըմբռնէ հոգեբանական ու տրամաբանական պատճառականութիւնները:

Համակրելի է նաև ընկերութեան այն դիտաւորութիւնը, որով ձգտելու է նա այսուհետև աւելի միակերպութիւն ձգել ուղղադրութեան գործում: Սրբագրութեան գործը մեզանում առաջնակարգ նշանակութիւն ունի, քանի որ այնքան քիչ են օտար լեզուի ազդեցութեան չենթարկող թարգմանիչները: Քարգմանութիւնն աւելի ևս տժգոյն ու անհամ է լինում, երբ նա կատարում է օտարոտի ոճերով ու դարձաւածներով, այն էլ ոչ թէ բնագրից, այլ թարգմանութիւնից:

Տեղեկագրից երևում է նաև, որ ընկերութիւնը հարկադրւած է եղել հեղինակներին, թարգմանիչների և սրբագրողների մտաւոր աշխատութիւնը համարեա նոյն չափով դնահատել (2424 ր. 85 կ.), որ չափով դնահատել է տպարանի մէքենայականը (2115—84): Միթէ վերին աստիճանի ցաւալի երևոյթ չէ այս եւ ան, ընկերութիւնը յայտարարում է, որ այսուհետև կամենալով աւելի դնահատել ինքնուրոյն գրւածքները, ստիպւած է թարգմանիչների վարձատրութիւնն աւելի էլ պակասեցնել: Բայց ինչո՞ւ ընկերութիւնը հարկադրւած է այսպիսի միջոցի դիմել, որովհետև այլ միջոց չունի: Իսկ միջոց չունի՝ որովհետև նրա դրամագլխի մի պատկառելի մասը փոխանակ շրջան առնելու, մեռած է մնում. իսկ նա անշարժ է մնում, որովհետև զրքերը չեն տարածւում, ինչպէս հարկն է: Որովհետև տարածման խնդրի շուրջն է կենդրոնանում ոչ միայն մտաւոր աշխատանքի, վարձատրութեան հարցը, այլ և հրատարակչական գործի բուն նպատակը, ուստի և արժէր մի քիչ աւելի կանգ առնել այստեղ:

Տեղեկագրից երևում է, որ առ 1-ն չունւարի 1896 թ. ընկերութիւնը հրատարակել է 133.455 օրինակ գիրք 65,836 սուբ-

լի արժողութեամբ: Եւ այն օրը ընկերութեան գրասենեակում, աշխատակից անդամների և գրավաճառների մօտ մնացել էր 55,353 օր. զիրք, 32:519 ու. 96 Վ. արժողութեամբ, ուրեմն դրամագլխի կեսը պառկած է մնում: Բայց ինչու չեն տարածուում գրքերը: Եթէ մի պատճառը նրանց թանկութեան մէջ որոնէինք, այդ անհիմն չէր լինիլ, թէև երևոյթի բուն հիմքը այդ չէ: Զէ որ գրքի թանկութիւնն էլ ընկերութեան սուղ միջոցներից է առաջանում: Ընկերութեան գործունէութեան առաջին տասնամեակում հրատարակած 25 տեսակ գրքերից 22-ը բաւական սպառւել են. իւրաքանչիւրից մնացել է 1—99 օրինակ: Հետեւեալ հնդամեակում 77 տեսակ գրքերից լաւ սպառւել են 19 տեսակ զիրք՝ մինչև 100 կամ քիչ աւելի օրինակներ թողնելով: Այս տեսակ գրքերից գրավաճառների և աշխատակից անդամների մօտ համեմատաբար քիչ քանակութեամբ կան: Թէև ձգտում կար երկրորդ շրջանում աւելի էփանագին գրքոյիներ հրատարակելու, սակայն 3—10 կուպէկանոցներն առաջի շրջանի հրատարակածներից աւել չեն: Բայց երկրորդում 10—20 կուպէկանոցները 14 հատ են, իսկ առաջանում՝ միայն 2: Գների և սպառման աղիւսակներն աչքէ անցնելով, տեսնում ենք, որ շատ լաւ գրքի գնին այնքան էլ չեն նայում, թէև կան բացառութիւններ: Այնուամենայնիւ, 3—5 կուպէկանոց գրքոյիներն աւելի գրաւիչ են կղեր:

Գրքի ընտիր, էփան և արտաքուստ գրաւիչ լինելը թէև ծանրակշիռ պայմաններ են նրա շաջող տարածման, բայց և այնպէս, տարածման գործի կազմակերպութիւնն ու եղանակները առանձին ու մեծ նշանակութիւն ունին: Մեր յօդածի ընթացիկ հրատարակիչներն ու նրանց ցրիչները հատուածում բաւականին պարզեցինք այդ ինքնատիպ կազմակերպութեան ոյժը Ռուսիայում և հետեւեալ հատուածում՝ ռուս և մասամբ եւրոպական ինտէլիգէնցիայի ձեռնարկութիւնները: Ք. Հ. Հ. ընկերութեան մէջ գրադեցնող տեղեկագիրն էլ ասում է, թէ ինչպէս շատացնելով աշխատակից անդամների թիւը և սրանց գործունէութեան վրայ աւելի ուշադրութիւն դարձնելով, տարածման գործը առանձին շաջողութիւն ունեցաւ: Աշխատակից անդամների գնահատելի գործունէութիւնն ընդարձակելուց զատ, կարծում ենք, անմիջական պէտք կայ նաև

ցրեչների, որոնց տեսակներն ու գործելու կերպերը նկարագրած են վերոյիշեալ հատուածներում ու գրքերում: Ընկերութեան աշխատակից անդամներից մէկն ինձ պատմում էր, որ իրանց ուղարկած գրքերը շատ դանդաղ էին վաճառուում: Մի քանի հոգի մտածեցին իրանց հաշուով մի ցրիչ վարձել. և ինչ, սա գիւղերը ման գալով կարճ ժամանակում սպառեց յանձնուած գրքերը: Այն, թող չափազանցութիւն չհամարեն, եթէ ասեմ, որ ցրելու գործի նպատակաշարժար կազմակերպութիւնը գրքեր տարածելու համար նոյնքան և յաճախ աւելի նշանակութիւն ունի, քան գրքերի ներքին և արտաքին արժէքն ու հանգամանքները: Խնդրի բաւականին մանրամասն ռուսումնասիրութիւնն էր, որ մեզ բերաւ այս եզրակացութեան. համոզուողները թող ուսումնասիրեն հարցը և ապա յայտնեն իրանց կարծիքը:

Յօդուածս վերջացնելիս աւելորդ չենք համարում յիշել, որ ստիպւած էինք զանց առնել մասնաւոր ահատների և միութեանց գնահատելի ձեռնարկութիւնները, ձեռքի տակ նիւթեր չունենալու պատճառով: Չխօսեցինք նաև մեր լրագրութեան ու պարբերական հանդէսների մասին, իբրև ժողովրդի ընթերցանութեան նիւթերի: Անկասկած մեծ է նրանց ծառայութիւնը, քանի որ մեր ժողովրդի միջակ զարգացման տէր դասի, այսինքն կարգացածից քիչ թէ շատ քան հասկանալու կարողութիւն ունեցողների, ընթերցանութեան միակ նիւթը համարեա պարբերական հրատարակութիւններն են: Մեր մէջ էլ քանի գնում աւելանում է այս կարգի ընթերցասիրութիւնը և, նայելով ժամանակակից կեանքի պահանջներին, մեծ տատանումների ենթարկում:

17 սեպտեմբերի 1896.

Ռոստով Գոնի—վրայ:

Յ. Գ. Ռուսաց հանրամատչելի գրքերի մասին մեր հաղորդածների վրայ պիտի աւելացնել Ռուբ.սիկնի մի շատ կարևոր գրքոյից, այն է՝ Списокъ полезныхъ и удобопонятныхъ книгъ. Для взрослыхъ. Այգտեղ գրքերը գիւրամատչելիութեան տեսակետից երեք կարգի են բաժանուած և աստղանիշներով ցոյց է տրուած թէ

այս կամ այն գիրքն ինչ աստիճանի ղիւրուծեամք է կարգաց-  
 ւումն Առանձին արժանաւորութիւն ունին նաև «Մոսկւայի գրագի-  
 տութեան յանձնաժողովի տարեգիրները՝ „Ежегодникъ“ կոչւած,  
 որոնց մէջ, բացի իւրաքանչիւր տարւայ ժողովրդական գրականու-  
 թեան ընդհանուր նկարագրերից, ցուցակագրւած են լինում 1891  
 թւականից ժողովրդական ամենաընտիր գրքերը: Նախ առանձին  
 անհատներ են քննութեան առնում գրքերը՝ բովանդակութեան,  
 լեզւի, նպատակի և այլ տեսակէտներից, յետոյ նոյն գրքերը որոշ  
 խմբի վերաքննութեանն են ենթարկւում, ապա, զրազարանական  
 յանձնախմբի վերջնական նպաստաւոր եզրակացութեանն արժանա-  
 նալով՝ իբրև ընտիր գրքեր ներմուծւում են Ежегодникъ-ի ցու-  
 ցակը:

## ԳԱՂՏՆԻ ԶԱՅՆ

Է՛ր-ՈՒՆԱՐԴԻ ԳՐԸՆԻԷ՛ր՝—Թարգմ. ՅԱԿՈԲ ՏԷՐ-ԳԵՈՐԳԵԱՆԻ

Բնութիւնն ամեն տեղ, մեղմաձայն ու հեղ  
Խրատ է տալիս մեզ:  
Ոսկեշող աստղը երկնքի խորքից  
Ասաց. պնդե՛ք եղի՛ր:  
Թոյլ, դողդոջ թուփը յուզած մրրկից  
Ասաց. վե՛հ եղի՛ր!  
Ամպերից բարձր արծիւը սահեց,  
Սուլեց. եղի՛ր մե՛ծ!  
Մեղուն փեթակը ողջ լցրեց մեղրով,  
Ասաց. աշխատի՛ր!  
Ծառը պտուղներ ցրեց խնդալով,  
Ասաց. լն՛ւ եղի՛ր!  
Յակինթը՝—Ոչքնէ՛ դու չարամարհես,  
Աւազ եմ. քննի՛ր!  
Ծաղիկը ժպտաց, բացեց ու բուրեց—  
Իմացի՛ր սիրել՛!  
Գետը շառաչեց, —քեզ ուղի ընտրի՛ր,  
Իմացի՛ր ապրել՛:  
Տերեւը ընկաւ.—ողջի՛ կը թողմիք,  
Ապա կը մեռնիք:  
Եւ գետը, աստղը, մեղուն, ծառ, ծաղիկ  
Կրկնում են—չիշի՛ր,  
Միայն մնորդ եղի՛ր:

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ

ԲԺ. ԹԱԴԷՈՍ ԶԱԲԱՐԵԱՆՑԻ

Ամուսնութեան նպատակը զիտութեան տեսակէտից:—Ժամանակակից հասարակութեան հայեացքը ամուսնութեան վրայ:—Առողջարարական պայմանների նշանակութիւնը ամուսնութեան խնդրում:—Ամուսնացողների հասակը:—Ազդածամ ամուսնութիւն:—Տարածամ ամուսնութիւն:—Ամուսինների հասակի համաչափութիւնը:—Արիւնակից ամուսնութիւն:—Հասի եւ չհասի խնդիրը:—Խնամական եւ հոգեւոր ազգակցութեան նշանակութիւնը ամուսնութեան խնդրում:—Ամուսնացողների առողջութեան վիճակը:—Ճկերքը, զինէնդութիւնը սիֆիլիսը, ջղային եւ հոգեկան հիւանդութիւնները եւ նրանց ազդեցութիւնը ամուսինների եւ սերնդի վրայ:—Սէրը իբրեւ ամուսնական առողջարարութեան պայմաններից մէկը:

Ա.

Գիտութեան համար ամուսնութիւնը միայն մի նպատակ ունի. եւ այդ նպատակն է պահպանել սերնդի զոյութիւնը երկու տարբեր սեռերի միաւորութեան միջոցով: Այդ նպատակը կարող է իրագործւել միայն այն ժամանակ, երբ ամուսինները ընդունակ են ոչ միայն որդեծնութեան այլ և առողջ ու զօրաւոր սերունդ առաջացնելու: Գիտութեան այդ պահանջը ընդհանուր է ոչ միայն բոլոր ազգերի և բոլոր ժամանակների համար, այլ նաև բոլոր կենդանական և բուսական տեսակների համար: Այդ պահանջը նոյն իսկ բնութեան պահանջն է և նրա անխախտելի օրէնքներից մէկն: Ամեն մի ամուսնութիւն, որ անընդունակ է որդեծնութեան և կամ որից կարող է միմիայն թոյլ և հիւանդոտ սերունդ առաջանալ, անհամապատասխան է այն ընդհանուր բնական օրէնքին, որը ձգտում է պահ-

պանել սերնդի անընդհատ շարունակութիւնը: Այդպիսի ամուսնութիւնը գիտութեան տեսակէտից պէտք է համարել անխորհուրդ և սպօրինի:

Ինութեան օրէնքներից ոչ մէկն այնպէս ոտնակոխ չէ եղել ժամանակակից հասարակութեան մէջ ինչպէս ամուսնութիւնը: Սեփամանութեան համար ամուսնութիւնը դարձել է միայն անձնական հաճոյքի, վաւաշոտութեան խնդիր. շատերի համար նա միայն մի միջոց է անձնական ստոր շահերի, կարիերայի և ուրիշ այդ տեսակ նպատակների հասնելու համար: Սերնդի հարցը ամենից քիչ տեղ է բռնում ժամանակակից ամուսնութեան խնդրում: Փետայի և հարսնացուի ընտրութիւնը կատարւում է աչքի առաջ ունենալով ոչ թէ նրանց մարմնական և հոգեկան կարողութիւնները, նրանց առողջութիւնը, նրանց որդեծնութեան ընդունակութիւնը, այլ ամենից առաջ նրանց նիւթական կարողութիւնը, ծագումը, պաշտօնը և ուրիշ այդ տեսակ խնդիրներ: Այդպիսի ընտրողութեան հետեանքը լինում է այն, որ ամուսնութիւնը կորցնում է իւր բարձր նշանակութիւնը և փոխանակ նպաստելու սերնդի բազմանալուն և ուժեղանալուն, ընդհակառակը նպաստում է նորա թուլանալուն և անընդհատ սպառման: Ժամանակակից ազգերը, ասում է Սպենսերը, աւելի շատ են մտածում խողերի սերունդը բազմացնելու և ազնւրւացնելու մասին, քան թէ մարդկային սերունդը: Նրանք կատարելագործում են մեքենաները, ազնւացնում են գետնախնձորը, զուգաւորելով եզների և ձիերի ազնիւ տեսակները առաջացնում են կենդանիների ընտիր սերունդներ և միևնոյն ժամանակ բոլորովին անուշազիր են թողնում մարդկային սերունդը: Եւ այդ անուշազրութեան հետեանքը լինում է ազգերի աստիճանաբար նւազումը, նրա մարմնական և հոգեկան կարողութիւնների անկումը:

Եկեղեցին և պետական օրէնսդրութիւնը վերցրելով ամուսնական խնդիրը իրանց իրաւասութեան տակ և ենթարկելով այլ խնդիրը այլ և այլ պահանջների, միևնոյն ժամանակ շատ քիչ ուշադրութիւն են դարձրել այն պահանջների վրայ, որոնք վերաբերում են ամուսնական առողջապահութեան: Մինչդեռ նոյն իսկ պետութեան շահերը պահանջում են, որ ամուսնութիւնը ամենից առաջ ընդունակ լինի պատրաստել պետութեան համար առողջ և ուժեղ քաղաքա-

ցինք: Սերնդի խնդիրը չէ վերաբերում միմիայն ամուսիններին այլ և հասարակութեան, այլ և ամբողջ պետութեան: Առանձին-առանձին անհատների կարողութիւնից է կախած հասարակութեան կարողութիւնը. եթէ այդ անհատները զօրաւոր և առողջ են՝ զօրաւոր և առողջ է նաև ամբողջ հասարակութիւնը. և միմիայն այդ տեսակ հասարակութիւնը կարող է աճել և զարգանալ: Հասարակական առողջութիւնը, ասում է լորդ Բիկոնսֆիլդը 1895 թւին իւր պարլամենտական ճառի մէջ, ազգերի երջանկութեան և պետութիւնների զօրաւորութեան հիմքն է. ամեն մի տէրութեան ամենազլխաւոր և առաջին հոգսը պէտք է լինի հասարակութեան առողջութիւնը: Առանց հասարակական առողջութեան չկայ հասարակական երջանկութիւն: Ազգերի քաղաքական և տնտեսական բարօրութիւնը կախած է առողջ բանւորներից և առողջ զինւորներից: Առողջութիւնը ազգերի և պետութիւնների գոյութեան և զարգացման առաջին պայմանն է:

Եւ որովհետև առողջ սերունդ կարող է առաջանալ միմիայն այն ամուսնութիւններից, որոնք համապատասխան են առողջապահութեան պահանջներին, այդ պատճառով ոչ միայն ցանկալի, այլ նաև անհրաժեշտ է, որ ամուսնական խնդրում եկեղեցին և պետական օրէնսդրութիւնը ղեկավարեն առողջապահութեան մշակած ցուցմունքներով: Այն ժամանակ եկեղեցու և պետական օրէնսդրութեան սահմանած օրէնքները հաստատուած կը լինեն ամուր հիմքերի վրայ և տեղիք չեն տալ այն բազմաթիւ տարածացնութիւններին ու կամայականութիւններին, որոնց ենթակայ է ամուսնութեան խնդիրը բոլոր ազգերի և բոլոր դաւանութիւնների մէջ:

Աերջին ժամանակ արեւմտեան ազգերի մէջ արդէն նկատելի է մի զօրաւոր շարժում, որը ձգտում է ամուսնական խնդիրը հիմնել զլիաւորապէս առողջապահութեան պահանջների վրայ: Պարիզում գումարուած միջազգային ժողովը, որ տեղի ունեցաւ այս 1896 թ. սկզբներին և որի նպատակն էր կանանց իրաւունքների պաշտպանութիւնը, ի միջի այլոց վճռեց առաջարկել բոլոր ընտանիքներին, որոնց մէջ գտնուում են հարսնացու օրիորդներ, որ պահանջեն փեսայացուներից առողջութեան վիճակը: Այդ վճռի նպատակն է արգելք լինել զանազան հիւանդութիւնների և մանաւանդ վեներական և հոգեկան հիւանդութիւնների տարածման:

Ամերիկայի Connecticut նահանգում արդէն օրէնք է հաստատուած, որ արգելում է ջղային և հոգեկան հիւանդներին ոչ միայն ամուսնանալ այլ և սեռական յարաբերութիւն ունենալ: Այդ օրէնքի դէմ մեղանչողները ենթարկուած են երեք տարի ժամանակով բանտարկութեան, իսկ այդ տեսակ ամուսնութիւններին նպաստողները 1000 գոլլարից ոչ պակաս տուգանքի և կամ նոյնպէս բանտարկութեան մի տարի ժամանակով:

Այդ օրինակները ցոյց են տալիս, որ կամաց-կամաց մօտենում է այն ժամանակը, երբ բժշկականութիւնը և առողջապահութիւնը սկսում են արդէն տարածել իրենց պահանջները ամուսնական խնդրի վրայ, որը մինչև այսօր ամբողջապէս կախուած էր պետական օրէնսդրութեան, եկեղեցու և ժողովրդական աւանդութիւնների իրաւասութիւնից:

Եւ իսկապէս շատ տարօրինակ և զարմանալի է որ այն ժամանակ, երբ նիւթական կարողութիւնը, ծագումը, աստիճանը, ղէմքի գեղեցկութիւնը և մինչև անգամ խօսելը, պարելը և ուրիշ այդպիսի յատկութիւնները անհղին դեր են կատարում ամուսնութեան խնդրում, միւս կողմից ընտանեկան կեանքի առողջապահական պայմանները, ամուսնացողների ֆիզիկական և հոգեկան յատկութիւնները կամ բոլորովին ուշադրութեան չեն առնուում և կամ շատ քիչ նշանակութիւն են տալիս նրանց: Մինչդեռ այդ վերջին պայմանները ամենապիտանոր հիմքն են կազմում ընտանեկան երջանկութեան և բախտաւորութեան: Պրոֆէսոր Ռիբբինգի ասելով, «երբ ամուսնութեան երջանկութիւնը խախտուում է առողջապահական պայմանների բացակայութեան շնորհիւ, այն ժամանակ ոչ մի եկեղեցական և ոչ մի օրէնսդրական միջամտութիւն չէ կարող վերականգնել այդ խախտուած երջանկութիւնը»: Համոզուելու համար թէ ինչքան խորին ճշմարտութիւն է պարունակուած այդ խօսքերի մէջ, բաւական է միայն մի հարեւանցի ակնարկ ձգել ժամանակակից ընտանիքների վրայ, որտեղ այնպէս անխնայ կերպով սոսնակոյս են եղած առողջապահութեան պահանջները:

Ամեն մարդ, որ մտնում է ամուսնութեան լուծի տակ, պէտք է լաւ իմացած լինի, որ նա իւր վրայ առնում է որոշ պարտականութիւններ և որոշ պատասխանատուութիւն թէ՛ զէպի իւր ամու-

սինը, թէ դէպի իւր սերունդը և թէ դէպի հասարակութիւնը: Այդ պարտականութիւնները նա կարող է բարեխղճութեամբ կատարել միայն այն ժամանակ, երբ ամուսնական ընտրութիւնը կատարուում է այն պահանջների համեմատ, որ մշակել է բժշկական գիտութիւնը ամուսնական խնդրի համար: Հակառակ դէպքում նա մեղանշում է թէ իւր խելքի, թէ իւր գաւակների և թէ մարդկութեան առաջ:

Եկեղեցին և պետական օրէնսդրութիւնը, որոնք ամուսնութեան օրինաւորութեան համար անհրաժեշտ են համարում ծննդական, ծառայութեան և ուրիշ տեսակ վկայականներ, ամենից առաջ և ամենից աւելի պէտք է պահանջեն ամուսնացողներից բժշկական վկայական — ընդունակ են արդեօք ամուսնացողները առողջ ընտանիք կազմելու. ընդունակ են որդեծնութեան, ընդունակ են հասարակութեան համար առողջ և ուժեղ անդամներ առաջացնելու: Առանց այդ պայմանների ոչ մի ամուսնութիւն չպէտք է տեղի ունենայ և եթէ տեղի է ունեցել, պէտք է իրաւունք տալ լուծելու:

Բժիշկ Պարգամինը զարմանալով է յիշում, որ այն ժամանակ, երբ մեր օրիորդները և երիտասարդները մի հատ կորսէտ կամ մի հաս պլսարկ ընտրելու համար տաս անգամ քննում, դատում ու կշռում են, միևնոյն ժամանակ այնպիսի թեթեւութիւն են ցոյց տալիս ամուսնական ընտրութեան խնդրում, որ մտածող մարդը մտում է շարած: Այդ առաջանում է նրանից, որ ամուսնական առողջագահութեան զանգափարը դեռ շատ թույլ է մեր մէջ: Ժամանակակից հասարակութիւնը սովորել է նայել ամուսնութեան վրայ ինչպէս մի անձնական հաճոյքի կամ շահասիրական խնդրի վրայ, և եկեղեցական ու պետական օրէնքները ոչ միայն չեն դատարարում այդ հայեացքը, ոչ միայն արգելք չեն լինում զնասակար ամուսնութիւնների կատարելուն, այլ շատ անգամ նաև ակամայ նպաստում են նրանց գոյութեան: Այդպիսով, բացի նրանից, որ խախտում է ընտանեկան կեանքի բարօրութիւնը, այլ և, ինչպէս ցոյց է տալիս գիտութիւնը, մարդկային ցեղը սխտւմ է կամաց-կամաց նւազել, թուլանալ, ակտուաւորել և տեղի տալ բիոլոգիական այն անողոք օրէնքի առաջ, որը կոչւում է սեր-

հատութիւն կամ վատասեռութիւն (вырождение, dégenérescence <sup>1)</sup>։

Անցնենք այժմ՝ ամուսնական առողջապահութեան պայմաններին։

Բ.

Ամուսնութեան առաջին պայմանն է ամուսնացողների հասակը։ Գիտութիւնը և վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հասակը մեծ նշանակութիւն ունի թէ որդեծնութեան և թէ ամուսինների ու նրանց զաւակների առողջութեան համար։ Չանազան ազդերի և զանազան դաւանութիւնների մէջ գոյութիւն ունեն զանազան օրէնքներ ամուսնութեան հասակի վերաբերութեամբ։ Ընդհանրապէս տաք երկրներում թոյլատրուած է ամուսնանալ աւելի մատաղ հասակում։ Իսկ հիւսիսային ցուրտ երկրներում աւելի ուշ հասակում։ Այդպէս օրինակ, մինչդեռ Ռուսաստանի հիւսիսային նահանգներում պետական օրէնսդրութիւնը սահմանել է աղայի համար

<sup>1)</sup> Չպէտք է շփոթել իրար հետ այլասեռութիւն և վատասեռութիւն բառերը, որոնք գիտութեան մէջ բոլորովին տարբեր դադափարներ են արտապատում։ Այլասեռել նշանակում է կորցնել իւր ցեղական առանձնապատկութիւնները և ստանալ մի ուրիշ ցեղի շտկութիւն։ օրինակի համար գալլը զանազան հանդամանքների ազդեցութեան տակ կարող է ալլասեռել և դառնալ չուճ. և ընդհակառակը, չուճը երկար ժամանակ ապրելով վալլերի դրութեան մէջ, մի քանի սերնդից չհող կարող է փոխել և դառնալ գալլ։ այդ կը լինի ալլասեռութիւն (перерождение)։ Ալլասեռութիւնը կարող է կատարել ինչպէս ղէպի լաւը այնպէս և ղէպի վատը։ Վատասեռութիւնը ցոյց է տալիս տեղական շտկութիւնների վատթարանալը, արատաւորելը։ Սրբ մի կինդանի կամ մի մարդ սերնդից սերունդ ժառանգաբար սկսում է թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս թուլանալ և պակասաւորել՝ այդ նշանակում է, որ նա վատասեռում է (вырождение), վատասեռութիւնը միշտ վերջանում է նորանով, որ վերջի վերջու սերունդը անընդունակ է դառնում որդեծնութեան և սպառւում է. սերնդի այդ աստիճանաբար սպառումը կոչւում է սերնատուրն (вымирание)։ Գրականութեան մէջ շատ անգամ կամենալով ցոյց տալ ժամանակակից սերնդի բարոյական ապականութիւնը՝ անուանում են նորան ալլասեռած սերունդ, այդ սխալ է. պէտք է ասել վատասեռած սերունդ, վատասեռած անհատ, վատասեռող հասարակութիւն և այլն։

18, իսկ աղջկայ համար 16 տարի, Անդրկովկասի ժողովրդին թոշա-  
լատրուում է ամուսնանալ 15 և 13 տարեկան հասակներում: Գեր-  
մանիայում պահանջում է տղայի համար 19 տարի, աղջկայ հա-  
մար 15: Աւստրիայում տղայի համար 20, աղջկայ համար 16  
տարի. Ֆրանսիայում տղայի համար 19, իսկ աղջկայ համար 15  
տարի. Ուլանիայում և Յունաստանում տղայի համար 14, իսկ  
աղջկայ համար 12 տարի. իսկ աւելի ևս տաք երկրներում, օրի-  
նակի համար Հնդկաստանում և Աֆրիկայում, թոշլատրուում է  
մինչև անգամ 10—12 տարեկան տղաներին ամուսնանալ 8 տարե-  
կան աղջկերանց հետ: Մեր եկեղեցու օրէնքով թոշլատրուում է  
ամուսնանալ եթէ փեսան է՝ մի՛ պակաս քան զչորեքտասան ամս և  
հարսն զերկոտասանս: Բոլոր այդ հասակները, որոնք սահմանուած  
են հարիւրաւոր տարիներ առաջ, միանգամայն անհամապատասխան  
են զիտուութեան պահանջներին: Բարեբախտաբար համարեա ոչ մի  
սեղ չեն օգտուում օրէնսդրութեան այդ իրաւունքներից և ժողո-  
վուրդը, որ շատ անգամ բիւրոգիական խնդիրներում առաջնորդ-  
ւում է միմիայն իւր բնազդումով, վաղուց արդէն հասկացել է, որ  
օրէնքի որոշած հասակը բաւարար չէ ամուսնութեան և սերնդի  
պահպանութեան համար:

Վաղաժամ ամուսնութիւնը ամենից առաջ վնասակար ազդե-  
ցութիւն է գործում նոյն իսկ ամուսինների առողջութեան վրայ: Անչափահաս ամուսինները աւելի շուտ են թառամում, աւելի թոշ-  
կն լինում և աւելի հեշտ են ենթարկուում զանազան հիւանդու-  
թիւնների: Վիճակագրական տեղեկութիւնները ապացուցանում են,  
որ 15—19 տարեկան հասակում մարդու գնացած կանանց մէջ  
մեռնողների թիւը երկու անգամ աւելի է քան թէ նոյն  
հասակի օրիորդների մէջ: Բժիշկ Բերտիլիոնի վիճակագրութիւնը  
Ֆրանսիայի կանանց վերաբերութեամբ ցոյց է տալիս, որ այն ժա-  
մանակ, երբ 20 տարեկանից չեսոյ մարդու գնացած կանայք տալիս  
են միայն 7% մահ, այդ հասակից առաջ ամուսնացողների մահը  
հասնում է մինչև 50%: Միւս կողմից գիտութիւնը ապացուցա-  
նում է, որ օրէնքի թոշլատրած հասակում օրիորդները դեռ ևս  
Ֆիզիկապէս բոլորովին անպատրաստ են այն ծանրութիւնների հա-  
մար, որոնք կապուած են չղութեան, որդեծնութեան և արիւնուու-

Թեան հետ: Այդ բոլորի համար պահանջուում է որոշ չափի Ֆիզիկական (մարմնի) ոյժ, կազմաձքի ամրութիւն և ծննդական գործարանների յայտնի զարգացում, որոնք չեն կարող գոյութիւն ունենալ 12—14 տարեկան հասակում: Եթէ մինչև անգամ թոյլ տանք, որ հարիւրաւոր տարիներ առաջ մարդու Ֆիզիկական զարգացումը աւելի վաղ էր կատարւում, այժմ, այնուամենայնիւ երբ կեանքի պայմանները խստացել են, երբ ժամանակակից կուլտուրան նշանաւոր կերպով յետաձգել է Ֆիզիկական զարգացման ժամանակամիջոցը, վերոյիշեալ օրէնսդրութիւնները այլ ևս կորցնում են իրենց գոյութեան իրաւունքը: Բացի Ֆիզիկական զարգացումից, ժամանակակից կեանքը պահանջում է նաև որոշ աստիճանի մտաւոր զարգացում, առանց որի չի կարող խօսք լինել ընտանեկան երջանկութեան մասին: Իսկ այդ զարգացումը նոյնպէս պահանջում է տարիներ, որոնց թիւը աւելի է քան այն հասակը, որ եկեղեցին և պետութիւնը թոյլատրում է ամուսնութեան համար:

Անչափահաս ամուսնութիւնը փնասակար է նաև տղամարդկանց առողջութեան համար: Ֆրանսիայում 10 տարեայ ընթացքում կատարած նկատողութիւնից երևում է, որ 15—21 տարեկան հասակում ամուսնացած հազար տղամարդից մեռնողների թիւը հասնում է 29 հոգու, մինչդեռ նոյն հասակի ամուսնիներից մեռնում են հազարից միայն 6 հոգի. մի ուրիշ ֆրանսիացի գիտնական ապացուցանում է, որ 16—20 տարեկան հասակում ամուսնացածները ութ անգամ աւելի մահ են տալիս, քան թէ նոյն հասակի ամուսնիները: Ընդհակառակը 21—25 տարեկան հասակում ամուսնացածների մէջ մեռնողների թիւը աւելի նւազ է, քան ամուսնիների մէջ. սկսած այդ հասակից ամուսնացածները աւելի քիչ են հիւանդանում և աւելի քիչ են մեռնում քան չամուսնացածները: Նոյնը ապացուցանում են նաև ուրիշ երկրներում կատարած վիճակագրական տեղեկութիւնները: Այդ տեղեկութիւններից պարզ երևում է, որ անչափահաս ամուսնիները մեռնում են նոյն չափով, ինչ չափով և ծերունիները:

Անչափահաս ամուսնիները մեռնում են գլխաւորապէս կազմաւածքի ընդհանուր թուլութիւնից, որ անընդունակ է դարձնում նրանց դիմադրելու հիւանդութիւններին և մահւան. իսկ այդ թու-

լուծիւնը հետեանք է վաղաժամ սեռական շարաքերուծիւնների։ Ինչքան աւելի շուտ է սկսուում մարդու սեռական կեանքը, այնքան աւելի վաղ է սկսուում նաև կազմաձևաբեր թառամումը. և թառամումը տեղի է ունենում ոչ միայն Ֆիզիկական, այլ և մտաւորական կարողութիւնների կողմից։ Դեռ ևս հին ժամանակներում յայտնի յոյն բժիշկ Արեթէոսը նկատել էր, որ «երիտասարդները, վաղաժամ սեռական շարաքերուծիւնների շնորհիւ, ստանում են ծերի կերպարանք, դեղնում են, դառնում են քնատ, ծոյլ, դանդաղկոտ, թուլամիտ և մինչև անգամ ապուշ։ Նրանց մէջքը ծրոււում է և թուլացած ոտները դժարութեամբ են կրում իրենց վրայ մարմնի ծանրութիւնը։ Անզլիացի յայտնի փիլիսոփայ Բէկոնը ասում է. վաղահաս սեռական շարաքերուծիւնը, երիտասարդ հասակում, դաւադրութիւն է ծերութեան հասակի դէմ։ Առաւօտուայ զարձուծիւնները շատ թանգ են նստում մեզ երեկոյեան պահին»։

Անժամանակ ամուսնութեան վնասակար ազդեցութիւնը բացի ամուսիններից տարածւում է նաև նրանց սերնդի վրայ։ Ամենից առաջ այդ ազդեցութիւնը երևում է նրանց ծննդական կարողութեան մէջ։ Անչափահաս ամուսինները մեծ մասամբ կամ անընդունակ են լինում յղութեան և կամ շատ յաճախ փոժում են։ Նրանց սեռական անդամները դեռ ևս հասած չլինելով կատարեալ զարգացման, շնորհիւ անժամանակ սեռական շարաքերուծեան, ենթարկւում են զանազան հիւանդութիւնների, որոնք պատճառ են լինում ժամանակաւոր և կամ մշտնջենական ամլութեան։ Բացի սրանից, նրանց կազմաձևաբեր, ինքը դեռ ևս կարօտ լինելով զարգացման, չի կարող աւելորդ հիւթ մատակարարել նոր էակ կազմակերպելու համար։ Եւ եթէ այդ տեսակ ամուսնութիւններից ծնւում են զաւակներ, այդ զաւակները լինում են մեծ մասամբ թոյլ, փոքրահասակ և հիւանդոտ։ Անչափահաս ամուսինների սերունդը շատ աւելի ենթակայ է զանազան հիւանդութիւնների և մահւան քան թէ այն ծնողներինը, որոնք արդէն գտնւում են Ֆիզիկական կատարեալ զարգացման աստիճանի վրայ։ Այս է պատճառը, որ միևնոյն ծնողների զաւակները շատ անգամ տարբերւում են մէկմէկուց իրենց թէ ֆիզիկական և թէ մտաւոր կարողութիւններով։ Անդրանիկ զաւակները, որոնց յղութիւնը տեղի է ունեցել ծնողների անչափահաս

հասակում, մեծ մասամբ լինում են թոշկ, հիւանդոտ և շատ անգամ մեռնում են մանուկ հասակում: մինչդեռ միևնոյն ծնողների չեռագայ զաւակները, որոնց չղութիւնը կատարել է ամուսինների չափահաս հասակում, լինում են աւելի առողջ, աւելի զւարթ և աւելի ընդունակ զոյութեան կուր համար:

Ունդարացի գիտնական Կերոշի վիճակագրութիւնից երևում է, որ 20 տարեկանից պակաս հասակ ունեցող մայրերի զաւակները տալիս են 22, 1<sup>0</sup>/<sub>0</sub> մահ, մինչդեռ 20-ից մինչև 30 տարեկաններինը տալիս են միմիայն 12,85<sup>0</sup>/<sub>0</sub>, Բացի սրանից, առաջինների զաւակները թոքախտից մեռնում են երկու անգամ աւելի, իսկ կազմուածքի ընդհանուր թուլութիւնից երեք անգամ աւելի, քան թէ չափահաս մայրերի զաւակները:

Այդ բանը աւելի պարզ նկատելի է կենդանիների և բոյսերի մէջ: Անասնապահութեամբ պարապողներին լաւ չայտնի է, որ անչափահաս անասունների ձագերը լինում են աւելի թոշկ և աւելի վտիտ. այդ պատճառով փորձառու զիւղատնտեսները կովերի, ոչխարների, ձիերի և ուրիշ ընտանի կենդանիների անդրանիկ ձագերին երբէք չեն գործածում իրենց անասունների թիւը բազմացնելու համար. այդ անդրանիկները լաւ սերունդ առաջացնելու համար անհամապատասխան են զիւղատնտեսութեան պահանջներին: Յայտնի է նոյնպէս, որ մատղաշ հաւերի ձուն համարեա երկու անգամ աւելի փոքր է լինում, քան թէ չափահաս հուլինը:

Նոյնն է նաև բուսական թաղաւորութեան մէջ: Այն բոյսերը, որոնք հէնց առաջին ամառը ծաղկում և պտուղ են բերում, սովորաբար նոյն տարին էլ չորանում են. ընդհակառակը այն ծառերը և թուփերը, որոնք սկսում են ծաղկել և պտղաբերել միայն մի որոշ հասակի հասնելուց յետոյ, շատ աւելի երկար են ապրում: Առհասարակ շուտ պտղաբերող բոյսերը չեն աճում, չեն զարգանում և աւելի վաղ են թաւամում ու չորանում:

Գ.

Ուշ կամ տարածամ ամուսնութիւնը նոյնպէս վատ է ազդում թէ ամուսնացողների և թէ սրանցից առաջացած սերնդի վրայ: Ինչպէս որ ծեր կենդանիները և կամ հին ծառերը չեն կա-

րող ուժեղ ձագեր և խոշոր պտուղներ տալ, այնպէս և ծեր ամուսինները անընդունակ են առողջ և զօրաւոր սերունդ առաջացնել: Այդ տեսակ ամուսնութիւնները մեծ մասամբ կամ բոլորովին անզաւակ են մնում և կամ նրանցից ծնւում են թոյլ, վտիտ և հիւանդոտ զաւակներ: Այս է պատճառը, որ միւսնոյն ծնողներից առաջին զաւակները, որոնք ծնւած են նրանց ֆիզիկական զարգացման կատարեալ շրջանում, սովորաբար աւելի առողջ և աւելի զւարթ են լինում քան թէ ծնողների ծերութեան հասակում ծնւածները: Ուշ հասակում ծնւած երեխաները ենթակաջ են լինում անզլիական հիւանդութեան (ոսկորների ծռութիւն), գեղձախտի (ЗОЛОТЫХА), թոքախտի և շատ դանդաղ են զարգանում թէ ֆիզիկապէս և թէ մտաւորապէս: ԸՄեր ծնողների զաւակները, ասում է բժիշկ Լէւին, զուրկ են լինում իրենց հասակի թարմութիւնից և կայտառութիւնից և շատ յաճախ մեռնում են թոքախտից, թէև նրանց ծնողները ենթակաջ չեն այդ հիւանդութեան: Եւ եթէ այդ տեսակ զաւակները կենդանի են մնում, այսու ամենայնիւ, նրանց ֆիզիկական զարգացումը շատ դանդաղ է լինում և նրանք ենթարկւում են զանազան հիւանդութիւններին:

Բացի սրանից ամուսնական կեանքը շատ վատ է ներգործում տարաժամ ամուսնացողների առողջութեան վրայ: Հասակն անցկացրած տղամարդը առանց այն էլ ենթակաջ է լինում զանազան ֆիզիկական խանդարմունքների, որոնք մասամբ հետեւանք են նախկին ամուրի կեանքի, մասամբ էլ նոյն իսկ ծերութեան հասակի: Հասակն անցկացրած աղջկայ կազմւածքը ենթարկւած է ֆիզիկական այնպիսի փոփոխութիւնների, որ նրանք կամ բոլորովին անընդունակ են լինում ծննդաբերութեան կամ ծննդաբերութիւնը այնքան ծանր և դժւար է լինում, որ շատ անգամ նրանք զոհ են դառնում այդ բնական գործողութեան: Պրոֆէսոր Գորելիցի հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ ծննդաբերութիւնից մեռնող կանանց 35 տոկոսը միայն մեռնում է երիտասարդ հասակում, իսկ մնացած 65 տոկոսը վերաբերում է այն կանանց, որոնք առաջին անգամ ծննդաբերում են հասակն անցկացնելուց յետոյ: Բացի սրանից, այդ տեսակ կանայք արդէն թառամած և երիտասարդական հիւթերը կորցրած լինելով՝ չեն կարող բաւակա-

նաչափ և թարմ կաթ արտադրել իրենց զաւակներին կերակրելու համար:

Այդպէս ուրեմն, ինչպէս վաղաժամ՝ այնպէս և տարաժամ՝ ամուսնութիւնները միանգամայն անհամապատասխան են առողջապահութեան պահանջներին, որոնց նպատակն է նպաստել թէ ամուսինների և թէ նրանցից առաջացած սերնդի ֆիզիկական և հոգեկան բարգաւաճութեան:

Բացի այդ ամենից, առողջապահութիւնը պահանջում է, որ լինի համաչափութիւն ամուսնացողների հասակի մէջ: Յայտնի է, որ աղջկայ մարմնական զարգացումը աւելի շուտ է կատարւում, քան թէ տղայինը: Այդ պատճառով էլ համարեա բոլոր ազգերի մէջ ընդունւած է, որ փեսան մի քանի տարով մեծ լինի հարսնացուից: Հասարակ ժողովրդի մէջ այդ տարբերութիւնը սովորաբար լինում է 2—3 տարի, իսկ կրթւած դասակարգի մէջ 5—10 տարի: Տիրիոլոգիական ֆակտերը ցոյց են տալիս, որ այդ բնական տարբերութիւնը օգուտ է թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առողջութեան համար: Բայց բոլորովին հակառակ ազդեցութիւն է ստացւում, երբ հասակների տարբերութիւնը այդ չափից վեր է: Պժշոգաբար ոչ եկեղեցին և ոչ պետական օրէնսդրութիւնը չեն սահմանել ոչ մի կանոն ամուսինների հասակի համաչափութեան մասին: Եւ այդ է պատճառը, որ այդ կէտը ամենից աւելի դէպի չարն է գործադրւում: Ճշմարիտ է ժողովրդական աւանդութիւնը միշտ ծաղրով և նախատինքով է վերաբերւում դէպի անհամաչափ ամուսնութիւնները, բայց, շնայելով արան, սակաւաթիւ չեն օրինակները, երբ 50—60 տարեկան տղամարդիկ պսակւում են 18—20 և մինչև անգամ աւելի ևս մատաղ հասակի աղջկերանց հետ: Պատահում են և հակառակ դէպքեր, երբ հասակից անցկացրած կանայք զնում են իրենցից տարիքով փոքր երիտասարդների, բայց այդ տեսակ դէպքերը համեմատաբար աւելի սակաւաթիւ են:

Անհամաչափ ամուսնութիւնը նոյնպէս շատ վատ է ազդում թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առողջութեան վրայ. և այդ ազդեցութիւնը նոյնչափ աւելի սաստիկ է, որչափ մեծ է հասակների տարբերութիւնը: Մատաղահաս օրիորդը գնալով տարիքը անցկացրած տղամարդին, շատ շուտով կորցնում է իւր

Թարմութիւնը, զրկուած է մաշը լինելու բարձր բաւականութիւնից և ենթարկուած է զանազան ջղաշին և ուրիշ հիւանդութիւններին: Սորա պատճառը մասամբ այն է, որ այդպիսի դէպքերում կինը զզւանքով և տհաճութեամբ է անձնատուր լինում զառամած ամուսնու փաղաքշանքներին, որ միայն զրգուած է նորան առանց բեղմնաւորելու և առանց բաւականութիւն տալու նորա բնական ցանկութիւններին, մասամբ էլ—ինչպէս Սանկտորիուան է ասում—այն պատճառով՝ որ մատաղ կեանքը ենթարկուած է Թառամած կեանքի շնչառութեան: Անասում է նոյնպէս և տղամարդի առողջութիւնը, որովհետեւ նա հարկադրուած լինելով բաւականութիւն տալ իւր մատաղ ամուսնի ցանկութեան, ստիպուած է լարել իւր ոչժերը կամ դիմել այնպիսի միջոցների, որոնք արհեստական կերպով բարձրացնում են նորա առնական կարողութիւնը: Այժերի այդ անսովոր լարումը և այդ արհեստական միջոցները, ի հարկէ, չեն կարող առանց հետեանքի մնալ առանց այն էլ մաշած կազմածքի համար:

Այդ տեսակ ամուսնութիւնները մեծ մասամբ կամ անզուակ են մնում կամ նրանցից ծնւած զաւակները լինում են Թոյլ, հիւանդոտ և սովորաբար մեռնում են մանկական հասակում: Մատաղահաս օրիորդը մարդու զնալով զառամած ծերունուն—ասում է բժիշկ Աէլին—վիրաւորում է բնութեան սրբազան օրէնքը, որովհետեւ նա մի ամբողջ սերնդի շահերը զոհ է բերում մի հատ վաւաշոտ անձնաւորութեան քմահաճոյքին: Այդ տեսակ ամուսնութիւնը մի կատարեալ Ֆիզիոլոգիական սկանդալ է:

Մենք չենք չիշում անհամաչափ ամուսնութեան բարոյական հետեանքների մասին: Եթէ ընտանեկան շարկի սրբութիւնը և ամուսնական հաւատարմութիւնը կազմում են ամուսինների երջանկութեան գլխաւոր պայմաններից մէկը, այն ժամանակ ոչ մի բան այնքան չէ սպառնում այդ երջանկութեան, որչափ անհամաչափ ամուսնութիւնը: Այդ շատ հասկանալի է...

Այն ամենից, ինչ որ ասացինք ամուսնական հասակի վերաբերութեամբ, հետեւում է, որ թէ ամուսնացողների և թէ նրանց զաւակների առողջութիւնը և բարօրութիւնը պահանջում են, որ ամուսնութիւնը տեղի ունենայ միմիայն այն հասակում, երբ ամուս-

Նացողները գտնուում են իրենց մարմնական և հոգեկան զարգացման կատարեալ շրջանում: Գիտութիւնը ցոյց է տալիս, որ այդ շրջանը աղջկայ համար սկսուում է 18—21 տարեկան հասակում, իսկ տղայի համար՝ 20—25 տարեկան հասակում: Այդ տարիների մէջն է, որ թէ աղջկայ և թէ տղայի կազմւածքը հասնում է զարգացման վերջին կէտին, որից յետոյ նրանք այլ ևս դադարում են մեծանալուց: Զարգացման այդ կատարեալ շրջանը տեւում է աղջկայ համար մինչև 35՝ իսկ տղայի համար մինչև 45 տարեկան հասակը: Այդ պատճառով ով ցանկանում է ամուսնանալ ոչ թէ իւր կրքերին բաւականութիւն տալու համար կամ շահասիրական ու կարիքի տառական նպատակներով, այլ առողջ սերունդ ունենալու համար, պէտք է ամուսնանայ այդ որոշած սահմանի մէջ. ոչ առաջ և ոչ յետոյ:

Այդ որոշած սահմանը համապատասխանում է ոչ միայն առողջասրահութեան այլ և ժամանակակից կուլտուրական կեանքի պահանջներին: Կար ժամանակ—և այդ ժամանակը զեռ այժմ էլ բոլորովին անցած չէ—երբ ամուսնութիւնները կատարւում էին անգիտակցաբար, շատ անգամ մինչև իսկ ամուսնացողների ցանկութեան հակառակ, միմիայն նրանց ծնողների կամքով և հաճութեամբ: Քայց այժմ կեանքը պահանջում է, որ ամուսնութիւնը հիմնւած լինի ամուսինների գիտակցական ընտրողութեան վրայ: Այդպիսի ընտրողութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ ամուսնացողները ունին որոշ զարգացում, որոշ ինքնուրոյնութիւն և որոշ աշխարհայեցողութիւն: Առանց այդ պայմանների ամուսնական երջանկութիւնը, զոնէ փոքրիշատէ քաղաքակրթւած հասարակութեան մէջ, չէ կարող հաստատուած լինել ամուսն հիմունքների վրայ: Իսկ այդ ամենի համար, ինչպէս արդէն վերը յիշեցինք, թէ եկեղեցու և թէ պետութեան սահմանած ամուսնական հասակը միանգամայն անբաւարար է 1):

1) Մեր մէջ փոքրահասակ աղջկերանց մարդու տալու սովորութիւնը, բացի կլիմայական և տնտեսական պատճառներից, ունի նաև իւր պատմական պատճառը: Յալոսի է, որ պարսիկների և տաճիկների տիրապետութեան ժամանակ, մանկահասակ և մանաւանդ սիրուն աղջիկ ունենալը

Անցնենք այժմ ամուսնական առողջապահութեան միւս պայ-  
մաններին:

(Շարունակելի)

մի կատարեալ պատուհաս էր ծնողների համար: Այդ տեսակ աղջկերքը սովորաբար զո՛հ էին դառնում չափշտակութեան, գերի էին տարւում հե-  
ռու աշխարհներ կամ զարդարում էին տեղական խաների և փաշաների  
հարէմները: Այդ պատճառով, ծնողները աշխատում էին, ինչքան կարելի է,  
չուտով մարդու տալ իրենց աղջկերանց և աւելիսով ազատել նրանց  
սպառնացող վտանգից: Պատմում են, որ դեռ ևս անցած դարու վերջերին,  
Երևանի խանը կամենալով իւր որդու համար հարեմ պատրաստել, հրա-  
մայել էր հաւաքել Արարատեան նահանգում գտնուող բոլոր կոչս աղջկե-  
րանց, որպէս զի նրանց միջից ընտրի ամենասիրուններին: Ղուկաս կա-  
թողիկոսը, տեղեկանալով խանի այդ մտադրութեան մասին, հրաման ար-  
ձակեց, որ բոլոր աղջկերանց՝ սկսած ութ տարեկան հասակից՝ իսկոյն  
պսակեն: Պատկտոյների թիւը աչնքան մեծ էր, որ եկեղեցիներում տեղ  
չլինելով, թոյնիւրների վրայ էին կատարում սյսակի խորհուրդը: Երբ խանի  
մարդիկը հասան գիւղերը, ոչ մի տեղ ալ ևս ութ տարեկանից վեր աղ-  
ջիկ չկարողացան գտնել:

Ահա այդ տեսակ պայմանների ազդեցութեան տակ՝ են մշակել եկե-  
ղեցական օրէնսդրութիւններից շատերը, որոնք այժմ ինքն ըստ ինքեան  
կորցնում են իրենց նշանակութիւնը, քանի որ այդ պայմանները ալ ևս  
գոյութիւն չունին, քանի որ նրանք վաղուց արդէն անցել են պատմա-  
կան աւանդութիւնների շարքը:

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄՄԲԱՏԵԱՆՅ, Մեսրոպ արքեպիսկոպոս Նախիջևանցի, միաբան Սուրբ Էջմիածնի.—Տնդազիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ այժմ՝ Նոր-Բայազիտ գաւառ: (Ն 1862 թ-ից 1895 թ-ին):—Վաղարշապատ, սպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1895—96. ԺԱ+843 ութածայ: Գինն է 2 ուրլի:

Այս մեծահատոր գրքի բուն աւարկալի մասին խօսելուց՝ առաջ մեզ հարկաւոր է մի քանի բացատրութիւններ տալ: Գրքի մեծութիւնը արդարև արտասովոր է մեր ընթացիկ գրականութեան համար. 843 էրես, և ամեն մի էրեսը գրեթէ ամապրիս էրեսների չափով՝ այդ մասամբ նրանից է, որ գրքին կցւած են էրես ընդարձակ չափերով, որոնցից առաջինը ոչինչ առնչութիւն չունի գրքի նիւթի հետ <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Մատթէոս կաթ-սի Տփիսիսից վերադարձն չերևան և չէջմիածին 1853 ին. մի քաղաւթ Մտեփանոս կալ. Օրբելեանից «վասն ինն դասուց եկեղեցւոյ՝ թէ հէք են և որպէս վարեն». մի ընդարձակ չափով Արարատ ամապրի 1870 թ-ից, խորագրով՝ «Նկեղեցական դասակարգութեան բարձրագոյն աստիճանները». 1836 թ-նի պրոփէնիկի չափերը կաթողիկոսի իրաւունք-

երկրորդ չափերով մերաբերում է Նոր-Բայազէղի գաւառում հեղինակի գտած 5 բեկտագրերին և բաղկացած է նոցա մասին պ. Նիկոլակու կրած չափերի թարգմանութիւնից: Երրորդ չափերով բովանդակում է պարսից չափերի տւած վաւերագրերը Մագրեցի (որ ապա Ղարաբաղի) Մելիք-Շահնաւարի տոհմի կալածանքի մասին նոյն գաւառում:

Այդ էրես ընդարձակ չափերովները զուրա գալով գրքից, վերջինիս բաժին մնում է 646 էրես, որ դեռ

ների մասին. 1883 թ-ին բարձրագոյն հաստատուած կանոնները կաթողիկոսի ընտրութեան մասին. ներկայ Մկրտիչ I կաթողիկոսի մուտքը էջմիածին և սուրբ օմման հանդիսակատարութեան մասին քաղաւթներ Մեսրոպ արքեպ. Տէր-Մովսէսեանի գրքից:

միաջնակ բաւական կը լինէին զըր քին շատ պատկառելի մեծութիւն տալու:

Գրքի խորագիրը դեռ կատարելապէս չի պարզում նորա ամբողջ բովանդակութիւնը. այս գիրքը մի միաջն տեղագրութիւն չէ. հեղինակը այն շարադրել է 1862<sup>ս</sup> և 1863 թթ. ընթացքում, երբ նա կարգած է եղել Նոր-Քալազէզի հոգևորական վիճակի գործակալ. իւր շրջագալութեան միջոցին նա՝ իւր պաշտօնի համաձայն, պիտի տեղեկանար նաև հոգևորականների դրութեանը ու ժողովրդի հոգևոր կրթութեան գործին. ամեն տեղ, ուր այցելութեան է գնացած եղել, նա խօսակցութիւն է ունեցել նաև այդ ճիւղերի մասին, և ինքը խրատներ ու քարոզներ է կարդացել, օրհնութիւններ տւել այս ու այն անձին կամ հասարակութեանը. և հեղինակը—այն ժամանակ դեռ սոսկ վարդապետ—այդ ամենը զեանդել է իւր գրքում, կից իւր տեղագրական և այլ հետազոտութիւնների նկարագրութեանը: Գիրքը լի է խորհրդածութիւններով եկեղեցու, շէն կամ աւերակ վանքերի ու այլ փշատակարանների մասին, և այդ ամենը ըստերևութիւն գրած է ոչ միայն բանասիրական գրականութիւնը հարստացնելու, այլ և ժողովուրդ ու քահանաներ կըրթելու համար:

Այս ձևի գրածք մի տեսակ անախրոնիզմ է թւում ներկայ ժամանակիս համար. բայց եթէ գիրքը լոյս է տեսել 1896 թ-ին, նա գրած է նդիլ գրքի լոյս տեսնելուց ամբողջ 33 տարի առաջ.

տեղտեղ միայն տեղեկութիւնները լրացրած են լետագայ տարիների տեղեկութիւններով, որոնք զըրւած են կամ ծանօթութիւնների և կամ նույն իսկ բնագրի մէջ:

Այդ հանգամանքը շատ բան է պարզում հեղինակի օգտին, որը այդքան տարիներ ուշացրել է գրքի լոյս տեսնելը սոսկ այն պատճառով, որ նա կամեցել է իւր գրքի մէջ զեանդել իւր գտած բնեւագրերի թարգմանութիւնը. վերջինս կատարած լինելով միայն մի քանի տարի առաջ (Նիկողոսկու ձեռքով), ամբողջ գիրքն էլ տպագրութեան է արւել միայն 1895 թ-ին և լոյս տեսել միայն այս 1896 թ-ին, չնայած որ Գեղարքունիքի տեղագրութիւնը ինքն ըստ ինքեան ոչինչ չէր կորցնիլ առանց դորան. չէ որ բնեւագրերի բացատրութիւնը միայն չաւելւածի մէջ է գրած, իբրև գրքից անկախ մի բան, կամ իբրև «գարդ», որպէս ինքը հեղինակն է ասում: Այդ «գարդի» համար մի գրքի տպագրութիւն 30 կամ աւելի տարի ուշացնել—յա արդարև տարօրինակ է թւում:

Գիրքը, չնայած իւր թերութիւններին, կարգացում է ոչ միայն առանց ձանձրութի, այլ և հետաքրքրութեամբ. այդ մասամբ նրանից է, որ մենք գործ ունինք թէև անարւեստ գրողի հետ, բայց որը սակաւն սրտանց սիրում է իւր հետադոտած առարկան և իւր գիտեցածն ու չգիտեցածը արտապատում է մէջը գնելով պարզ մարդու զգացմունք և խորին համոզմունք: Գրած լինելով աւելի քան 30 տարի առաջ հեղի-

Նակի անձնական մտքերն ու խորհրդածութիւններն բնորոշում են 50-ական և 60-ական թւականների չենք ասում չառաջադէմ, բայց անշուշտ բանասէր հաջ հոգեորականին և միմիայն հաշկական հին ու նոր գրականութեամբ սնած, բայց և առողջ դատողութեամբ ու բարի և աննախանձ սրտով օժտւած ժամանակի իսկական հաջ մարդուն, որին օտար չէ նաև զարձախօսութիւնը և հուժմորը: Հեղինակի համար սուրբ է ամեն հաւատ, որ հաշինն է, լինի դա հաւատ դէպի Աստուած, թէ դէպի անապաշտութիւններ. համոզւած նախանձարեղիք է հաջ անւան անցեալում թէ ներկայում, հաջ լեզուին ու կրօնին, Ս. Էջմիածնի աթոռին, հաջ երկրին. փառաւորում է երեւելի կամ իշխանազն հաշբով թէ անցեալում և թէ ներկայում, առաւել նոցանով, որոնք որևէ արձանագիր են թողել կամ որոնք աշխատ դէպի օրուտն են գործում. թուրքի անունը նա չի տալ, առանց «անօրէն» անկանի, բայց և միշտ կցելով իւր մաղթանքը, որ թուրքը հաւատի դաջ և հաշի դրացիութիւնը չարգէ. վանք, մատուռ, աւերակ տեսնելիս անպատճառ պիտի կցէ ընդհանուր խորհրդացութիւններ կրօնի, ազգի, հաշրենիքի մասին և չի չէ ալ նշանաւոր վանքերի, աւերակների անուններ. թէկուզ դա լինի հարիւր երրորդ անգամը. նա չի սիրում կատարեալ տղի տութիւնը և քարոզում է սկզբնական կրթութիւն, կարգին երգեցողութիւն. ատելով ատում է մանաւանդ տգէտ ու անշնորհ քահանային, որը ոչ մի բանից անդեկութիւն չունի, մանա-

ւանդ հին ձեռագրերի ու արձանագրութիւնների չարգը չգիտէ, և կամ որը չգիտէ ժողովրդի հետեօյա գնալ. նա սիրում է հիւրասիրել և օրհնաբանութիւն կարգալ Աստուածանից տւած ամեն բարիքի համար. նա իւր աշքը չի փակում և գիտէ զմալել և փառաւորել զաշտերի, լեռների, անտառների, ծովի, տեսարանների, բայց ամենից առաջ, իբր հետախոյզ, նա սիրահար է հնութիւնների և արձանագրութիւնների:

Այս մեծահատոր գրքի ամենագլխաւոր և կարելի է ասել միակ անջնջելի արժանաւորութիւնը կագմում է վանքերի, աւերակների, տապանաքարերի, խաչքարերի վրայ գտնւած բագմութիւ արձանագրութիւնների արտագրութիւնը: Ճիշդ է: Մերոպ արքեպ. Մբատեանց առաջինը չէ, որ մեղ ծանօթացնում է Գեղարքունի գաւառի հնութիւնների հետ. Յովհաննէս եպ. Շահխաթունեանց (Երևանի առաջնորդ 1835 թւականին, որի գիրքը լուս տեսաւ 1842 թ ին) և Սարգիս արքեպ. Հասան-Ջալալեանց, նոյն տեսակ դեր են կատարել ալդ երկրի նկատմամբ ներկազ դարում, չհաշած չատկապէս Սևանայ վանքի մասին գրած անձերին, գլխաւորապէս Ջաքարիա եպ. Գուլասպեաց 1825-ին, Մանուէլ վարդ. Գիւմուշխանցի 1830-ին. բայց Մերոպ արքեպ. Սմբատեանց ոչ միայն ստուգել է չաշտնի եղածները և շատ անգամ նաև ուղղել իւր նախորդների սխալները, ալ և ընդարձակել է իւր հետախուզութիւնը, չաշտնի կացուցանելով անչաշտ մնա-

ցած արձանագրութիւնները: Մեր մօտաւորական հաշուով ներկայ գրքի մէջ առաջ են բերւած չուրջ 350 մեծ կամ փոքր արձանագրութիւններ, արտագրւած, որպէս երևում է, ամենամեծ բարեխղճութեամբ, մեծ ճշգրտութեամբ: Արձանագրութիւնները գրքի մէջ առանձին բաժին չեն կազմում, այլ ցրւած են ամբողջ գրքում և առաջ են բերւած իբր մասն իւր ճամբորդութեան նկարագրութեանը, այլ նիւթերի հետ խառն: Արձանագրութիւնների մէջ պատահում են 9-րդ դարից, մեծ քանակութեամբ 13 և 14-րդ դարերից, նոյնպէս և աւելի նոր և նորագոյն ժամանակներից: Արձանագրութիւնների մէջ են նաև բեռնադրերը, որոնց գիւտի հետ կապւած է ներդրակի անունը. դոքա են՝ Էլառ (Էլլար) գիւղում գտածը 1862 թ., Ադամխան գիւղինը, գտնւած նոյն 1862 թ., Ալիչալու գիւղինը, գտնւած 1863 թ., Օրդակու գիւղինը, գտնւած 1883 թ.-ին. և Զաղալու գիւղինը, գտնւած նոյն 1883 թ.ականին:

Հայկական արձանագրութիւնները պարունակում են հաւոց պատմութեան կամ անցիակ կենցաղի համար նիւթեր կամ ցուցմունքներ. սա արդէն վճռւած խնդիր պէտք է համարել, որ հարկաւոր է ճշտութեամբ արտագրել և ապագրել բոլոր արձանագրութիւնները առանց խտրութեան, թղթնեղով պատմադէտներին և այլ հետազօտողներին ջոկել կարեւորը անկարեւորից. և, մեր կարծիքով, անխտրութիւնը պէտք է կանոն ընդունել մինչև մեր դարի միջերջը գրապօնների համար, որ ժամանակա-

նից թէ պատմութիւնը և թէ հայերի կենցաղն ու ներքին կեանքը ուսումնասիրելու համար գրականութիւնը կամ մամուլը առհասարակ գրեթէ աւելորդ է դարձնում նորագոյն արձանագրութիւններին ղիմելը:

Առաջ բերած մի քանի հարիւր արձանագրութիւններից նկատենք մի երկու կարեւորագոյնները. ընդարձակ արձանագիր Ալիչալու գիւղի (Սեանայ ծովի հարաւային ափի մօտ) ձորամիջին գտնւող վանէվանի կոչւած վանքի կաթողիկէի վրայ, 903 թ.-ից (Տեղագրութիւն էջ 563), որից երևում է, թէ նորա կառուցանողն է Հաւոց սպարապետ տէրանց տէր Շապուհ Բագրատունին, որդի Հաւոց թագաւոր Աշոտի, օրօք Շապուհի եղբայր Հաւոց թագաւոր Սմբատի, որոնց քուրը Սիւնեաց տիկին Մարիամն էր. չիշւած են չորս գիւղերը, որ Շապուհը ընծայում է վանքին և դրամական տուրքերը մի քանի այլ գիւղերից: Այդ արձանագրութիւնը առաջ են բերած նաև Շահխաթունեանց եպ., Զալալեան արքեպ. Ղուկաս վարդ. Ինճիճեան, Հ. Ալիշան, որպէս չիշել է դարեր առաջ նաև Ստեփանոս եպ. Օրբելեան (1290 թ.-ին). սակայն Մեսրոպ արքեպ. Սմբատեան, իսկականը արտագրելով, ուղղում է տարբեր ընթերցւածները:—Տարբեր թւականներ են ցուց տւել պատմագիրները ու վերուիշխալ տեղագրողները նաև մի ժամանակ հռչակաւոր Մարտեանց վանքի հիմնարկութեան թւի մասին (այդ վանքը այժմ Ղզլվանք ևս կոչւած, վերին-Ալուչալուի մօտերքն է), Բանից երևում է, որ վանքը չինւած է, ըստ

արձանագրութեան, Սրենեաց Սուրբան իշխանից փրկչական 851 թւականին (Նորոգւած վանքի առաջնորդ Խաչատուր վարդապետից 1655 թ., վերստին նորոգւած Գեղամի իշխան Աբովի որդի Մելիք բէկից. այն Աբովի որի սերունդն են Ղարաբաղի Մէլիք-Շահնաղարեանները): Այդ թւականը չի համապատասխանում պատմագիրների աւանդածին, որի համաձայն վանքի հիմնողը Հարանց Հայր կոչւած Սողոմոն վանականն է եղած փրկչական 701 թւականին: Գա այն վանքն է, որ այնքան հռչակեց ու զօրացաւ, որ մի ժամանակ իշխում էր Գեղարքունու վրայ՝ անկախ Սիւնեաց մետրոպոլիտներից:

Տարբերութիւններ գտնելով իւր տեսածի և Շահխաթունեանցի, Ջալալիանցի կամ ուրիշների արտագրածի մէջ, Մեսրոպ արքեպ. Մմբատեանց իւր գրքի մի քանի տեղերում ծագրում է նոցա, այսպիսի ոճերով՝ «հարկ չեմ համարում ասել թէ այս ոք գրողը լինելով է զրել, և այն ոքը գիտակով հեռուից է նայել, և սղն» (էջ 514) և կամ. «Յիրաւի գարմանակի քան. եթէ մի արձանագրի մէջ այսքան տարբերութիւն կալ անւանց և հաշուց, ինչպէս լիջեալ համեմատութիւնը ցոյց է տալի Շապուհեան արձանագրութեան վերաբերեալ, հապա միւս արձանագրութեանց մէջ որքան և որպիսի տարբերութիւնք կը լինին: Եւ այս պարզ ու բացառաւ տարբերութիւնը անշուշտ չառաջացած կը լինի գրողաց անձամբ արձանագրիցը չտեսնելէն: Բայց միթէ Օրբելեանը և Շահխաթունեանցը ևս անձամբ չեն տեսել արձանա-

գրիցը:—Ինչ և իցէ որքան կարելի էր, աշխատեցի ճշդութեամբ արտագրել արձանագրիցը:—Ով գիտէ, գուցէ իմ դրածներն մէջ ևս պատահին սխալներ. քանզի մարդ ենք սխալական» (էջ 567):

Սակայն անցնենք գրքի մի այլ կողմին. դա Գեղարքունի գաւառի գիւղերի նկարագիրն է: Այդ կողմից այս գիրքը ունի շատ մեծ պակասութիւններ կամ եթէ ուղէք՝ անչարմարութիւններ: Հէնց սկսենք վերնագրից. «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ ալժմ Նոր-Բալաղիս գաւառ»։ Մարդ կը կարծի թէ հին անունով Գեղարքունի կոչւած գաւառը իսկ և իսկ ալժմեան Նոր-Բալաղիս գաւառն է: Եւ դա սխալ է: Այդ զետոյ էլ կը պարզուի Եւ ապա. կարդում էք գիրքը և տեսնում, որ Գեղարքունի գաւառի հետ հետազօտութեան ևս առնւած նաև կոտալից գաւառ կամ կոտալք, Բերդագաւառ կամ (ըստ հեղինակի) Մազազ գաւառ, Ծաղկածոր գաւառ, Սոթ գաւառ. ամենը գաւառ, գաւառ, գաւառ... Չէ որ այդ խօսքը միայն շփոթութիւն է չառաջացնում ընթերցողի մէջ, որը դորանով ոչ Գեղարքունին է պարզ հասկանում և ոչ Նոր-Բալաղից գաւառը: Գաւառի բաժանմունքների և սահմանների մասին դրքի մէջ այնքան տեղ է խօսւում, իրարից շատ թէ քիչ տարբեր ձևով, որ ընթերցողը միայն մոլորւում է. մի նմուշ անս երես 31 ից, ուր սուած է.

«Գեղարքունին բազկանում էր չառաջ չորս գաւառիկներով, որք են»

1. Ծմակ գաւառ 18 գիւղերով, որ  
ալժմ է Նոր Պալազեա քաղաքը և  
չրջակալքը. 2. Կոթաքար և Կորդա-  
բակ 30 գիւղերով, որ ալժմ է Աղի-  
եամանալ չրջագալքը. 3. Սողք և  
Սողից գաւառ 47 գիւղերով, որ ալ-  
ժմ է Զօթալ կողմերն. և 4. Արեղու-  
նի գաւառ 17 գիւղերով, որ ալժմ է  
Գիւնէիք — ծովի հարաւային եղերքը.  
Իսկ ալժմ ալք բոլորը կազմում են  
Նոր-Պալազիտու գաւառն 31 գիւղե-  
րով, որոց հետ միացած է և Մաղկա-  
ձորու գաւառը 24 գիւղերով. (ուրեմն  
ընդամենը Նոր-Բալազիտի գաւա-  
ռում 55 գիւղ է?). ըստ ալժմ փոխա-  
նակ նախնեաց 123 գիւղերի (որ  
տեղից կազմւեց 123 թիւը ?!) մնում  
են 31 Հալաքնակ գիւղեր. 10 մալա  
կանի գիւղ, և 69 սլակաքնակ գիւ-  
ղեր. (ուրեմն  $31 + 10 + 69 = 110$   
գիւղ?). ըստ ալժմ համեմատելու է  
և բնակչաց թիւը ներկայինը անցե-  
լու հետ. բայց ալժմ Աստուծոյ շնոր-  
հիւ աճելու վրալ է ժողովուրդը ամեն  
տեղոյ:

Ալք ձևի աշխարհագրութիւն կա-  
րելի է գրել ընթերցողին շիտթեց-  
նելու համար միայն և ոչ նորան բան  
պարզելու. Կարծես թէ կալ ինչ որ  
Մաղկաձորի (Կարաչիչագի) գաւառ,  
24 գիւղերով, որը միացրած լինի  
Նոր-Բալազէի գաւառին 31 գիւղե-  
րով. չետոյ Նոր-Բալազէի գաւառը  
իբր թէ 110 գիւղ ունի, որոնցից 31  
հալաքնակի. Ալք բոլորը չառաջացել  
է գրել չիմանալուց. ալն, ինչ Կո-  
տալք է անւանւած, ներկայումս Նոր-  
Բալազէի գաւառի (ռուսաց ուեղղ,  
УБЗД) մասը չէ կազմում, ալ Երե-  
ւանի գաւառի. հեղինակն էլ գիտէ

ալք. բայց իւր գրքի մինչև 167-րդ  
երեսը խօսում է ալնայէս, որպէս թէ  
ռուսական-վարչական ալք բաժան-  
մունքը նրան չալանի չլինէր. և անա  
միայն 167-րդ երեսում, մի փոքրիկ  
ծանօթութեան մէջ գրւած է հանե-  
լուկի բանալին, ալս ձևով.

«1670 թին կառավարութիւնը  
Կոտալքը միացրեց Երեւանալ գաւա-  
ռի հետ»:

Բնթերցողին 167 մեծ երես  
երկար զրօնեցնելուց չետոյ՝ ալք  
ծանօթութիւնը շատ ուշ է թուում  
մեղ. թէ և գրանով ամեն ինչ զեւ չի  
պարզում:

Պաշտօնական վերջին վիճակա-  
գրութեամբ 1886 թւականի, Նոր-  
Բալազէի գաւառում հաշւում են  
127 գիւղ, որոնց մէջ մենք հաշւե-  
ցինք հալաքնակ (ըստ կամ խառն).  
է 6 գիւղ: Այս պաշտօնական տեղե-  
կութիւնը գուք չէք գտնիլ Մետրոպ  
արքեպ. Սմբատեանի ալք անալիս  
գրքում Նոր Բալազէի գաւառի մա-  
սին! Եւ չնայած որ պաշտօնական  
Сводъ статистическихъ данныхъ о  
населеніи Закавказскаго края, из-  
влеченныхъ изъ посемейныхъ спис-  
ковъ 1886 года (ալսինքն՝ Համա-  
գումար վիճակագրական նիւթերի  
Անդրկովկասեան երկրի, քաղւած  
տների ցուցակներից 1886 թ., հրա-  
տարակութիւն Անդրկովկ. ստատիս-  
տիկական կոմիտէի) հրատարակւած  
1893 թ., կարելի է գտնել նա-  
հանգական և գաւառական վարչու-  
թիւնների մէջ, — մեր հալ տեղագրող-  
ները, ի թիւս որոց և Մետրոպ արք-  
եպիսկ. Սմբատեանց, ըստ երևու-  
թիւն, բնաւ տեղեակ չեն ալք կարե-

տր տեղեկացուցի մասին. և ոչ մի տեղ այդ լիակատար տեղեկացուցը չի շատակած չէ Գեղարքունու Տեղադրութեան մէջ: Եւ սակաւն, գրքի գերապատիւ հեղինակը աշխատելէ ամեն գիւղի մասին խօսելիս՝ վիճակագրական տեղեկութիւններ տալ հալ բնակիչների թւի մասին. ճիշդ է, Տեղագրութիւնը գրած է 1862 և 63 թւականներին, բայց նա աշխատել է նորագոյն ժամանակի թրււերն էլ տալ, օգտւելով գործակալ Ալբերգ վարդապետ Ալբերգեանցի ցուցակներից: Այդ աղբիւրը վատ աղբիւր չէ, քանի որ նա հիմնած պիտի լինի եկեղեցական մատեաններին վրայ. բայց զուգահեռաբար կառավարութեան պաշտօնական թրււերն հազարդելը պարտաւորիչ պիտի լինէր: Եւ երկրորդ, մի վատ սովորութիւն կալ հալ տեղագրողների մէջ առհասարակ, որ նոքա մի գիւղի բնակիչների մասին խօսելիս՝ հազարգում են միայն հայերի թիւը, արհամարելով տեղեկացնել թուրքերի և առհասարակ այլ ազգերի թւի մասին, որով ընթերցողները ծուռ գաղափար են ստանում իրականութեան վրայ. և այդ վատ սովորութեան հետեւում են նոյն իսկ լրագրական թրղթակիցները թէ մեզնում և թէ Տաճկաստանում: Այդ թւերը գոնէ մօտաւորական ճշգրտեամբ իմանալու համար բաւական է գիմել վերջ չի չած պաշտօնական աղբիւրին:

Գրքի էջ 87—89 գրած է Գեղարքունու, Ծաղկաձորի և Կոտայքի 73 հալ գիւղերի ցուցակը՝ ցուցմունքով թէ որքան տուն կալին իւրաքանչիւրում 1873 թ.ին Երևանալ

թեմի առաջնորդի ցուցակով, ապա 1860 թւականի պաշտօնական վիճակագրով և 1870 թւականի Երևանալ թեմի առաջնորդի (որ ինքը Մեսրոպ այն ժամանակ վարդապետ Սմբատեանցն էր) ցուցակներով. այդ ցուցակներից երեսմ է, որ մօտ 40 տարիների ընթացքում Գեղարքունու 18 գիւղերը դառել են 31 գիւղ և (Նոր Բալաղէղ քաղաքն էլ հետը) 1.989 տունը դառել են 4.662 տուն, ալսինքն աւելի քան կրկնապատուել է. Ծաղկաձորի 8 գիւղերը դառել են 23 գիւղ և 330 տունը դառել են 2.589 տուն. Կոտայքի (Ղրխբուլաղ) 15 հալ գիւղերը դառել են 19 գիւղ և 340 տունը դառել են 1118 տուն: Աւելի մօտ ծանօթութիւն այդ արտասովոր մեծ աճելութեան հանգամանքների մասին հեղինակի գրքի մէջ չենք գտնում, որի համար ցաւում ենք:

Այցելած բոլոր 73 հալ գիւղերից հնուց բնիկ ժողովուրդ ունեցող ցուցնն տրւած Քանաքեռ, Զրէժ, Առինջ, Պտղնի, Բջնի և Արզաքան. (տես գրքի էջ 277). սակաւն դոցա վրայ պէտք էր աւելցնել Կոտայքում՝ Էլառ գիւղի ամենամեծ մասը, Եղաւան (Բարձարբի) գիւղի բնակիչների մեծագոյն մասը, Ալաղօր գիւղը. Ծաղկաձորում՝ Գոմաձոր գիւղի մեծամասնութիւնը և Ծաղկունք գիւղի փոքրամասնութիւնը. Գեղարքունիքում՝ Երանոս գիւղի փոքրագոյն մասը. այդ մասին գրքի մէջ չէ չիւած. մնացած բոլոր գիւղերի հալ բնակիչները գաղթականներ են Պարսկաստանից և Տաճկաստանից. այդ չիւում է ներկալ

Տեղադրութեան մէջ, թէն Մեսրոպ արքեպ. Սմբատեանց բնիկների և գաղթականների բնակչութիւնը իւր աչցելած բոլոր գիւղերում շատ աւելի ճիշդ և պարզ ներկայացրած կը լինէր, եթէ օգտուած լինէր Շոպէնի չափոնի գրքի էջ 543—544 և 593—599 դրած ցուցակներից, ուր պարզ ցոյց է տրած բոլոր գիւղերի անունների հետ թէ արքան բնիկ տուն և բնակիչ կալին և ուր, որտեղ և որքան գաղթածներ եղան 1828 թ-ից փտոյ Ղրխբուլաղի (Կոտալք), Մաղկաձորի և թէ Նոր-Քալազէղի (Գեօկչալի) մահալներում:

Այդ առիթով մենք չենք կարող մեր մեծ զարմանքը չըպատենել, որ գերապատիւ հեղինակի այս ահագին գրքում հազիւ մի տողի պատահեցինք, ուր միանգամայն անցողակի չիչաւած է Շոպէնի անունը, որից միայն այսքանը պարզեց մեզ համար, որ արքեպ. Սմբատեանց հազիւ միայն լսել է Շոպէնի անունը, բայց որ նորա նշանաւոր Տեղագրութիւնը «Հալիական նահանգի» մասին ոչ կարդացել է և ոչ նորանից օգտուել: Եւ ինչո՞ւ, որովհետև գիրքը ռուսերէն է գրւած, որը օտար է երևում Մեսրոպ արքեպիսկոպոսին: Բաւական պատճառ է այդ սակաւն մի աղքատ կարևոր գրքից չօգտուելու և նոյն իսկ այն չը չիչելու համար. նամանաւանդ որ ցուցակների մէջ անուններ և թւանշաններ կարդալու համար մի առանձին լեզուագիտութիւն էլ չի պահանջուում:

Գրքի մի երրորդ կողմը պատմական տեղեկութիւններն են: Արքեպ.

Սմբատեանց, ինչ պատմական տեղեկութիւններ որ կան՝ առաջ է բերել ամեն անգամ, երբ խօսքը պատմական անցեալ ունեցող տեղի մասին է: Պէտք է ասած որ Գեղարքունին, Մաղկաձորն ու Կոտալք հարուստ են հնութիւններով, և կան վանքեր, չէն կամ աւերակ, գիւղեր և այլն, որոնք անցեալում դեր են կատարած և պատմական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում հայերիս համար: Մաղկաձորումն են Էջմախի վանքերը՝ Գրիգոր Մաղխատրոսից շինած, որը այդ տեղերի իշխանն էր, Ահա՛նայ վանքերը, Գօշ Մխիթարի և Հաղարծնի վանքերը, Բջնու վանքը, Կոտալքումն են Արամուշի վանքը, Գետարգելայ վանքը, Քանաքեռ գիւղը, Գեղարքունիքումն են Մաքենեաց հուշակաւոր վանքը, անհետացած Ազատ քաղաքը, Ալրի վանքը կամ Հալրավանք, հին Գաւառնի գիւղը, ուր այժմ Նոր-Քալազէղ քաղաքն է, անչալտացած Կնիք քաղաք, Կոթ գիւղաքաղաք և այլն և այլն: Առանձին կարևորութիւն են ներկայացնում Բջնի վանքը, որի առաջնորդ կամ վանահայր արքեպիսկոպոսները, 1114 թ. Ահաւ լերան ժողովի վրձնով վճռողական ձայն պիտի ունենային կաթողիկոսական ընտրութեան գործում, ի թիւս չորս վանքերի վանահայրերի: Մաքենեաց վանքը Գեղարքունիքում, որ երբեմն այնքան հզօրացաւ, որ գաւառը իշխում էր անկախ Սիւնեաց մետրոպոլիտներից, ունէր հուշակաւ միաբանութիւն և դպրանոց, որից դուրս են եկել Մողղմոն և Մաչտոց կաթողիկոսները և այլն: Հեղինակը առաջ

է բերում քոլորի համար պատմագրե-  
րում եղած տողերը, Բալց պատմա-  
կան տեղեկութիւնների մէջ հեղի-  
նակը քննադատաբար չի վարեւել,  
այլ եղած նիւթերը ընթերցողի ա-  
ռաջն է գրել. գուցէ բացառութիւն  
կազմում է Մազազ անուանով մի ան-  
որոշ գաւառի մասին ասածները, ուր  
հեղինակը աշխատում է Հ. Ալիշա-  
նից աւելի բաւարար կերպով որո-  
շել այդ հին գաւառի տեղը, որին  
ինքը Քերզազաւառ անուն է տալիս:

Լուրջ գրքին բոլորովին չի սա-  
զում այն հին ու հնացած անպէտք  
ստուգաբանութիւնը, որով նա, հե-  
տեկելով ուրիշներին, անպատճառ կա-  
մենում է աչս կամ աչն չատուկ ա-  
նունը բացադրել. իբր թէ Սեան ա-  
նունը կրճատումն է Սա է Վան ա-  
նունի (էջ 110, էջ 121): Պտղնի  
գիւղի անունը՝ պտղով լի. Արզնի  
գիւղի անունը՝ «Արաչն զննի», ա-  
ւելցնելով թէ «Արաչն լեա սպանման  
Շամիրամայ՝ աստ զննի, ըստ որում  
Շամիրամ անունով լերան մօտ է  
գիւղն» (էջ 224): Եւ հեղինակը  
միամտաբար աւելցնում է զեռ-  
թէ այդ ստուգաբանութիւնը  
իւր սեփականն է. Ալափարս,  
(հնումը Աղբերց գիւղ) = Ալլ աղբերց  
գիւղ (էջ 263): Արամոնս կամ Արա-  
մուս գիւղ, հնումը Արախուզ = Արալի  
գիւղն խուզարկութեան տեղ (էջ 272).  
Սօլակ գիւղի անունը «Թերես մնա-  
ցած լինի Գեղամաչ Յօլակ եղբոր  
անունովն. ըստ որում Սօլակ բառը  
հայերէն նշանակութիւն չունի, և  
ինչ զարմանք թէ՛ Յօլակ Նահապետի  
անունովը լինի հիմնւած գիւղը» (էջ  
234 — 35). և այլն և այլն:

Եւ կամ մի այլ օրինակ հեղինա-  
կի անքննադատ ոգուն. չալտնի է  
նաև այլ հեղինակներից, որպէս և  
ինքը արքեպ. Սմբատեանց քանի-  
քանի տեղ վիշում է, որ Նոր-Բալա-  
զէղի տեղում զեռ. 18-րդ դարում  
կար Գաւառ կամ Գաւառնի անու-  
նով գիւղ. ուրեմն պարզ է, որ եթէ  
ժողովուրդը Նոր-Բալազէղի երկրի  
համար «Գաւառ» անունն է գործա-  
ծել և այժմ էլ չաճախ ասում են,  
այդ մնացած պիտի լինի Գաւառնի  
կամ Գաւառ գիւղի անունից. և չնա-  
չած գորան, հեղինակը իւր գրքի էջ  
29 դրում է այսպէս. «Քանի հարիւր  
տարուց հետէ ժողովուրդը Գեղար-  
քունի գաւառ բառերը չկրկնելու  
համար՝ գործ է ածում միայն Գա-  
ւառ բառը. իսկ Գեղարքունի բառը  
ևս չմոռանալու համար՝ կնքել է մի  
ձկան վերայ, Գեղարքունի ձուկն  
անւանելով ծովի համեղաճաշակ ձրկ-  
ներից մէկը»։ Ինչ միամիտ բացատ-  
րութիւն...

Գրքի մէջ ամենամեծ տեղը տըր-  
ւած է Սեանայ կղզուն և Նոր Բա-  
լազէղին, որոնք միասին կազմում  
են 160 երես, ապա Երևան քաղա-  
քին (21 եր.), թէև Երևանը չի մո-  
նում հետադասած գաւառի սահման-  
ների մէջ. Մաքենեանց վանքին  
(22 եր.), Բջնի գիւղին ու վանքին  
(20 երես), Քանաքեռին (15 երես),  
Ալիշալուին ու Վանէ-Վանից վան-  
քին (16 երես), Վերին և Ներքին  
Աղիամանին (12 եր.) և այլն:

Իրիջը լիքն է բազմատեսակ զի-  
տողութիւններով և տեղեկութիւն-  
ներով երկրի բնութեան, ժողովրդի

դրութեան, կենցաղի և սովորութեան, քահանաների դրութեան, գաւառաբառաբանների մասին և այլն: Նմուշներ են բերւած բառբաններից՝ Նոր-Բալաղէզցոց (էջ 31), գիւղերում բնակւող Պարսկաստանի Մարաղալից գաղթածների բառբանից (էջ 253), Զիբուխուեցոց (էջ 377) և այլն, օգտելով իւր ունեցած խօսակցութիւններից և անեկզոտական ղէպքերից, առհասարակ շատ աշխուժ և կենդանի պատմւած, Հեղինակի մօտիկ ծանօթութիւնը Էջմիածնի, Երևանի, այլ նաև Շամախութեմի և Հին-Նախիջևանի գաւառի հետ առիթներ են տւել այլ և այլ հետաքրքրական ծանօթութիւնների և համեմատութիւնների համար՝ օղի, ջրերի, աւերակների, վանքերի, ժողովրդի, սովորութիւնների, եկեղեցական կարգերի նկատմամբ: Եւ մեր տպաւորութիւնը գրքից, չնայած շարադրական և այլ թերութիւններին, մի փոքր աւելի նպաստաւոր է քան երբ գիրքը ձեռքներս վերցրինք կարդալու: Չնայած գրքի արտասովոր մեծութեանը՝ նա, կրկնում ենք, կարդացում է առանց ձանձրութի և նոչն իսկ հետաքրքրութեամբ: Գրքի լաւ կողմերի համար պատրաստ ենք ներելու հեղինակի սխալները, աւելորդաբանութիւնները և նոչն իսկ մոլար կար

ծիքները զանազան առարկաների մասին, մանաւանդ որ հեղինակը հին սերնդի ներկայացուցիչ է: Բայց չենք կարող խորհուրդ չտալ, որ հեղինակը, իւր միւս աշխատութիւնները տպագրելուց առաջ, աւելի խիստ խմբագրութեան ենթարկէ: Այդ ասելով մենք ի նկատի ունինք հեղինակի ձեռագիր աշխատութիւնների այն ցանկը, որ նա չպատարարել է գրքի ծածկի վրայ, որոնց մէջ աչքի են ընկում երեքը: մէկը՝ Տեղագրութիւն Շամախի թեմի, միւսը՝ Նախիջևանի գաւառի և երրորդը՝ «Տեղագրութիւն նշանաւոր աւանացն՝ Վաղարշապատայ, Օշականայ և Աշտարակայ, և վանիցն սուրբ Գէորգայ Մողնու և Յովաննաւանից և Սաղմոսավանից»: Յուսով ենք որ այդ գրքերն էլ գրւած կը լինին աշխարհաբան, որպէս ներկայ գիրքն է: Նկատենք, որ ցանկալի է աւելի անսխալ կէտադրութեան սխտեմ, քան գրքում դործածւածն է: աչքի է ընկնում նաև որ գրեթէ ոչ մի ուսերէն բառ չկայ գրքում, որ սխալ չլինի տպւած. սխալներ կան նոչն իսկ վրիպակների ցանկում: Գիրքը զարդարւած է մի քանի նկարներով և հեղինակի պատկերով: Գինը (2 ռ.) թանկ չէ:

Ա. Ա.

ՃՈՒՂՈՒՐԵԱՆ, Յարութիւն սարկաւազ.—Մոռացւած աշխարհ. Գ.  
ղիբք. Թիֆլիս. 1896 թ. գինը 40 կոպէկ:

«Մոռացւած աշխարհի» հեղինակը ստեղծագործող գրողներէն է: Ատեղ ծագութիւնը կապուած է աւելի կամ պակաս չափով լաչն ընդհանրացումներ անելու ընդունակութեան հետ: Այդ ընդհանրացումները գիտական ընդհանրացումներ չեն: Ատեղ-ծագործող գրողն ընդունակ է դիտելով ժամանակը և մարդկանց ի մի հաւաքել նրանց էական լատկութիւնները և բանաստեղծական պատկերներով վերարտադրել: Նախելով գրողի գիտողութեան, ենթակաջ շրջանի մեծութեան և էական լատկութիւնները որոշելու և ի մի խմբելու ընդունակութեան, նրա «ստեղծած» քնաւորութիւններն էլ աւելի կամ պակաս ընդհանուր են լինում և կենդանի: Այսպէս են ստեղծում բոլոր տիպերը: Այդ տիպերը իրական կեանքում չկան և գոյութիւն չունեն անպէս, ինչպէս ստեղծել է նրանց ստեղծագործողը, բայց նրանց էական լատկութիւնները պատահում են կամ պատահած պիտի լինին որոշ ժամանակի բոլոր մարդկանց մէջ՝ եթէ տիպը համամարդկային է և որոշ ժամանակի ներկայացուցիչ, մի շրջանի մարդկանց մէջ՝ եթէ նա այդ շրջանի ներկայացուցիչն է, և այլն:

Կան մի այլ տեսակի գրողներ: Սրանք ստեղծագործելու ընդունակութիւն չունեն, կամ քիչ չափով ունեն. բայց դրա տեղ, նրանք ունեն լուսանկարելու ընդունակութիւն, շնորհք: Նրանք լաւ քարտու-

ղարներ են և ամենայն հաւատարմութեամբ արձանագրում են իրանց տեսածը, ուրիշի պատմածը, լսած խօսակցութիւնները, իրանց դիտողութիւնները: Նրանք այդպիսի լուսանկարչական, քարտուղարական միջոցներով են տալիս կեանքի պատկերը: Այդպիսի գրողների գրածներում չկան տիպեր. կան միայն անձնաւորութիւններ, որոնք իրանցով չեն բնորոշում սր և է շրջան, այլ միայն անհատներ են. նրանք չեն բովանդակում իրանց նմանների էական լատկութիւնները: Նկատելու արժանի է, որ այդ տեսակ գրողները առհասարակ այքի առաջ չեն ունենում իրանց գրածներում մէջ բերած անձերի ներքին աշխարհը. հոգեբանական վերլուծութիւն ասած բանը նրանց մէջ քիչ է պատահում. նրանց աւելի հետաքրքրում է գործող անձերի արտաքին շարժումները: «Մոռացւած աշխարհի» հեղինակը այս վերջին տեսակի գրողներից է. նա լուսանկարիչ է: Նա հետաքրքրում է «մոռացւած աշխարհում» ապրող ուժեղի եւ թոյլի մէջ եղած փոխադարձ շարժումները: Նա հաւատարմութեամբ արձանագրում է իր տեսածն ու լրսածն այնպէս, ինչպէս տեսել ու լսել է. և արձանագրելիս նա չի հոգում իր գրածների համաչափութեան, կրկնելու վրա: Նա մեզ քաշում է ու կանգնեցնում գիւղական կեանքի մի տեսարանից միւսի առաջ. ցոյց է

տալիս թէ ինչպէս են ապրում «մոռացած աշխարհի» որդիքը. նրանց վրայ նաչելով, դուք հաւատում էք, որ նրանք բոլորն էլ հէնց այսօր էլ կան ու ապրում են աշտեղ, «մոռացած աշխարհի» որ և է անկիւնում... Սարկաւագ ձուղուրեանի թէ այս և թէ միւս գրքովներում տեղ գտած պատկերներից շատերը չեն կարող բաւականացնել ոչ մի գեղագէտի. նրանք ոչ որոշ ձև ունին, ոչ որոշ ֆարուլա, ոչ չափոնի սկիզբ, ոչ վերջ. նրանք կազմում են իրար հետ կըցւած տեսարանների մի շարք, որոնք սերտ կապ չունեն միմեանց հետ. Բայց այս բոլոր «պայմանական» արժանիքները չունենալու հետ, նրա գրածներն ունեն մի մեծ և զլխաւոր արժանիք. նրանց մէջ կեանքի ճշմարտութիւն կալ. այսինքն հէնց այն՝ ինչ ամենից շատ է հարկաւոր է, հէնց այն՝ ինչ որ վէպիկում, պատկերում, վէպում, մի խօսքով ամեն մի բեղբորիստիքական գրածքում ամենագլխաւորն է և ուշադրութեան արժանին: Թողնելով մի այլ անդամի «Մոռացւած աշխարհի» մասին՝ ընդարձակ խօսելը, մասնաւորենք մեր խօսքը այս նոր, Գ. գրքուկի մասին:

Այս գրքուկը բաղկացած է երեք պատկերից, որոնցից որոշ ֆարուլա, որոշ ձև ունեցող և ամբողջացրած կարելի է համարել «Հովիւ Չատնի սէրը». մնացած երկուսն անբաւարար են այդ կողմից. սակայն մեզ համար այդ երկրորդական հանգամանք է: Գլխաւորը իրական կեանքի տալի է առանց աղաւաղումների և կողմնակի նպատակների ու որոշ տեսակէտների շարմարեցրած: Մի հե-

ղինակ մեր աչքում այնքան անելի գին ունի, որքան նա, առանց կանխակալ դիտաւորութիւնների, տալիս է ներկայ կամ պատմական կեանքի աւելի լալն շրջանի հաւատարիմ պատկերներ: Սարկ. ձուղուրեանը, մի քանի աննշան բացառութեամբ, ընդունակ է տալ այն կեանքի նկարագիրը, որին լաւ ծանօթ է երևում, առանց աղաւաղումների և գունաւորման. ուստի, ամեն մէկը, որ հետաքրքրւում է ժողովուրդով և նրա կեանքով, պիտի շնորհակալ լինի հեղինակից, նրա տւած մի շարք ֆակտերի համար: Գրքուկում տեղ գտած պատկերներից առաջինը՝ «Քահանայի ընտրութիւնը գիւղում» հետաքրքրական տեսարաններից կազմւած մի գրւածք է և շօշափում է մի հարց, որ սրանից երկու տարի առաջ, մի քանի ամիս անընդհատ, կլանել էր մեր մամուլի և հասարակութեան ուշադրութիւնը: Երբ այդ հարցը խօսակցութեան առարկալ էր դարձել, մեր մամուլում, ինչպէս այդ տեսակ ամեն ղէպքում, այնպէս էլ այդ ժամանակ, քիչ և միակողմանի ու անբաւարար ֆակտեր երեան եկան խղիւղը հիմնաւորուպէս քննելու համար. մինչդեռ ամեն մի խնդրի լուծում կախած է այդ խնդրի բոլոր կողմերին վերաբերեալ ըստ կարելոյն բազմաթիւ ֆակտերից: Սարկ. ձուղուրեանը իր վերոյիշեալ պատկերով մեր առաջն է դնում մի ֆակտ, որ մէկը չէ և մի տեղ չէ, այլ բազմաթիւ և համարեա ամեն տեղ. այդ տեսակ ֆակտի մասին մեր մամուլում, որքան վշում ենք, խօսք չի եղել: Ահա պատ-

կերի կարճ բովանդակութիւնը: Խաչ  
գիւղի ժողովուրդը, սեփական քա-  
հանալի մահից լետու, մնայել է ան-  
քահանաւ: Նրանց հովոււմ է մօտիկ  
գիւղի քահանան: Այդ գիւղացիները  
հողալին վէճեր ունեն անքահանաւ  
գիւղի հետ, ուստի չեն թողնում,  
որ իրանց քահանան թշնամի գիւղի  
ժողովուրդին հովւի: Թէ ինչ է նշա-  
նակում գիւղացու համար «ազիզ  
օրերը» եկեղեցի չգնալ և տարին գո-  
նէ մի անգամ չհաղորդուել, այդ շատ  
շատերը գիտեն: Այսպէս ուրեմն, մի  
կողմնակի հանգամանք ստիպում է  
քահանալին չհովւել անքահանաւ  
գիւղը: Իսկ այդ չհովւելն առաջացնում  
է գիւղացու համար շատ ծանր պա-  
րագաներ... Գիւղացիները միտք են  
չգանում իրանց սեփական քահա-  
նան ունենալու, և ահա մէջ են գա-  
լիս երկու թեկնածուներ, որոնցից  
նչ մէկը կարգաւ չի իմանում. բայց  
անձարը կերել է բանջարը—ինչ պի-  
տի անեն. մի քննութիւնից լետու,  
որին ենթարկում են երկու քահա-  
նալացուներին, չաջողում է կաշա-  
տերի շնորհիւ. ձեռնադրել տալ երկու-  
սից մէկին: Քահանաւ ունենալ տանը՝  
պատուի խնդիր է գիւղերում, ապ-  
րուտաւ այնքան էլ չի տալիս այդ  
պաշտօնը. հէնց ասած էլ կալ գրւած-

քում, որ նախկին քահանալին ան-  
պատուելիս են եղել և քաղցած սպա-  
նել: Այսպիսի պայմաններ և ուսում-  
նական քահանաւ, իր քիչ թէ շատ  
զարգացած կուսուրական պահանջ-  
ներով...

Միւս երկու պատկերները  
մասին չենք խօսում. կ'ասենք այս՝  
որ նրանք շատ հետաքրքրական են,  
ուշադրութեան արժանի և խորհրդա-  
ծութիւնների Նիւթ տուղ: Թող նա,  
ով հետաքրքրում է ժողովրդի կեան-  
քով, աշխատի ձեռք բերել «Մուսց-  
ւած աշխարհի» երեք գրքովն էլ:  
Մեզ մնում է այստեղ կրկնել պ. Լ.  
Մ-ի կարծիքը սարկ. ձուլուրեանի  
լեզու մասին, որ նա չպտնել էր  
Մուրճ'ում: Միանգամայն անհրա-  
ժեշտ է, որ նա իր լեզուն գրական  
դարձնի. պէտք է գրել ժողովրդի  
ոգով և նչ ժողովրդի ոճով. այդ եր-  
կուսը տարբեր բաներ են: Չեզ օրի-  
նակ Դ. Աղալեանցը. նրա լեզուն  
հալերէն է, հալի հոտ է դալիս նրա  
լեզուից, բայց միևնույն ժամանակ  
գրական է և լիքը չէ ժողովրդական  
բառերով: Ահա այդպիսի լեզուով պի-  
տի գրել, որ ժողովրդական հոգին  
ուրեմալու հետ, միևնույն ժամանակ  
մաքուր գրական լեզու լինի:

Ն. Աղբալեանց:

ՄԱԼԽԱՍԵԱՆ, Յովհաննէս. — Պատանեկան չուշներ. 48 էջ, Թիֆ-  
լիս 1896 թ. գինն է 15 կոպէկ:

Չէ... ես էլ պիտի բանաստեղծ  
դառնամ: Ընթերցող, եթէ դուք նե-  
րողամիտ մարդ էք, անշուշտ կը նե-  
րէք, որ իմ մէջ առաջացել է մի այդ  
տեսակ անմեղ ցանկութիւն, մանա-  
ւանդ որ իրաւունք էլ ունիմ. տե-  
ղից վերկենողը բանաստեղծ է դու-  
նուհ, ես ձեռնից եմ պակաս, ասա-  
ցէք խնդրեմ:

Ասենք՝ դժար բան էլ չէ բա-  
նաստեղծ դառնալը, խօսքը մեր մէջ  
մնալ: Գրա համար առանձից շնորհք  
հօ չի հարկաւոր. այն էլ «ի Տեառնէ  
Աստուծոյ կենդանուոյ տեալ»: Որ  
մասն: Կարող էք ընթերցող, չան-  
գաւոր տողեր գրել. (թէկուղ քիչ էլ  
վատ ներդաշնակեն, բան չկալ. մը,  
օրինակ, պ. Յ. Մալխասեանն ունի  
«տուր» և «ա՛նաւոր» էջ 29). Կարող  
էք չանգաւոր տողեր գրել. ալ՞. ու-  
րեմն դուք բանաստեղծ էք: Չէ որ  
ուրիշ բան չի հարկաւոր, օրինակ՝  
միտք, զգացմունք և սրանց նման  
դատարկ բաներ... Իսկ եթէ երկին-  
քը ձեզ տել է աջնալիսի շնորհք,  
որ ընդունակ էք լեզուն գեղեցկաց-  
նել, ոտը զլիսի տեղ դնել, գլուխը  
ձեռքի տեղ, հօ, աւելի լաւ. այն  
ժամանակ ասպարէզ դուրս եկէք և  
պարզերես ու ամենաչն իրաւամբ  
պահանջեցէք որ մենք... զիրք առ-  
նելիս միաչն, մեր նեղացող գրպան-  
ները բանանք: Գիտէք, մի քանի  
խելօքներ ձեզ կը փառաբանեն էլ  
միք վախենալ:

Այսպէս ուրեմն, ես էլ պատիւ

կուենեալ՝ հալկական Պառնասի գա-  
գաթը թուշողների խմբին միա՛ալ.  
երանի սեղլ Սակաչն, բանաստեղծ  
դառնալու համար, ինձ ամենից առաջ  
օրինակ է հարկաւոր, որին նմանել  
կարողանալի: Այս անգամ սրտի բա-  
բախմամբ սկսեցի կարդալ պ. Յ.  
Մալխասեանի «Պատանեկան չու-  
շերը»: Ուզում էի իմանալ, ըստ կա-  
րելոյն շուտով, թէ ինչպէս է այդ  
գրքովի հեղինակը բանաստեղծ դար-  
ծու: Կարդացի և շատ օգտուեցի. իմ  
բանաստեղծ դառնալու որոշումը  
հաստատ էր, ալ՞ մ բոլորովին ամ-  
բացաւ. մի քանի միջոյններ էլ սո-  
վորեցի. օրինակ՝ ուրիշի սպրանքը  
իր ֆիրմալի տակ ծախել, բողբոլին  
նկատելի կերպով ուրիշ բանաստեղ-  
ծի նմանել և ալ՞ն. «Պատանեկան չու-  
շեր», մի թանկագին գանձ է չանգասէ-  
րի համար: Գիտենք այդ գանձը, Գա  
աջնալիսի ոտանաւորները մի կոչտ է,  
որ մեծ պատիւ կարող է բերել բա-  
նաստեղծների համբերտին: Այդ համ-  
քեարութեան անդամների գրաւծք-  
ները ընդհանրապէս վերցրած են լի-  
նում ուրիշներից, խորամանկու-  
թեամբ ծածկւած են լինում իրանց  
խօսքերի տակ. պատահում են նաև  
թարգմանութիւններ, որոնցից իւ-  
րաքանչիւրը բնագրից, ինչ ասել  
կուզի,

КАКЪ ДО СВѢЗДЫ небесной ДО-  
ЛЕКО.

Չգացմունք ու միտք չեն լինում  
նրանց մէջ. տպելուց լետու մարդու

ձեռք փող է գալիս... Ո՞վ կարող է  
 ասել, որ այս բոլոր արժանիքների  
 համար, նրանք արժանի չեն ուշադ-  
 րութեան: Պ. Յ. Մալխասեանի «Վա-  
 սակը բանտում» մի ստրկական,  
 կէս-ստրկական և ոչ ստրկական նը-  
 մանութիւն է պ. Յ. Յովհաննիսեանի  
 նոյն նիւթի մասին գրած բանա-  
 ստեղծութեան: (Այդ մասին զըր-  
 քում չի վիշաձ): Մեծ պատիւ ու-  
 սուցչին! Յետո՛ւ «Յուշերի» հեղի-  
 նակը Լիբմոնտովի մի բանաստեղ-  
 ծութիւնը երկու մաս է արել, մի  
 կտորը թարգմանել զրել է մի ոտա-  
 նաւորի մէջ, (որի մասին, ի հարկէ,  
 նույնպէս ոչինչ չի վիշաձ), միւսով  
 ծածկել է իր մի ուրիշ բանաստեղ-  
 ծութեան անշնորհ մերկութիւնը:  
 И свучно, и грустно... բանաստեղ-  
 ծութիւնն է այդ, որ արժանացել է  
 անդամահատ բանաստեղծի (բանա-  
 ստեղծ էլ որ ասում եմ...) անողոք  
 դանակին: Յանկացողները թող սես  
 նեն «Յուշերի» էջ 14 և 40: Դէ, ո՞վ  
 չի արել այդպիսի չարութիւններ,  
 այն էլ պատանի ժամանակ. այդպի-  
 սի լանցանքների համար վերակա-  
 ցու էլ չկալ որ չարերի ակնջները  
 քոքի: Մի փոխադրութիւն էլ կալ  
 Նաղանից («Թաղումը գեղջուկի»),  
 որ Ասուած ազատի! Հապա Լիբմոն-  
 տովի «Պաղեստինի ոտիկի», թարգ-  
 մանութիւնը, որ մի վիրաւորանք  
 է հեղինակի տաղանդին: Ինչ վե

րաբերում է միւս «ինքնուրույն» զըր-  
 ւածներին, էլ ասելու չի. դար-  
 ճալի բաներ շատ կան, բայց թո՛ղ  
 մնան: Ես կարծում եմ, ընթեր-  
 ցող, որ դուք մօտաւոր դադարաբ  
 կազմեցիք «Պատանեկան յուշեր»-ի  
 մասին, աւելի մօտ դադարաբ հարկա-  
 տօր էլ չէ. շատ որ իմանաք՝ շուտ  
 կը ձերանաք, իսկ մենք... մենք չենք  
 ուզում ձերանալ, դեռ սրբան պործ  
 կալ անելու...

Թող աւել, պ. Մալխասեան, մի  
 երկու խօսք ասել: Ձեր «Պատանե-  
 կան յուշերն», ինչ ասել կ'ուզի, որ  
 դատարկ բաներ են: Եթէ պատանի  
 էք, դեռ կարելի է ներել. բայց եթէ  
 երիտասարդ կամ դուցէ՛ դեռ էլ աւելի  
 էք, այն ժամանակ միթէ՛ ձեր ճա-  
 շակը ժամանակի ընթացքում այն-  
 քան է նրբացել, որ աչքպիսի զըր-  
 ւածքներ արժանի էք համարել մեզ  
 առաջարկելու:

Օ! Պուշկին, դու մարգարէ էիր.  
 կարող ես պարծենալ այդ լատկու-  
 թեամբ: Քո մի ոտանաւորը պ.  
 Մալխասեանն այսօր ընդունելու է  
 որպէս պատուի վկայական. ահն նա.  
 ...Мараеть овъ единымъ духомъ

Листъ;  
 Потомъ всему терзаеть свѣту  
 Слухъ,  
 Потомъ печатаеть —и въ Лету  
 Бухъ!  
 Ն. Աղբալեանց.

ՈՐԺԷՇԿՈ, Էլիզա.—Գիւղական փաստաբան. թարգմ. ռուսերէնից Յովհ. Մեղնիկեանի. Պետերբուրգ, տպար. Լիբերմանի. 1896 թ. 79 էջ. գինն է 20 կոպէկ:

Լեռնական կեանքի այս պատկերը կարդալիս՝ բնականաբար մտաբերում ես ռուսական կեանքի մի այլ ժողովրդական գրքուկի նկարագրութիւնը: Օրժէշկօն իւր «Գիւղական փաստաբանի» մէջ, Ս. Տ. Սէմեօնով «մուժիկ» գրողը իւր «Ժառանգութիւն» փոքրիկ պատկերի մէջ ազգուկերպով նկարագրում են խեղճ ու կրակ շինականի հարստահարման մեծ ու սրտամաշուկ հասարակական երևոյթը: Օրժէշկօն երեք խումբ հարստահարածներ է ներկայացնում, Սէմեօնովը՝ մի. նրա փաստաբանը գործում է մի մուժիկ զազրիկի միջնորդի աջակցութեամբ, Սէմեօնովի խեղճուկներն իրանք իրանք են գնում տրակտիր ու թակարդն ընկնում: Օրժէշկօի նկարագրութիւնը տպաւորութիւն է գործում աւելի սրտի թեւերի նրբութիւններին՝ հպելով, իսկ Սէմեօնովինը՝ աւելի պարզութեամբ: Թէ՛ աջտեղ և թէ՛ աջտեղ արիւնքը լինի, քով ամբողջ կեանքում վաստակած ինչքերը գո՛հ են գնում ցաւակից ձեւայնող գալ-աղւէսներին, որոնց արհամարհոտ քարտուրթիւնը կարծես ևս առաւել վիրաւորում է մարդու սիրտը:

Սէմեօնովի նկարագրութիւնն անհամեմատ աւելի համառօտ է: Յանկալի էր, որ այս գրքուկն էլ թարգմանաւէր և միախ հետ, որքան կարելի է, շատ տարածւէր մեր ժողո-

վըրդի մէջ: Պէտք է որ նաև գիւղերի գրագէտները կարդալին, շատ կարդալին մեր շինականին աչքախի գրքեր, որի առանց այն էլ խարխուղ խրճիթը աչնպէս աւերում է անմիտ, տնաքանդ վէճերի շնորհիւ Բալց այդ գիւղական գրագէտները, միթէ նրանց շրջանից չէ, որ դուրս են գալիս աչնքան հարստահարիչներ կամ սրանց աջակիցները:

«Գիւղական փաստաբանի» թարգմանութիւնը ընդհանրապէս բաւականին լաւ տպաւորութիւն է գործում. տեսնում ես, որ թարգմանիչը ձգտել է հայկական լեզուի ոգին ներշնչել նրան, բալց աւելի ուշի ուշով հետամուտ լինելով, վրահասու ես լինում, որ զարձաձններն աչնքան էլ ազատ չեն խորթութիւններից:

Նախ՝ որ պ. Մեղնիկեանը, երևի ոճին աւելի թեթեւ կերպարանք տալու համար՝ մի շարք թերակատար դարձածներ 1 բանեցնում:

«Մի փոքրից (փոխանակ՝ մի փոքր ժամանակից փոստ) պատշգամբ գուրս եկաւ մի... մարդ (էջ 7): «Ալբին գեռ աչքը մի բաց ու խուփ չարած (էջ 14) (ամբ) աւելորդ պէտք է համարէր, կամ «մի անգամ» գրէր): «Խրճիթի աչք բաժանմունքը բաւական մեծ էր, միաչն առատապըր ցածր էր և ծխից սեպցած, շատակը կրից (պակաս է՝ «էր շինած») և պատուհանը փոքր... (էջ 20): «Միթէ

խկապէս քեզ համար լաւ է բան-  
ւորութիւն անել և դարմանախառն  
հաց ուտել, որ դու թող ես տալիս  
հօրեղբորդ տիրելու քո հողին (էջ  
23). գէշ չէր լինիլ կրկնել՝ «լաւ է»  
որ...

Լեզուական. «երկու փալտուն կե-  
տեր» (էջ 3): «երկու զուգ մանկական  
ոտքեր» (էջ 20). չոգնակի պէտք էր  
գնել, եթէ աչս չատկացեալները չու  
ու. նենային:—Եթէ մենք փաստա-  
բաններս միացն ալնպիսի գործեր  
վերցնէինք, որոնք (չարաբերեալը  
ներկայ է, աւելի լաւ էր «տր») կա-  
րելի է տանել (էջ 13). պէտք էր  
ասել՝ «կարելի լինէր տանել»:—Մի

մարդ ծանր բեռը ուսին, ինչպէս լինի  
դուրս եկաւ դռան նեղ բացածքից.  
(էջ 4). պէտք է՝ «ինչպէս եղաւ»—  
Այժմ բանը նրանուան էր (էջ 36).  
Թէև մերոնք արդէն շատ են գոր-  
ծածում այս դարձածքը, սակայն  
կարծում ենք, որ բուն հայկականը  
«բանն աչն է, որ» պէտք է լինի:  
«Լսում էին խօսակցութեանը» (էջ 38).  
պէտք է՝ «ի՞նչ». մտիկ անել, ուշք  
զարձնել խօսակցութեանը կ'աւելի,  
նոյնպէս էլ՝ հրամանին լսեցին: Ես  
նրանից չեմ խնայի (էջ 75). պէտք  
է... «նրա համար (փող, բան) չեմ  
խնայի»:

Յ. Տ.-Մ.

ԼԱՐՈՒԼԷ.—Փշաշան հովիւ, արևելեան զրոյց, թարգմ. Գէորգ  
Գրիգորեանի. Թիֆլիս, սպ. Մարտիրոսեանցի, 1896 թ. 40 էջ.  
գինն է 10 կոպ.

Աչս պրոպր բաւականին կենդանի  
կերպով նկարագրում է թրքական  
փաշայի ծուլ ու անգործ զգեւի  
կեանքը, որի «կառավարութեան  
գործը կալանում էր նրանում, որ  
ամբողջ օրը կում էր անում Արա-  
բստանի սև սուրճը, կամաց կամաց  
ծխում էր երկարախող ծխամորճով  
տաճկական թանկագին ծխախոր»...  
Բայց չէ, աչս բարձր պաշտօնեան  
քննույց ու աչսպիսի բաներից զատ  
ամիսը մի անգամ մալաքաղաքից  
հրաման ստանալով մէկ միլիօն ոսկի  
հարկահանելու՝ կանչում էր իւր հա-  
րուստ վաճառականներին ու նրանց  
սպառնալով ու լաւ ձեռքով առ:

նում էր՝ երկու միլիօն. մինն իւր  
քրտնաջան աշխատանքի, միւսն էլ  
երկրի պետի համար: Բայց աւանդ,  
հնարագէտ փաշայի բախտը տևող-  
ական չի լինում: «Մի անգամ հար-  
կեր հաւաքելու օրը Ալին սխալմամբ  
հրամայեց ձեռել մի անգլիացի վա-  
ճառականի». հետևանքը պարզ է.  
սուլթանը ձանձրացաւ առաջացած  
չիթթութիւնից, որոշեց մի կերպ  
վերջ տալ աչս անախորժ ընդհարում-  
ներին իւր հաւատարիմ դաշնակցի  
հետ. նախ ուզում էր նա խնդրել  
տալ իւր հին բարեկամին (փաշային),  
բայց քիչ մտածելուց չետող, եկաւ  
աչն եղրակայութեանը, որ «մա՛յն»

դակտնի ալդպիսի խալտառակ մահը շնորի—անգլիացիների—համար չափազանց մեծ պատիւ է»։ Վերջապէս որոշեց աքսորել նրան որեւէ ծովեղրեալ անապատ և անտեղ քաղցից մեռցնել։ Խեղճ վաշան հացի կարօտ է դառնում և իւր աննման Աչքի-Լոյս դստեր հետ մեծ նեղութիւններ քաշելուց ու անշնորհ բռնակիրութեան համար էլ մի լաւ ծեծ ուտելուց չետոյ, մի ալ վտանգից փախչում ու հովիւ է դառնում։ Աչստեղ նա հասկանում է, որ մարդս աշխարհի մէջ հաց ուտելով պէտք է գործէ և արհեստ գիտենայ։ Աչս պատճառով է, որ մերժում է իւր դստեր ձեռքը փաշալի դատարկակեաց որդուն՝ ոչ մի արհեստ չգիտենալուն համար։ Սիրահար երիտասարդը հարկադրում է կողովադործութիւն սովորել, բայց դարմանալի կերպով չուտ՝ մի օրու մէջ, և աչպիսով արժանանում է Աչքի-Լոյսին։ Աներն էլ շնորհիւ խնամի փաշալին՝ արժանանում է, իհարկէ, սուլթանի ներմանը. սա չին բարեկամին մինչև անգամ առաջու պառք ու պատիւն ուղում է վերադարձնել։ Բայց Ալի-փաշան հանդիսաւոր կերպով մերժում է վեհախառ պետի զթառաս առաջարկը, չուղելով նորանք վտանգների ենթարկել և նախընտիր համարելով պարտիզպանութիւնը՝ հեռանում է Կամակաս իւր խնամու ժողովրդը։ Աչստեղ նա պարտիզպանութիւն է սովորեցնում նաև իւր թոռներին։

Ի՞նչ ասել կ'ուզի, որ այս ամենը շատ խրատական է մանաւանդ թուրքի համար, հաշին արդէն իւր պապերն են կրկնել ու կրկնել թէ

«արհեստը սակի սպարանջան է»։ Եւ որ երկրում սև օրի համար մի արհեստ գիտենալը կարող էր աւելի պէտք գալ՝ քան Տաճկաստանում։

Թարգմանութիւնն ընդհանրապէս սահուն է։ աչքի են ընկնում ոչ անբան սխալ, որքան ծանրաշարժ դարձածներ։

Մեզ սխալ թւացին հետեւալները, «կում էր անում սուրճը» (էջ 3, 4), կում անել սուրճը, աչսինքն մի անգամից խմել զժւար է, քանի որ Տաճկաստանում շատ տաք են խմում։ Չէ կարելի ասել՝ «դու չուտով ինձանից հտոբաւ կտտանաս», որ... (էջ 27). պէտք է՝ «դու» — «Ինչ մտածելուց չետոյ գտու, որ... մեծ պատիւ է» (էջ 7). պէտք է՝ «տեսաւ» կամ «եղբակացրեց»... Ժամանակներն անհամապատասխան են հետեւալ դարձածում...» Շիտթւած Ալին հէնց որ վեր կացաւ, գործակատարն արդէն նրա օճիքից բռնել էր (էջ 11). պէտք է՝ «բռնեց» — շատով բազը պահանջում է վերջահողով արական խնդիր հետեւալ դարձածների մէջ. «Իւտուֆը լոյս ունէր մեղմութեամբ համուղել ձերունի հովին այս բանում», պէտք է՝ բանին, ուտ. խնդրառութիւն է. УБѢДИТЬ ВЪ СТОМѢ, — Միենոյն սխալը նոյն էջ, վարը. — Թերի կամ ծանրաշարժ դարձածներ. «Ալին այս փորձով գիտէր», պէտք է՝ «բանը» աւելացնել. — Փսխանակ ասելու՝ «Աչսպիսի մարդկանց համար, որոնք սովոր են... (էջ 9). աւելի սահուն կը լինէր արք... Նոյնը՝ էջ 10, չարաբերեալները ներկալ են. — Պէտք է խորշել որ շողկապի կրկնութիւններից միենոյն բարդ ճախադասութեան մէջ։

«Ալին սկսեց քաղաքի փողոցներով  
ալնքան արագ վազել, որ կարծես  
հաստատ գիտէր, որ եթէ բռնեն,  
անպատճառ կը կտանեն» (էջ 15):—  
«Ալին հնազանդւեց հովական կիանք

վարելուն» (էջ 17). պէտք է՝ «վա-  
րելու մտքին»:

Վրիպակները շատ չեն. կէտա-  
դրութեան համար աւելի խնամք  
պէտք է տանել: Թ. Տ. Մ.

ՇԱՆԹ, — «Երազ օրեր». Թիֆլիս, 1896 թ. 169 էջ, գինը 40 կոպ.:

«Մուրճ»-ի մշտական ընթերցող-  
ներին արդէն ծանօթ է Շանթի  
«Երազ օրերը» — դեռ աչն ժամանա-  
կից, երբ մաս մաս տպւում էր  
Մուրճում: Նորերս լոյս է տեսել  
նորն վէպիկը առանձին գրքով հրա-  
տարակած և հաւանօրէն շատերը նոր  
կը ծանօթանան նրա հետ: Օգտւելով  
առիթից, մենք ուզում ենք մի քա-  
նի խօսք տանել նրա մասին:

Նրկու-երեք տարի է ինչ Շանթը  
լալանւել է մեր ռուսահալ գրակա-  
նութեան մէջ, և սխալւած չենք լի-  
նի եթէ ասենք, որ նա գրակել է  
արդէն ընթերցող հառարակութեան  
ուշադրութիւնը: Նա իր գրական  
գործունէութիւնն սկսեց մի պօէմա-  
լով «Լեռան աղջիկը» (տորադրով, <sup>1</sup>) որ

լոյս տեսաւ 1893 թ. և ապա, կարճ  
ժամանակամիջոցից չետու, նա երե-  
ւաց Մուրճում «Երազ օրերով», որ  
նրա առաջին փորձն է արձակ գը-  
րութեան մէջ: Ապա նա սկսեց հա-  
մարեա ամեն ամիս երեալ Մուրճ-  
ում: Աչնպիսի մի դեբիտ, որպիսին  
«Երազ օրերն» է, մի սկսող գրողի  
համար մեծ բան է, և շատերը չեն  
սկսում աղպէս. աղպէս սկսողից  
ամենաչն հանգստութեամբ կարելի է  
ստասել աղաղալում աւելի կատա-  
րեալ և զեղարեւստական երկեր:  
Շանթն ալ վէպիկով ցոյց տուց, որ  
ինքը մի տաղանդաւոր և կատարե-  
լագործելու ընդունակ գրող է և,  
կարծում ենք, նրա պօէման, բանա-  
ստեղծութիւններն ու արձակ գրած-  
ները կարգացողները ալ կարծիքն  
են կազմել նրա մասին: Առ ալմ մի  
նոր սկսող հեղինակի համար ալ-  
քանը բաւական է. բաւական է, որ  
մենք ընդունում ենք նրան, որպէս

չեկութիւնները մեզ հաղորդեց պ.  
Շանթը: Գորանից չեառ սկսում է  
նորա աշխատակցութիւնը Մուրճին  
ոտանաւորներով և արձակ գրամք-  
ներով:

Ման. Խմբ.

<sup>1</sup>) Շանթի սկզբնական (աչակերտ-  
ական) մանր ոտանաւորները արը-  
ւած են կղել Մուրճին, 1891 թ.  
մալխա-լուռիսին որոնք սակաչն լոյս  
չտեսան. ապա նորն 1891 թ. Հաչ-  
րինիք լրագրում, հոկտեմբերին տոյ-  
ւեց լերմոնտովից թարգմանած «Մցի  
րի» պօէման (գրած ութ-ութ վան-  
կով) Յոր ծածկանուեմով: Ապա 1893  
թ. Աղրիւրում տպւեցին 2 Յ հաս.  
մանր ոտանաւորներ և Տարաղում  
«Լեռան աղջիկը» պօէման: Աչս տե-

տաղանդաւոր և կատարելագործելաւ ընդունակ գրող: Նրա գրական բնաւորութեան և ինքնուրոյնութեան չափը որոշելը, նրա առանձնապատթիւններն ու միր գրականութեան մէջ բռնելիք տեղը ցոյց տալը և ուղղութիւնը գնահատելը ապագայի գործ է. ալդ բոլորը կարելի է անել միայն աչն ժամանակ, երբ նա իւր տաղանդը ամբողջովին կ'արտաբերէ: Մենք արտեղ կը բաւականանանք նրա գրական բնաւորութեան մի քանի խոշոր գծերը ցոյց տալով, մի ուրիշ անգամի թողնելով նոյն հեղինակի գրածներով աւելի մանրամասն և հանգամանօրէն զբաղուելը:

Շանթը աչն գրողները է սրտնց տեսածը վարդ է և վարդ են երգում: Այնքան քի պրէզիան, նրա մաքուր բանաստեղծական և ? գաղափարական կողմը—աչ է նրա ուսումնասիրութիւնների առարկան. կեանքի ալդ կողմից է նա վերցնում իր գրածների նիւթը: Նրա համար գուլութիւն չունի կեանքի ցեխում և կեղտում կորչող մարդը, աղքատութեան և տղիտութեան ձեռքում գերի, թըշւառութիւնների բեռան տակ ճնշած ու տանջած մարդը. մի խօսքով կեանքի հակառակ, մռայլ երեսը: Նա լաւատես է և իր գրածներում արտաբերում է նրա ալդ չատկութիւնը: Մի տեսակ կենսաբանութեան, եռանդի, երիտասարդական ոգիորութեան, անորոշ բալց փալուն և լաւաղոն ապագայի հաւատալու, ապրելու և գործելու հով է գալիս նրա գրածներից. և կարծէք նա նոյնը աշխատում է ներշնչել մեր մէջ: Եւ

ալդ չատկութիւններն ու լաւատեսութիւնն է կարծես, որ նրան հեռու են պահում թշւառութիւնների ծովից: Նա նման է մի մարդու, որ նստած ամարալին մի պարզ ու զով գիշեր բանաստեղծական կատարութեան մէջ, նալում է ասաղաշող երկընքին և հիանում նրա տեսքով— և չի էլ ուզում ալդ անդորր ու վերացնող բաւականութիւնը կորցնել, նալելով շուրջը և տեսնելով, որ «նազարք հաղարաց և բիւրք բիւրոց» մարդիկ ամենաչնչին միջոցներ անգամ չունին մի փոքր ժամանակ գոնէ երկնքով հրճուելու: Նա չի ուզում տեսնել աչն ամբոխը, որ մի կտոր հացի համար մաչում է, վատնում է իր մարմնական և հոգեկան ուժերը, չարքաչ կեանքի և ճնշող պալմանների, տղիտութեան; անբարոյականութեան, կեղտի և ապականութեան մէջ: Ալդ ամբոխը նրան հետաքրքրում է միայն տեսականալէս, կամ որպէս իր հերոսների խօսակցութեան առարկալ, կամ որպէս նրանց ցնորքների և ձգտումների վեակետ. գործնակալէս նա չի հետաքրքրում, ցոլց չի տալիս նրան և իսկի չի էլ ցոլց տալ: Իր «Երնէկ»<sup>1)</sup> բանաստեղծութեան մէջ, ուր նա իր «պէտքի գալն» զգալու համար ամենատարօրինակ և թովիլ բաներ է ուզում դառնալ—երգ, երաղ, ցօղի շիթ և ալլն, նա ցանկութիւն չի չալտնում լինել մի հասարակ զինուոր, որ կրուում է ժողովրդի բարիքի համար: Ալս նկատողութիւնը փոքր է, բալց բնորոշ է Շանթի համար: Նա իր

<sup>1)</sup> «Մուրճ» 1895 թ. № 3—4:

քաղաքը գրաւածներում վերին աստի-  
ճանի անկեղծ է. և զարմանալի էլ  
չէ. չէ որ նա տաղանդաւոր է. իսկ  
ինչումն է տաղանդի ուժը, եթէ ոչ  
անկեղծութեան մէջ. նա իր ամեն  
մի զգացումը ամենաթեթիկ միմե-  
ջն ամենախորը արտայայտում է շատ  
պարզ ու հասարակ, աչնպէս որ ըն-  
թերցողի մէջ ևս ներշնչում է իր  
զգացածը. նա բառերի կուտակումով  
չի ուզում ցոյց տալ թէ բան է ասում.  
Նրա մէջ ձեռնալը կատարելապէս  
բացակայում է: Աչնպէս ուրեմն,  
Շանթը մի կենսութիւն, լաւատես,  
իդէալականի հակած և անկեղծ գը-  
րող է: Գառնանք «Նրազ օրերին»:

«Նրազ օրերի» բովանդակութիւնը  
չի էլ կարելի պատմել: Մի երիտա-  
սարդ գիշերօթիկ սիրահարում է  
Գիլիշանում մի ջահել աշակերտուհու  
վրա. պարսպում է նրա հետ հալոց  
լեզուով, ուրախ ժամանակ է անց-  
կացնում, ամառաւ Վերջը հեռանում  
և իր կամքի հակառակ ոտիպում  
իր շարքերութիւնները կտրել: Ահա  
բողորք. և այս փոքրիկ Նիւթից  
Շանթը մշակել է մի զեղարեւոտա-  
կան վէպիկ, վերին աստիճանի բա-  
նաստեղծական և դիւթիչ: Շանթը  
իր այս վէպիկում արեւստաղէտի հըմ.  
տութեամբ կարողացել է լաջող վեր-  
լուծել «առաջին ճշմարիտ սէրը» իր  
հիանալի կողմերով, իր արբեցուցիչ  
քաղցրութեամբ, սիրտ անհանգր-  
տացնող կասկածներով, խանդի չու-  
զումներով և բաժանման դառնու-  
թեամբ: Նրազ օրերը մի թոթոռն,  
սիրոյ երգ է արձակ գրած: Գլխաւոր  
բնաւորութիւնները զձագրած են  
հմտութեամբ. եթէ նրանք բազմա-

կողմանի և ամբողջական չեն, գրա-  
պատճառն աչն է, որ նրանք դեռ  
չկազմակերպւած, հում բնաւորու-  
թիւններ են, նրանք դեռ պիտի  
կեանք մանկն, շփուեն, աղբւն շըր-  
ջապատող եռուն կեանքից, որ կոփ-  
ւելով՝ որոշ գոյն ու ձև ստանան:  
առ ալժմ նրանք կանգնած են կեան-  
քի շէմքից հեռու, և միաչն երեւ-  
կալում են ալզ կեանքը: Նրկրորդա-  
կան բնաւորութիւններից կատարե-  
լապէս մութ է Նրանդի հօրեղբօր  
կինը, մնացածները աւելի կամ պա-  
կաս չափով պարզ ու որոշ են: Հե-  
ղինակը ընդունակ է մի քանի գծե-  
լով որոշել բնաւորութիւններ, որ,  
ի հարկէ, ամեն մարդու բան չէ:  
Գրքոյկի մէջ առատութեամբ շաղ են  
ուած բնութեան հիանալի նկարա-  
գրութիւններ, համեմատութիւններ,  
նմանացումներ. իսկ լեզուն... լեզուն  
անասելի գեղեցիկ է. մենք ալզպիսի  
լեզու չենք ճանաչում ոչ մեր, ոչ  
արեւմտեան գրականութեան մէջ: Նա  
հնչում է տեղ-տեղ մուգիկալի նման,  
զարմանալի ձկունութիւն ունի. և  
տեսէք, թէ ինչպէս ալզ լեզուն հա-  
մապատասխանում է աչն ճիւթի  
բնաւորութեան, որը նկարագրում է.  
միաչն ափսոս, որ նա աւելի մեղմ,  
նուրբ ու ձկուն է, քան սաղ կը գար  
մեր լեռների ու կոշտ պայմանների  
դաւակ Միքէի: Մի նկատողութիւն,  
և անցնենք գործող անձերին: Շանթի  
այս վէպիկում հերոսները խօսում  
են միմեջն ձեռով—ալզ գեղարես-  
տական չէ. ինչպէս մարդիկ տարբեր  
են, աչնպէս էլ տարբեր է նրանց  
խօսելու ձևը. խոշոր և արեւստաղէտ  
գրողները միշտ հետեւում են գրան,

ուշադրութեան են առնում այդ:

Վարդունին բուն հալ հասարակութիւնից ու երկրից օտարացած մի շրջանի զաւակ է. մի շրջանի, որ կապւած է ազգի ընդհանրութեան և ժողովրդի հետ միաջն իւր կրօնով և ծէսերով: Այդ շրջանը այնպիսի շրջանն է, որի զաւակները ցանկալի ուղղութեան և մտքերի տէր լինեն: Ամենից առաջ, այդ շրջանում ոչինչ ազդակին չկալ, բոլոր կապերը անգիտակցական են և թույլ. այդ կապերի կտրելը ամենահեշտ ձևով կատարուել է և կատարուում է մինչև ալօր: Այդ շրջանը ցանկալի մտքերի և ուղղութեան զաւակներ չի կարող տալ ոչ միայն այն պատճառով, որ ներկայացնում է մի համարեալ թէ խզած ու բաժան մաս մեր ազգի ամբողջութիւնից, այլ և այն պատճառով, որ ինքն ըստ ինքեան նա շատ քիչ լատալդիմական բան է ներկայացնում: Մի շրջան, որ, ազդուում է իւր շահերով և իւր համար, որ չի հետաքրքրում հանրալին ոչ մի գործով, նա այնպիսի զաւակներ կը տալ, որոնք այն տանն են պէտք ոչ զուանը: Հանրալին գործերով հետաքրքրուելու բացակայութիւն, մըտաւոր չնչին պահանջներ, բարոյական անսանձութիւն,— ահա ինչպէս կարելի է բնորոշել այդ շրջանը: Այդ շրջանն է սնուցել Վարդունուն մանուկ ժամանակ, թէ ինչպէս է պահել նրան մալըր, վէպիկում չի աւած. բայց դէպք չէ մակաբերել, որ նրան շատ պիտի փալփալած, զըզած, նրա ասեն ցանկութիւնը կատարած լինեն հակառակ զէպքում նա չէր կարող տանը անկախ գիրք ունե-

նալ: Ընտանեկան այդ շրջանի վրալ աւելացել է մի ալլ աննպատա շրջան. այն զպրոցը, ուր ուսել է Վարդունին: Այդտեղից քչերին է լաջողում իրանց ատարած դրակն լատկութիւնները դուրս բերել անվնաս: Այդ շրջանում մեծամասնութեան մէջ զարգանում է թեթևամտութիւն, լրջութեան բացակայութիւն, անզուսպ կիրք փալլելու, դուր գալու, սիրալին լսաղեր անելու, պարահանդէսներում և երեկոլթներում գիշերներն անցկացնելու, սիրալին մանրմունք զէպքերով հետաքրքրող, գըզուած երեակալութեան տէր, հասարակական ինտոլիկաներից և ճըզտուններից, լալն և հանրալան իղէալներից զուրկ և զէպի ամեն մի ընդհանուր խնդիր անտարբեր— ահա որպիսի մարդիկ են լինում այդ շրջանի պտուղները: Նրանք բացի այն, որ հասարակական գործերում չեն մասնակցում և չեն էլ ուզում մասնակցել, նրանց համար ընտանեկան կեանքն էլ առաջնակարգ նշանակութիւն չունի— քչերն են նրանցից օրինակելի կամ սանելի մալերի լինում— մնացածները մնում են նոլն զւարձութիւնների սիրահար, դատապալտելի անտարբերութեան տէր անձեր: Եթէ պատահում է, որ այդ վարակած մթնոլորտից ազատում են մի փոքր քանակութեամբ անհատներ, այդ էլ պիտի վերադրել ընտանեկան խիստ ու առողջ օդին և շրջապատող կամ պատահական մարդկանց, որոնք լալ, ցանկալի ուղղութիւն են ունեցել և ուժեղ տպաւորութիւն են արել նրանց վրալ: Այդ շրջանում գտնուղները

համար նոյն իսկ դժւար է փրկութեան միջոց համարել ընթերցանութիւնը, որովհետև նրա նիւթը կազմույ էն մեծ մասամբ վէպեր օտար և ուս առաջնակարգ և երկրորդական հեղինակների, որոնց կարգալիւսալն չեն տեսնում ինչ աւել է հեղինակը, ալ նրանց վրայ նաշում են իրանց զոգուած և վատ ուղղութիւն ստացած երևակալութեան պատահանից և աշտեղ տեսնում են միայն ինտիմ տեսարաններ, խորհրդաւոր դէպքեր և սիրալին հանդիպումներ։ Այս շրջանը նոյնպէս շատ քիչ դրական բան է ներկայացնում. երկնակը վարակիչ է, իսկ վատ օրինակը աւելի քան վարակիչ. իսկ բարոյական վատ ցաւերի տէր անհատներ ալ շրջանում որքան կամենաք. ինչ կարելի է ուրեմն սպասել ընտանեկան և դպրոցական վատ պայմաններում մեծացած մի ջղատ օրիորդից։ Մենք կը տեսնենք շուտով թէ ինչ։

Այդպիսի շրջանում կրթւած աղջիկ Վարդուհին, աղատւած դպրոցական ծանր ու ձանձրալի պարագամունքներից գալիս է հանգստանալու Ռիլիջանի պէս մի գեղեցիկ տեղ։ Նա միանգամից ընկնում է աջնպիսի պաշտանների մէջ, ուր ակամայ զգացում է մի մօտ ընկերոջ և, ինչ ասել կ'ուզի, «տղայ» ընկերոջ կարիք։ Նա ալ հարկաւոր մարդն էլ երևում է նա պատահում է իր նման մի ջահել գիշերօթիկի։ Շրջապատող բնութիւնը, մենակութիւնը և իրար դրացի լինելը, տարալ հրապուրիչ եղանակը, երիտասարդական տաք ու սիրակարօտ սրտերը—անա պայմաններ, որոնք ստեղծում են «երազ օրերը»։

Օրիորդ Վարդուհին սկսում է զործ դնել սեփական կամ ընկերուհիների արած փորձերը նոր երիտասարդի վրայ, շեշտակի նաշում է գրչերօթիկի աչքերին, վաղում է շատ մօտից և համարեա քսում նրան, փոքրիկ քրոջ շրջանակն է ուղղակի դէպի նա դարձնում, և ալն։ Տեսնելով որ դիմացինը շատ է անմեղ և ալք ստանալութիւնները չի հասկանում, ալ շփոթում է և իր դաւազանի կոթով զբաղւում, նա սկսում է աջմնրան, ինչպէս ասում են, «կծելը» հինգ առաջին ծանօթութեան ժամանակ և սրախօտութիւններ անել նրա ուշադրութիւնը գրաւելու համար։ Բալց Նրանցը քաշող է. թէև ծանօթացել են, բալց ուշ-ուշ և միայն դուրսն է հանդիպում նրանց ու անաչկոտ լինելով՝ շուտ շուտ նրանց տունը չի կարող գնալ։ Ինչպէս անել սր Նրանցը որքան կարելի է չաճախ դալ. . . Վարդուհին անշուշտ վնասում է միջոցներ, երբ առիթը ինքն է օգնութեան հասնում։ Նրանցի ունեցած մի վէճից շտոց օրիորդի նկարիչ եղբօր հետ, որի նիւթը մալրենի լեղուն էր, նա միտք է չղանում պարագել հայոց լեզուով և առաջարկել Նրանցին ստանձնել օգնողի պաշտօն։ Ինչ ասել կ'ուզի որ «ապուրը եփում են»։ Այսպէս ուրեմն, մեր կարծիքով, Վարդուհին հալերէն կարգալ ու իստել էր ուղում սովորել ոչ թէ աջն պատճառով, որ ալք որոշումը երկար մտածելու արդիւնք էր ինչպէն ինքն է ուղում հաւատացնել, որ նա ալք լաւ էր համարում, իր պարտականութիւնն էր հա-

մարում, զիտակցում էր այդ բանի կարևորութիւնն ու նշանակութիւնը, այլ որ նա զրանով հնարաւորութիւն կ'ստանար միշտ իր մօտ ունենալ մի երիտասարդ «դեղձան մաղերով, խոշոր անուշ աչքերով և ճենթըմնական կազմաձքով», մի երիտասարդ իր նման տաք, իր նման սիրածարաւ և բարեկազմ, որի հետ կարող էր սկզբում պարապելու պատրւակով միաջնակ մնալ, խաղալ, քսքսել, խօսել, վազվզել, զբօսնել, սրախօսել և վերջը՝ համբուրել... Նա իր հնարագէտ և խորամանկ ուղեղը զբաղեցնում է աջնպիսի նուրբ, թովիչ և հրապուրիչ տեսարաններ ստեղծելու վրայ, որպիսին Նրւանդի կուրձքը ծաղիկ խրելու, իրանց առանձնանոցում մի ինչ որ թուղթ վերցնելու կամ անտառից գալիս «լոգնած եմ» ասելու տեսարանն է. այն վերջին տեսարանում նա մինչև անգամ հասկացնել է տալիս, թէ երբ ես ասում եմ «լոգնած եմ», այդ նշանակում է «ուզում եմ ձեր թեւը մոնել»...

Աչսպիսի պարագաներում էլ ինչ խօսք, որ երկրորդական բան է դառնում հալերէն սովորելը. Նրւանդը ինչքան էլ ուզէր, չէր կարող անտարբեր մնալ դէպի Վարդուհին, որի ուղեղը մի գործարան էր, ուր Ամօրը կոփում էր իր սուր սլաքները որսն իրան ձգելու համար, հրապուրչնորով լի նախագծեր պատրաստող մի մեքենայ, որոնք սակաչն գեղեցիկ են ու հաճելի և նուրբ զգալիանութեան սահմանից չեն անցնում: Աչս աղջկանից մենք շատ բան չենք սպասում. ոչ թէ աչքի առաջ ունենալով միայն աչն, որ նա

մեզ մօտ չըջանի աղջիկ չէ, «կենագինեա» է. այլ աչն՝ որ ո՛վ և ո՛րտեղացի էլ լինի, դա և դրա նման աղջիկներ, դրա նման մտաւոր և բարոյական չափութիւններն տէր անհատներ մեզ չեն հարկաւոր: Նրանք չեն կարող մեզ համար օրինակ և չարգանքի առարկալ լինել, նրանք կուշած չեն դեր խաղալու մեր հասարակական զարգացման գործում թէ՛ որպէս սոսկ մալեր և թէ՛ որպէս աւելի լաչն շրջանի գործիչներ: Գրանցից դուրս կը դան գեղեցիկ, զարճասէր և թեթեւ ախիւններ, գուցէ և անհաւատարիմ իրանց ամուսիններին, ոչ միայն ուրիշների վիճակի, այլ և իրանց զաւակների դաստիարակութեան և կրթութեան մասին չմտածող. մի խօսքով մարդիկ, որոնք վխտում են ամեն տեղ, ուտում են, խմում, բազմանում, մեռնում անհետ, անլիշատակ աչն հազարաւորների նման, որոնք գալիս են ու գնում, աչն արժանիքն ունենալով միայն, որ ծնել են, ապրել և մեռել... Եթէ Նրւանդը մի անգամ տեսնէր իր Վարդուհուն աչգալէս փոխած, անշուշտ նա կը զարմանար և կը գզար որ նա «ան, ան չէ», որուն կը ցանկար», այլ նա էլ աչն շատերից մէկն է, որոնք նոր են երեացել մեր մէջ և որը ազնիւ, անկաշառ և սուրբ իղձերի հովանու տակ ցանկացել է, որ Նրւանդն իրան համբուրի, զրկի... Եթէ Վարդուհուն վիճակի միւս տարի էլ գալ Գիւլիջան և հանդիպել մի ուրիշ Նրւանդի, նոչն պատմութիւնը կը կրկնէի, հաւանօրէն այլ վարիացիաներով... Ասենք աչստեղ, որ մենք չենք կառկածում Վարդու-

հու առ Երևանդն ունեցած զգացմունքի անկեղծութեան վրայ. միայն չենք ընդունում, որ նա խոր լինէր: Տասն անգամ սիրահարուողը մի անգամ սիրահարուողից զանազանուում է իր զգացմունքի խորութեամբ միայն և ոչ անկեղծութեամբ, (Մեր խօսքը շառլատանների մասին չէ): Մենք հաւատում ենք Վարդուհու արցունքների անկեղծութեան. հեշտ չէ կորցնել կա՛մ հեռանալ մի մարդուց, որ պատճառ է դարձել անքան սիրուն ու սիրառատ օրերի, անքան հաճելի ու թանկագին արպատութիւնների. նա երկար կը չիչի այդ «երազ օրերը» իրանց հրապուրներով. գուցէ և ան ժամանակ, երբ ուրիշին սիրելիս կը լինի այդ տեղերում, նոյն այդ երկնքի տակ, նոյն այդ ջրերի մօտ... Աչսպէս ուրեմն, մենք չենք ընդունում որ Վարդուհու զգացմունքը խոր լինէր և լաւագոյն ձգտումները հիմնաւոր ու ինքնանպատակ, այսինքն որ այդ բոլորը ծառայելիս չլինէին մի աւելի գուրեկան նպատակի համար որպէս միջոցներ: Ասենք մի անգամ ընդմիշտ, որ այդ անձնատրութիւնը մեզ վրայ ան տպաւորութիւնը չարեց, ինչ որ ակնաւորութիւնը կերպով ցանկացել է անել հեղինակը—այլ բոլորովին հակառակը. և ան տեղերը, որոնք ըստ երևութիւն կարող են մեր ասածի հակառակն ապացուցել, մենք բաւականաչափ հիմնաւոր չենք համարում և բացատրում ենք այլ կերպ:

Որ և է անձնատրութեան մենք ան չափով ենք համակրում, որ չափով նա մօտենում է մարդու մասին մեր ունեցած զիտակցական կամ

անզիտակցական իդէալին: Երևանդը, ինչպէս երևում է, շատ է տարած Երևանուով (Наканувѣ) և երբ նա, ոչ միայն համակրում, այլ և սիրում է Վարդուհուն, նշանակում է, որ նրա մէջ նա գտել է Երևանու ընտելութեան գծերից շատերը կամ ենթադրում է որ նա Երևանու ընտելութեան է: Սակայն սխալուում է Երևանդը: ոչ միայն Վարդուհին այլ և ընդհանրապէս հալ աղջիկը այժմ ընդունակ չէ Երևանու ընտելութեան, իրան զոհելու սիրած մարդու և նրա գաղափարների համար: Կրա համար հարկաւոր է խիստ խոր զգացմունք—երկրպագութեան հասած սէր, որ ակնկալութիւն չունի համբուրների և սիրալին տեսարանների, գործելու, նեղ ու սահմանափակ շրջանից դուրս գալու բուն ցանկութիւն, ետանդ և կամք, ալլասիրութեան և անձնագոհութեան հարուստ սաղմիր... Միւս կողմից մեր ընտանեկան և հասարակական պայմանները ընդունակ և նպատաւոր չեն այդ տեսակ տիպեր ստեղծելու համար: Այդ չի կարող լինել ոչ միայն ան պատճառով, որ մեր կեանքի պայմանները խիստ տարբերում են առաջ կեանքի պայմաններից, այլ և ան պատճառով, որ դրա համար հարկաւոր է պատմական խոշոր մոտանքների մօտալուստ գալստեան հովեր... Շատ ցանկալի է որ լինեն նրանք. սակայն մինչև ալսօր նրանք իդէալների, ցանկալի սահմաններում են մտում և գուցէ դեռ երկար մնան... Ո՛ւր են, ո՛ր են նրանք. որպէս զի նրանք իրական տիպեր դառնան. մեզ դեռ չանտ ու չանտ բան է հար-

կաւոր. դեռ հարկաւոր է, որ մենք վերացնենք աչն ասիական կարգերն ու բռնութիւնները, որոնք կան և տիրում են մեր հասարակութեան մէջ. դեռ հարկաւոր է, որ մենք ճանաչենք անձնաւորութեան չարդն ու անձնամխելութիւնը. դեռ հարկաւոր է, որ մշակենք չառաջդիմական հոտանքին նպաստող ընտանեկան սկզբունքներ, և ապա միաչն սպասենք լաւագոյն և ցանկալի տիպերի: Իսկ առ ալժմ, քանի դեռ չկան, մեզ մնում է բացականչել կրօնանդի հետ. «Իսկ Նչենան, Ասուած իմ, Նչենան, պիտի ունենանք այդ տեսակ աղջիկ մը...»

Նախ քան վէպիկի երկու գլխաւոր անձնաւորութիւնների մասին խօսելը, մի քանի խօսք պ. Կարապետի՝ Վարդուհու եղբօր մասին: Կեանքի մէջ սիրող (դիլլէտանա), — ահա թէ ինչ խօսքով մենք կը բնորոշէինք այդ մարդուն: Եւ իրաւ, նա սիրող է միաչն. ոչ մի լրջութիւն, ոչ մի հիմնականութիւն նրա համար չէ: Նա սիրող է գեղարեստի, սիրող՝ նոր և մեծահնչիւն բազմ գատարկ խօսքերի, սիրող՝ բարոյական ու մտաւոր մեծ ու մանր հարցերում: Ծիծաղելի տպաւորութիւն է անում մանաւանդ նրա պարծենկոտութիւնն ու իրան մեծ գին տալը. Թէև դեռ երիտասարդ, բազմ արդէն ճաշակել է կեանքը, առիթ է ունեղի ճանաչելու թէ ինչ է **ВѢЖА СТРАСТІ НѢЖНОЃИ**, և ապա խնդիրներում վերից է նազում ջաջել, մաքուր և ողորակած անփոքձ երիտասարդների վրայ: Նրա նախալի շատ լաւ պարզում է այդ մարդուն. մի տեսակ սառնութիւն է

փչում այդ նամակի քաղաքավարի տոնից. կարծէք ձեռքներդ հպում է մի ոտուկնի սառ կաշուն: Ի՞նչ ասել կ'ուզի, որ նա անընդունակ է որ և է, ոչ միաչն ներգործական, ալ և կրաւորական դեր խաղալու մեր չառաջադիմութեան գործում: Կան մարգիկ, որոնք պոսեցիական ուժեր ունին, հարկաւոր է նրանց դրդել — և նրանք կարող են որ և է գործի համար օգնող ուժեր դառնալ. պ. Կարապետն ու իր նմանները այդ բանից էլ են զուրկ, այդ կողմից էլ նրանք մխիթարական երևութ չեն ներկալացնում: Մեր կարծիքով Կարապետը նոյնն է, ինչ որ պ. Մկրտիչը. երկուսն էլ դատած փող ունեն ուտելու, երկուսն էլ աշխատանքի կարիք չունեն, երկուսն էլ պարապ են. միաչն մէկն իր օրերը անց է կացնում ուտելով, քնելով և «անվերջ թքթքոցով», իսկ միւսը անօգուտ նկարչութեամբ. վերջին զանազանութիւնը, ի հարկէ, նրանց ստացած կրթութեան և շրջապատող պայմանների հետեանք է:

Յուշատետր պահող Սրբանդը և նրա ընկեր Միքէն երկուսն էլ վերջընթեր դասարանի գիշերօթիկներ են: Գեոու կեանք գուրս չեկած, դեռևս կեանքի համար պատրաստող մարդկանց կարելի է ճանաչել մօտաւորապէս նրանց ունեցած իդէալներից, ձգտումներից, համակրանքներից և հակակրանքներից: Թէ որքան կը չաղղի նրանց ձգտել իրանց ունեցած իդէալներին, հաւատարիմ մնալ իրանց ձգտումներին, ապրել իրանց սկզբունքների համաձայն, այդ ապագայի խնդիր է, այդ գործ-

նական կեանք մտնելուց չեսող միայն կորոշելի, առաջվմ մեզ համար նշանակութիւն կարող են ունենալ և գնահատութեան ենթարկուել միայն նրանց հոգեկան պահանջները, աւելի կամ պակաս չափով որոշ ձգտումները և իղէալները: Այս կողմից կարելի է գնահատել Նրւանդին և Միքէին: Այդ երկու երիտասարդները մի տեսակ հակառակ ծայրերի մարդիկ են. մէկը աւելի գործնական հակումներ ունի, միւսը՝ տեսական: Երկուսն էլ զիշերօթիկ են, երկուսն էլ երիտասարդ, երկուսն էլ խուճուկ երեակալոյններ և համակրելի իղձերի ու ձգտումների ախր: Այդ է նրանց միացման կէտը, զրանով են միայն նրանք իրար նման. ինչ վերաբերում է նրանց երեակալութեան բովանդակութեան և իղձերի ու ձգտումների բնաւորութեանը, այդտեղ արդէն նրանք զանազանուում են:

Միքէն կովկասցի է, մեր լեռնոտ գաւառներից մէկի և կոպիտ ալպամանների զաւակ. զիւղացի, զիւղացուն և զիւղական կոպիտ կեանքը սիրող, և այդ զիւղացու հետ, նրա օգտին և այդ կեանքում գործելու համար երազու: Նա շատ էլ զրքերի սիրահար չէ, աւելի սիրում է ֆիզիկական զւարճութիւններ և մարմնական աշխատանք. նա կենդանի, եռուն կեանքի մարդ գառնալու ընդունակ մի երիտասարդ է. փիլիսոփայութիւններ չի սիրում, չի պարապում և հետաքրքրում նրանցով, բայց նրա հոգին զարգացել է աչքան, որ ընդունակ է եղել ըմբռնելու և իր զլխում ամուր պահելու հասարակական օգտակար գործիչ, ժո-

ղովրդի, ընդհանրութեան շահերին ծառայելով և զրանով շառաջադիմութեան նպաստող մարդ գառնալու միտքը: Չէ որ հէնց այդ է զլխաւորը, չէ որ աւելի արժանիք ունի այն մարդը, որ առանց տեսական լալն տեղեկութիւնների հասարակութեան օգտակար անդամ է, քան այն մարդը, որի միտքը երկինքն է ընդդրկում, բայց ոչ մի զրական շոշափելի օգուտ չի տալիս իր մերձաւորներին: Միքէն որոշ ծրագրերն ունի կազմած իր ապագայ գործունէութեան մասին: Գործնական կեանքում ալվմ գտնող սերունդը, ինչպէս ասում է ալդ սերունդի մի նկարագրող <sup>1)</sup>, կարդում, զարգանում և մտածում էր ոչ թէ որևէ արտաքին երեցող նպատակի համար, այլ ալնպէս, որովհետև կարգալը, զարգանալն ու մտածելը միակ լաւ բանն էին համարում: Նրանք մի տեսակ ցնորքներ, թէև վառ ու թանկագին ցնորքներ, աշխարհում ապրող մարդիկ էին, պակած գործնական կեանքից, այդ կեանքը անուշադրութեան մատնած. թշառութիւնները, կեանքը իր բոլոր սե ու սպիտակ գոյներով նրանց հետաքրքրում էր տեսականապէս, նրանք մի տեսակ ռօղալին ամրոցներ՝ կառուցող մարդիկ էին, առանց որ և է լինարանի: Ալդպէս չեն Միքէն, Նրւանդն ու իր նմանները: Նրանք և թէ զարգանում են, պարապում, մտածում, կարդում և ալն, այդ անում են

<sup>1)</sup> «Մուրճ 1894 թ. № № 10 և 11 Նրւանդ Ղալարեան. Անցեալի լիշատակը»

գործնական կեսնքի մէջ դերակատարներ լինելու համար. նրանք ձգտում են գործիչներ, կոշտ կեանքի հետ գործ ունեցողներ դառնալ. մնացածը աչքքան նշանակութիւն ունի նրանց համար, որքան նպատակ պապման կարող է լինել նրանց ձգտումների առարկային հասնելու. Այս կողմից սրտանց պէտք է ուղշանել նոր, պատրաստուող սերունդի ալդ լառաջդիմական քալը. նրանք պատրաստում են Շելլոունովի ասած «երկրային իդէալիստները» դառնալու. Խղէալները միշտ կը շողշողան նրանց առաջ, ոգի ու հուանդ կը մտցնեն նրանց երակներում և կը թեթևացնեն գործնական կեանքի հասցրած դառնութիւնները, ծանր հարածները...

Ահա, օրինակ, Միքէն մտածում է ժողովրդի բարօրութեան նւիրել իրան, նա տեսել է գիւղացու ծանր վիճակը, նրա մտաւոր, բարոյական և նիւթական նեղ կացութիւնը և մտածում է դարմանել ալդ ծանր ցաւերը: Նա վերլուծում է ալդ անտանելի դրութիւնը, փնտռում է նրա պատճառները, և գտնում է որ հարկաւոր է բարւոքել գիւղացու տնտեսական դրութիւնը, և նա աջակիտով կալում է հարցի արմատին: Ժողովրդի համար, որ մեծ մասամբ զբաղւած է իր ապրուստի խնդրով, ոչ մի գրութիւն աչքքան անտանելի է, որքան տնտեսական նեղ դրութիւնը, կուշտ փորով հաց ուտել չկարողանալը: Նրա բարոյական և մտաւոր դրութիւնը շատ անգամ խիտ կախումն ունի նրա նիւթական, տնտեսական դրութիւնից:

Քանի քանի տեղեր աղքատութիւնը պատճառ է եղել բարքերի ապակաութեան, գործակից ունենալով նաև տգիտութիւնը, որ մասամբ նրա պատճառն է և մասամբ հետևանքը: Բարձրացնել գիւղացու տնտեսական դրութիւնը՝ արտասահման գնալուց և աչնսեղ գիւղատնտեսութիւն սովորելուց փոող դառնալով հաշիւներ և օրինակելի կերպով մշակելով իրանց հողերն ու շրջակա գիւղացիներին փորձով համոզելով և նոյնը սովորեցնելով—ա՜հա Միքէլի երեակալած գործունէութիւնը: Եթէ Միքէլի հանգամանքները բարեւ չաջող եղան, նա երեկ հէնց ալդ մաքի իրադորձման էլ կը նւիրի իրան: Առայժմ նրա կրակոտ, եռանդուն և անհանգիստ հոգին տատանում է. նրան շատ անգամ թւում է, որ ալդ բոլորը շատ երկար տարիների, դանդաղ աշխատանքի և համբերութեան գործ է, որ իր բնաւորութեան ալդ գործը չարմար չէ. երբեմն լինում են վարկեաններ, ինչպէս ինքն է ասում, երբ «Բուռն ու խենթ իղձեր կ'անցնին մէջէս. ալմուկ ու իրարանցում կ'ուզեմ. անձուիրութիւն ու ղիւցսպնոթիւն կ'երազեմ. կ'ուզեմ զարնեմ, կուլմ, կարմեւ ի հեճուկս նոյն վարկեանին ձիւ ախուէն կը վրնջէ և հաւեայքս ակամալ դէպի պատէն կախւած հրացանս կը բարձրանայ» (էջ 144): Ընթերցողը երեկ հասկանում է Միքէլի ուզածը... Աչսեղ երկու նպատակներն էլ սուրբ են և վեհ. նպատակների ընտրութեան համար ոչինչ չենք կարող ասել ուրեմն, վճռւած է նւիրել հանրային և օգտակար գործի. հարցը աչն է ալմի, թէ

որն է նա աւելի կարեւոր համարում  
 և իր բնաւորութեան չարմար,—աչդ  
 էլ մենք կը թողնենք Միքէնէրին,  
 Խնչպէս տեսնում էք, Միքէն լաւ  
 ձգտումների և նպատակների տէր է,  
 նա կեանքում հազիւ թէ փշտնայ,  
 աչդ դժւար կը պատահի, եթէ նոյն  
 իսկ նրա ունեցած բոլոր սիրուն ու  
 փառուն երազների տեղ, մի հասա-  
 րակ գիւղական ուսուցչի պաշտօն  
 ստանձնի և մտնելով ժողովրդի  
 մէջ՝ սկսի նրա շրջանում գործել,  
 ժողովրդի մարդը կարող կը լինի  
 նրան օգուտ տալ, նրա համար  
 զրդիչներ կը լինին աչն ցանկու-  
 թիւններն ու իղձերը, որոնց չորդու-  
 մը շատ ջանել հասակում առաջ են  
 բերում լաչն ու ընդարձակ նպա-  
 տակներ և բունն ձգտումներ և ո-  
 բոնցից, կեանքի ժաշտին զարկե-  
 լուց և փշուելուց լետու, (աչն էլ ոչ  
 թէ բնաւորութեան փշալու, աչ շր-  
 ջապատող հանգամանքների ան-  
 նպաստ բարդման պատճառով) Մի-  
 քէի նմանների մօտ դեռ մնում են  
 աչնքան, որ կարող են հնար տալ  
 շատ օգտակար և փառուն գործիչ  
 գառնալու։ Ընդհանրապէս, աչս ա-  
 պագաչ հասարակական գործիչը  
 գեռուս սաղմում մեր մէջ չարգանք է  
 չարուցանում։

Ուրիշ մարդ է Երւանդը։ Նա  
 Տաճկաստանցի է, հաւանօրէն հա-  
 բուտտ տան գաւակ, մի տան՝ որ ծա-  
 ճօթ չի կղել աչն երկրում տիրող կա-  
 մաչականութիւններին, ճնշումներին  
 և հարստահարութիւններին։ Երբ  
 Սեանում, Վարդուհու մօտ, Երւան-  
 դը լիշում է իրանց երկիրը, տունը,  
 ընտանիքը, նրանց նեղ վիճակի մա-

տին ոչ մի չիշատակութիւն չի ա-  
 նում, Ալապիտով նրա մանկական  
 օրերը անցած պիտի լինեն ուրախ,  
 անվրդով և երջանիկ։ Աչդ շրջանից  
 նա, անշուշտ ուտում առնելու հա-  
 մար, զալիս է կովկաս և մտնում  
 մեր դարոցներից մէկը գեշերօթիկ։  
 Ամբողջ վէպիկից երևում է, որ նա  
 սովորական ընդունակութիւնների,  
 վառ երևակալութեան, երազելու և  
 ցնորելու հակած, բնութիւնը և գե-  
 ղեցիկը սիրող մի երիտասարդ է։  
 Ալապիտի չատկութիւնների սաղմու-  
 բով է նա գառնում գիշերօթիկ։ Գի-  
 շերօթիկութիւնը նպաստում է երև-  
 ւակալութեան դարգանալուն և նա-  
 չած անհատի բնաւորութեան և չըր-  
 ջապատող պաշմաններին ստանում է  
 որաչ գոչն և սղղութիւն։ Բացի գրա-  
 նից, աչդ կեանքում, ուր չկաչ ապ-  
 բուտտի ծանր խնդիրը, ուր աչակերտը  
 չի մտածում մաչած շորի, պատուած  
 կօշիկի, ցուրտ սենեակի և վաղանո-  
 ուտելիքի մատին, մարդու նոյսերի  
 մի գլխաւոր և նշանաւոր մասը պա-  
 կաս է, միտքն աւելի հանդիստ է,  
 և հնար ունի կարդացածը լաւ ըմ-  
 բրռնելու, զարդանալու և մեծ իըն-  
 դիրներով զբաղելու։ Սակաչն աչդ  
 զարգացումը մի առանձին կնիք է  
 կրում։ Ծանօթ չլինելով գործնական  
 կեանքին և կեանքի ստեղծալաւ  
 ու սպաւորութիւնները ուժեղ կեր-  
 պով ստացող տարիներում հեռու լի-  
 նելով նրանցից, միջոց չունենալով  
 իւրացրած տեսութիւնները փաստե-  
 բով ապացուցելու և լցնելու ու զուրկ  
 լինելով երկաւասարդ հասակի առանց  
 աչն էլ քիչ փորձաւորութիւնից, գի-  
 շերօթիկների լաւագոչն մասը արեւն

ու մարմին չեն դարձնում իրանց իւրացնելիք սկզբունքները ու գազափարները, որ լետոջ անկարող լինի նրանցից բաժանել, այլ միայն դաւանում է, հասկանում է նրանց լաւութիւնը, բարձրութիւնը, ազնիւ լինելը. . . Այս է պատճառը, որ նրանք կեանք զուրս գալուն պէս, կորցնում են աչք բոլորը և շուտ մերում նրա մէջ կամ թէ, հաւատարիմ մնալու դէպքում, երևում են տարօրինակի Սրւանդը եսթակալ չէ այս պակասութեան մեծ չափով, նրան աչք բանում օգնել է իր դիտելու ընդունակութիւնը, որ երևում է չուշատեորից, և ամառները հօրեղբօր մօտ Թիֆլիս գնալը, ուր նա իր զիտողութեան շնորհիւ շատ բան է սովորել: Կեանքին շատ քիչ ծանօթ լինելու հետևանք է այն, որ նա որոշ ծրագիր չունի կեանքում իր խաղալիք դերի վերաբերութեամբ՝ ինչպէս ունի Միքէն: Թէև երկուսն էլ զիջերթիկ են և նոյն պալմաններում ապրող բազմ զանազանութիւնը ակնչափոյի է: Գրա պատճառ էլ այն է, որ մարդիկ որոշ չըջանում կարող են լինել, բազմ միևնոյն բնաւորութեան տէր: չլինել և միևնոյն չափով չենթարկել չըջապատի ազդեցութեան: Կան մարդիկ, որ մի չըջան մտնելիս իսկոյն հոսանքի մէջ են ընկնում և բնաւորութիւնների առանձնաւատկութեանց պատճառով չուտով ենթարկւում. կան մարդիկ էլ որոնց չըջապատը շատ քիչ է փոխում, եթէ նրանց կազմն, ամբողջովին առած, տրամադիր չէ ենթարկելու աչք չըջանի ազդեցութեան: Նպելով

Սրւանդի և Միքէի նախապրոցեան կեանքի պալմաններին՝ կարելի է պարզ ասել թէ ով աւելի կ'ենթարկէր դպրոցի միջավայրի ազդեցութեան. ինչ խօսք, որ Սրւանդն դպրոցում իրան աւելի իր տանը կ'զգար քան թէ Միքէն: Սրւանդը դպրոցում ընթերցանութեամբ լաւ պարագողներից մէկն է կզել անշուշտ. զրան ապացոյց կարող են լինել նրա ամառանոց բերած մի սնդուկ գրքերը: Նկատելի է որ նա շատ է սիրում իղէալական տիպեր և աչքիսի կեանք ներկայացնող գրաւծներ: Նա հէնց աչքիսի տիպերի չըջանում էլ անց է կացրել իր տարիները, դպրոցում կարգալով նրանց մասին. նա անշուշտ ձգտումներ ունի նոյնպէս իղէալական մարդ գառնալու կամ նրանցից մէկին նմանելու: Ժամանակ առ ժամանակ նա սկսում է չհաւատալ իր ուժերին, կասկածում է որ ինքը կարող է մի բան գառնալ—այդ նրա համար երբեմն տանջող մի պարագալ է: Նրիտասարդների (մենք միշտ լաւ երիտասարդներն ունինք աչքի առաջ) բնաւորութեան այս լատկութիւնը շատ լաւ է նկատել և շատ լաւ է զուրս բերել Շանթը. ով չի երիտասարդ հասակում աչք կասկածներն ունեցել, տանջել աչք մտքերով. նա, ով երիտասարդ հասակում, երբ մարդիկ այնքան մաքուր և անկաշառ սիրտ են ունենում, չի ձգտել իղէալական մարդ գառնալու և չի ունեցել հասարակական շահերին ծառայելու ձգտումներ, նա իսկի երիտասարդ էլ չի եզել. աչքայններին բնութիւնն

ստեղծում է աչնպէս մկրատած ու ձևած՝ ինչպէս կան, Այդ կասկածոտ գրութիւնը երբեմն է միաչն տիրում նրան, ինչպէս ասացինք. ընդհանրապէս Նրանողը աչն համոզման է, որ կեանքն առանց գործելու ոչինչ է, գին չունի: Նա սարսափում է մի վաչրկեան իրան թփթփան (անգործ) Մկրտչի տեղը դնելուց. չուշատետրում մի տեղ ասում է. «ինչ ոչնչութիւն՝ կեանք առանց գործելու, առանց մաքառման, առանց մորմոքման, առանց կիրքերու, առանց անհատնում ծրագիրներու. Է, մահը շատ աւելի խորհրդաւոր ու բանաստեղծական չէ»: Զեր առաջն է մի մարդ, որի սիրտը

Բաց ծով կը ցանկալ,

կ'ուզէ սաստկակոծ

կեանք ու փոթորիկ...<sup>1)</sup>

բայց այդ բոլոր ասածները, այդ մաքառումը, մորմոքումը, կիրքերը, անհատնում ծրագիրները ինչի համար. չալտնի չէ: «կեանք առանց գործելու...» բայց ինչ գործ. այս բանը պարզ չէ մեզ համար, պարզ չէ և Նրանդի համար, թէն մի տեղ ասած է, որ նա ունի ծրագիրներ, որոնց մանրամասնութիւնները մէջ անգամ մտնում է երևակալութեամբ (էջ. 10): Մենք չենք կարծում, որ Նրանողը աչնպիսի որոշ ծրագիրներ ունենալ, որպիսիքն ունի Միքէն և ահա թէ ինչու: Նրանողը բանաստեղծական, զգալուն և զէպի լաւը հակած տղաչ է. նա տարւող, չափշտակող բնատրութիւն ունի և նրա

«իղծերը», որոնց մասին ասում է մի տեղ, ինչպէս վէպիկից էլ կարելի է նկատել, բուն իղծեր են՝ բայց անորոշ իղծեր, նրա ձգտումները զուք զգում էք որ լաւ են, բարձր են, բայց չէք տեսնում. ձեզ համար պարզ չէ, թէ նրանք ուր են ուղղւած, ինչ գոչնի են, ինչ արժանիք և ինչ գործնական նշանակութիւն կարող են ունենալ: Աչսպիսի անորոշ իղծերի ու ձգտումների տէր մարդը չի կարող որոշ ծրագիրներ ունենալ. առանց որոշելու թէ ինչ էս ուղու, չես կարող ծրագիր կազմել ուզեցածիդ հասնելու համար: Աչսպիսի մանր անհետնողականութիւններ բնատրութիւնները և նրանց գործերի մէջ պատահում են. ի դէպ նկատենք, որ վարդուհու «վերափոխութիւնը» չէ արտապաշտած աստիճան առ աստիճան. հեղինակը, ամբողջ ուժը կենտրոնացնելով երկու ջահէլները սիրտը վրայ, նազ ուշադրութիւն է դարձրել նրանց բնատրութեան միւտ գծերի վրայ. մասամբ այս կարող է արգարացնել վէպիկի ձևը. նա չուշատետր է, իսկ չուշատետրի գրողը չի կարող զիմացնի հոգին մտնել, մասամբ էլ՝ հեղինակի անփորձութիւնը: Մի բան միաչն որոշ է. նա ուզում է գործել իր հաչրհիքում— իսկ այդ բանի համար գնալու է արտասահման ընկերական գիտութիւններ սովորելու: Նրանողը իր ձգտումների և նպատակների անորոշութեամբ նոչն իսկ չուսալի երևուլթ է. այդ անորոշութիւնը չուտով կը ցնդի, երևակալութեան աչխարհից նա իրական աչխարհը կը մտնի, այս անգամ արդէն որոշ ծրագիրներով

<sup>1)</sup> Շանթի «Նաւակ» ստանաւորը, Մուրճ 1894 թ. № 6:

և որոշ նպատակի ձգտելով: Եղածից կարելի է գուշակել, որ նա բուն ժողովրդի մէջ չի կարող մտնել. այդ շրջանը Երևանդի շրջանը չէ և նա այնտեղ ոչինչ չի կարող անել—նա հաւանական է, որ հասարակութեան մէջ մտնի և օգտակար գործիչ դառնայ այդ շրջանում:

Վէպիկի մեծ մասը նւիրած է Երևանդի և Վարդուհու սիրոց ծագման, նրա ելնէջներին և զարգացման: Այդ սէրը մի լաւ ապացոյց է Երևանդի իդէալական մարդ դառնալու ձգտումն ունենալուն, նրա բանասեղծական և չափշտակող բնատրուծիւն լինելուն, նրա կուրանալու չափ տարել կարողանալուն: Այդ շատ բնական է: Մարդկանց այն տեսակը, որին պատկանում է Երևանդը, զարմանալի խաբւող է լինում. այդ արդիւնք է այն բանի, որ նրանք ուրիշների վրայ նաչում են ինչպէս իրանց վրայ և ուրիշներին համարում են իրանց նման: Տեսէք թէ ինչպէս գոհունակութեամբ արձանագրում է Երևանդը, երկու թէ երեք տեղ, որ իր ձառը պիտի դրդած լինի Վարդուհուն հալերէն սովորելու որոշումը կաշացնել. բաց ընթերցողները տեսան, թէ այդ հաւանորէն ինչ «ճառ» պիտի եղած լինի, որ դրդել է Վարդուհուն, այդ սիրակարօտ և թուխուն աղջկան: Երևանդը Վարդուհու ամեն վարմունքը մեկնում է իր համար նպատատար կերպով, առանց մի րոպէ կասկածելու, որ նրա արածները միայն իրան գրաւելու համար են... Համբուրից չետոյ չատակազգած ծրագիրներով Վարդուհին տարւում է այն պատճառով, որ նա չէր կարող զիմանալ Երևանդի ոգևորութեան թափին:

այդ գրաւումը սիրալին արբեցման մէջ առաջ եկած գրաւումն է: Այսպէս ուրեմն, իր սիրոյ ամբողջ շրջանում, Երևանդը մի հաճելի և հմայիչ պատրանքի մէջ է. նա երազի մէջ է: Նրա զգացմունքն անկեղծ է և ուժեղ. այլ կերպ էլ չի լինում «առաջին ճշմարիտ սէրը», որի չիշատակը երբէք չի չբանում մարդու սրտից: Սիրոյ կորուստը, այն էլ առաջին սիրոյ կորուստը, ծանր, շատ ծանր բան է. բաց վնասել հարկաւոր չէ: Եւ Երևանդը հաւանօրէն չի էլ վնասի: Այն «սուրբ իդէալը», որ նա ունի, այն «ոգեորութիւնն ու անձնամոռ լեցուն կեանքը» որ նա երազում է, կը բռնեն ակամա կորցրած սիրոյ տեղը: Նրա ձգտումները աւելի կը պարզեն և որոշ գոյն կը ստանան, աւելի ինտենսիւ կը դառնան և կը մղեն նրան լուսաւոր երկիրները, այնտեղից մեզ համար լոյս ու շերտութիւն բերելու և մեր կեանքում, հասարակութեան օղտին գործելու և ոչ «փող դիզելու և հանդիստ օրեր անցկացնելու»: Այն աչպէս են մեր նոր, պատրաստող սերունդի լաւագոյն ներկաւացուցիչները: Եթէ պիտի հաւատարիմ մնաք ձեր դաւանած սկզբունքներին, եթէ պիտի ձգտէք իրագործել ձեր ծրագիրները, այն ժամանակ եկէք նոր սերունդի ներկաւացուցիչներ. մեր կեանքը խոսքն է, մարդկանց կարիքը չափազանց զգալի. թող ժողովուրդն ու նրա բարիքը լինեն ձեր խոհերի և ձգտումների առարկան, ազնուութիւնն ու շիտակութիւնը ձեր գործելու եղանակը. եկէք, մենք սպասում ենք ձեզ!...

Ն. Աղբալեան:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՔԸ ՉԻՐԻԱՆՋԱԴԷԻ „ԿՐԱԿ“ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի քանի ամիս առաջ կարդալով „Новое Обозрѣніе“ լրագրում պ. Շիրանդադէի «Արակի» ռեցենզիան, որի մէջ ի միջի աչոց ցաւ էր չալտնւած ալժմեան ուսանողութեան ընկած դրութեան մասին, մենք հետաքրքրեցինք իմանալ թէ ինչպէս է դուրս բերւած «Արակի» մէջ ուսանողութեան պատկերը: Կարդացինք «Արակը» և զարմացանք, որ աչնպիսի մեծ նշանակութիւն են աւել նրան, քանի որ աչնտեղ դուրս է բերւած ոչ թէ մի ամբողջ ուսանողութիւն, այլ ուսանող Սանթուրեան և Ջարիֆեան: Թէ որքան բազմակողմանի են դուրս բերւած դոքա, կ'ասենք մի քիչ շտույ, իսկ ալժմ կը խօսենք աչն մի քանի մեղադրանքների մասին, որոնց պ. Շիրանդադէն չարտել է իւր պատկերի մէջ ուսանողների հասցէին: «Արակի» բովանդակութիւնը կարծում ենք շատերին ծանօթ կը լինի Պր. Շիրանդադէի մեղադրանքներից մէկն աչն է, որ ուսանողութիւնն իւր անդամներից մէկին հեռացնում է իւր չրջանից միաչն աչն պատճառով, որ աչս վերջինի հաչրը կամ մաչրը անաղնիւ ճանապարհով է կեանքի միջոց վատասակել: Դա չլււած ու չսեանւած բան է, աչս Յ տարի է ուսանողական չրջանումն ենք և ոչ մի աչղպիսի դէպքի մենք չեն հանդիպել և չենք տէլ լսել, որ մեղնից առաջ պատահած լինէր Չղխոնք, երբ և սրտեղ է պ. Շիրանդադէն տեսել աչղպիսի մի դէպք. դա կատարեալ բամբասանք է:

Նրկրորդ և աւելի մեծ մեղադրանքը կաչանում է նրանում, որ երբ Սանթուրեանը համալսարանում բոլոր իւր ընկերներին հարց է առաջարկում, թէ «սրն է աւելի լաւ—կնոջը ցեխ զլորելը, թէ ցեխից հանելը», իբր թէ ամբողջ ուսանողութիւնը չէ կարողանում պատասխանել, ուրիչ խօսքով, ուսանողութիւնն իւր մէջ ընդունւած է համարում կնոջը ցեխ զլորելը: Աղ ստեղու համար պիտի բոլորովին ծանօթ չլինել ուսանողութեան հետ, որովհետեւ քիչ թէ շատ ծանօթը կ'իմանար, որ եթէ մի որ և է ուսանող զբաղւած է կանանց ցեխ զլորելով, նա երբէք ուսանողներից չէ կարող չարբւած լինել և ոչ միաչն չէ չարբւում, այլ նոչն իսկ ուսանողները աչղպիսիներից երես են դարձնում: Մինչև անգամ աչն ֆակտը, որ ուսանողութիւնն սկսեց աւելի վատ աչքով նաչել Սանթուրեանին,

ցող է տալիս մեր ասածի ճշտութիւնը, որովհետև ուսանողութիւնը կարող էր չիմանալ Սանթուրեանի սիրածին ցեխ գլորողի ո՛վ լինելը ու վերադրել նրան՝ Սանթուրեանին: Նւ խկապէս աչդպէս էլ դուրս է բերւած պատկերի մէջ: Պր. Շիրաւանդադէն ուզում է, որ անպատճառ Չարիֆեանը պատժւած լինի. ի հարկէ դա գովելի ցանկութիւն է հեղինակի կողմից. նա իրաւունք ունի ցանկանալու, որովհետև գիտէ չանցաւորի ո՛վ լինելը. բայց ինչ մեղաւոր է ուսանողութիւնը, որ չէ ճանաչում խկական չանցաւորին, իսկ Սանթուրեանի դէմ էլ մի քանի փաստ ունի:

Նորից կրկնում ենք, որ եթէ ուսանողութեան մէջ գտնւեն էլ Չարիֆեաններ, որոնք կեղծում ու խաբում են ընկերներին, աչնուամենաչնիւ լողիկալի տէր ոչ մի մարդ չէր մեղադրիլ խաբւողներին: Ուրեմն պարզ է, որ 2-րդ մեղադրանքը բոլորովին անհիմն է, իսկ առաջինը մինք դասեցինք ասէ-կոսէների շարքում: Առաջին մեղադրանքին Սանթուրեանի մասին մինչև անգամ հեղինակն ինքը չէ հաւատում, որովհետև մի ուրիշ տեղ նա ասում է, որ Սանթուրեանին ատում էին աւելի նախանձից զրգւած, քան նրա հօր մեղքի համար:

Ալժմ գանք Սանթուրեանին և Չարիֆեանին: Ո՛վ է Սանթուրեանը, ինչ իղէալներ ունի, ինչ հարցեր են նրան զբաղեցնում: Թէ ով է Սանթուրեանը, հեղինակը միայն մասամբ է պատասխանում աչ հարցին: Նա ասում է, որ Սանթուրեանը շատ սիրող, կարեկցող սիրտ ունէր. մինչև անգամ պատրաստ էր իւր վերմակը ծախել ընկերոջն օգնելու համար: Շատ և շատ գովելի սիրտ: Հեղինակը չափնում է, որ ուսանողութիւնը երեսը դարձրել է և ի ն ուզում օգնել իւր մեռնող ընկերոջը. մաքուր և աղնիւ սիրտ: Բայց ինչով է զբաղւած մեր հերոսը, ինչ առարկաներ, ինչ հասարակական հարցեր են կլանում նրա մասնակիւր, միտք ունի արդեօք աւարտելուց չետոյ հասարակութեան մէջ գործելու, ինչ փնջոյներով է իրեն աչ գործունէութեան համար պատրաստում կամ գոն, եթէ հասարակական հարցերը նրան չեն հետաքրքրում, ինչ մատնագիտութիւն է նրան զբաղեցնում. աչ բոլոր հարցերից և ոչ մէկին հեղինակը հարկ չէ համարում պատասխանել, թէ և աչ հարցերի մասին հեղինակը թեթև կերպով ակնարկում է: Մենք իմանում ենք, որ Սանթուրեանը երբեմն ինչ որ ոտանաւորներ է գրում իւր «Կրակ» անունով տետրում, սրտի թոցնը թափելու համար և աչն էլ միայն իւր համար. նա միտք չունի տպագրելու, որովհետև դա, նրա կարծիքով, կը լինէր իւր միտքը ուրիշին փաթթել: Մի խօսքով՝ մինք տեսնում ենք մի մարդ, որ կարեկցում է, վրդովւում է, սիրում է, բայց թէ ինչ համոզմունքներ, ինչ իղէալներ ունի, — հեղինակից մենք աչ չենք իմանում: Մենք քիչ թէ շատ ճանաչում ենք նրա սիրտը, բայց խկալը բոլորովին: Նոյնը կարելի է ասել Չարիֆեանի մասին, բայց աւելի քիչ. աչն է, որ նա անապնիւ է վարւում իւր ընկերոջ ու նրա սի-

րածի հետ, որ նա երկուսին էլ խաբուած է ամենանորր կերպով և համարեա ուրիշ ոչինչ: Ներողութիւն, չհեղինակը ասում է Ջարիֆեանի որ Փակուտետից լինելը, թէև մեզ համար ամենին անհասկանալի մնաց, թէ այդ ինչու նրան պէտք եկաւ: Գուցէ հեղինակը ուզում է Ջարիֆեանի վատութիւնը մասամբ Փակուտետին վերադրել. չգիտենք: Ուշադրութեան արժանի է աչն, որ պ. Շիրանդաղէն Ջարիֆեանին մի ինչ օր Եագօ է դուրս բերել, որը իւր նպատակին հասնելու համար ոչ մի միջոցի խնայութիւն չէ զնուս: Կասկածում ենք, որ ուսանողութեան մէջ լինէր մի այդ աստիճանի խաբեբաչ և ստոր արարած, թէև, եթէ լինէր էլ, դա ուսանողական տիպ չէր կարող համարուել: Ջարիֆեանն, աւելի մի մելոդրամաչի հերոս է, քան ուսանող՝ և մանաւանդ ուսանողի մի որոշ տիպ: Մենք վստահանում ենք ասել, որ հեղինակը համարեա ծանօթ չէ ուսանողական կեանքին ու հարցի վրայ շատ միակողմանի է նայել: Ի հարկէ, ուսանողութիւնն ունի պակասութիւններ, կ'ունենաչ և ունեցել է, բայց ոչ աչն տեսակի, որը հեղինակն է մատնացուց անուս: Անկասկած շատ օգտակար է դուրս բերել ուսանողական կեանքը իւր լաւ ու վատ կողմերով, բայց ցաւօք սրտի պիտի ասել, որ պ. Շիրանդաղէի պատկերը ներկայացնում է ոչ թէ ուսանողութիւնը, այլ սխալ լուրերի վրայ հիմնուած մելոդրամատիքական գոչն ունեցող մի գրածք: Կարդալով «Արակը» մարդ իսկոյն մտածում է՝ հեղինակը ուզում է ուսանողութեան պատկերը ներկայացնել հիմնւելով ասէ-կօսէներբի վրայ:

Լեռ. ճեմ. ուսանող՝ Ա. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՆ

## ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նպաստների գործը:—Կոտորածներ:—Նրկրի դրուժիներ:—Դրան գործողութիւններ:  
Ընդհանուր ներման խնդիրը:—Ֆրանսիական արտայայտութիւններ:—Ռուսիայի քա-  
ղաքականութիւնը:—Աւստրիական կաթողիկէներ:—Հայկական խնդիրը Անդլիայում:

Հայկական խնդիրը վերջին ամսից սկսած փոխել է այնպէս, որ առաջին տեղը նորանում բռնել են Ռուսիան և Ֆրանսիան: Այդ ընթացքը աւելի ևս շեշտեց ներկայ ամսում: Սպասում էին որ դեսպան Նելիգով վերադառնար Կ. Պոլիս որոշ ծրագրով: Ծրագրի բոլոր մանրամասնութիւնները յայտնի չեն, թէև նորա լընդհանուր գծերը նոյնը պիտի լինեն, ինչ Ֆրանսիական մինիստր Հանտո՛ի յայտարարութիւնից արդէն յայտնի է: Ընդհանրապէս խօսում են այն ուլտիմատումի (վերջնագրի) մասին, որ պատրաստում են Կ. Պոլսի դեսպանները Բ. Դրանը ներկայացնելու համար. բայց թէ պատրաստ է արդեօք Եւրոպան ուլտիմատումը շընդունելու դէպքում՝ զէնքի դիմել—ահա խնդիրը, որին ընդհանրապէս բացասական պատասխան է տրուում: Արժանի է մասնաւոր ուշադրութեան այն, որ Ֆրանսիան պատրաստել է մի Ֆինանսական ծրագիր Ֆինանսապէս քայքայւած թիւրքիային ներկայացնելու համար, որով թիւրքիան պիտի կարողանայ փոխառութիւն իրագործել որոշ պայմաններով. իսկ այդ պայմանների մէջ պիտի մտնի ռեֆորմների իրագործումը Եւրոպական հսկողութեան տակ և միւս կողմից սուլթանի մինիստրների մէջ պիտի լինին Եւրոպացիք:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

## Նպաստների գործը

Դեսպան Ֆ. Կերրի գրեց (նոյեմբեր) լորդ Սալիսբերիին, թէ նպաստներ բաժանող կոմիտէներ կազմւած են բրիտանական դեսպանութեան անդամների և ամերիկական միսիոնարների հսկողութեան տակ այս քաղաքներում՝ Էրզրում, Տրապիզոն, Վան, Բիթլիս, Խարբերդ, Սըւաս, Դիարբեքիր, Արաբկեր, Այնթապ և Մարաշ: Կարօտեալներին կերակրելու համար մինչև 1897 թ. ապրիլ ամիսը ենթադրում են թէ հարկաւոր կը լինի 50—60,000 ֆունտ ստերլինգ (կէս միլիոն ուղբի): Սակայն Կ. Պոլսի կենտրոնական կոմիտէն հաշուել է, որ ձմեռաց համար կը հարկաւորուի 100,000 ֆ. ստերլինգ:

Մինչև նոյեմբերի միջերջը. Դէյլի Նիւսի և նպաստող ֆոնդի միջոցով ժողովւած էր 60,000 ֆունտ ստերլինգ:

Նոյեմբերի 19 (դեկտ. 1) Կ. Պոլսից հեռագրեցին Դէյլի Նիւսին, թէ Անգլիական գեսպանի բնակարանում տեղի ունեցաւ հայերին նպաստող Կենտրոնական կոմիտէի ժողովը. հաշրւած է, որ միմիայն որբերի թիւը ներկայումս հասնում է 40,000-ի. Գերմանիայի, Հոլանդիայի և Շվեյցարիայի բարեգործական հիմնարկութիւններից շատերը դանկութիւն չաչտնեցին իրենց հոգածութեան տակ առնել այդ որբերի մի մասը և ապաստարաններում նոցա զետեղել. կոմիտէի նախագահի կարծիքով 100,000 ֆունտ ստերլինգ (մօտ մի միլիոն ուղբի) է պահանջւում Փոքր-Ասիայի սովատանջներին օգնելու համար:

Բրիւսէլում մինիստր ժէօնի նախագահութեամբ կազմւել է մի կոմիտէ հայերին նպաստ տալու համար: Մի կոմիտէ ևս կազմււել է Լիէժ քաղաքում:

Տիկին Սոմերսէթ ուղարկեց Վիեննա տիկ.Օրմիստոն Չանթ'ին այնտեղ նպաստող ֆոնդ կազմակերպելու համար:

Անգլիայում սկսում է նկատուել հայերին նպաստելու մի հակառակ շարժում: Օրիորդ Հարրիէտ Կոլէնգօ Դէյլի Նիւս'ում պատասխանում է թերթի հրաւերին հայերին օգնելը շարունակելու առիթով, թէ հարաւային Աֆրիկայում մեծ կարօտութիւն է տիրու / և որ անգլիացիք պիտի այնտեղ օգնեն և որ չպէտք է նոր-նորից

ղիմել անգլիական մարդասիրական զգացմունքին՝ ուրիշների մեղքով զոհաճններին օգնելու համար:

Վենետիկում, կաթոլիկների պատրիարք կարդինալ Սարթօի նախագահութեամբ կազմեց մի կոմիտէ՝ հայերին օգնելու նպատակով:

#### Կ ո տ ո ռ ա ծ ն ն ը

Դէյլի Նիւսի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրեց նոյնմբ. 26 ից, որ Դիարբեքի շրջակայքում կոտորած եղաւ, որի ժամանակ 500 հոգի սպանւեցին:

#### Յ Ր Կ Ր Ի Ղ Ր Ո Ւ Թ Ի Լ Ն Ն ը

Սըւասի ամերիկական հիւպատոս Ջոուէտ, Պարիզի միջով Ամերիկա արձակուրդով անցնելիս, հաղորդել է Դէյլի Նիւսի թղթակցին, որից երևում է թէ Հայաստանում հունձը լաւ է, բայց դաշտերը քիչ են սերմանաւծ կոտորածների պատճառով. ընդհանուր թշւառութիւնը սակայն շատ մեծ է. ճնշումները և երկիւղը շարունակւում են, հայ խանութպաններից շատերը ապահովութեան համար իրեն ընկերացրել են թիւրքերին ու այդպիսով խանութները բացել: Խանութների քառորդ մասը արդէն բաց է:

#### Դ Ր Ա Ն զ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Լ Ն Ն Ն Ե Ր

##### և և ռ ֆ ո ռ մ ն Ե Ր ը

Թիւրք կառավարութիւնը, ղեսպաններին հանգստացնելու համար, արձակեց իրենց պաշտօններից ժանդարմների գնդապետ Հուալի-Գաիմ բէյին, Հուանի բէյին, որ ոստիկանութեան կառավարիչն էր, և ժանդարմների պետ Սոլլի փաշային. բայց զոցանից երկուսը ստացան նահանգապետների աւելի բարձր պաշտօն և մէկը ժանդարմների պետի պաշտօն Հին-Սերբիայի Կոստօ վիլայէթում:

Դեկտեմբերի սկզբին ոստիկանութիւնը (որի նոր մինիստրն է Շէւֆիլ բէյ) կալանաւորեց մի շէյխ (Նահիլի էֆ.), երեք ուլում և չորս բարձրաստիճան պաշտօնեաներ: Շէյխը Մերլեւիս ղերլիշների կարգին էր պատկանում. նորա քանտարկումը և աքսորը տեղի տեց սրտաշարժ տեսարանների:

Ընդհանուր ներումը հայերի, որի վրայ այնքան խօսք կար վերջերքս և որի վրայ պնդում էր նաև նորընտիր Օրմանեան պատրիարքը, տեղի ունեցու սուլթանի մի իրադէով, տրւած 10 դեկտեմբերի: Ամսի 11/23-ին բանտարկեալների մի մասը Կ. Պոլսում ազատ թողեցին: Բոլոր հայ բանտարկեալները 9—10,000 են հաշուում: մինչ այժմ, զեկտեմբերի վերջը, բոլորը գեռ բաց չեն թողնւած. և բացի այդ, միւս կողմից միշտ նոր ձերբակալութիւններ են կատարուում թէ հայերից, թէ տաճիկներից:

Ռուսաց «նովոստի» օրաթերթում Կ. Պոլսի մի թղթակցութիւնից երևում է, որ Բ. Ռուսը այնքան բազմաթիւ հեռագիրներ է ուղարկում Լոնդոն, որ դա դեպլոմատիական իսկական թշուառութեան չափեր է ընդունում: Թիւրք կառավարութիւնը այդ բազմաթիւ հաղորդագրութիւններով ուզում է համոզել լորդ Սալթրիւրիին թէ իբր ռեֆորմները մոցրած են կամ մոցնւում են Փոքր-Ասիայում, այն է Սըւսում, Բիթլիսում, Էրզրումում, Վիարեքիւրում և այլ տեղեր: Այդ բոլորը սակայն Սալթրիւրին բոլորովին անուշադիր է թողնում:

Նոյեմբերի 10/22-ից Պոլսից հաղորդեցին մի դաւադրութեան մասին, որին մասնակից էին մեծ մասամբ զինւորականներ: Չերբակալեցին սուլթանի թիկնապահներից 8 օֆիցէր, բացի այդ՝ 5 ծովային օֆիցէր և ծովային զինւորական դպրոցի 2 ուսուցիչ:

Նոյեմբերի 27-ից հեռագրեցին Պոլսից թէ «Ջանի» նաւը աքսոր տարաւ մտ 200 սոֆթաներ:

Ռեֆորմները: Կ. Պոլսի թիւրք լրագիրները հրատարակեցին (նոյեմբ. վերջերքը) թիւրք կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնը ռեֆորմների մասին, որի համար ծանուցումն էր տրւած զեսպաններին: Այդ յայտարարութիւնը հաստատումն է 1835 թ-նի սեպտեմբերին կառավարութեան հրատարակած թիւրք ռեֆորմների: Յայտարարութիւնը կարճ է և բաղկացած է 11 կէտից: Ամբողջից բուրում է մեռելութեան հոտ:

Բ. Պրան խոստման համաձայն, արդէն նշանակեցին քրիստոնեայ փոխ-նահանգապետներ մի քանի նահանգներում: Պոքա, իբր թիւրք պաշտօնեաներ, ողորմելի դեր են կատարում, կասկածելով թէ քրիստոնեաներից և թէ մահմեդականներից: Եւ կարծում են

Թէ նոքա հազիւ թէ ոտճիկ ստանան, այնպէս որ նոքա կ'աշխատեն ուրիշ ճանապարհներով փող ձեռք բերել:

#### Ընդհանուր ներման խնդիրքը

Հայոց Պատրիարքարանի խառն ժողովը, որ տեղի ունեցաւ զեկտ. 15-ին, 3/15-ին մի ուղերձ ուղղեց սուլթանին, որով ժողովը խնդրում է ներումն շնորհել հայ բանտարկեալներին. պատրիարքարանը մտադիր է այն յանցաւորներին, որոնք համարուած են յեղափոխական շարժման ղեկավարներ, զետեղել վանքերում. ազատաւճները պէտք է հաւատարմութեան երդում տան սուլթանին. պատրիարքարանը խոստանում է զործ դնել իւր ամբողջ ազդեցութիւնը համոզելու արտասահմանեան յեղափոխականներին, որ թողնեն իրենց յուզումները: Պալատը պահանջում է, որ պատրիարքարանը երաշխաւոր դառնայ յեղափոխականների հանգստութեան համար. միայն թէ այդ, ի հարկէ, պատրիարքարանի ոյժից վեր է: Ուղերձը մատուցանելու օրը նշանակւած էր զեկտ. 8/20-ը:

#### Փրանսիական արտայայտութիւններ

Արդէն իսկ նշանաւոր հանգամանք էր, որ Անատոլ Լըռուա-Բոլիւս Revue des Deux Mondes հռչակաւոր ամսագրում, Ռուսաց Կայսերական Զոյգի Ֆրանսիա այցելելու առիթով յօդւած էր գրել, որ շատ պարզ ասում էր, թէ այդ հանդէսների շուքի վրայ մութ բծեր են մնում հայկական խնդրի մէջ Ֆրանսիայի բըռնած դիրքի համար:

Այդ յօդւածը նշանակ էր Ֆրանսիայի դիրքի մօտալուտ փոփոխութեան: Մինիստր Հանոտօի արտասանած ճառը, որի ամփոփումը առաջ բերինք Մուրճ-ի անցեալ համարում, պաշտօնական ցոյցն էր այն բանի, որ Ֆրանսիայի քաղաքականութիւնը մտել է մի նոր շրջանի մէջ արևելեան խնդրում, թէև մինիստրը լիովին ակարողացաւ բաւարարութիւն տալ Ֆրանսիայի անցեալ փառքը իրենց սրտին մօտ առնողներին:

Այդ ժամանակից դէս, արդէն յաճախ են Ֆրանսիական արտայայտութիւնները հայերի դատի օլտին: Հայր Շարմըտան, որ արդէն

չայտնի էր նաև առաջ իւր պրոպագանդայով հայերի դատի համար, Oeuvres des écoles d'Orient հանդէսում մի յօդուած ևս դրեց, յորդորելով որ Ֆրանսիան իւր օգտին ծառայեցնի հայ գաղթականներին, որոնք Ֆրանսիա են ապաստանում, ուղղելով նոցա դէպի Սլժիբ, Թունիս, Մադագասկար, Տոնկին: Հարկաւ դա շատ միակողմանի օգնութիւն է հայերին:

Նոյեմբերի 22-ին Փրեմիոն արքան Պարիզի Մադըլէն եկեղեցում ճառ խօսեց, Պարիզի արքեպիսկոպոս Ռիշարի նախագահութեամբ: Ճառը շատ կրակոտ էր. ճառախօսը չիշեցրեց խաչակիրների արշաւանքից մի քանի նշանաւոր դէպքեր, ցոյց տւեց որ այն ժամանակ քրիստոնէութիւնը միացել էր վեհ գործի համար. ասաց, որ մահմեդականութիւնը դարեր շարունակ սրով և կրակով առաջ է գնում և մեր օրերում թոյլ է տալիս մարդկութեան տարեգրութեան էջեր լցնել ամենատխուր իրողութիւններով: Նա չիշեցրեց Նապոլէոն I-ի խօսքերը, թէ «Թիւրքիան Եւրոպայի նախասինքն է»: Կարդինալ Ռիշար աւելցրեց, որ Թիւրքիայում վլասեցին շատ կաթողիկոսներ, մինչդեռ դոցա պատմական հովանաւորողը համարւել է Ֆրանսիան:

Ժամերգութիւնից յետոյ ինքը՝ կարդինալ Ռիշար վերցրեց իւր ձեռքը մի տուփ և պտըտեց տաճարը, յանձնելով և միւսներին զանազան տուփեր: Կարդինալը հանգանակութեան տուփը ձեռքին կրկնում էր՝ անխտիր բոլոր քրիստոնեաների և ոչ միայն կաթողիկոսների համար:

Պարիզից ոչ հեռու Կորքէյ աւանում (6000 բնակիչ) նոյեմբ. 24-ին բողոքական պատուր Պանիէ ճառ խօսեց հայերի մասին. եկել էին լսելու նաև Պարիզից:

Նոյեմբ. 27-ին պ. Պիէր-Վիլար դասախօսութիւն կարդաց կաթողիկոսանոցների կլուբում, 500 հոգու ներկայութեամբ: Դասախօսողը եղել է Կ. Պոլսում և չորս տարի դասախօսել է հայոց դպրոցներում գրականութիւն և Ֆիլոսոֆայութիւն: Նա ցաւելով յայտնեց, թէ ինչպէս Ֆրանսիական մամուլը երկար ժամանակ լռութիւն էր պահպանում հայերի մասին, և յայտնեց, որ Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանը շատ լաւ գիտէր, որ Պարիզի տասն և եօթ մեծ ու փոքր թերթեր միանաւագ կամ պարբերաբար նպաստներ

(կաշառքներ) էին ստանում օսմանեան դեսպանատնից՝ դէպի Քիւրքիա բարեկամական զիրք բռնելու համար: (Այս հանդամանքը յայտնի էր արդէն Les Nouvelles d'Orient թերթի մերկացումով):

Նշանաւոր Ֆրանսիացիների մի խումբ, որպէս տեղեկացրեց Գէյլի-Նիւսը (նոյեմբ. վերջը) մի հանրագիր է ստորագրել Ֆրանսիական կառավարութեան անունով, որի մէջ խնդիրք կայ միջամտել հայերի ազատութեան համար: Ստորագրել են Ալֆոնս Գոդէ, Հանրի Բաուէր, Պոլ Ադան, Էմիլ Զոլա, Օրէլիէն Շոլ, Ֆրանսուա Կոպպէ, Անատոլ Ֆրանս, Նաթանսոն (Revue Blanche հանդէսի հրատարակիչ), Ալֆրէդ Վալլէա (Mercure de France-ի հրատարակիչ), և Կատուլ Մանդէս: Ստորագրողները յայտնում են, թէ Ֆրանսիայի աւանդութիւնները պարտաւորեցնում են նորան օգնել բոլոր տկար և հարստահարած ազգութիւններին, մանաւանդ ի նկատի ունենալով սուլթանի հրամանով կամ նորա թելադրութեամբ կատարուող խմբական կոտորածները: Նոյն հեղինակները (տեղեկութեամբ Քաջմս լրագրի) դիմել են նաև իտալական հեղինակներին, կոմսոգիտորներին և արտիստներին, հրաւիրելով միանալ իրենց հետ և պահանջել ոչ միայն հայոց, այլ և Արևելքի բոլոր ուրիշ խնդիրների արմատական լուծումը, որպէզ զի արևելեան ազգերը վերջապէս ազատեն թիրքաց լուծից, որը այնքան դարեր ճնշում է նոցա:

Figaro (Ֆիգարո) հանրահռչակ լրագիրը, թէև շատ անսպասելի կերպով, մի յօդած տպեց, որը ընդհանուր ուշք գրաւեց իւր վրայ, մանաւանդ Ռուսիայում: Ահա այդ յօդածը.

«Պ. Նելիդով երկրորդ անգամ խորհրդակցեց սուլթանի հետ: Նրա առաջին խօսակցութեան առիթով ասած էր, թէ նա սիրալիր խօսքեր էր ասում և քաղաքավարութեան սահմանից չէր դուրս գալիս, ամեն կերպ աշխատում էր խուսափել որ և է ակնարկ անելուց զործերի մասին, որոնցով, սակայն, պատճառաբանած էր նրա վերադարձը Կ. Պոլիս: Այդպիսի չափաւորութիւնը մի քանիսներին չափազանց երևաց, քաց յամենայն դէպս, կանգնելով շատ նեղ, պալատական էթիկետի տեսակէտի վրայ, կարելի էր հասկանալ այդ և ներել: Բայց օսմանեան թագաւորին երկրորդ այցելութեան ժամանակ էլ ռուսաց դեսպանը, ըստ երևութին, ոչ պակաս չափաւոր

քո թիւն ցոյց տւեց: ձիշդն ասած, մենք կատարելապէս չենք հասկանում այն ընթացքը, որին նա հետեւում է: Ահա արդէն մի քանի ամիս է, որ թիւրքաց կայսրութեան մէջ սեղի են ունենում ծանր խռովութիւններ և շատ արիւն է թափւել:

Այն ժամանակ, երբ Եւրոպայի յուզմունքը իր գաղաթնակէտին հասաւ, ոռւսաց ղիպլոմատիան ասում է, որ նա ինքն յանձն է առնում ամեն բան կարգի բերել և, չիրաւի, եւրոպական պետութիւնները *carte blanche* են տալիս նրա ձեռքը: Պ. Նէլիդովին առաջարկում են իւր հետ բերել հարցի լուծումը և այն օրը, երբ Պետերբուրգից և Վիէննայից վերադառնալուց յետոյ, նա կրկին ձեռք է առնում ղեսպանութեան գործերի կառավարութիւնը, նա չի վստահանում սուլթանի հետ խօսակցութեան ժամանակ խօսք բանալ կենսական հարցերի մասին, այն կենսական հարցերի մասին, որոնց պէտք է լուծել, եթէ չեն կամենում, որ թիւրքաց կայսրութեան բոլոր շրջաններում տիրապետէր և արմատ գցէր արիւնահեղ անիշխանութիւնը:

Պ. Նէլիդով պարտաւոր է, սակայն, զիտենալ, որ աւելի քան երբ և իցէ սուլթանը շրջապատուած է Ֆանատիկոսներով, անխիղճ պալատականներով, ներքինիներով և սիրելիներով: Այս օրերս վերագրում էին նրան բաւական ծիծաղելի զիտաւորութիւն, այն է ներումն շնորհել հայերին: Ներումն այն ժողովրդի մնացորդին, որը անթարկում է ջնջման: Այդ միտքը տւեց Արթին-փաշան, եւրոպական կրթութիւն ստացած մի մարդ, բայց որի վարկը ընկաւ այն օրից, երբ յաղթեց Ֆանատիկոսական կուսակցութիւնը: Սուլթանը, իր մերձաւորների դրամմբ, ըստ երևութին նրանից հրաժարեց: Ահա թէ ինչի համար դադարի ձերբակալութիւնները և տէրրորը աւելի քան երբ և իցէ ծաղկում են Կ. Պոլսում: Սոֆթաների դաւադրութիւնից օգուտ քաղեցին մարդկային կեանքերի նոր հեկատոմբի համար: Ինչին է սպասում պ. Նէլիդով: Ինչին է սպասում Եւրոպան: Ինչին է սպասում մանուսանդ Ֆրանսիան:

*Ռուսիայի քաղաքականութիւնը*

Բրիւսելի «Նոր» (Nord—Հիւսիս) լրագիրը, որ ոռւսական քաղաքականութեան կիսապաշտօնական ֆրանսիական թերթն է, տպեց նետեւալը.

«Բ. Դուռը միայն մէկ բանից է վախենում, այն է մեծ պետութիւնների մէջ կայանալի համաձայնութիւնից: Նա այնպէս է ձեւացնում, թէ ընդունում է բարեկամ մեծ պետութիւնների խորհուրդները, յայտնում է նրանց իւր երախտագիտութիւնը, չի դադարում կրկնել իւր բարի դիտաւորութիւնների մասին. բայց իսկապէս ոչինչ չէ անում, կամ, աւելի ճիշտ, այնպէս է վարում, որ պէս երբեմն վարում էր Պէնելոպան, ոչնչացնելով այսօր այն, ինչ որ դեպքանների հրամանով նա հարկադրւած էր անել երէկ:

«Բժւար է մի շարմար անուն գտնել Բ. Դրան այդպիսի վարմունքին: Զգիտես, ճշմարիտ, ինչին աւելի զարմանալ, ինչպէս ասում է Պետերբուրգի մեր թղթակիցը, թիւրքաց նենգամտութեան, թէ սուլթանի խորհուրդներում տիրող բթամտութեան:

«Բեռ ոչինչ իրաւունք չունենալով ենթադրել, թէ Բ. Դրան այժմեան գործունէութեան եղանակը պայմանաւորում է ասիական նենգամտութեամբ, մենք աւելի օրամադիր ենք կարծելու, որ չարիքի պատճառը սուլթանի խորհուրդներում տիրող կարճամտութիւնն է: Եթէ այդպէս է, այն ժամանակ դժւար չի լինի արմատախիլ անել այդ չարիքը: Ինչու չազատել Բ. Դուռը այն բոլոր վայրենիներից, որոնք ներս են պրծել այնտեղ, և այժմեան խորհրդականների տեղ քրիստոնեաներ շնշանակել, քանի որ երևում է թէ այդ խորհրդականներն են, որ դիմադրում են ամեն ուէֆորմների և ամեն տեսակ շառաջգիմութեան:

#### Աւստրիական կաթոլիկներ

Նոյեմբերի 24-ին Աւստրիացի սլարլամէնաի անդամ բարոն Դի-Պաուլի կարգաց կաթոլիկ երիտասարդութեան ժողովի հանդիսաւոր նիստում մի ճառ՝ ծանօթացնելու համար գերման հասարակութեանը Հայաստանի, նորա ժողովրդի, նորա վիճակի հետ Փոքր-Ասիայում և աեղի ունեցած դազանութիւնների հետ: Նորա խօսքերից առաջ կոչում այս կտորը. «Հայերը (ամբողջ երկրագնդի վրայ 3--5 միլիոն) ապրում են թիւրքերի, քիւրդերի և չերքէզների հետ, հարիւրին 13 տոկոս համեմատութեամբ. այդ համեմատանքը լուսաբանում է մի կողմից օգնութիւն հասցնելու դժւարութիւնը: Հայաստանի քրիստոնեայ թագաւորութիւնը Լուսի-

նեանների օրով կործանւեց խաչակիրների արշաւանքների վերջը, բայց իսկապէս միայն 1847-ին, երբ Օսման փաշան բոլորովին նւաճեց քիւրդերին, հաստատեց թիւրք տիրապետութիւնը Հայաստանում: Այդ օրից սկսած թիւրքաց տիրապետութիւնը բաժանուած է 3 շրջանի. ամօթալի վարչութիւնը 1847-ից մինչև 1891-ը. կործանման քաղաքականութիւնը 1891-ից մինչև 1894-ը, և Տրաքւաճ կոտորածը 1894-ից ի վեր: Գի-Պատուլի ասելով պաշտօնական տեղեկութիւնների հիման վրայ կոտորած հայերի թիւն է 80.000, և աւելցրեց. «Հայկական տեսարանները աւելի զարհուրելի են, քան պատմութեան ամբողջ արիւնշաղախ էջերը, նոյն իսկ Լէնկթեմուրը սուլտանի մէջ է մնում, և ինչ որ նշանաւոր է, իբրև դարավերջի մի նշան, այն է, որ կոտորածը կատարուած էր մի առանձին չարախնդածութեամբ: Ճառախօսը վերջացրեց. «Ինձ թւում է, որ աւստրիական կաթոլիկների պարտքն է նոյնպէս բարձրացնել իրենց ձայնը այնպէս, ինչպէս Գերմանիայումն է, Անգլիայում, Նէլցարիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և այլ երկիրներում, ուր զաչրոյթի միտինգներ կազմակերպեցին քրիստոնեաների հալածանքի դէմ»:

*Հայկական խնդիրը Անգլիայում*

Անգլիայի լիբերալ կուսակցութեան գործիչներից Ռըսսէլ, Կլէյտեն և Տոր ջանք են գործ դնում հայկական խնդիրը լիբերալ կուսակցութեան յատուկ խնդիր շինել (նման իրլանդական ինքնավարութեան խնդրին): Գէյլի Նիւս թերթը սակայն յայտնեց, որ գործելու այդ եղանակը նպատակադարմար չեն գտնում կուսակցութեան ղլխաւոր ներկայացուցիչները՝ Գլադստոն, Ռոզբերի և ուրիշներ: Եթէ, ասաց թերթը, Անգլիան 1876-ին կարողացաւ կուսակցական կազմակերպութեամբ մեծ օգնութիւն հասցնել բոլգարների օգտին, այն ժամանակ արտաքին պայմանները նպատատւոր էին, և միայն պէտք էր կտրել պահպանողականների հակառակութիւնը. այժմ, ընդհակառակը, պահպանողականները դէմ չեն հայկական դատին և արգելքները արտաքին են. և զոցա դէմ գործելու համար պէտք է ազդը մի լինի:

Ա. Ա.

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

### Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

#### X

Թիֆլիսի ներկայացումները.—Տ. Աւետեանի խումբը.—Մի արտասովոր իրարանցում.—«Մօզան» վրաց բեմի վրայ:

Թիֆլիսի դերասանները հազիւ պրծան իրանց «սէզոնի ներկայացումները» ծանր ու անտանելի պարտքը կատարելուց և մտան «բէնէֆիսներին» ոսկեայ շրջանը: Աչպէս՝ նախ դուք «Մարատ Ա.» և «200,000» պ. Յարութիւնեանցի օգտին. «Քանդած օջախ» ի նպաստ օր. Վարդուհու, «Փարիզի շրջնոլիկը» և «Մօզա է քան» ի նպաստ տ. Մէլլիքեանի, «Խախումա», կուպլէտներ, և այլն. յօգուտ պ. Արաքսեանի. «Արտոյա» յօգուտ Հալուհեաց Բարեգ. ընկերութեան, «Օրւան շարիք» ի նպաստ տ. Զարէլի, «Արքի բռնկումն» պ. Օհանեանի օգտին: Այս ներկայացումներին թատրոնը միշտ լի էր. իսկ «Մօզա է քան»-ին թատրոնում տեղ չլինելով (ոչ նստելու ոչ էլ կանգնելու) ժողովուրդի մեծ մասը լիս վերադարձաւ:

Ինչպէս անցեալ անգամ գրած էինք, տ. Աւետեանի կազմակերպած խումբը, Եկատերինոյաբում իւր ներկայացումները վերջացնելուց չետու, անցաւ Նոր-Նախիջևան, որտեղ տրեց հետեւեալ պիւսները 1. «Բազդասար Աղբար», 2. «Չէ հարկաւոր», 3. «Ուրականներ», «Տիկինը ննջում է», 4. «Գօն Գրիգորիօ», «Սիրահարը սեղանի տակ», 5. «Արչակ Բ.» (բ. արարւածը) «Մեծապատիւ Մուրացկաններ»—ի նպաստ պ. Արէլեանի. 6. «Էլի մէկ գոն» յօգուտ տ. Փառանձէմի. 7. «Ագահը» ի նպաստ Ա. Վրոյրի. 8. «Պէպօ» յօգուտ ջրահեղձներին փրկող ընկերութեան Տիւղի, և 9. Հրաժարական ներկայացում Բոստոլում «Բազդասար Աղբար» (Երկրորդ անգամ), «Վորրադօ» (Բ. արարւածը) և «Սիրահարը սեղանի տակ», ի նպաստ տ. Աւետեանի: Վերջին ներկայացման Թոստովի հասարակութիւնը ի միջի

ալուց ամբողջ խմբին մի պսակ նւիրեց: Որք ան վիշում ենք մեղանում այս առաջին դէպքն է, որ հասարակութիւնը պսակ է տալիս ամբողջ խմբի: Ներկայացման հաստիքները բաւարար էին:

Խումբը աշունհետև անցաւ Արմաւիր, ուր տեց Յ ներկայացումն.

1. «Բաղդասար աղբար», «Ձէ հարկաւոր». 2. «Սամէլ», «Սիրահարը սեղանի տակ». 3. «Պէպօ», «Մկնիկ»: Արմաւիրից խումբը կ'ուղևորւի Բագու մի շարք ներկայացումների համար:

Վերջին ժամանակներս թատրոնի շուրջը մի մեծ ազմուկ բարձրացաւ, մի ալմուկ, որ արտասովոր էր: Պատճառը «Մուգա է քան» անունով քարան էր, որ նախ իբր Փէլլատոն «Արձագանքում» տպագրուեց և կարճ միջոցում ունեցաւ երկու տպագրութիւն: Գրւածքը կարդում էին հետաքրքրութեամբ. բրոշուրը՝ ձեռքից ձեռք էր խլւում, կարդում էին, կեդտոտ սրախօտութիւններ անում, ծիծաղ-քրքջում՝ որովհետև պարզ տեսել էին ծանօթ դէմքեր, ծանօթ անձնաւորութիւններ և նրանց շրջանում պատահած մի անպատկառ կերուխում: Ի՞նչն էր այս արտակարգ հետաքրքրութեան պատճառը. միմիայն մի բան՝ գրւածքի հերոսները ծանօթ լինելը. ուրեմն դա մի պատկառ էր: Կարդում էին... Կարդում էր վաճառականը, գործակատարը, տիկինը, օրիորդը, իսկ անգրագէտը ականջը կախ լսում էր գրագէտի ընթերցանութիւնը և նրա տւած պարզաբանութիւնները: Շատ սուր հոտաւորութիւն հարկաւոր չէր իմանալու համար, թէ ամբողջ քաղաքի բամբասանքի այս նիւթը եթէ դրւի բեմի վերայ՝ անագին հասարակութիւն կը գրաւէ: Պր. Սարգսրեան այս մի լաւ պոնի սորի աւիթը ձեռքից չփախցրուց, և հաստատ գիտենալով այս պատկառի ներկայացնելով պատճառելիք ընդհանուր դժգոհութիւնը (ինչպէս ինքը առանց քաշուելու պարծենալով գրում է «Արձագանքում»), առանց երկար մտածելու, գրիչը ձեռք առաւ: Պիւսը պատրաստ էր խաղացին. հետևանքը մենք մանրամասնաբար չենք պատմի, որովհետև ընթերցող հասարակութեան չափնի է արդէն: Թուք, մուր, իսպտառակութիւն, աչպանումն. և ոչ էլ կը նկարագրենք այն բազմութեան հոսանքը, որ խուռներամ դիմում էր դէպի թատրոն և պատրաստ էր լծարակամ վճարելու 1 ու. 50 կ. մինչև իսկ 2 ու. գէթ ոտքի վերայ կանգնելու համար՝ և տեղ չզտնելով չկա դառնում: Այդ ամբոխը այն պատճառով էր գնում թատրոն՝ ինչ պատճառով որ կարդում էր այդ պատկառը:

Այժմ մի հարց է առաջ գալիս. միթէ պ. Սարգսրեան իրան պէտք է թող տար, մի քանի հարիւր ուրբի (կարծեմ մօտ 400 ուրբի) ստանալու համար, բեմի վերայ հանել այդ խաղատակութիւնը և նրանով էլ խաղատակել: Եւ թնչ ժամանակամիջոց էր ընտրել նա իւր այդ գոհարի

ներկայացնելու համար: Դեռ նոր, 1—2 շաբաթ առաջ, լոյս էին տեսել «Արձագանք»-ում իւր այսմաւորքի չափ երկար ջողւածները, որով ողբում էր թատրոնի վիճակը, արցունքներ էր թափում նրա դրութեան վերայ և միջոցներ առաջարկում թատրոնը վերականգնելու համար: Մենք չենք ուզում այդ ձգձգած գրութիւնը գնահատել, այդ բոլորը մի քանի խօսքով կարելի էր ասել, և մէջն էլ մի նոր բան չկար, բոլորը կրկնութիւններ էին հաղար անգամ թատրոնի մասին առածի ու գրւածի: Միայն մի բանի վերաբերմամբ պ. Սարգարեան կամենում էր շեղւել հալ թատրոնի աւանդականութիւնից (տրադիցիա), այն է՝ գրպանը լցնելու համար որքան կարելի է շատ հասարակութիւն հաւաքել թատրոն: Իսկ նրան թատրոն հաւաքելու համար շոյել նրա թույլ երակները, ուրիշ խօսքով, անել այն՝ ինչի բանի հակառակ կոչումն ունի թատրոնը: Ուրիմն ալտուհետե թատրոնի դատարկութեան վերայ աւելորդ է լաց լինել «Մողա»-ի նման պասկիլներից կարելի է շաբաթական մի պիէս թխել և թատրոնը ծալքէ ի ծալք կը լցւի. զիւտը արւած է. էլ հարկաւոր չէ թատրոնի վերայ երկար բարակ գլուխ կոտրել, գլխաւոր արգելքը՝ փողը մէջտեղում կալ. իսկ որտեղ փող կալ, ահնտեղ կը լինի և ամեն ինչ, էլ հարկաւոր չէ սուբսիդիա թատրոնի համար. նոր Վալիֆորնիա է գտնւած, էլ հարկաւոր չէ իւր պէտուար. միայն պէտք է երբեմն սրա նրա դռներից ու լուսամուտներից ներս թափանցել, գնալ Վերալի, Մուշտալիդի և Օրթաճալալի ալգիները և տեսնել թէ ո՞վ ո՞ւմ հետ նստած ինչ է անում... և պիէսան պատրաստ կը լինի: Բարին, ձյմարիտն ու Գեղեցիկը ալտուհետե աւելորդ է վնասել այն հիմնարկութեան մէջ, որին անւանում ենք «տաճար»... Այ միթէ ալտուհ պէտք է հասնէր հալ թատրոնը, միթէ փողը, գրպանի շահը, հեշտութեամբ 8—10 թերթ թուղթ մտտելը, մի քանի հարիւր ուսուցիչներ ձեռք բերելու տենչանքը պէտք է ոտնակոխ անէր ամեն մի ազնիւ նպատակ, քանի որ այս նոր մեթոդով հասարակութեան արարմունքը ապտակելով կարելի է ահազին «սքորներ» անել, էլ ինչո՞ւ հալ թատրոնի և նրա ընկերակցութեան վերայ տամնեակ հազարներ էին մոխուում. էլ ինչո՞ւ դերասանները մի չոր հաց ձեռք բերելու համար ընկնում են սարէ սար, ձորէ ձոր, կուտւմ, մարտնչում հաղար ու մի արգելքների դէմ. արգելքներ՝ որոնց հանում են քնութիւնն ու մարդիկ, էլ ինչո՞ւ սովատանջ Ամերիկեանը ատրճանակով իւր պանգն էր ջախջախում՝ քանի որ ալգպէս հեշտ է թատրոնի միջոցով գրպանը պարարտել, էլ ինչո՞ւ հալ թատրոնի, գեղարւեստի համար անչափ կեանքեր թառամեցան իրանց ծաղիկ հաստիւում—գուրկ օրինաւոր ապրուստից,—էլ ինչո՞ւ, ինչո՞ւ էին ալտուհ ընկած գոհերը, միթէ նրանցից ոչ մէկը պ. Սարգարեանի չափ ընդունակութիւն չունէր մի ալգպիսի բան գրելու, բնի վրայ գնելու և առատ հաստիւ ստանալու. մի հաստիւ՝ սրին եւրոպական ամենալուսաւորեալ ազգերի ամենալալտի գրողներն անլամ

կարող են նախանձել: Ակամալ փշում ենք աչտեղ Մոլիէրի ասածը. «Մարդիկ խօսքով միմեանց նման են, և միայն իրանց գործերովն են զանազանուում»: Այն, պ. Սարգարեանն էլ խօսքով հալթթատրոնին սրտացաւ է. լաւ ուէպէրտուար չունենալու վրայ ողբացող, ժողովուրդը անտարբերութիւնից սթափեցնելու համար հնարներ մտածող, բաւց գործնիւ... «Մողա է քան» և մի քանի հարիւր ուրբլի, այս էլ անա գործը...

Մենք կարծում էինք, որ պ. Սարգարեան իւր նպատակին հասնելուց չետոյ—մի քանի հարիւրներ ղրպանը դնելուց չետոյ—լուռ ու մուշ իրա տեղը կը նստի և իւր «Մողա»-ի արդիւնքը կը վաչելէ. բաւց նա հանդարտ նստող չէ. նա գրչին գրչով պատասխանողներին է. խոկ ալդ պատասխաններով որքան արդարանում է նա՞ հասարակութեան առաջ՝ ալդ միկնոցն է. ամենքը խօս աչքեր չունին՞ ամեն գրածքի խորը թափանցելու, կը կարդան և կ'ասեն. «Մալաղեց Սարդար. լաւ պատասխանել է»: Պր. Սարգարեան «Մողա»-ի աւելթով իւր վրայ եղած չարձակումներինց կամենում է օգտուել և մի փոքր «իրան ցոլց տալ»: Աչպէս նա «Արձագանք»-ում գրում է, թէ «Մողա»-ի պատճառով իւր բոլոր թիշամիները զինուել են իր դէմ և էլ նախատինք չի մնում որ չթափեն՝ իւր գլխին. թէ մնացել են (?) հալցոց հարցը, զաղթականները և «Մողա»-ով են զբաղւած! թէ Կրուպլի ձուլարանում ուումբեր են ձուլել տալիս իրան ումբակոծելու համար!!! թէ մամուլը իր և իր աչքի լուսի՝ «Մողա»-ի վերայ չարձակելուով կամենում է իւր բաժանորդների թիւը աւելացնել, (չէինք կարծում որ պ. Սարգարեան այս աստիճան առաջ կ'երթայ). թէ իրան և իր «Մողա» ին նախանձում են և ալչն, և ալչն, և ալչն: Մենք ընթերցողին թողնելով վերոյիշեալների մասին դատելը, աչքքանը կ'ասենք, որ Երա վաչելած փառքին և Երա «Մողա»-ին ոչ ոք չի նախանձում. ինքն ազատ է իւր վաչելած փառքը փառք համարել, և իւր ստացած հարիւրներն էլ վարձատրութիւն դրական աչխատութեան, ալդ իւր գլխենալու բանն է. միայն մենք խորհուրդ կը տալինք պարոնին մի փոքր աւելի համեստ լինել, աչքքան զոհաբերութիւններով ձեռքքըբերւած հալ բեմը իւր գրպանի խաղալիքը չլինել, և եթէ կամենում է հալ բեմին մի իրական ծառայութիւն մատուցանել՝ «Մողա է քան»-նեկից մի անգամ ընդ միշտ հրաժարուել և աւելի մաքուր միջոցների գլխել փող վատակելու համար:

Հալ դերասաններին «Մողա»-ի տւած խոչոր գումարը շլացրել է մեր վրացի եղբարը դերասաններին և նրանք աղաչում են պ. Սարգարեանին, որ իրանց էլ թող տալ թարգմանել ալդ վրացիլին և ներկայացնել բեմի վրայ. (անշուշտ վճարելով մի խոչոր վարձատրութիւն դրածքի հեղինակ Սարգարեանին): Առանց մարդարէ լինելու հաւատացած կարող են լինել

մեր վրացի եղբայրները, որ թատրոնում ասեղ ձգելու տեղ չի լինի: Անշրջանները, որոնք «Մողա»-ի փէշից ալդպէս պինդ են կպած, մեծ մասամբ վիրախօսներ են և աւելի հաճութեամբ ալդ խալտառակութիւնը կը լսեն վրացերէն, քան թէ հայերէն: Բայց մենք կարծում ենք, որ մեր եղբայրակիցները փշելով Յրանկլինի լալանի ասացածը՝ չես կը կենան իրանց մտադրութիւնից: «Նեւացին ուրիշի գլխին պատահած փորձանքից կ'օգտւի. իսկ չիմարը իւր գլխին պատահածիցն էլ չի խրատւի»:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 թ. ՀԱՄԱՐ բացւած է արդէն: Ուղարկուած ենք բաժանորդական թերթիկներ: Բաժանորդները կարող են դիմել նաև յայտարարուած գործակալներին (տես ամսագրի ծածկը): Յուսով ենք որ 1896 թ. բաժանորդները կը շտապեն վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը 1897 թ. համար: Յոյս ունինք նաև որ Մուրճի բաժանորդ չեղած ընթերցողները կը մասնակցեն բաժանորդագրութեան, թէ բարոյական պարտք կատարելու և թէ ամսագրի նիւթականը զօրեղացնելու համար: Մեր դիմումը վերաբերում է մանաւանդ այն ընթերցողներին, որոնք համակրում են Մուրճին և որոնք զիտեն գնահատել խմբագրութեան ջանքերը և նորա մարտնչումը ամեն տեսակ դժարութիւնների դէմ:

Մեր մասնաւոր հոգսը առաջիկայ տարւայ համար պիտի լինի համարները ճիշդ իրենց ամիսներում հրատարակել, աշխատելով նոցա լոյս տեսնելու սովորական ժամանակը զցել ամեն ամսւայ սկիզբը կամ, ամենաուշը, ամեն ամսւայ միջերբը: Այդ կարգը կ'սկսուի ապրիլի համարից:

Նոր վէպերից՝ սուայժմ կարող ենք յիշատակել պ. Լեւոն Մանուէլեանցի «Խորտակուած կեանք» մեծ վէպը, որ սկսելու է Մուրճում յունար ամսից, պ. Շանթի մի նոր գործը, որպէս նաև պ. Վ. Փափագեանի մի շարք պատմաճքներն ու վէպիկները: Պպ. Բարկենցի ու Աղէլեանի այժմ սպւող վէպերը կ'աւարուեն տարւայ սկզբի ամիսներում:

Մուրճի աշխատակցական խումբը, որ կազմում են Ա. Արասխանեանց, Լ. Մանուէլեանց, Գր. Վարդանեան, Ալ. Մա-

տուրեան, Յովհ. Տէր-Միրաքեան, Գ. Մնացականեանց, Վ. Փափագեան, Գր. Վանցեան, Ա. Աղէլեան, Շանթ, բժ. Վ. Արծրունի, բժ. Զաքարեան, բժ. Գարեգին Սարգսեանց, Խաչ-Պապեան, Գ. Իաշինջազիան, Սեւեան, Աշ. Աթանասեան, Գ. Ղարաջեան, Յակ. Մուրատեան և ուրիշներ, — մնում է նոյնը, ուժեղացրած նոր ուժերով:

«ՄՈՒՐՃ»-ի ՓՈԽՍՈՒՈՒԹԻԻՆԸ, Տարւալ սկզբից սպազրհով մեր հրաւերը «Մուրճ»-ի փոխառութեան մասին, աչժմ, երբ աչք փոխառութեան մի մասը արդէն իրագործած է, շնորհակալութեան հետ միասին սպազրուում ենք մեր հրաւերին ձայնակցածների անունները: Կոքա են. պպ. Յովհաննէս Ստեփանեանց և Թաղ. Տէր-Միքայէլեանց 150 ռուբլի. Աբրահամ Բունիաթեանց 200 ռուբլի. աչրի տիկ. Տոյա. ճեան 100 ռուբլի. պ. Շահնազար Շահնազարեանց 100 ռուբլի. պ. Յակոբ Թաղ. 100 ռուբլի. պ. Լեոն Մանուէլեանց և Աւետիս Կաւթեանց 100 ռուբլի: Ընդամենը առաչժմ 750 ռուբլի:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ խորագրով բժ. Թ. Զաքարեանցի մեծ չօղածի սկիզբը, որ ընկնում է ներկայ համարի մէջ, 1897 թւականի նոր բաժանորդներին ուղարկելու է առանձին արտատպւած: Ամբողջ չօղածը հաւանորէն վերջանալու է փետրար-մարտին:

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ վերնագրով մեր աշխատակից պ. Վ. Փափագեան խոտանում է տալ Մուրճում մի շարք զիտողական ուսումնասիրութիւններ Պարսկաստանի մասին: Նոքա ստորագրւած կը լինին Ապրո: Սկիզբը, որ արդէն ստացած ենք, պիտի սեղ գտնի Մուրճի չունարի համարում:

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՅ, որի քննադատական չօղւածները Գարագաշեանի «Բնական Պատմութիւն Հայոց» աշխատութեան մասին մեր անցեալ տարւալ ընթերցողները վիշում պիտի լինեն, իւր չօղւածների շարունակութեան մասին գրում է մեզ. . . «հետազօտութիւններս աչնպիսի մասնագիտական բնաւորութիւն են ստանում հետզհետէ, որ անլարմար եմ համարում «Մուրճ»-ը ընթերցող մեծ-հասարակութեանը աչրպիսի ծանր և անմատչելի բաներ դէմ անել: Աչտուամենաչնիւ ես խոտումս կը կատարեմ և երեի կանգ կ'առնեմ աւելի ընդհանուր նշանակութիւն ունեցող կէտերի վրա. գոնէ աչք կ'փորձեմ»:

«ՄՈՒՐՃ»-Ը ԳԻՒՂԵՐՈՒՄ, Անցեալ համարում սպատասխանելով մի գիւղի ուսումնարանի հոգաբարձութեանը «Մուրճ»-ը իրենց ձրի ուղարկելու մասին, աւթից օգտել էինք ցոյց տալու թէ հաչիական գիւղերը ինչ դեր ունին կատարելու իբր սպառողներ հայոց դրքերի

և իբր բաժանորդներ ու ընթերցողներ լրագրութեան ընդհանրապէս և «Մուրճ»-ի մասնատրապէս: Այդ կարևոր հանգամանքի վրայ դարձնում ենք «Մուրճ»-ը տարածել ցանկացողների ուշադրութիւնը: Մենք մի ալլ անգամ կը հրատարակենք կովկասի բոլոր մեծ գիւղերի անունները, որ նւիրաբերողները իրենք ևս կարողանան ընտրութիւն անել:

«ՄՈՒՐՃ»-Ը ՆԻՒՐՈՂՆԵՐ: 1) պր. Գրիգոր Վարդանեանց (Թիֆլիսից) 1 օրինակ, նւէր Ախլաթիան գիւղին (111 տուն բնակիչ, Զանդեզուրի գաւառում խմբագրութեան ընտրութեամբ). 2) Պր. Յովհաննէս Կիտայզան (Աստրախանից), «Մուրճ»-ի չորս օրինակ, նւէր Արծնանիկ գիւղին (101 տուն բնակիչ, Զանդեզուրի գաւառ խմբագր. ընտրութեամբ). Աւզոնթալա գիւղին (133 տուն բնակիչ, Ղազախի գաւառ, Գանձակի նահանգում, խմբագրութեան ընտրութեամբ). Քանաքեռ գիւղին (200 տուն, Երևանի գաւառ. խմբագրութեան ընտրութեամբ). Արտաշատ գիւղին 140 տուն, Երևանի գաւառ. խմբագրութեան ընտրութեամբ):

ԱՊԱՌԻԻՆՆԵՐ: Նոցա, ում վրայ ապառիկներ են մնում 1896 թւականից՝ խնդրում ենք ուղարկել Ապառիկաւորների մէջ կան նաև աջնալի-սիներ, որոնց մենք զաղարել ենք զրկել համարները կէս տարին լրանալուց չեսու: Գոքա աջնուամենաջնիւ մնում են պարտ խմբագրութեանս: Տարւալ վերջը ապառիկ մնում է 437 ուրբլի, չհաշւած Կ. Պոլսի 22 բաժանորդներին, որոնց վրայ մնացած ապառիկների համար (135 ուրբլի) խմբագրութիւնը վճռած է որ և է պահանջ չդնել: Ե ԱՐՈՒՆԱԿԵԼԻ ՅՕԿԻԱՄԵՆԵՐԻ մասին տես լուրերի վերջը:

ԿՈՎԿԱՍԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏ ԻՇԽ. ԳՈԼԻՑԻՆ: Բարձրագոյն հրամանով 6-ին ներկայ ղեկտեմբեր ամսի Կովկասում նշանակւած է նոր կառավարչապետ քաղաքացիական մասի և հրամանատու զօրքերի և նահազնոյ ատաման կազակային զօրքերի իշխան Գրիգորի Սերգէսեիչ Գոլիցին, ղեներալ-ատինֆանտերիայի, ընդհանուր շտաբի մէջ հաշրււող, սենատոր, պատուաւոր խնամակալ և անդամ պետական խորհրդի, թողնելով նորան այս բոլոր կոչումները:

Նոր Կառավարչապետը գունդ է կառավարել 11 տարի (վրաց գունդ 6<sup>1</sup>/<sub>2</sub> տարի և Ֆինլանդական լէյբ-գւարդիայի գունդ 4<sup>1</sup>/<sub>2</sub> տարի), եղել է նահանգապետ 8<sup>1</sup>/<sub>2</sub> տարի և հրամանատու Ուրալեան կազակային զօրքի 8 տարի. ներկայ է

եղել սենատի առաջին ղեկարտամէնտում, ուր հսկողութիւն է կատարւում ներքին կառավարութեան բոլոր ճիւղերի մէջ օրինականութիւն պահպանելու վրայ. վերջին Յ տարիները նա անդամ էր Պետական Խորհրդի օրէնքների ղեկարտամէնտում, ուր կենդրոնացած է կաշարութեան օրէնսդրական գործունէութիւնը. բացի այդ, վերջին տասնեակ տարին իշխ. Գոլիցին, իբրև պատուաւոր խնամատար, իւր ղեկավարութեան ներքոյ ունէր Պետերբուրգի ամենաընդարձակ բարեգործական հիմնարկութիւններից մէկը:

